49

Pungu

7–12/89

1937 1915

1949

1988

1915

1949

937

1937

1988

1988

1937

1949

1915

1949

1937

915

1949

1915

1915

1937

1988

988

1988

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— ☆ ☆ ☆ . . . . . Թուականներու յաճախանքը
3.— Ա. ՔՈՉԻՆԵԱՆ . . . . . Հայրենիքը փշալարի մէջ
7.— Ս. ԽԱՆԶԱԴԵԱՆ . . . . . Արիւնոտ վարագոյրը դեռ չի պատռուել
10.— Կ. ՍՈՒՐԷՆԵԱՆ . . . . . Կը գայ ժամանակը...
11.— Ա. ԱԻԱԳԵԱՆ . . . . . Ցիշելը մեր խղճի պարտքն է
16.— Ս. ԽՈՒԴԵԱՆ . . . . . Խղճի թելադրանքով
15.— Տ. ԽԱՉԱՏՐԵԱՆ . . . . . 1949 թուականի Յունիսի 14ի
ահեմոկեցուցիչ գիշերը
20.— Ռ. ՔԱՄԱԼԵԱՆ . . . . . Ափսոսի՛ տարբերակը
22.— Հ. ՔԵՆԴԵՐԵԱՆ . . . . . 1949ի ափսոսը եւ 1989ի արտազաղթը
27.— Ն. ԱԴԱԼԵԱՆ . . . . . 1949 թուականի երկար գիշերը
34.— ☆ ☆ ☆ . . . . . Որբերազարդ հրէշներ...
35.— Ս. ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ . . . . Հատուցման շեմին
36.— Տ. ԽԱԶՄԱԼԵԱՆ . . . . . Բաց նամակ Երեւանից
39.— Ս. ՎԵՐՄԻՇԵՒԱ . . . . . Սումգայիթ
40.— Գ. ԷՄԻՆ . . . . . Բարեկամութեան պահանջով...
44.— Ի. ՄԱՄԵԱՆ . . . . . Բ. Փահրազադէին ի պատասխան՝ (Նրա
«Դոսկ բաժին չեն տայ» զգրախօսու-
թեանը)
46.— Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . . . . Ա՞ցախեան Ֆրոնիկան
53.— Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Նահատակներ Սումգայիթի
56.— Գ. ՋԱՆԻԿԵԱՆ . . . . . Դարձ հայրենիք
59.— Փ. ԱՆԹԱՊԵԱՆ . . . . . Ի՞նչ էք ուզում իմ ժողովրդից
64.— Վ. ԳԷՈՐԳԵԱՆ . . . . . ☆ ☆ ☆
65.— Լ. ԱԶՐՈՅԵԱՆ, Ջ. ԲԱԼԱԳԵՈՉԵԱՆ Սումգայիթի սատերը
66.— Վ. ԴԱՒԹԵԱՆ . . . . . Բաց նամակ՝ Եւգենի Եւտուշենկոյին
71.— ԷՕՒԻՇԼ ՉԱՐԵՆՑ . . . . . Խորհրդային Ադրբեջանին,
Գ. ՍԱՐԵԱՆ . . . . . Ադրբեջանին
72.— Մ. ԴՈՒԽԻՆ . . . . . «Մերթ սեւ եղեռն, մերթ Սումգայիթ...»
73.— Ռ. ԴԱՒՈՅԵԱՆ . . . . . Արդարութեան հանապարհին
75.— ☆ ☆ ☆ . . . . . Ռուս գրողներ Սումգայիթի մասին
76.— ☆ ☆ ☆ . . . . . Հատատումներ...
78.— ☆ ☆ ☆ . . . . . Հան ժիրոտու
79.— Ժ. ԺԻՐՈՏՈՒ . . . . . Տրամաղայի պատերազմ տեղի պիտի
չունենայ
93.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ . . . . . Արձանները
94.— Գ. ԱԲԵԼԵԱՆ . . . . . Անմա հարսը
101.— Վ. ԲԱԲԱՅԵԱՆ . . . . . Բանաստեղծութիւններ
107.— Գ. Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ . . . . . Հայ գիրքը՝ այգեստանի հայուն
117.— ☆ ☆ ☆ . . . . . Ա՞աբական ազգի բանաստեղծութեան
ապագնապը
123.— ☆ ☆ ☆ . . . . . Նոր գիրքեր
126.— ☆ ☆ ☆ . . . . . Մշակութային լուրեր

Բազմն

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԸ. ՏԱՐԻ | ԹԻՒ 7–12 | ՅՈՒԼԻՍ–ԴԵԿՏԵՄԲԵՐ | 1989 | ՊԷՅՐՈՒԹ

ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՃԱԽԱՆՔԸ

Բանաստեղծ եւ *«Ոգնի»* երգիծաթերթի խմբագիր Արամայիս Սահակեան *«Գրական թերթ»*ի էջերուն լոյս ընծայած իր *«Բանականութեան յոգեթանակը»* անուն գրութեան մէջ կ'ըսէ.

«...Մեզ հիմա ապրիլ է պէտք: Թէ չէ՝ մէկ տարում երեք ազի օր ունենք՝ Փետրուար 28, Ապրիլ 24, Դեկտեմբեր 7...: Շատ է մի ժողովրդի համար: Շատ չէ՞ քիչ ժողովրդի համար: Շատ է: Շա՜տ է»:

Արամայիս Սահակեանի նշած *«Դեկտեմբեր 7»*էն առաջ ստորագրուած գրութեան մը մէջ, հրապարակագիր Զօրի Բալայեան կը գրէ.

«Հայ ժողովրդի ոգեկոչութիւնը, որը 15 թուականից յետոյ, 37 թուականից յետոյ, 49 թուականից յետոյ, 88ի Սումգայիթն էլ ապրեց»:

Երկու գրողներուն յիշատակած չարայուշ թուականները զումարումի եւ հանումի գործողութեանց ենթարկելով, ամսաթիւերու յաջորդականութեամբ կ'ունենանք.

28 Փետրուար 1988:
24 Ապրիլ 1915:
9 Յունիս 1937:
14 Յուլիս 1949:
7 Դեկտեմբեր 1988:

Տասներկու ամիսներուն հինգին մէջ սուգի օր: Իրապէ՛ս շատ է, շա՜տ:

Յիշատակուած թուականներէն երկրորդը՝ Ապրիլ 24, շատ ծանօթ է:

Երրորդին՝ Յունիս 9, *«Բագին»* անդրադարձած է յանախ, առանձնապէս անոր քառասնամեակին առիթով, 1977 թիւ 5:

Հինգերորդը՝ Դեկտեմբեր 7, մեր այս տարուան Յունուար–Փետրուար միացեալ համարով ուշադրութեան յանձնեցինք:

Իսկ ներկայ թիւով սրտի պարտք համարուեցաւ էջ բանալ փիլ ծանօթներուն:

Առաջինը՝ 14 Յուլիս 1949, սահմոկեցուցիչը:

Երկրորդը՝ 28 Փետրուար 1988, մահասարսուռը:

Մեր նախորդ թիւով, ներգաղթած բանաստեղծ Անդրանիկ Թերզեանի պատահած ինքնաշարժային «արկածին» կապակցաբար, հատուածային բանի մը վկայութիւններ ներկայացուցինք թէեւ 1949ի եղեռնին մասին, բայց իրականութեան անհնախադէպ հանգամանքը կը ստիպէ, որ աւելի լայն տեղեկութիւններ հաղորդենք ընթերցողին, ի յուշ կամայականօրէն ոչընչացուած կամ ցրտաշունչ հեռուներուն մէջ քաշքշուած «հազարվէրք» մեր բեկորներուն, զուգահեռաբար նոր սպանդին, որ սումգայիթեան խարանը կը կրէ:

Հայ մարդը տարտամ տեղեկութիւններէ զատ շատ բան չէր գիտեր 1949ի մասին: Գիտէր միայն, որ այդ թուականին ստալինեան նոր հարուած մը իջած էր հայրենի մեր ժողովուրդին գլխուն, ա՛յնքան՝ որ թերեւս ոչ ոք կը զօրէր պատկերացնել հերթական այն սպանդը, որուն մասին ամբողջ ձայնով սկսան մարդիկ խօսիլ միայն վերջերս, գորբաչովեան հրապարակայնութեան երրորդ եւ չորրորդ տարիներուն:

Անողոք է Սերօ Խանզադեանի արձանագրած փորձառական վկայութիւնը.

«...Բայց սրանով չսահմանափակուեց ստալինիզմի ոճրագործութիւնները հայերիս նկատմամբ: 1949ին Անդրկովկասից բռնութեամբ Ալթայ եւ Սիբիր քշուեցին 150 հազար հայեր, ոտքը կոտրուած բանաստեղծ Վեսպերից, 104 տարեկան հոգազարծ Գայուստ Դաղալեանից սկսած մինչեւ յդի կանայք եւ մի շարաթուայ նորածին մանուկները: Մեր տունմից՝ երեք ընտանիք: Ինչպէ՞ս մոռանաս սա» («Գրական թերթ», *1988, թիւ 49)*:

Այդ 150 հազարին բանի մը տասնեակ հազարը 1946-47 թուականներուն ներգաղթած հայերն էին, որոնք, ինչպէս պիտի ըսէր հայրենադարձներու կարաւանին մէջ գտնուող ներհուն մտաւորական Կարպիս Սուրէնեան, *«յանկարծ հեռաւոր Սիբիր աքսորուեցին 1949ին, ապշահար ու անարեկուած, չհասկանալով՝ իրենց ո՞ր մեղքին համար»:*

49ի ոճիրին մասին եղած սեւագրութիւնները շատ են, սակայն գրականութիւնը քիչ անգամ էջ բացած է արիւնոտ այդ իրադարձութեան: Նորայր Աղալեանի պատմուածքը կարելի է մատի վրայ հաշուուող նմոյշներէն մէկը համարել: Մեր գրողներուն ջիղերը աւելի արագ ու աւելի մեծ չափով մը կսկծացին սումգայիթեան եղեռնին դիմաց, հակառակ անոր, որ զոհերուն թիւը համեմատական չէր 49ի զոհերու թիւին ու կոտտացող ցաւեր կրողներուն թիւը տասնեակ հազարներու կը հասնէր: Բոլոր պարագաներուն՝ անընդունելի եւ մէկը, եւ միւսը, ինչպէս անընդունելի էր 1937ի եղեռնը, շատ աւելի անընդունելի, քան 15 սպանդը, այն պարզ տրամաբանութեամբ, որ ընդունելին աւանդական թշնամիին գործն էր, թուրքին յղացքը, մինչդեռ 37ը եւ 49ը, ինչպէս նաեւ Սումգայիթը զովաբանուած կարգերու տակ գործադրուած սպանդներ էին, ամբողջ եօթանասուն տարի *«Հզրայրութիւն»* խաղցած եղբայրասպաններու յայտնութիւն...

Արուեստի գործեր ու քիչ թիւով մեծազործութիւններ չեն արձանագրուած հայոց պատմութեան վերջին էջերուն, բայց եւ սեւ ու կարմիր թուականներու յաճախանքը կայ ու կը շարունակէ արիւնել հայ մարդուն սիրտը...

Ա. ՔՈՉԻՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՓՇԱՎԱՐԻ ՄԷՋ

Ահաւասիկ վիճակ էր ստեղծուել 50ական թուականների սկզբներին հանրապետութիւնում, յատկապէս դիւղերում: Այդուհանդերձ, մենք ամէն ինչ անում էինք, բաւարար պայմաններ ստեղծելու հայրենադարձների համար: Անտանելի ծանր կացութիւն էր ստեղծուել: Հայրենադարձները հրաժարւում էին մեկնել դիւղական շրջաններ, բոլորը ձգտում էին անցնել Երեւան: մասամբ էլ Լենինականում ու Կիրովականում: Իսկ մենք քաղաքներում բնակիչներու դրեթէ ոչ մի հնարաւորութիւն չկար, մա՛նաւանդ պատերազմից յետոյ դիւղերից մեծ արտահոսք էր տեղի ունեցել: Չնայած առկայ դժուարութիւններին, հայրենիքն ընդունեց շուրջ 100 հազար հայրենադարձ: Թոյնելով տուն ու տեղը, անհամեմատ բարեկեցիկ յաւ կեանքը, մարդիկ գալիս էին հայրենիք, դրսեւորելով իրենց նուիրուածութիւնը խորհրդային կարգերին, Ռուսաստանին: Նրանք չէին ընկրկում ոչ մի դժուարութիւնից: Մի խօսքով, հայ ժողովուրդը միաւորում էր խորհրդային դրօշի ներքոյ, մայր հայրենիքում՝ Հայաստանում:

Լաւագոյն կողմերով դրսեւորելով իրեն ինչպէս ռազմաճակատում, այնպէս էլ թիկունքում եւ արտասահմանում, ամէն հայ համոզուած էր, որ իր անտահման նուիրածութիւնը կ՝արժանանայ պատշաճ վերաբերմունքի կուսակցութեան եւ սովետական կառավարութեան կողմից: Սակայն ինչ կարելի էր սպասել ստալինեան բռնապետութեան ահեղ ժամանակաշրջանից: Դահճապետ Լ. Բերիան հայ լեգէոնների փառաբ չահարկելով, պատերազմի աւարից անմիջապէս յետոյ կարգադրեց պետական անվտանգութեան մինիստրութեանը յայնօրէն ստուգել հանրապետութեան բնակչութեանը, յայտնաբերել անվստահելի անձանց՝ աքսորելու նպատակով: Հանրապետութիւնում գեկավարութիւնը ստիպուած էր իր համաձայնութիւնը տալ նման «միջոցառմանը»: Պետական անվտանգութեան մինիստր Կրեմեանը դրեց այդ սեւ գործի հիմքը, «ստուգման» ենթարկուեցին ոստանեակ հազարաւոր մարդիկ: Հարկ է նշել, որ Կրեմեանն՝ իր հակաժողովրդական գաժան գործերի համար հետապատում պատասխանատուութեան ղեղակահարութեան: Աքսորման եւ առհասարակ «քննութեան գործի» մեծ մասը կատարուեց Սերգէյ Կորիմագեանի օրոք: Իր գործած յանցանքների համար Կորիմագեանը եւս բանտարկուեց:

Ցիշում եմ. Յունիսի 1ի կիրակի օրը կենտկոմից մեքենայ ուղարկեցին իմ յեւուից՝ շտապ ներկայանալու կարգադրութեամբ: Վարորդի հետ եկած կենտկոմի աշխատողը զգուշացրեց, որ շուտով խորհրդակցութիւն է սկսուե-

յու. «Խոպէինն ասաց, որ չասպէք»: Ես աշխատում էի Կենտկոմի կողքերի գծով քարտուղար: Արագ հաղորդուեցի եւ ներկայացայ Կենտկոմի բիւրոյի նիստերի դահլիճ, որտեղ հաւաքուած էին շեկիստի համազգեստով անծանօթ մարդիկ եւ հանրապետութեան ակտիւ՝ քաղկոմ–շրջկոմների առաջին քարտուղարների հետ միասին:

Խորհրդակցութիւնն անցաւ յոյժ դաղտնի: Հաղորդումով հանդէս եկաւ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Ցարուբիւնովը: Նա նշեց «մաքրման» միջոցառման քաղաքական եւ պետական նշանակութիւնը: Իր ելոյթում ՀՍՍՀ պետական անվտանգութեան մինիստր Ս. Կորխմազեանը մանրամասն բացատրեց, որ արդէն հանրապետութիւն են ժամանել յատուկ գօրամասերի ստորարաժանումներ, որոնք մէկ դիշերուայ ընթացքում կուսակցութեան ակտիւի օժանդակութեամբ պէտք է աւարտեն այդ աշխատանքները: Նախօրօք պատրաստուած էին ցուցակները, թէ ակտիւից ով որ շրջանը պէտք է մեկնի: Ինձ ամրացրել էին Լենինականին: Խորհրդակցութիւնը վերջանալուց յետոյ խնդրեցի թոյլ տալ տուն գնալ՝ պատրաստուելու համար. ես Կենտկոմ էի եկել միանգամայն անպատրաստ: Ինձ կտրականապէս արգելեցին, մեկնեցինք անմիջապէս՝ Լենինականին ամրացուած զինուորական ջոկատների դեկավարների հետ:

Յունիսի 12ին հրաւիրեցինք Լենինական քաղաքի կուսակցական ակտիւի խորհրդակցութիւն, որտեղ հաղորդումով հանդէս եկաւ պետական անվտանգութեան մինիստրութեան ներկայացուցիչը: Նա աւելացրեց, որ աշխարհում սկսուող սաստիկ պատերազմների պատճառով պակաս նշանակութիւն չունի նման «անվտահելի» տարրերից ազատուելը յատկապէս սահմանամերձ շրջաններում ու հանրապետութիւններում:

Քաղաքային կոմիտէում զինուորականներին ամրացուեցին կուսակցական ակտիւի ներկայացուցիչներ, որոնք պարտաւոր էին արագ օրէն ճշտել հասցէները, որպէսզի մինչեւ լուսաբաց աւարտուէր «օպերացիան»:

1949 թ. Յունիսի 14ի առաւօտեան քաղկոմի առաջին քարտուղար Արմօ Հարենցի հետ որոշեցինք տեսնել աքսորավայր ու դարկոպոնների: Զինուորական պարեկը չթոյլատրեց մօտենալ ապրանքատար վագոնների շուրջը հաւաքուած բազմութեանը: Ի վերջոյ, հրամանատարի թոյլտուութեամբ մօտեցանք այդ կատարեալ մգձաւանջին: Ամէնուրեայ ու կոծ, երեխաների ճիչ, զարմանք եւ զայրոյթ, թէ ինչու են իրենց աքսորում. մի խօսքով՝ աննկարագրելի տեսարան:

Երբ անցնում էինք վագոնների մօտով, մէկը բարձրաձայն տուեց իմ ազգանունը, ես յետ նայեցի: Մի դեռահաս աղջիկ փորձում էր մօտենալ ինձ, զինուորականն արգելում էր: Մօտեցայ ինքս: Աղջիկը յուզուած ասաց, որ իր եղբայր Մանասն իմ ընկերն է, որ ինք ինձ տեսել է իրենց տանը կեանս իմ կոմերիտական աշխատանքի տարիներին: Մանասին լաւ էի յիշում: Պարզուեց, որ Մանասը մի տարի առաջ դոհուել է աւտովթարից: Նա պատմում էր, որ հայրը չի թողել որեւէ իր, տաք հագուստ վերցնել, որովհետեւ վստահ էր ,որ պատահածը թիւրիմացութիւն է, ինչպէ՞ս կարող են անմեղ մարդուն բանտարկել:

Այդ օրն ինձ զիմեցին շատ շատերը. ցաւ օր, ոչինչ անել չէի կարող: Այնուամենայնիւ, երեք ընտանիքների տուեալները գրեցի: Վերադարձանք կուսակցութեան Լենինականի քաղկոմ: Պետական անվտանգութեան մինիստրութեան ներկայացուցիչներն ու Լենինականի բաժանմունքի պետ Մ. Կարապետեանը կտրականապէս մերժեցին այդ երեք ընտանիքներին ազատելու խնդրանքը: Ստիպուած հեռախօսով զիմեցի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Ցարուբիւնովին: Նա շատ զայրացաւ, թէ ինչու եմ զնացել կայարան եւ

խօսել աքսորականների հետ: Ասաց, որ ինքը ոչինչ անել չի կարող: «Դու ես ամրացուած Լենինականին, դու էլ հարցերը յուծիր քաղաքի դեկավարների հետ միասին»: Նորից սուս կեր տուեցինք տուեալները. ցաւօք, արդէն մոռացել եմ նրանց ազգանունները: Սուս գումները պարզեցին, որ նրանք միանգամայն անմեղ աշխատաւոր մարդիկ են: Իմ պատասխանատուութեամբ կարգադրեցին երեքին էլ վերադարձնել տները: Երբ սուս գողները գեկուցցին, որ նրանք լիովին անմեղ են, բաժանմունքի պետ Մ. Կարապետեանը գայրացած ասաց. «Երեւում է՝ լաւ չէք սուս գել, չէ՞ որ նրանք ծնուել են արտասահմանում»: Շուտով պարզուեց, որ ընտանիքի տարեց անդամներից մէկը սարիգամիշցի, միւս երկուսը՝ դարսեցի են: Միայն այդ պահին իմացայ, որ Արեւմտեան Հայաստանում ծնուածների նկատմամբ առանձնակի խիստ վերաբերմունք էր դրսեւորում: Իմ ինքնագլուխ որոշումը թանկ նստեց վրաս: Ղեկավարութիւնը լրջօրէն կշտամբեց՝ իմ արարքը որակելով օպորտունիստական:

Հետագայում պարզուեց, որ մինիստրութեան աշխատակիցները դաժանօրէն են վարուել այն ընտանիքների հետ, ում անդամներից մէկն ու մէկը բանտարկուել էր 30–40ական թուականներին:

Ահա պաշտպանական ու գործնական նման սկզբունքներով էին ղեկավարում պետանվտանգութեան մինիստրութեան այն ժամանակուայ առանձին հայ աշխատողները՝ սուալինեան դաժան ռեժիմի պայմաններում օրինականացնելով իրենց սրբապիծ գործողութիւնները:

Յիշում եմ այսպիսի մի դէպք. կուսակցութեան ակտիւ իյիշալ խորհրդակցութեան աւարտից յետոյ Կենտկոմի ապարատի աշխատողներից մէկը իմացել էր, որ կիրովականցի իր բարեկամը նոյնպէս սեւ ցուցակում է: Յունիսի 11ի գիշերը նա մեկնում է Կիրովական, զգուշացնում վերահաս վտանգի մասին: Քաղաքից բացակայելով՝ նրա բարեկամը, փաստօրէն, ազատում է աքսորից:

Ինչպիսի՜ անարդարութիւն...: Մի ապր, որ իր ողջ էութեամբ նուիրուած էր խորհրդային կարգերին, չգիտես ո՛ր մեղքի համար անվստահելի էր յորջորջում եւ ենթարկում սոսկալի պատիժների: Միայն Հայաստանում չէր, որ կատարուեց մարդման «օպերացիա», բայմաթիւ անվստահելի հայեր յայտնաբերուեցին Ադրբեջանում, մասամբ էլ՝ Վրաստանում: Ադրբեջանի կուսակցութեան Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Բաղիրովը, որը Բերիայի աջ ձեռքն էր, առանց սուս գումների աքսորավայր ուղարկեց բոլոր նրանց, ում չէր սիրում կամ ովքեր «իւրային» չլինելով՝ գրգռեցնում էին կարեւոր պաշտօններ: Երեք հանրապետութիւններից աքսորավայր ուղարկուեցին մի քանի տասնեակ հազար անմեղ մարդիկ: Նրանց մէջ կային ծերեր, կանայք ու երեխաներ:

Յատկանշական է, որ կուսի տարիներին հայերի կողմից մեր երկրի սահմանների խախտման դիւրաժան դէպքեր չեն եղել: Յիսնական թուականների սկզբներին, չդիմանալով ծանր պայմաններին, մի քանի հայրենադարձներ, խախտելով պետական սահմանը, անցան արտասահման, վերադարձան իրենց նախկին բնակավայրերը: Այս փաստը շատ մեծ ազդակ հանեց հանրապետութեան աշխատաւորութեան շրջանում. նրանք դատապարտում, անարգանքի սիւնին էինք քամում փախստականներին: Պարզ է, որ այս երեւոյթի հանդէպ իրենց խօսքը պէտք է ասէին կուսակցութեան դեկավար մարմինները:

1953 թ. սկզբներին ՍՄԿԿ Կենտկոմի քաղբիւրոն քննութեան առաւ սահմանախախտման դէպքերը: Հրաւիրեցին կուսակցութեան Կենտկոմի քարտուղար Գրիգոր Յարութիւնովին եւ ինձ (այդ ժամանակ աշխատում էի որպէս Մինիսարների խորհրդի նախագահ): Քաղբիւրոյի նիստը դեկավարում

էր Բերիան, իսկ Ստալինը կողքի սեղանի մոտ կանգնած՝ զրպարտած էր իր ծխամորճով, Բերիան կարդաց որոշման նախագիծը, որտեղ նախատեսում էր նկատողություն յայտարարել Ցարուբինովին եւ ինձ՝ համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար: Մի քանի բոպէ քարացութիւն տիրեց: Քարբրոյի անդամներից ոչ ոք ձայն չհանեց: Բոլորն ապատում էին Ստալինի խօսքին: Ցանկարծ նա մօտեցաւ նախագահի սեղանին եւ դիմեց Ցարուբինովին. «Որքա՞ն մարդ էք ընդունել»: «Շուրջ հարիւր հազար, ընկեր Ստալին»,— պատասխանեց Ցարուբինովը: Ստալինը նորից մօտեցաւ իր սեղանին, լցրեց ծխամորճը, վառեց ու կարծես Մոլոտովին դիմելով՝ ասաց. «Եթէ գիտենք 100 հազար մարդ է տեղափոխուել դրախտ, կը գտնուեն այնպիսիք, ովքեր կը ցանկանան ապրել գիտենք մ»: Ստալինի այս յայտարարութիւնից անմիջապէս յետոյ Բերիան առաջարկեց հարցը հանել քննարկումից, բաւարարուել առաջնորդի դիտողութիւններով: Մենք ազատուեցինք պատժից:

Վերադառնալով Երեւան, Հկկ Կենտկոմը յուրջ միջոցներ ձեռնարկեց հայրենադարձների շրջանում քաղաքական–մասսայական աշխատանքներ աշխուժացնելու նպատակով:

1953 թուականին, Ստալինի մահից յետոյ, Հայաստանի գեկոմարութիւնը հարց յարուցեց 1949 թ. աքսորուածներին արդարացնելու մասին. Աքսորուածների արդարացման գործը աւելի արագացուեց Բերիային գնդակահարելուց յետոյ: 1955 թ. սկսուեց նրանց վերադարձը: Շատերն արդէն չկային...: Դա իսկական բարբարոսութիւն էր այն հայրենասէր մարդկանց հանդէպ, ովքեր թողած իրենց տունն ու ունեցուածքը, հայրենիքի կոչով տոգորուած, հրկրագնդի բոլոր ծայրերից եկան Սովետական Հայաստան, բայց դեռ ոտք մայր հողի վրայ չդրած՝ աքսոր ուղարկուեցին: Ամենաշատը տուժեցին ամերիկահայերը: Աքսորեալների մէջ քիչ չէին արտասահմանեան տասնեակմ կուսակցութիւնների ներկայացուցիչներ: Միանգամայն հասկանալի է, որ նման դաժանութիւններ կարող էին կատարուել միայն մի երկրում, որտեղ լիովին անտեսում էին գրուած ու չգրուած բոլոր օրէնքները:

Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի հռչակած դեմոկրատացման ու վերակառուցման քաղաքական կուրսը լրիւ իրագործելով, յուսանք, որ այժմ կը բացառուեն նման անարդարութիւնները եւ ամենաթանկ կապիտալի՝ մարդու իրաւունքներն այլեւս չեն ոտնահարուի («Գարուն», 1989, թիւ 3):

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆԵԱՆ

Ս. ԽԱՆԶԱԴԵԱՆ

ԱՐԻՆՈՏ ՎԱՐԱԳՈՅՐԸ ԴԵՌ ՉԻ ՊԱՏՌՈՒԵԼ

ՍՈՎԿ կենտկոմի քարտուղարի յատուկ յանձնաժողովն իր հերթական նիստում լսեց ՍՍՀՄ Գերագույն դատարանի հաղորդումը՝ կապված «Հրէական հակաֆաշիստական կոմիտէի» անմեղ զոհուած անդամների պատուի ու իրաւունքների վերականգնման հետ:

1948 թուականի վերջերին այդ կոմիտէն ցաքուցրիւ արուեց: Նրա անդամներից մի մեծ խումբ ձերբակալուեց, բանտարկուեց: Նրանք մեղադրուեցին «պետութեան դէմ յանցանք կատարելու», ինչպէս եւ «լրտեսական գործունէութեան համար»: 1952ին Գերագոյն դատարանի զինուորական կոլեգիան մահուան է դատապարտել այդ մարդկաց մեծագոյն մասին, իսկ մի մասն էլ ենթարկուել է երկարամեայ աքսորի ու բանտարկութեան:

Ինչպէս *«Իզվեստիա»*ն է գրում Յունուարի 25ի համարում, 1955ին ստուգուեց եւ պարզուեց, որ «Հրէական հակաֆաշիստական կոմիտէին» ներկայացուած մեղադրանքները լիովին կեղծ են, շինծու, յօրինած-քքիած: 1955ի Նոյեմբերի 22ին կոլեգիան վերանայեց այդ դատավճիռը եւ չեղեալ յայտարարեց:

Քաղաքացիական յանձնաժողովը գրում է, թէ կուսակցութեան մէջ վերականգնուեցին այդ կոմիտէի բոլոր անդամները, շատերը՝ յետ-մահու: Ապա՝ «Այդ օրերին դատական եւ կուսակցական ռեաբիլիտացիայի արդիւնքները չեն արժանացել հրապարակայնութեան... Յանձնաժողովը անհրաժեշտ գտաւ հրապարակել այս հաղորդումը»:

Ողջ գիշեր քունս չտարաւ: Տապակ-տապակ վառուում էի, յիշելով նոյն ժամանակ մեզ՝ հայերիս հետ կատարուած ոճրագործութիւնը՝ հայերի զանգուածաբար աքսորը: Հետագայում, երբ աքսորից ազատուած վէտերին հարցրի, թէ ինչո՞ւմ են մեղադրել, ասաց. «իբրեւ Գերմանիայի լրտեսի», մէկ ուրիշ ազատուած, կոմունիստ Վազարշակ Ափեանն ինձ ասաց, թէ իբրեւ մեղադրել են իբրեւ պետութեան դէմ յանցանք գործող. նոյնը, ինչ-որ հրէական կոմիտէի մարդկանց:

*«Իզվեստիա»*յի հաղորդումը կարդացի ու յիշեցի 1949 թուականի Յունիսի 9ի սարսափելի գիշերը...

Յունիսի 8ի երեկոյեան տասնեակ բեռնատոներ կանգնեցին իմ խրճիթի մօտ՝ օպերայի բակում: Տանս մօտ Սպանդարեանի կուսշրջկոմի սեւ շէնքն էր: Դա էլ յանկարծակի շրջապատուեց զինուորներով:

Ի՞նչ է: Ի՞նչ է: Նորի՞ց ադէտ: Վագեցի շրջկոմ: Անծանօթ տարբերանշաններով զինուորականներն ինձ յետ մղեցին: Ես նրանցից մի սպայի ճանաչեցի: Ախր, երկու օր առաջ նրան տեսայ Քոլագիրանի կայարանում: Չորս հոգով՝ Սողոմոն Տարօնցին, Սարմէնը, Զարգանդ Դարբեանը (ոդորմի նրանց) եւ ես, գնացել էինք Ստեփանաւան՝ մասնակցելու Պուշկինի ծննդեան 150ամեակի հանդէսներին, որ կատարւում էր Դուալի (Պուշկինի) լեռնանցքում: Ետ էինք գալիս: Քոլագիրանի կայարանում մեզ ասացին, թէ Թիֆլիս–Երեւան գնացքը ուղեւոր չի վերցնում…

Գնացքը եկաւ, կանգնեց: Վագոնները լիքն էին զինուորներով: Ես մօտեցայ վագոնից կառամատոյց իջած երկու, թէ երեք սպաների, որոնցից մէկը գնդապետ էր· զինուորավարի ողջունեցի նրանց, խնդրեցի, որ մեզ՝ չորս գրողներիս, վերցնեն իրենց հետ:

— Չեմ կարող,— կտրեց գնդապետը:

Ես ասացի, թէ նախկին ռազմաճակատային եմ, պահեստի սպայ եւ ցոյց տուի զինուորական գրքոյկս: Գնդապետը հետաքրքրուեց, թէ ո՞ր ռազմաճակատներում եմ եղել: Ասացի: Նա պայծառացաւ:

— Բարի՛… Ես էլ եմ եղել Վոլխովի ռազմաճակատում: Ձեզ կը վերցնեմ, իսկ ձեր ընկերներին՝ ոչ:

Ես հրաժարուեցի նրա բարութիւնից, մնացի ընկերներուս հետ:

Եւ ահա Սպանդարեանի շրջկոմի մուտքին մօտ տեսայ այդ զինուորներին:

*
* *

Յունիսի 9ի լուսաբացին, հարեւանս, մի բարի պառաւ մայրիկ սարսափահար մտաւ խրճիթս:

— Էս գիշեր հազարաւոր երեւանցիների տներից հանեցին, տարան, բեռնեցին «տաւառնի» վագոններ ու քշեցին Սիբիր: Ախորեցին:

Օրը բացուեց սեւ, արիւնոտ: Քաղաքի վրայ կարծես քարէ կարկուտ էր մաղուել: Մարդիկ իրար հարցնում էին ահով· «Քեզ չե՞ն տարել»: «Չէ, աներոջս ընտանիքն են տարել»:

Հանդիպեցի զինուորական ընկերոջս՝ Սուրէն Քարամեանին:

Հարցրեց՝ Գորիսից լուր ունե՞մ:

— Գորիսից ու գիւղերից եւս հարիւրաւոր ընտանիքներ են ախորել,— ահով աւելացրեց նա:— Հօ մօրդ՝ Վարդանոյշ մայրիկին ձեռք չե՞ն տուել…

Հեռախօս չունէի: Վագեցի միջ–քաղաքային՝ միացրէք Գորիս: «Գիծ չկայ,— ասացին:— Ընդհատուած է»:

Դժբա՛խտ ժողովուրդ…: Միայն երեք օր յետոյ իմացայ, որ մօրս ու երկու քոյրերիս եւս ախորել են Գորիսից: (Նրանց բոնի մեր տնից հանող ու բեռնատաս զցողը դեռ կենդանի է): Ես մեր ոնց ետ բերի ախորի ճանապարհից, Քաշկիրիայի Աբդուլինս կայարանից, 14 օր տառապելուց յետոյ: Հապա միւսնե՛րը…

Իմ հաշուով 1949ի Յունիսի 9ին Հայաստանից արտաքսուել են ոչ պակաս 100 հազար հայեր: Ախորուածների մէջ շատ յոյի կանայք, շատ ու շատ նորածիններ են եղել: Մի այդքան հայ էլ արտաքսել են Վրաստանից, Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից:

Ստալինի մեռնելուց յետոյ, ի հարկէ, ամբաստանուած ժողովրդին ետ տուին իրենց տեղերը: Սակայն հշածների կէսը հազիւ վերադարձաւ:

Այս սոսկալի եղեռնի մասին քառասուն տարի մեզանում բարոյութիւն ցուցաբերուեց: Այդ մասին մի տող անգամ չի գրուել, ոչ մի թիւ չի հրապարակուել: 1956ին, այո, օրգաններում «արդարացուել» են բոլոր ամբաստանուածները, սակայն որեւէ խօսք չհրապարակելով այդ մասին: Ինչո՞ւ:

Հիմա պէտք է աշխարհով մէկ ի յայտ անել այս եղեռնագործութիւնը եւս:

Պէտք է ստեղծել յատուկ յանձնաժողով՝ կատարուածը մանրամասն ուսումնասիրելու նպատակով, կազմել ամբաստանուածների ստոյգ ցուցակներ: Այդ ամբաստանուածներից շատ-շատերը ողջ են: Պէտք է խնամքով գրի առնել նրանց վկայութիւնները ու հրապարակել (տպագիր) տեղեկատու ցուցակների հետ: Բռնագրաւուած տների, բնակարանների, հողի, անասունների, գոյքի համար դրամական հատուցում պէտք է կատարել:

Այդ արիւնոտ պատմութիւնը, այդ ժողովրդասպանութիւնը պէտք է մանրամասն ուսումնասիրուի ու հրապարակուի: Դեռ այն ժամանակ իմ. „անք (կցկտուր), որ հայ ժողովրդի զանգուածային ամբաստանումն ու բնաջնջումը կատարուել է Ստալինի հրամանով: Պէտք է այդ մարդասպանին յետմահու կանչել դատարանի: Այդ արիւնոտ հրամանը կատարողներից ոմանք դեռեւս ողջ են, պաշտօնեաներ են գրաւում եւ օգտուում առատ թոշակներից: Նրանց պէտք է պատասխանատուութեան կանչել:

Այս անելով մենք օգտակար դաս կ'ունենանք, որպէսզի չկրկնուի անցեալը: Զէ՞ որ արդէն չորրորդ տարին է՝ երկիրը բեւակոխել է արդարութեան, վերականգնման, ահաւոր սխալների վերացման, ազնիւ հրապարակայնութեան, դիմոկրատիայի ու յեղափոխական վերակառուցման շրջան: Վաղուայ օրը լուսաւոր դարձնելը անհնարին է, առանց երէկուայ խաւարը գրելու («*Գրական թերթ*», 1989, թիւ 8):

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

Կը ԳՆԱՅ ԺԱՄԱՆԱԿԸ...

ԿԱՐՊԵՍ ՄԱՐԳԻՍԵԱՆ

Անշուշտ, կը գայ ժամանակը եւ ի յայտ կը բերի բուն ճշմարտութիւնը 1946–48 թուականների հայրենադարձութեան մասին, որ չգիտես ում կամքով, ինչ նպատակով նախաձեռնուեց ու տեղի ունեցաւ խիստ անպատեհ ժամանակաշրջանում: Տարիներով ափիոնահայութեան առաջ պինդ փակուած տխրահոչակ «Երկաթէ վարագոյրը» չգիտես ինչ «հրաշքով» յանկարծ բացուեց եարիւր հազար հայրենադարձների առաջ եւ իսկոյն պինդ փակուեց դարձեալ նրանց հետեւից: Ժամանակն անպատեհ էր ոչ այնքան յետպատերազմեան ծանր իրադրութեան, որքան ստալինեան բռնապետութեան մութ ու ապատիեի մրնոլորտի պատճառով: Հայրենադարձութիւնը մի տեսակ որոգայթի տեսք ստացաւ ու վարկաբեկուեց, մա՛նաւանդ՝ երբ դրա սրբազան խորհուրդն իսկ պղծուեց մի թելք-մոքէ դուրս հորուածով, որ ոնրային անհերթերութիւնների գլուխ-գործոց էր. վերջնական ու հարազատ հանգրուան գտնելու հաւատքով իրենց պատկանող հայրենիքն եկած հազարաւոր հայրենադարձներ յանկարծ հեռաւոր Սիբիր աքսորուեցին 1949ին, ապշահար ու տեսարեկուած, չհասկանալով՝ իրենց ո՞ր մեղքին համար: Իսկ չաքսորուած հազարաւորների գլխին էլ սեր կախուած մնաց դամոկլեան սրի նման մինչեւ 1953 թուականը, ճնշելով, բանտարկելով, փակելով նրանց հոգին, հաւատքը նզմելով: Դա հոգեկան լիակատար փլուզում էր: Զէ՞ որ այդ հարիւր հազարին հայրենիք բերող բուն եւ միակ մղումը հենց ռոմանտիկ զգացումն էր ամենաբարձր ու անխառն իմաստով: Դա ոչ մի կողմնակի նկատառում հաշուի չառնող հայրենասիրութիւնն էր. մի մեծ զգացում՝ որ այդ հոգեվիճակը չապրած մարդկանց համար դժուար հասկանալի էր ու մինչեւ հիմա էլ շատ-շատերի համար մնում է անհասկանալի. մինչեւ իսկ չթաքցնենք ընթացիկ ճշմարտութիւնը, հեգնանքի կամ առնուազն դատապարտող կարեկցանքի առարկայ է դառնում: Հաշի՞ւ առողջ տուն-տեղ ու գործ չէր բողնի, չէր զայ, որովհետեւ բոլորն էլ գիտէին, թէ բազում ու բազմապիսի դժուարութիւնների էին ընդառաջ գնում, թէ սա էլ գաղթականութեան վինակ էր լինելու, բայց ունէին այն հաւատքն եւ ուրախութիւնը, թէ սա վերջին գաղթն էր արդէն՝ ներգաղթ: Ամենայն պատասխանատուութեամբ վկայում եմ, որ հոգեկան փլուզման պատճառը նիւթական ծանրածանր դժուարութիւնները չէին, ամենեւին ո՛չ: Հենց ստալինեան բռնութեան մամլիչն էր, որ նզմեց հաւատքն եւ ուրախութիւնը վերածեց դ~~ա~~նութեան բաժակի, մա՛նաւանդ այդ զարհուրելի անհերթերութիւնից՝ դէպի Սիբիր վերազաղթեցնում — աքսորից յետոյ, որ բացարձակապէս ոչ մի արդարացում չի կարող ունենալ (*Ազգ ամբոխներ — «Սովետական արուեստ»* — 1989, թիւ 8):

Ա. ԱՒԱԳԵԱՆ

ՅԻՇԵԼԸ ՄԵՐ ԽՂՃԻ ՊԱՐՏՔՆ Է

Ձեր թերթի այս տարուայ Տրդ համարում կարդացի Սերօ Խանդպեանի «Արիւնոտ վարագոյրը դեռ չի պատռուել» յօդուածը, որի հրապարակման համար յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

Մասնիկեան անհրապարակ մնացածներից փրկուած չատ-չատերից մէկն էլ ես եմ եւ գտնում եմ, որ Սերօ Խանդպեանի առաջարկները չափազանց անհրաժեշտ են եւ դրանց իրագործումը կը լինի մեր յարգանքի առաջին այն անմեղ հայերի յիշատակին, ովքեր դահ դնացին 1949ի եղեռնին:

1949 թուականի Մարտին նման յանցագործութիւններ կատարուեցին նաեւ մերձբալթեան հանրապետութիւններում: «Զարնոյոկ»ը 1988ի N° 15ում տպագրեց մի յօդուած, որտեղ նկարագրուած է, թէ ինչպէս Ռիգայում, գերեզմանատներ նշուեց 1949 թուականի Մարտի 25ի եղեռնագործութեան տարելիցը: Ի զէպ՝ նրա կազմակերպիչը գրողների միութեան վարչութիւնն էր:

Յարգելի խմբագրութիւն, իմ կարծիքով ժամանակն է, որ մենք հետեւենք Լատվիայի օրինակին եւ ինչ-որ ձեւով նշենք մեր ազգային ողբերգութիւններից եւս մէկը՝ 1949 թուականի Ցեղասպանի 14ը: Մի՞թէ մենք, հայերս, զուրկ ենք մեր մօտակայ անցեալի յիշողութիւնից:

Որքան հարուստ կը լինէր մեր նորագոյն պատմութիւնը, եթէ գրի առնուած ու տպագրուած լինէին 1915 թուականի եղեռնի ականատեսների յուշերը: Զարմանալի է մտածել, որ տարիները տանում են այն բոլոր մարդկանց, որոնց վկայութիւնները կարող էին ցրել երկրաւոր խաւարը:

Անցեալի դասը ողբերգութիւնը չկրկնուելու համար այսօր արդէն պէտք է սանդնել նախաձեռնող խումբ, որն էլ կը կազմի բնդ. Խանդպեանի առաջարկած յատուկ յանձնաժողովը եւ կ'որոշի, թէ ով պիտի աշխատի այդ յանձնաժողովին՝ իրականացնելու իր առջեւ դրուած խնդիրները: Գուցէ հենց Ձեր խմբագրութիւնն էլ գտնայ այդ գործի նախաձեռնողը:

Ուզում եմ յիշեցնել, որ այս տարի լրանում է այդ շարաբաստիկ եղեռնութեան 40ամեակը, այսպէս կոչուած, «յոբելեանական տարին»:

Ընչելը ամօթ է մեզ («Գրական թերթ», 1989, թիւ 13):

Ս. ԽՈՒԴԵԱՆ

ԽՂՃԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Աւելի քան քառասուն տարի ինձ տանջում է եղեռնական այն իրադարձութիւնը, որի մասին վերջերս *«Գրական Թերթ»*ում այնքան մեծ կրքով գրեց մեր ականաւոր գրող Սերօ Խանզադեանն իր *«Արիւնոտ վարագոյրը դեռ չի պատռուել»* յօդուածում:

Եւ ահա այդ յօդուածն ինձ ստիպեց գրիչ վերցնել եւ պատմել յիշեալ իրադարձութեան հետ կապուած մի դէպք, որին անմիջական առընչութիւն եմ ունեցել ինքս: Այդ մասին շատ եմ պատմել հարազատներիս ու ընկերներիս, կիսել իմ ծանր ապրումները, բայց, չգիտեմ ինչու, չեմ փորձել մեր անուանի գրողից առաջ մամուլին յանձնել այն: Խիղճս տանջում է նաեւ դրա՛ համար...

Բայց մինչ այդ կը ցանկանայի երկու խօսքով յիշեցնել մեր ժողովրդի հետ կապուած դաժան մէկ այլ իրադարձութիւն, որի վերաբերեալ, չգիտես ինչու, ոչ մի խօսք չի ասում:

Բոլորին յայտնի է, թէ ինչպիսի հերոսական կռիւներ է մղել Հայկական 89րդ հրաձգային դիվիզիան ֆաշիստական հորդաներից Ղրիմը ազատագրելու համար: Այդ կռիւներում մեր դիվիզիան տուել է հազարաւոր զոհեր, պարգեւատրուել է կարմիր աստղի շքանշանով, իսկ նրա երկու գնդերին շնորհուել է «Սեւաստոպոլեան» կոչում: Մի քանի հոգի Սովետական Միութեան հերոսի կոչում են ստացել, իսկ հարիւրաւոր մարտիկներ ու սպաներ պարգեւատրուել են զանազան շքանշաններով ու մեդալներով: Մի խօսքով՝ Ղրիմի ազատագրական գործում շատ մեծ է Հայկական 89րդի դերը:

Ասեմ նաեւ, որ Ղրիմի հայերը, ենշող մեծամասնութեամբ, ակտիւօրէն մասնակցում էին գերմանացիների դէմ մղած կռիւներին, օգնում մեր պարտիզաններին: Ես նոյնիսկ տեսել եմ հայկական մի քանի գիւղ, որոնք ֆաշիստների կողմից հիմնովին այրուել-ոչնչացուել էին՝ սովետական պարտիզաններին օգնելու համար:

Եւ ահա այս բոլորից յետոյ եկան եւ «վերեւի» անունից մեր դիվիզիային հրամայեցին մասնակցել Ղրիմի հայերի արտաքսմանը՝ մեր իսկ ազատագրած երկրամասից: Պէտք էր տեսնել, թէ դիվիզիայի մարտիկները ինչ զայրոյթով դիմաւորեցին այդ վայրագ հրամանը:

— Էլ ո՞ւմ համար էինք կռուում, ինչո՞ւ այսքան արիւն թափեցինք ու զոհեր տուեցինք, եթէ հիմա էլ մեր իսկ ձեռքով ու զէնքով պիտի արտաքսենք մեր արիւնակիցներին…

Նոյնիսկ հրամանը կատարելուց հրաժարուելու փորձ արուեց: Բայց դա էլ չօգնեց: Ի վերջոյ, ղրիմահայերին աքսորեցին Ղրիմի թաթարներին հետ միասին:

Ինչպէ՞ս մոռանամ այդ հայատեաց արարքը…

Իսկ այժմ 1949ի մասին:

Օրը չեմ յիշում: Խանզադեանը գրում է, որ դա եղել է Յունիսի 9ին: Իրօք, ամառային տաք օր էր: Մեզ՝ հիմնարկների կուսքարտուղարներիս, կանչեցին Սպանդարեանի շրջկոմ (այդ շրջկոմի մասին է նշել Խանզադեանը): Մեզնից ոչ մէկը չգիտէր, թէ ինչու են կանչել: Նստած էինք դահլիճում, եւ լուսամուտներից երեւում էին օպերայի բակում բազմաթիւ բեռնատար աւտոմեքենաներ: Մի քանի ժամ այդպէս նստած մնացինք: Նոյնիսկ չէին թողնում ծխելու դուրս գալ: Ասես բանտարկուած լինէինք: Վերջապէս կէսգիշերին բեմ բարձրացաւ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը՝ շրջապատուած մի խումբ բարձրաստիճան չեկիստներով: Յարութիւնեանը ձայն տուեց նրանցից մէկին:

Այդ «մէկը» չոր ու ցամաք տոնով մեզ ասաց, որ վերեւից եկած հրամանի համաձայն պէտք է հանրապետութեան սահմաններից արտաքսուեն բոլոր նախկին դաշնակցականները, տրոցկիստները, աջ ու ձախ թեքումներին պատկանողները, կուլակները, պատերազմի ժամանակ գերի ընկածները եւ սովետական իշխանութեան այլ «թշնամիներ»՝ իրենց ընտանիքներով:

Ոչ մի հարց, ոչ մի պատասխան:

Մեզ տուեցին հացէներ, աքսորուողների անուն-ազգանունները եւ հրամայեցին անմիջապէս գործի անցնել: Տուեցին նաեւ մի բեռնատար աւտոմեքենայ, երկու ռուս զինուած չեկիստ: Ինձ հետ էր Երեւանի հեռակայ մանկավարժական ինստիտուտի կուսկազմակերպութեան քարտուղար Ս. Փիրուզեանը: Նա կարող է հաստատել ասածներս:

Մենք պիտի աքսորէինք Պարսկաստանից եկած մի ընտանիք, որն ապրում էր այժմեան Բաղրամեան փողոցի (չեմ յիշում փողոցի այն ժամանակուայ անունը) սկզբի ձախ թեւի նորակառոյց շէնքի երրորդ յարկում: Գիշերուայ ժամը 2ին եկանք այդ տուն, ծեծեցինք դուռը: Մեզ պատասխանեց մի տղամարդ: Պահանջեցինք դուռը բացել, ասելով, որ կարեւոր բան ունենք յայտնելու:

— Ախր, ինչո՞ւ այս կէսգիշերին, չի՞ կարելի այդ անել առաւօտեան,— հարցրեց տղամարդը:

— Ոչ,— պատասխանեցինք նրան,— մեզ հրամայուած է այժմ:— Դուռը բացեցին, ներս մտանք: Իմ խնդրանքով Ս. Փիրուզեանը յայտնեց, որ նրանց ընտանիքը պիտի արտաքսուի, թէ ինչու եւ ուր՝ մեզ էլ յայտնի չէ: Պէտք էր տեսնել, թէ ինչ լացուկոծ, ողբ սկսուեց այդ դժբախտ ընտանիքում: Հինգ հոգի էին՝ տանտէրը, մայրը, կինը, աղջիկը եւ տղան (ամենափոքրը): Տարեց մայրը փետտում էր մազերը, իսկ դեռատի սիրունատես աղջիկը ողբալով ասում էր.

— Ի՞նչ յոյսերով եկայ այստեղ. կոնսերվատորիա պիտի ընդունուէի… Ի՞նչ մեղք ենք գործել…

Տանտերը մասնագիտութեամբ կօշկակար էր, բայց, ինչպէս երեւում էր, գրագէտ մարդ էր: Նա բերեց, մեր առաջ փռեց թերթերի մի կոյտ…

— Ահա տեսէք, թէ ես ով եմ,— ասաց՝ մէկիկ-մէկիկ մեզ ցոյց տալով Իրանի հայկական թերթերում տպագրուած իր ռառանաւորները. Սովետական Միութիւն էր գովերգում, նրա առաջնորդին, հաստատ համոզմունք էր յայտնում, որ ֆաշիզմի դէմ մղած արիւնալի պատերազմը կ՝աւարտուի սովետական երկրի յաղթանակով...

Նրանց ասացինք, որ մեզ բնդամէնը մի ժամ ժամանակ են տուել, աւելի լաւ է՝ լացուկոծը թողնեն, ուշքի գան եւ որոշեն, թէ ինչ են վերցնելու հետները:

Մեր օգնութեամբ նրանք կապկպեցին իրերը, տեղաւորեցին փողոցում սպասող աւտոմեքենայում:

Նախապէս հետաքրքրուեցինք, թէ արդեօք բաղամում չունե՞ն որեւէ մէկը, որին կարելի լինէր յանձնել այս հիանալի բնակարանի բանալիները (իմ եւ Ս. Փիրուզեանի մէջ այն կասկածն առաջացաւ, որ կօշկակարի բնտանիքը հենց այդ բնակարանի պատճառով է ափսոսում):

Տեսնելով մեր սրտացաւ վերաբերմունքը, նրանք վստահեցին մեզ եւ ասեցին, որ կնուճեանց փողոցի շէնքերից մէկում ապրում է իրենց մեծ աղջիկը, որ նշանուած է եւ սպասում է Իրանից նշանածի գալուն:

Տխուր-տխուր նայեցինք նրանց եւ անմիջապէս զնացինք գտնելու կօշկակարի մեծ աղջկայ տունը: Արդէն երեւի գիշերուայ չորսը կամ հինգը կը լինէր: Դժուարութեամբ գտանք, համառօտակի պատմեցինք, թէ ինչ է տեղի ունեցել եւ բանալին յանձնեցինք նրան:

Այն ժամանակից մինչեւ այսօր ինձ անյայտ է մնացել այդ ազնիւ բնտանիքի ճակատագիրը...

Յաջորդ օրը, գալով ինստիտուտ, ես իմացայ, որ ափսոսուել է նաեւ իմ սիրելի ուսուցիչներից Գրիգոր Նէրսիսեանը, որի հետ այդ ժամանակ արդէն աշխատում էինք միասին: Նրա կինը, լեզուաբան Աբարատ Ղարիբեանի քեռին, իմանալով ափսոսի մասին, թոյն էր խմել եւ տեղնուտեղը մահացել: Նոյնիսկ այդ պայմաններում ափսոսանք ափսոսել էին, թոյլ չտալով, որ վերջին հրաժեշտը տայ կեանքի բնկերուհուն:

Հրէշաւոր էին Ստալինի ու նրա արբանեակների այլանդակ արարքները: Եւ զարմանալի է ու զայրացուցիչ, որ դեռեւս կան մարդիկ, որոնք շարունակում են պաշտել աշխարհի ամենադաժան դահիճին («*Գրական թերթ*», 1989, թիւ 11):

ՅՈՒՐԻՆ ԽՈՒԴԵՆԱՆ
Աշխատանքի եւ պատերազմի վետերան,
վաստակաւոր ուսուցիչ

Տ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

1949 ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ 14Ի ՍԱՀՄՈՒԿԵՑՈՒՑԻՉ ԳԻՇԵՐԸ

«Պատահում էր, բոլորիս համար միանգամայն անհասկնալի, երեխայ էր անհետանում: Փնտռում էինք ու չէինք գտնում: Յետոյ իմացանք, Ալրայի երկրամասում յանկարծակի մոլեգնող փոքրիկ ֆշում-տանում էր նուազ ու փտիտ մանկիկներին: Նրանցից մէկին ես տեսայ հետագայում, եղեւնու հատ բունը ամուր գրկած ու սառած: Աղջկայ կոկորդը տամ շալով փաթաթուած էր...»:

Այս պատմութիւնն ինձ ասել մի տարեց մարդ, Երեւանեան միտինգներից մէկի ժամանակ: Ու ինձ թուաց, թէ ես հանդիպում եմ այդ դժբախտ աղջնակին: Երանի սխալուած լինէի, բայց այդ պահին յիշեցի բարեկամներից մէկի՝ Մերի Բագիկեանի պատմածը, ընդամէնը չորս տասնամեակի վաղեմութիւն ունեցող այդ սահմռկեցուցիչ գիշերուայ մասին.

«Հերթապահում էի No: 2 հիւանդանոցի ֆիր-կոկորդի բաժանմունքում: Սեւաչեայ, սիրունատես, հազիւ 10 տարեկան մի աղջիկ գիշերուայ կէսին արթնացել ու լաց էր լինում: Պահանջում էր մօրը: Յետոյ խնդրեց իրեն ուտելու բան տալ: Չէր կարելի, առաւօտեան նրան վիրահատելու էին, հեռացնելու էին խիստ բորբոքուած նշագեղձերը: Հազիւ էր քուն մտել, երբ գլխաւոր բժշկի ուղեկցութեամբ հիւանդասենեակ մտան երկու զինուորական: Արթնացրեցին երեխային ու տարան իրենց հետ: Մենք շուար ու լուռ կանգնած էինք ու չգիտէինք ինչ անել: Գլխաւոր բժիշկը կարողացաւ միայն երեխային ասել, որ տանում են մօր մօտ: Եւ այդ պահին երեխան երջանիկ էր...»:

Եղերական այդ օրը (որով սկսուեց մասսայական ռեպրեսիաների մի նոր շրջան, որ պիտի ձգուէր մինչեւ 1953 թուականը, Ստալինի մահը) յայտնի չէ՝ մաւաց եւ մինչեւ սերնդի մարդիկ: Ցիշում են «Պլանի գլխից» մինչեւ «ժողովուրդների հայր» Ստալինի անուանը կրող պողոտայով շարէշար կանգնած զինուորական բեռնատարները, որոնք «կառավարութեան յատուկ որոշմամբ» անյայտ ուղղութիւններով տարան «ժողովրդի թշնամիներին, դաշնակցականներին, լեգէոնականներին», նրանց բնտանիքներին:

Ականաւոր լեգուարան Արարատ Ղարիբեանն այդպէս էլ մինչեւ իր կեանքի վերջը չկարողացաւ թօթափել այն ոչ-հեռաւոր օրերի ծանր յիշողութիւնը. գիշերով ներխուժել էին հանդիպուած մանկավարժ Գրիգոր Ներսիսեանի բնակարանը եւ հրամայել էին վերցնել տաք հագուստ ու հեռաւոր իրենց:

Իմանալով, որ ամուսնուն աքսորում են, կինը՝ Ա. Ղարիբեանի քեռին, թոյն էր ընդունել ու անմիջապէս մահացել: Իսկ ամուսնուն անդամ թոյլ չէին տուել վերջին հրաժեշտը տալ կեանքի ընկերուհուն...

Այդ օրերին նման «պարտաճանաչութիւնը» խրախուսւում էր.

«Արտաքսման ընթացքում ամբացուած սովկուսակտիւը ցոյց տուեց մեծ օգնութիւն, յանձնարարուած խնդրի կատարումից խուսափման կամ վախկոտութեան փաստեր չեն արձանագրուել: Միայն անհրաժեշտ է նշել՝ արտաքսման ժամանակ մի քանի կոմունիստներ լացով եւ գրկախառնութեամբ ճանապարհեցին արտաքսուողներին, օրինակ՝ Աղասի Աւետեանը, Էլիզում Պօղոսեանը, Գերասիմ Ցակոբեանը, Խաչատուր Սիմոնեանը եւ ուրիշներ» *(ՀԿ(բ)Կ Ազիզբեկովի շրջկոմի քարտուղարի զեկուցագրից):*

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարին հասցէագրուած, «խիստ գաղտնի» յատուկ նշումով այդ զեկուցագրին Մի կուսակցական արխիւում ինձ ծանօթացրին ՀԿԿ Կենտկոմի կուսպատմութեան ինստիտուտի փոխ-տնօրէն Եուրի Մուաւեանը եւ նոյն ինստիտուտի աւագ գիտաշխատող Ամատունի Վիրաբեանը: Նրանք շնորհակալ մեծ գործ են կատարել եւ կատարում են մեր ժողովրդի պատմութեան այդ ողբերգական ժամանակաշրջանի պարզաբանման, պատմութեան «Սպիտակ բծեր»ի լուսաբանման գործում: Երկարատեւ, տքնաջան ուսումնասիրութիւններից յետոյ նրանք պարզել են, որ Յունիսի 14ից դեռեւս շատ օրեր առաջ Հայաստան է ժամանել գեներալ Եգոնովը, որին յանձնարարուած է եղել գլխաւորել այդ «օպերացիան»: Յունիսի 11ին ՀԿ(բ)Կ Կենտկոմում հրաւիրւում է խորհրդակցութիւն, որին մասնակցում էին ՀԿ(բ)Կ քաղկոմ-շրջկոմների առաջին քարտուղարներ, անվտանգութեան մինիստրութեան պատասխանատու աշխատողներ: Խորհրդակցութիւնն անցկացուեց խիստ գաղտնի պայմաններում, արձանագրութիւն չկազմուեց: Կենտկոմի առաջին քարտուղարը ինֆորմացիա տուեց հանրապետութեան անբարեյոյս տարրերին երկրի հեռաւոր վայրերը (հիմնականում Ալթայի երկրամաս) արտաքսելու վերաբերեալ խորհրդային կառավարութեան որոշման մասին: Պետական անվտանգութեան մինիստր Սերգէյ Կորխմազեանը յայտնեց, որ ՀԽՍՀ պետական անվտանգութեան մինիստրութիւնը նախօրօք ըստ շրջանների պատրաստել է արտաքսման ենթակայ ընտանիքների ցուցակները, որոնք գտնւում են այդ մինիստրութեան՝ շրջաններ մեկնող ներկայացուցիչների մօտ: Նա նշեց նաեւ «օպերացիայի» սկսման եւ աւարտման ժամկէտները, տրանսպորտի շարժման երթուղիները: Խորհրդակցութեան աւարտից յետոյ շրջկոմների առաջին քարտուղարները եւ ՀԽՍՀ պետվտանգութեան մինիստրութեան ներկայացուցիչները անյապաղ մեկնեցին շրջաններ:

Անուանի մանկավարժ Սուրէն Խուդոյեանի պատմածից.

«Յունիսի 13ին, երեկոյեան, մեզ՝ հիմնարկների կուսկազմակերպութիւնների քարտուղարներիս, կանչեցին Սպանդարեանի կուսշրջկոմ: Մեզանից ոչ մէկը չգիտէր, թէ ինչու են կանչել: Նստած էինք դահլիճում, որի լուսամուտներից երեւում էին օպերայի հրապարակում բազմաթիւ բեռնատար աւտոմեքենաների կուտակումներ: Մի քանի ժամ այդպէս նստած մնացինք: Նոյնիսկ չէին թողնում ծխելու համար միջանցք դուրս գալ: Բանտարկուածի վիճակում էինք: Վերջապէս կէս գիշերին բեմ բարձրացաւ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը՝ շրջա[illegible]տուած մի խումբ բարձրաստիճան չեկիստներով: Նրանք խիստ մռայլ էին:

«Յարութիւնեանը ձայն տուեց նրանցից մէկին: Այդ *մէկը* չոր ու դաժան տոնով մեզ ասաց, որ վերեւից եկած հրամանի համաձայն պէտք է հանրապետութեան սահմանիներից արտաքսուեն բոլոր նախկին դաշնակցականները, տրոցկիստները, կուլակները, պատերազմում գերի ընկածները եւ խորհրդային իշխանութեան այլ թշնամիներ՝ իրենց ընտանիքներով:

«Այլեւս ոչ մի հարց չընդունուեց եւ ոչ մի պատասխան չտրուեց: Մեզ տուեցին հաստաղէներ, ամբարտաւանների անուն-ազգանուններ եւ հրամայեցին գործի անցնել: Կցեցին նաեւ երկու զինուած չեկիստների եւ բեռնատար մեքենայ...»:

Սուրէն Խուդոյեանն անկեղծօրէն, խորին յուզմունքով էր ինձ պատմում իր սերնդին բաժին հասած այդ հայատեաց բռնակալի հրամանով ի կատար ածուած աքսորի մանրամասնները: Այդ ծանր յիշողութիւնն ահա քառասուն տարի տանջում է իրեն...: Ցեւոյ նա ուրախութեամբ պատմում էր, որ գոնէ է աքսորուած այն ընտանիքին, որին, խախտելով կարգը, անհայտ ծառայութիւն է մատուցել, յուր է տարել հարազատներին, որ նախկին աքսորական մանչուկը հիմա արժանաւոր մարդ է դարձել, ստեղծարար աշխատանքի նուիրուած: Իսկ ես մտածում էի, Աստուած մի արասցէ, մեր սերնդին նման հակատագիր բաժին հասնի: Ինչպէ՞ս կը վարուենք մենք, ընդվզելու, խոսուելու արդեօք կը գտնե՞նք մեր մէջ...

Զեմ ուզում որեւէ հակադրութիւն դնել սերունդների միջեւ, բայց Ղարաբաղեան Շարժման այս մէկուկէս տարուայ մաքառումները ապդային անհնազանդ գարթօնք պարգեւեցին այսօրուայ սերնդին, իսկ կուսակցութեան հաշուած վերակառուցումը, հրապարակայնութիւնն ու բացախօսութիւնն ամէն տեսակի բռնակալների կամ չքանչաններով շլացած «նրբազգածների» առջեւ յուսալի պատնէշ են: Ցեւ վերադարձ չկայ: Դա կուսակցութեան քաղաքական դիծն է, դրան են նպատակաուղղուած գաղափարախօսական, պրոպագանդիստական գործունէները, մամուլի, լրատուական միւս միջոցների ողջ գործունէութիւնը:

Իսկ այն ոչ հեռաւոր 1949 թուականի ամրան ամիսներին, ինչպէս տատնամեակներ շարունակ, բռնութեան մամլիչի տակ հգմուած մամուլում տատյող ու կեղծ, քծնող զեկոյցներով գովաբանում էր. «Այսքան ուրախ կեանքը մեր հայր Ստալինն է տուել»:

Թերթում եմ 1949 թուականի յունիսեան օրերի մամուլը. «Նախապատրաստուենք բերքահաւաքին» *խորագրի տակ բնդարձակ նիւթեր են, մեծածաւալ ինֆորմացիաներ եւ ականջ ծակող զեկոյցներ հանրապետութեան շրջաններից: Ահա ՀԿ(բ)Կ Կրասնոսելսկի շրջկոմի քարտուղարի* «Կոմունիստները անասնաբուծութեան բնագաւառում» *յօդուածը.* «Շրջանի պարտիական կազմակերպութեան խնդիրն է՝ բոլշեւիկօրէն գլխաւորել կոլխոզային աշխատաւորութեան այդ ակտիւութիւնը...»: *Հենց այդ նոյն օրը, երբ տպագրուեց յօդուածը, նա իր* «նախատ գաղտնի» *զեկուցումը յուսմ հպարտութեամբ գրում էր.*

«Նախատեսուած էր Կրասնոսելսկի շրջանից արտաքսել Սովետական Միութեան հեռաւոր վայրերը 16 ընտանիք, ընդամէնը 80 անձից:

«Օպերացիան սկսուեց ամէնուրեք զիշերուայ ժամը 4ին եւ աւարտուեց առաւօտեան ժամը 6ին:

«Շրջանի 6 գիւղերում միջոցառումը կիրառելուց յետոյ հրաւիրուեցին պարտիական դոնբաց ժողովներ կոլխոզային անպարտիական ակտիւի մասնակցութեամբ, որտեղ միջոցառումների բացատրական նշանակութեան մասին ընդարձակ զեկուցումներով հանդէս եկան շրջանային

կոմիտէի ղեկավար աշխատողները: Պարտիական ժողովները անցան բաւականին աշխոյժ, կոմունիստների եւ անպարտիական ակտիւ մասնակցութեամբ:

«Օրինակ. Հ. Բաշքենդում, որտեղից արտաքսուեցին 7 տնտեսութիւն, պարտիական ժողովում ելոյթ են ունեցել 8 ընկերներ, որոնք միահամուռ կերպով հաւանութիւն են տուել պարտիայի ու կառավարութեան այդ կարեւորագոյն միջոցառումին դաշնակցների եւ լեգէոնների նկատմամբ:

«Բոլոր տեղերում էլ պարտիական ժողովները հաւանութիւն տալով այդ կարեւորագոյն միջոցառմանը, որոշումներ են ընդունել բարձրացնել կոմունիստների եւ աշխատաւորութեան քաղաքական զգօնութիւնը, մոբիլիզացնել աշխատաւորական լայն մասսաներին շրջանի առաջ դրուած զիւղատնտեսական խնդիրները յաջողութեամբ կենսագործելու համար:

«Յանձնաբարուեցին ագիտատորներին բրիգադներում, օղակներում ուժեղացնել բացատրական-մասսայական աշխատանքը, կոլխոզնիկների եւ կոլխոզնիկուհիների մէջ մասնաւորապէս բացատրել թշնամական տարրերի նկատմամբ այս միջոցառման քաղաքական նշանակութիւնը»:

«Խորհրդային Հայաստան» *թերթի Յունիսի 14ի համարում տպագրել է Վափանի շրջկոմի քարտուղարի յօդուածը՝* «Վափանի պարտ-կազմակերպութեան պատուի խնդիրը» *վերնագրով: Ասես շարադրյոյժ քմահաճոյքով նոյն օրը շրջկոմի քարտուղարը դեկուցում էր.*

«Օպերացիայի ընթացքում ոչ մի հակասովետական արտայայտութիւն, բացասական տրամադրութիւն չի դիտուել: Աշխատանքից յետ վերադարձող ընկերները զեկուցեցին արտաքսման ենթարկուած մի քանի դաշնակների եւ լեգէոնների մոայլ հնազանդութեան մասին, ինչպէս նաեւ օպերացիային ականատեսների եւ քաղաքի աշխատաւորութեան արտայայտած համաձայնութիւնների մասին...»:

Հենց 1949 թուականի Յունիսի 14ի լրատուական բոլոր միջոցները ապդարարեցին, որ «Հայպետհրատը նոր հրատարակութեամբ հայերէն լոյս ընծայեց Ի. Վ. Ստալինի համառօտ կենսագրութիւնը 20 հազար օրինակ տիրաժով»: *Իսկ Երեւանի կարմիր Փարթիզանի՝ ընկեր Ստալինի կենսագրութիւնն ուսումնասիրող խմբակի ունկնդիր Վ. Մարտիրոսեան գրեց.* «Ես անսահման մեծ սիրով ուսումնասիրեցի ընկեր Ստալինի կենսագրութիւնը: Մեծ առաջնորդի պայծառ կեանքն ու ռեւոլուցիոն գործունէութիւնը անսահմանօրէն ոգեւորեցին ինձ, եւ ես սկսեցի աւելի եռանդով աշխատել...»:

... Իրականում սուտ ու չիւան էր ողջ հանրապետութիւնում: Զկար մէկը, որ կորցրած չլինէր հարազատ կամ բարեկամ, ընկեր կամ ծանօթ: Աքսորուածները բռնօրէն հեռացուեցին հայրենիքից: Իսկ մնացողնե՞րը: Վախի եւ սարսափի ինչպիսի՞ անլուր տանջանքներ կրեցին, հոգեկան ինչպիսի՞ ցնցում ապրեցին նրանք:

Վաստակաշատ արեւելագէտ Յակոբ Նալբանդեանը Հայաստան վերադարձաւ առաջին քարտանով, եկաւ մայր հայրենիք: Խանդավառութեամբ լծուեց ազգին օգտակար լինելու տարիներ ի վեր փայփայած իդէին: Հրատարակեց գիտական արժէքաւոր աշխատութիւններ...: 1949 թուականի Յունիսի 14ին ու նաեւ յաջորդող օրերին գիշերուայ կէսին շրխեցին Յակոբ Նալբանդեանի գեղանափոր փոքրիկ բնակարանի տան դուռը, որտեղ նա ապրում էր իր որդու եւ շորս դստերների հետ: Բայց բոլոր այդ հոդեառանջ գիշերներին նա

աչք չփակեց, չորերը հոգին, կուչ եկած ոթոսին, կատաղած կաթիլներ խմելով նա լուսացնում էր երկար գիշերներ, ականջը ձայնի՝ ուր որ է կը գան իր գեղից:

Յ. Նալբանդեանը, նաև հազարաւոր մարդիկ այդպէս էլ այս աշխարհից հեռացան դառնացած, հարազատի կարօտը սրտներում, հալածուած՝ կասկածանքներից ու վախից: Անհաղորդ խրուշչեւեան յեղաշրջմանը, մեր քոյրերի ու եղբայրների տուն դարձին:

33 տարի է անցել ստալինեան կամայականութիւններին զոհ դարձած հազարաւոր, հարիւր հազարաւոր աքսորուածների ռեաբիլիտացիայից: Այդ տարիներին փորձել են արտել նաև բացատրել 1949 թուականի մասսայական աքսորի պատճառները: Որպէս պաշտօնական վարկած նշուել է, որ դա հետեւանքն էր ոչ միայն Ստալինի հոգեկար կասկածամտութեան, այլեւ «սուր պատերազմի»:

Մեր խորին համոզմամբ, հայ բնակչութեան մասսայական տեղահանումը նախապէս մշակուած եւ հետեւողական հայատեաց քաղաքականութեան իրագործումն էր: Որդեգրելով թուրքական «նպատակաւոր զրոյցը»՝ Ստալինը իրականացնում էր «Հայաստանը առանց հայերի» տեսարանը կարգախօսը: Զիջելով եւ ոչ մի նենգութիւնից, Ստալինը փորձում էր նուազագոյնի հասցնել հանրապետութեան բնակչութեան քանակը, դրեկ միութենական հանրապետութեան ստատուսից եւ Հայաստանը բաժանել Վրաստանի ու Ադրբէջանի միջեւ:

Վերջակէտ դնելուց առաջ, յիշեցի Երեւանեան միաբնոյ մի հանդիպածս տարեց մարդուն ու նրա այնքան սրտաճմլիկ պատմութիւնը՝ եղեռնում բնին սառած փոքրիկ աղջկայ: Ես խնդրեցի նրան ներկայանալ, ասել թէկուզ միայն անունը նա այդպէս էլ համաձայնութիւն չտուեց ներկայանալ. մի՞թէ դեռեւս ստալինեան ստուերը վերջնականօրէն մեր ոտքերի տակ չէ... («Խորհրդային Հայաստան», *15 Յունիս 1989*):

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Ռ. ՔԱՄԱԼԵԱՆ

ԱՔՍՈՐԻ՛ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Այսօրուայ բարձունքից յետադարձ հայեացք ձգելով մեր ժողովրդի պատմութեան վերջին հարիւրամեակի համասեռ մի քանի հանգամանքի՝ անհնար է չնկատել, որ «Հայաստանը՝ առանց հայերի» կարգախօսը չուել է քաղաքականութիւնից քաղաքականութիւն եւ իր ամօթալի կենսունակութիւնը դրսեւորել նաեւ խորհրդային երկրի ղեկավարներ Ստալինի, Բերիայի եւ ուրիշ մի քանիսի պրակտիկ գործունէութեամբ:

Ասուածի անողոք արտայայտութիւններից մէկն էլ 1949 թուականի Յունիսի 14ին իրականացուած հայկական զանգուածային տեղահանութիւնաքսորն էր Հայաստանից ու Խորհրդային Միութեան հայաշատ վայրերից, զաժան մի իրողութիւն, որի քառասունամեակն այս օրերին արձարձուում է հանրապետութեան պարբերական մամուլի որոշ օրգանների հրապարակումներում: Մեր ժողովուրդն այդ օրը, ոչ յանիրաւի, դեռեւում է իր պատմութեան այն սեւ էջերում, որոնք բնութագրուում են «ազգային, էթնիկական, ցեղային կամ կրօնական որեւէ խմբի լրիւ կամ մասնակի ոչնչացման նպատակ հետապնդող գործողութիւններով»: Կարելի՞ է, արդեօք, մոռանալ, թէ ինչպէս մեծ հումանիստ, հրեայ իրաւաբան Ռ. Լեմկինի, նրա համախոհ–կուսակիցների դերմարդկային ջանքերով ցեղասպանութիւնը միջազգային մասշտաբներով դատապարտելու վերաբերեալ ՄԱԿի գլխաւոր ասամբլեայի համաձայնագիրը վաւերացնելուց մէկ տարի չանցած՝ ժողովուրդներին պատմութիւն կերտող յոբջորջուող Իոսիֆ Ստալինը վերստին փորձեց իւրովի անօրինել հայերի ազգային ճակատագիրը՝ այս անգամ էլ կիրառելով աքսորի տարբերակը:

Ինձ՝ այն ժամանակ մի մատնաչափ պատանուս, մինչեւ օրս հանգիստ չեն տալիս Հայրենի Շահումեանից (նախկին Շուլաւեր) մինչեւ Այթայ հասնող մայլ պատկերներն ու այրող յիշողութիւնները, որոնք յար եւ նման են եղել ամէնուրեք, ամէնքի համար:

Մեր գիւղաքաղաքը, ինչպէս որ Վրաստանի հայաշատ միւս բնակավայրերը, դեռեւս տնքում էր պաաերազմից կրած կորուստների ցաւից. տուել էր 450 զոհ, երէկուայ առողջ, լայնալանջ երիտասարդների ու տղամարդկանց փոխարէն մնացողաց յաւելեալ անդամահատուածների եւ անքացոյ վիրաւորների մի համայնք՝ պարզապէս անկօր սովի ու զրկանքների դէմ պայքարում, որն իրենց ուսերին էին կրում սեւ գգեստներից դեռեւս դուրս չեկած մեր մայրերն ու քոյրերը: Եւ եկաւ օրն տատել դժնի: Նոյն վերին հրամանով գինուորներն ու միլիցիոներները, կուսակցական–խորհրդային–կոմերիտական ակտիվիստների ուղեկցութեամբ, կէսգիշերին տնից տուն մտան եւ հրացանատրճանակների փողերի ուղեկցութեամբ երկու ժամուայ ընթացքում 47 բազմանդամ ընտանիք լցրին ապրանքատար գնացքի չարժակազմ: Ու սկիզբ առաւ տարբեր մարդկանց նոյն ողիսականը:

Բանտ–վագոնների դռներն առաջին անգամն մի քանի բոպէով բացեցին «ճանապարհորդութեան» հինգերորդ օրը, Ստալինգրադի մերձակայքում: Թոյլատրեցին ելնել գնացքից՝ հինգ մետրից աւելի չհեռանալու պայմանով: Հենց այդ դադարի ժամանակ կռահեցինք, որ անայայտութեանն ընդառաջ են գնում նաեւ ուրիշները. տեսանք հայերով լցուած այլ գնացքներ, որոնց չոգեքարշների ճակատին, որպէս կանոն, Ստալինի մեծադիր պատկերն

էր՝ գենոցիդոմանի համագումար: Այսպես, վերջապես, հարկ համարեցին մեզ «մատուցել» ցուցակ եւ «անուն»: Այնուհետեւ եղան միայն հարկադիր կանգառներ- վերստանիշների նման, երկաթուղու երկայնքով մեկը մյուսի յետեւից գոյանում էին թարմ չիրմաթմբեր:

Տասնութօրեայ «հանապարհորդութիւնից» յետոյ մենք հուսկ-հանգրրուան գտանք Կուրնեղա անդրայա կայարանում՝ ուր ինքնաբերաբար երկաթի արանքում յայտնուելով հացահատիկի փայտաշէն ու գաւարակ պահեստում: Փոքր-ինչ դադար առնելուց յետոյ մենք իմացանք մեր իսկ ոգիաբանի շատ մանրամասներ: Պատմեցին, որ մեզ հետ՝ աքսորեալների մէջ էն այլ վայրերից մեր դիմաց հիւր եկած մի քանի երիտասարդներ, 80-90 տարեկան գաւառեայ ու անդամոյծ տատիկներ, մի երիտասարդ, որին թոյլ չէին տուել հոգին յանձնել մահացած մօր դիակը: Իմացանք, որ Այթոյում «մշտական բնակութեան ուղղեր» են ստացել բնդամէնը տասը օր առաջ «Պատուոյ նշան» շքանշանի արժանացած մի երիտասարդ կին, 1937 թուականի քաղաքական համբարներից բնդամէնը եօթ ամիս առաջ վերադարձած մի մատուրական, հայրենիք գալու համար արդէն իսկ գատն դղջում ապրող մի եկիպատցի, որն այնպէս էլ չի կարողանում պատասխանել իր տիկնոջ «այս ո՞ւր մեզի ձգած են, ա՜ խ Հայաստա՞ն է» հարցին: Եւ հիւրերից ու հիւրընկալներից, բնիկներից ու հայրենադարձ-եկուորներից, նախկին դինուորներից, նրանց կանանցից, մայրերից, երեխաներից եւ նորածիններից բաղկացած մեր մեծ համայնքը, որ ցմահ գտնուում էր Այթոյի «ակրն ու տիրակալը», արձանի պէս սառն ու անտարբեր, վայրկեանը մէկ ձեռքը գէպի աւրձանակը տանող գնդապետի առաջարկած քարաերը ստորագրելուց յետոյ ըմբռնեց, որ իր բոլոր ներկայացուցիչները մեղաւոր են, ու նրանց մեղքը նոյն ձեւակերպումն ունի՝ ժողովրդի թշնամի:

— Անհատի պաշտամունքի տարիներին, մասնաւորապէս 1949, 1950 եւ 1951 թուականներին հայերի դանդուածային տեղահանութիւններն ու աքսորները, ինչպէս որ մեր երկրի արժանապատուութիւնը շօշափող շատ իրողութիւններ, պաշտօնական պատմագրութեան կողմից լռութեան էին մատնուել: Զուր կը լինի ջանքեր գործադրել դրանց ծաւալների եւ բնոյթի մասին որեւէ փաստ քաղելն անգամ տեղեկատուական գրականութիւնից: Աւելորդ է խօսել գաղտագրքերի ու ձեռնարկների մասին: Փաստին, անտարակոյս, Ն. Ս. Խրուշչովի զեկուցուած տարիներին պէտք է որ տրուած լինի քաղաքական գնահատական, ատանց որի հնարաւոր չէր բռնագաղթուած գանգուածների վերադարձը: Սակայն մինչեւ այժմ չի ապահովուած այդ գնահատականի հրապարակայնութիւնը բարոյական այն մթնոլորտի, որն այսուհետեւ լիովին բացառիկ պաշտօնական նման յանցագործութեան կրկնութիւնը, ինչպէս նաեւ նրա վերապրողները, որ այսօր խորհրդանշում են Սուսդայիթով: Ըստ իս, դա պակաս կարեւոր փաստ չէ պատմութեան համար, քան յայնօրէն յուսարանուող «Աբիւնոտ Կիրակին»: Անցեալի ծանր իրադարձութեան յորձանուտում գտնուողներս կարծում ենք, որ հրապարակայնութեան, դեմոկրատիայի, ազատամտութեան այսօրուայ կարգախօսները բարոյական իրաւունք են վերապահում ակնկալելու, որ 1949 թուականի Յունիսի 14ը եւս կը յայտարարուի յիշատակի օր ու կը կատուցուի նման գաժանութիւնները գատապարտող մի յուշարձան, որի համար, համոզուած եմ, միջոցներ կը հայթայթեն ու կը յատկացնեն նախկին հայ «ոյթոյականներն» ու «սիբիրականները»:

Ցիշեալ ցանկութեան իրականացման մէջ պէտք է տեսնել այս եւ նման վերյուշերի խորհուրդը («Գրական թերթ», 1989, թիւ 25):

ՌՈՒԲԷՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Հ. ՔԵՆԴԵՐԵԱՆ

1949Ի ԱՔՍՈՐԸ ԵՒ 1989Ի ԱՐՏԱԳԱՂԹԸ

Լրանում է 40 տարին այն գիշերուայ, երբ տասնեակ ու սոսնեակ հազարաւոր Հայեր Անդրկովկասի տարածքից, մի քանի հազար յոյն, ասորի եւ քուրդ իրենց հայրենակիցների հետ լցուեցին կայարաններում պատրաստ կանգնած բեռնատար վագոններն ու Երբեմնի Գոգթն կայարանով՝ այժմ Հայաստանի Նախիջեւանով, Բալաջարիով, շեչենների, ինգուշների բնիկներից ազատուած լեռնաշխարհով, կալմիկներից մաքրուած Կալմիկեան տափաստանով, գերմանացիներից պատարկուած Երբեմնի ինքնորոյն Հանրապետութիւնով Հասան Արեւմտեան Սիբիրի, հիմնականում Ալթայեան երկրամասի, անտառ-տնտեսութիւնները, խորհրդատնտեսութիւններն ու կոլտնտեսութիւնները «յաւերժական բնակութեան», ինչպէս բնորոշուած էր նրանց նոր վիճակը Մոլոտովի եւ Շկիրատովի ստորագրած «Պոլոժենի»ում:

Գարուն է, ձի՞ւն է արել: Ամպրո՞պ մաքուր երկնքում: Ո՛չ: Ստալինիզմի օրերին գարուն չի եղել: Անոպասելի ոչինչ չկար այն մարդկանց համար, որոնք տրթնացան գիշերային հիւրերի դրան թակոցից եւ, արձանագրութիւն ստորագրելուց յետոյ, առաջին անհրաժեշտութեան առարկաները վերցնելով բարձրացան բեռնատար աւտոմեքենաներն ու, սարսափահար հարեւանների ուղեկցութեամբ, գինու որների կամ միլիցոներների սուինների հովանաւորութեամբ, տարուեցին կայարան:

Անոպասելի ոչինչ չկար նրանց համար, որոնք գնացին: Ես, օրինակ, ինչո՞ւ չպիտի սպասէի: Սպասում էի: Ամէն գիշեր: Եւ առաջին թակոցից իսկ արթնացել էի: Ես աւարտել էի այն գպրոցը, որտեղ տնօրինել ու դասաւանդել էին Լեւոն Շանթը, Նիկոլ Ադրալեանը:

Ինչո՞ւ չպիտի սպասէր պրոֆեսոր Ստանիկեանը, լատիներէնի մասնագէտը, որի դասագրքով էին դեղատոմսեր գրել սովորում բժշկական ինստիտուտի ուսանողները, չէ՞ որ նա աշխատել էր Հանրապետութեան մշակոյթի նախարարութիւնում: Ինչո՞ւ չպիտի սպասէր Մերի Սադեանը, հիմա բանասիրական գիտութիւնների դոկտոր, որի հօրեղբայրը չէր ստորագրել Ադասի Խանջեանի «Ինֆինասպանութեան» Բերիայի առաջարկած փորձագիտական եզրակացութիւնը եւ դրել էր ազնիւ գլուխը ստալինիզմի գոհասեղանին: Կամ

Ջաղեքիանների բը։ Ախր այդ ազգանունը Հանրապետության Ֆինանսների նախարարին էր եւ որպէս ստորագրութիւն դրուած էր Հայոց պատմութեան մէջ գոյութիւն ունեցած միակ թղթադրամի վրայ։

Կարո՞ղ էին չսպասել Մերդոյեանն Վահագնը, Ալդաթեան Խրիմիկը, եթէ նրանք գերի էին ընկել։ Ճիշտ է, Ֆրանսիայում կարողացել էին փախչել գերութիւնից, դատնալ դիմադրութեան շարժման մարտիկներ, յետոյ Բարդուղ Պետրոսեանի խորհրդային ատաջին պարտիզանական ջոկատի կազմում մասնակցել Լիոն քաղաքի ազատագրմանը, բայց չէ՞ որ չէին կատարել «սրբազան պատուէրը»։ Վերջին փամփուշտը իրենց քունքին չէին կրակել։

Մշոյ Բուլանուղի Հարընչոր գիւղից գաղթած Գէորգ Այվազեանին Թրիլիսիից Տոմսկի մարդ էին ուղարկել, որովհետեւ մի ժամանակ Թուրքի հպատակ էր եղել, զարարաղցի ու նախիջեւանցի հայերին, որովհետեւ կարելի չէր վստահել, թէ նրանք հաշտուել են իրենց հայրենիքից վերջնականապէս զրկուած լինելու գաղափարի հետ։ Իսկ հայրենադարձնե՞րը։ Զկար մի հայրենադարձ, որ ամէն գիշեր չսպասէր գրան թակոցին։ Նրանք բոլորը, ատանց բացառութեան, անմատնելի էին։ Եկել էին կապիտալիստական երկրներից, բերել էին բուրժուական բարքեր։ Անմատնելիութիւնն արտայայտում էր պետական մակարդակով՝ հայրենադարձ ուսանողները ազատուեցին ռազմագիտութեան դասերից, նրանք չէին կարող համակերպուում լինել, ազատուեցին բանուորները կատչուկի գործարանից, որովհետեւ «փոքր էին արել պայթեցնել» հանրապետութեան այդ գործարանը, «ուզեցել էին Երեւանի ջրամբարը թունաւորել»։ Կարո՞ղ էին այդ մարդիկ չսպասել, եթէ գէմ մի բիչ մտածելու բնդունակ էին։ Ազատում էին Թոքմաջեան Արամեանը, որ Պարսկաստանում օդաչու էր եղել, Սարգիս Ազարաբեանը, որի հօրը գնդակահարել էին 37ին։

Ամէն մէկն ունէր իր «մեղքը», բայց բոլոր տեղահանուածները միասին ստացան աքսորավայրում մի ընդհանուր մեղադրանք՝ «դաշնակ-նացիոնալիստ», բնուանիքի ամբողջ կազմով, նաեւ այն նոր սերունդով, որ յայտնուել էր այդ բնուանիքներում։

Սա այն մեծ յայտնագործութիւնն էր, որ արել էին Ստալինը, Բերիան, Բագիրովը լենցնելու համար անարդարութիւնների դէմ նոյնիսկ արտունջի վախուորած արտայայտութիւնները։ Դժբախտաբար այդ «յայտնագործութիւնը» այսօր էլ իր կենդանակ գոյութիւնը շարունակում է, եւ մենք վկաներն ենք վերակազմուելու եւ նոր մտածողութեան այս տարիներին անցում։

Վերադարձից յետոյ ես մի բան նկատեցի, որը միայն երկրաչարժից յետոյ հասկացայ։ Սպիտակում 1988 թ. Դեկտեմբեր 7ին յաջորդած օրերին, երբ էքսկավատորի փորած փոսերում դիակներ էին իջեցնում, մէկ կամ երկու գոհ ունեցողները մեղաւորի նման ամաչելով էին նայում աւելի մեծ թուով գոհուածների ակռերին։ Հայրենական պատերազմի տարիներին ես այսպէս չեմ եղել, երեւի այն ատեն էլ այդպէս է եղել։ Անպայման այդպէս է եղել։

Ահա այդպիսի չգործած մեղքի համար ամաչելու զգացողութեամբ չտառապելու համար սարդարապատցի Մուշեղ Սաֆարեանի կոմունիստ կինը՝ Սեդա Ղարիբեանը, ընկերակցել էր գերութեան տանջանքները դեռեւս վերապրող ամուսնուն դէպի Այթայեան երկրամաս որպէս յատուկ վերաբնակիչ։ Այնտեղ է հիմա նրա գերեզմանը, Գոսպիտալիբայի շրջանի Մամոնտովի անուան հացահատիկային խորհրդանշութեան 4րդ բաժանմունքում, գիւղական գերեզմանատանը, տապանաքարի տակ, մի ուրիշ Սեդայի կողքին, ռուսական փայտեայ խաչերով չիրիմների ընկերակցութեամբ եւ միշտ յիշեց-

նում է տեղաբնակներին, որ հեռու որ արևային երկրից այստեղ աշխատեցին ու չդիմացան դաժան կլիմային երկու երիտասարդ հայու հիներ:

Ստալինիզմի սանձարձակ վայրագությունն տարիներին երկրաչարժի գոտիներ էին հայ մարդկանց համար մեր երկրի գրեթե բոլոր շրջանները: Տակաւին պատերազմը չաւարտուած, Հայկական Թամանեան դիւիզիայի Ղրիմն ազատագրելու գործողութիւններից քիչ յետոյ, թերակղզու հայութիւնը աւերահանուեց: Դէպի Սիբիր աքսորի ճանապարհին, երբ Երևանեան մեր բեռնատար գնացքը կանգնած էր Ադրբէջանից աքսորուողների նոյնատիպ բեռնատարի կողքին, Շուշիի սպանդից մազապուրծ Երևանցի կինը հարցրեց իր հայրենակիցներին՝ «Քորֆ ալ կա՞յ», պատասխանն եղաւ՝ «լոխ հայ են, գրեկ ու այսորի ալ կան»: Նոյնն էր նաև Անդրկովկասի միւս շրջաններից աքսորուողների ազգային կազմը: Թբիլիսիից աքսորուել էր մեր սիրելի քուրդ բանաստեղծի՝ Միքայել Թաշիզի մայրը:

Եւ այս օրերին, յիշելով հայ ժողովրդից Հայաստանն ու Անդրկովկասը մաքրելու Ստալին–Բերիա–Բագիրով սերտագործ ծրագրի գործադրութիւնը, ես մտածում եմ ծայր առած արտագաղթի մասին: Այժմ արդէն բոլորովին այլ հոգերանական գործօնների առկայութեամբ: Հիմա, քաղաքացիներին տրուած շատ ազատութիւնների գոյութեան պայմաններում, առաջին հերթին արտագաղթելու շատ բնական մարդու իրաւունքի, իւրաքանչիւր հայրենադարձ հարց է տալիս իրեն՝ մնա՞լ, թէ՞ գնալ: Գուցէ նորից դեր խաղայ հարցաթերթիկի ծննդավայրի մասին տեղեկութիւն պահանջող կէտը, իսկ դա որոշիչ էր աշխատանքի, պաշտօնի հարցը որոշելու համար: Ահա, դիցուք, մի պատճառ դանդուածային, կործանարար արտագաղթի: Ես իրաւունք չեմ վերապահում ոչ մէկին մեղադրելու, դատապարտելու: Արտագաղթածներից ու արտագաղթողներից շատերն իմ ընկերներն ու բարեկամներն են, ես հաւատում եմ նրանց և՛ ազնուութեանը, և՛ հայրենասիրութեանը: Ես գիտեմ, որ կեանքը մի անգամ է տրուում, եւ այն անվստահութիւնը, որն ունենք վաղուայ օրուայ նկատմամբ, մեր կամքից անկախ, ահաւոր փաստարկ է նոր կեանք ստեղծելու: Ես չեմ կարող ոչ մէկին դատել:

Ես կարծում եմ, որ որոշ յոգուածագիրներ շատ հեշտ ուղի են գտել արտագաղթի առաջն առնելու (եթէ միայն դա է նրանց նպատակը), ապերախտներ ու դաւաճաններ յայտարարելով մարդկանց՝ դոյզն իսկ հաշուի չառնելով արտագաղթելու որոշում ընդունածների տառապանքը: Ամէն մի արտագաղթող իր պատճառն ունի եւ իր բացատրութիւնը: Իւրաքանչիւր մարդու հարցը նախ եւ առաջ նրա հարցն է, եւ այդ հարցը նրան է ամէնից աւելի սար ու ձոր գցում: Ամէն մի արտագաղթող իւրովի դժբախտ է: Ամէն մի բաժանում կորուստ է, տնպատմելի կորուստ: Ես երբեք չեմ մոռանում, արդէն քառասուներեք տարի է անցել, Բէյրութի նաւամատոյցից մեզ հայրենիք բերող նաւի պոկուելը քարտէից: Ես կորցնում էի ծննդավայրս: Չեմ մոռանում աքսորավայրի կայարանից մեր գնացքի դանդաղ բաժանումը, իմ յետեւում մնում էին վեց տարուայ կեանք, ընկերներ՝ հայ, ռուս, կալմիկ, գերմանացի, ուկրաինացի, հրեայ, բելոռուս: Ծանր բան է բաժանումը, նոյնիսկ աքսորավայրից: Եւ ես այսօր ուզում եմ հասկանալ այն մարդկանց, որոնք արտագաղթելու որոշում են ընդունել:

Ապրում էր Հայաստանում 1946 թուականից յետոյ մի հրաշալի մարդ, ազնուագոյն մարդ, մինչեւ ուղն ու ծուծը մաքրագոյն մի բանաստեղծ՝ Արամ Արմանը, որը գրիչը ցած դրեց իր բանաստեղծ ընկերոջ՝ Անդրանիկ Թերգեանի աւտովթարի զոհ դառնալու [illegible]ությունից: Ապրեց Երեւանում, աշխատեց «Գրական թերթ»ի խմբագրութիւն[illegible]մ, բայց չգրեց: Չի գրում նաեւ հիմա՝ Լոս Ան-

ջնջեսում: Նա չի լքել հայրենիքը, նա լքել է այն անմաքուրը, որ չէր կարող հանդուրժել իր հայրենիքում:

Արտաղաղթը մեր ազգի ամենացավալի հարցերից մեկն է եղել: Բոլոր դարերում: Ինչքա՜ն, ինչքա՜ն պանդուխտ երդեր ունենք: Այդ երևույթի առաջը հայրենասիրական կոչեր անելով հնարաւոր չէ առնել, պէտք է լուրջ ուսումնասիրութիւններ անել, առանց ինչ-որ մէկի կամ սմանց, ասեմ, ինքնասիրութիւնը, շահերը չշօշափելու կանխակալ գրոյթների: Հարկաւոր է կոնսպիրատիվ միջոցներ գտնել, քննել պատճառները, որոնք շատ ու շատ են, օրինակներից բացի՝ ասրլեկները, որոնց բացայայտումը շատ աւելի դժուար է, որովհետև ամէն արտաղաղթողի մօտ դրանք տարբեր են և աւելի յաճախ չեն ասւում, ինչպէս ապահարգանի ժամանակ, ասւում են այն բաները, որոնք մեծ մասամբ բոլորովին էլ պատճառները չեն: Սիսիանի մի հայ լրագրող, երբ տարիներ առաջ հարց էր տուել արտաղաղթած մի Ֆրանսահայի երկիրը թողնելու պատճառի մասին և սա սկսել էր պատմել Ֆինրաժնի տեսչի անակնկալ այցելութիւններն ու իր ապրումները, կինը մէջ էր ընկել ու ասել. «Ինչ երկար-բարակ կը խօսիս, բէկ նարիճ չկար՝ եկանիք»:

Եկէք հարցը այնպէս քննենք, որ «նարիճ չկայով» չվերջանայ:

Վերջերս Ադրբեջանից գաղթած հայերի հանդիպելի չուկայում: Բերել էին իրենց նոր բնակավայրերում ստեղծած բանջարեղէնը: Ամէն ինչ սովորական էր, բացի մի բանից, այդ մարդիկը ինձ հետ խօսում էին հարուստ ազգականի մօտ ապաստան գտած մարդու նման: Ահաւասիկ էր: Ես յիշեցի հայրենադարձներին, որոնց շատերն են յիշեցնում այդ նոյնիսկ կէս դար անց: Ես յիշեցի փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Հրաչիկ Միրզոյեանի «Գրական թերթ»ում լոյս տեսած յօդուածը, որտեղ, զարմանալիօրէն, նկատուած էր մինչև այդ օրը ինձ համար տեղացի հային անմրմնելի թուացող երևոյթը: Պարզում է, որ մենք իրար չենք ճանաչում, մենք տակաւին բացարձակ անկեղծութեամբ չենք նստում ղէմ-ղիմաց: Իսկ մենք պարտաւոր ենք, որպէսզի մի հոգու ջրի մարդիկ, անկեղծ լինել, ասել, դանել մեր ցաւերի պատճառները: Այլթայեան աքսորը ջնջեց տեղահանուածների այդ տարբերութիւնը, նրանք հասկացան իրենց ճակատագրերի նոյնականութիւնը, մանաւանդ որ այդպէս էին գնահատում վերին իշխանութիւններից:

Այս օրերին, երբ արտաղաղթի արտակարգ իրարանցում է, ինձ յաճախ են հարցնում՝ չե՞ս գնում: Պատասխանները մէկը սա է՝ 85ամեայ մայրս օրը 85 անգամ Խարբերդի իր հայրենի գիւղն է գնում՝ Զարթառիճ: Հայրս երեք անգամ Հայաստան է եկել, 1916ին Խարբերդից, 1946ին Բէյրութից, 1956ին Այթայից: Հիմա հանգչում է Հոկտեմբերեանում, մի կիլոմետր հեռաւորութեան վրայ այն տեղից, որտեղ Սարգարապատի ճակատամարտին դեղացրորդ է եղել:

1946ին ընկերոջս հետ՝ այժմ քիչ [illegible]ան գիտութիւնների թեկնածու Գէորգ Կրբեկեանի, Ստալինեան պոդուտայ[illegible] (այժմ Լենինի) [illegible]անք Աւետիք Իսահակեանին և ներողութիւն խնդրելով սեղմեցինք ձեռքը: Վարպետ, ասաց ընկերս, մենք հայրենադարձ ուսանողներ ենք: Վարպետը ուրախացաւ, հետաքրքրուեց մեր վիճակով, յետոյ էլի խօսակցութիւններ եղան, և յանկարծ ընկերս մի անսպասելի հարց տուեց, այդ օրերի համար, որ մենք տակաւին չէինք ընկալում, սարսափելի հարց, թէ նա ինչպէս է ընդունում այս իրականութիւնը: Վարպետը ոտից գլուխ չափեց մեզ, յետոյ ասաց. «Հեգելն ասում է՝ այն ինչ իրական է, բանական է, այն ինչ բանական է, իրական է: Սա է ձեր երկիրը. սովորէք, աշխատէք, կառուցէք, դարձրէք այնպիսին, ինչպիսին պէտք է: Ուրախ եմ, որ ծանանեցանք»:

Ես յիշում եմ այս բոլորը, յիշում եմ իրենց անհամեմատ բարեկեցիկ կեանքը թողած ու ծանրագոյն վիճակում գտնուող հայրենիք եկող բոլոր հայերի ոգեւորութիւնը՝ կառուցելու համար աշխարհի բոլոր հայերի փոքրիկ, բայց միակ հայրենիքը եւ մտածում եմ՝ Խորհրդային Միութիւնը վերջերս մտադրութիւն է յայտնել իր քաղաքացիների ճակատագրով զբաղուելու, իսկ մենք ինչո՞ւ արտագաղթողներին, դեռեւս չմեկնած, թշնամի ու դաւաճան ենք հռչակում յայտարարել: Աւելի ողջամիտ չէ՞նք լինի, եթէ արտասահմանում ապրող բոլոր հայերին, նրանց ցանկութեան եւ նրանց բնակած երկրների թոյլատրութեան պարագային նաեւ հայկական պետութեան քաղաքացու իրաւունք տուէր, որը նաեւ քաղաքացիական պարտականութիւններ է ենթադրում: Ես կարծում եմ, որ դա մեծագոյն սիրով կ'ընդունէին Սփիւռքի շատ ու շատ հայեր:

Այսօր, երբ ի լուր աշխարհի ամենարարձր ու ամենապաշտօնական ամբիոններից մեղադրւում են ստալինեան ոճրագործութիւնները, դառնանք դդոսմին ասանք բոլոր նրանց, ովքեր հեռացան կեանքից վիրաւորանքը սրբում, այնուհետեւ յիշենք պատմամբ մեծ հայի ու դառնանք հաւաքական ուժ, ի սէր այն հոգի, ի սէր այն լեզուի, որ սնում են մեր մարմինն ու մեր հոգին («Խորհրդային Հայաստան», 14 Յուլիս 1989):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՆԴԵՐԵԱՆ

Ն. ԱԴԱԼԵԱՆ

1949 ԹՈՒԱԿԱՆԻ ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐԸ

Նստել էր սենեակի մէջտեղում գոնու ոգ բազկաթոռին եւ ոգասում էր: Տանը չկար ոչ հարեւան, ոչ բնակիր, ոչ բարեկամ: Արդէն բաւականին երկար ժամանակ նրան օրեւէ մարդ չէր այցելում: Երբեմն ինքն էր հիւր գնում մտերիմներին, որոնց թիւը խիստ կրճատուել էր, յետոյ տրամ, առանց այս ու այն կողմ նայելու, գլխիկոր վերադառնում տուն, փակում դուռը, կարդում մինչեւ ուշ գիշեր եւ մտածում երկար ու տանջալի: Իսկ վերջին օրերը նոյնիսկ չէր էլ կարդում, թէեւ այնքան բնաբիր գրքեր կային, այլ միայն մտածում էր: Ոչ ոք չգիտէր ինչի մասին է մտածում նա, միայն ինքը գիտէր եւ զգում չանում մտ ու գրխեանում էր նոյնիսկ իրեն բարձրաձայն ասել, մինչեւ իսկ՝ անչտ նշ բազկաթոռին, որին մարդու պէս սիրում էր ու վստահում. ինչ իմանաս, մէկ էլ չուն նշ տուս եւ տեղեկատու խօսեց:

Ինչպէս միշտ, սենեակում ստուերները թանձրացան, բայց այս անգամ շփոթեց լոյսը: Այդպէս լու էր ու ոգասով. իրեն չէին տեսնում, չգիտէին իր տեղը, իրեն չէին լսում: Սակայն կը տեսնէին, եթէ յանկարծ անհրաժեշտութիւն կամ ցանկութիւն առաջանար: Իսկ ինչո՞ւ չգիտի առաջանար, ո՞ր գրուած կամ չգրուած օրէնքով, ի՞նչ արամաբանութեամբ: Եւ նա երազում էր ապրել աշխարհից հեռու մի անապատում, որտեղ ոչ տուն լինի, ոչ հասցէ ու անձնագիր, եւ մոռացութեան տայ իր միակ հարստութիւնն անգամ՝ իր անուն-ազգանունը: Նա ոգջամիտ մարդ էր եւ գիտէր, որ դա անհնարին է, ինքը դատապարտուած է ապրելու երկրի վրայ, իսկ ամենաուս 49 թուականը տեսնում է ամէն ինչ, նոյնիսկ այն բաները, որոնք բնդհանրապէս չկան ու գոյութիւն չունեն: Եւ կատկածում, ոգասում էր ու տառապում:

Ծնուել է Միջերկրականի ափին, Բէյրութ մեծ ու գեղեցիկ քաղաքում, 1949 թուականից ճիշտ երկու տուկէս տասնամեակ առաջ, տարագիր երգնկացու յարկի տակ:

Մայրը մահացաւ ատոմիթարից: Ամուրի հօր համար իրենց խնամքն ու դաստիարակութիւնը հեշտ չէր, բայց նա սիրով ու պարտաճանաչօրէն կատարեց իր ծնողական պարտքը: Ցանուն իրենց՝ այլեւս չամուսնացաւ, թէեւ ծանօթները յորդորում էին նրան այդ քայլին: Ուրիշ հանգամանք էլ կար: Մի օր, յիշում է, ընթրիքի սեղանի շուրջ նա ասաց, որ երգնկացին սուրբ պատկառանք ունի իր ամուսնական աստիճանի հանդէպ, չի դատանում նրան ոչ մի կացութեան մէջ, մինչեւ իսկ դժբախտ զէպքերը ի գօրու չեն այնու հետեւ ծուռ ճանապարհ հանելու մարդուս: Նա խաղաղ ու տխուր նայեց իր եւ քրոջ աչքե-

բին՝ ցանկանալով իրենց սրտում հոգնոգէս արթնացնել այդ հաւատարմութեան կրակը՝ ինչ էլ լինի, որտեղ էլ լինի, երբ էլ լինի։ Եւ բացեց մի գաղտնիք։ Երգնկացին միայն նա չէ, որ ծնուել է Երգնկայում, այլեւ բոլոր նրանք, ում արեան մէջ ապրում են նահատակ թէ վերապրող մերոնց հոգու ձայնները։

Գուցէ Բէյրութում ծնուելը մեզք է։ Իսկ Երգնկացու գաւակ լինելը՝ կրկնակի ու քառապատիկ յանցանք, վախեցած մտածեց նա։ Մի քանի օր առաջ կայանքի տակ առան Պետրոս Բաշեանին։ Նա էլ էր ծնուել Բէյրութում, բայց հայրը բնիկ զէյթունցի էր։ Ուրեմն Զէյթունն էլ ապահովութիւն չէ։ Ինչպէս նաեւ՝ Այաշկերտը, Էրզրումը, Սեբաստիան, Բիթլիսը, Արարկիրը։ Սեբաստացի Աբրահամեանները, որ երեք տարի առաջ մոլի հայրենիք էին եկել Եգիպտոսից, տարան անցած կիրակի լոյսը չբացուած։ Ո՞ւր տարան եւ ինչու։ յայտնի չէ։ Երգնկան մի առանձնայատուկ մեզք չէ, Բէյրութը՝ նմանապէս, որովհետեւ ձերբակալեցին նաեւ Հալէպում, Պոլսում, Մարսելում, Նիկոսիայում, Ամէնքում ծնուածներից շատերին եւ չունենք կան, քշեցին երկրի ցուրտ ու հեռաւոր վայրերը։ Նա չէր հաւատում այդ լուրերին եւ շարունակում էր մտածել՝ աւելի ու աւելի մեկուսանալով չրջապատից։

Նրա սիրտը ինչ–որ չափով թեթեւացաւ, որ Երգնկան ու Բէյրութը ճակատագրական շարիք չեն իր կեանքում։ Եթէ այդպէս չէ՝ բոլոր նեղութիւնները էլ, ուրեմն, կանուխ թէ ուշ պատասխանատու են հայածանքի այն բանի համար, որ աշխարհ ենք եկել սխալ երկրներում ու քաղաքներում, սխալ ենք ծնուել, չպիտի ծնուէինք կամ ծնուելով՝ պէտք է մեռնէինք խեղդն եւ եթ, պարտաւոր էին լինել խեղդի եւ ոտտակ մեր մայրերի արգանդում՝ մի բարեպատեհ օր չիտակ ու անբասիր մի վայրում ծնուելու համար։

Մթութեան մէջ նա բարձրաձայն ծիծաղեց եւ վախեցաւ իր ձայնից։ Համոզուելով, որ, բազկաթոռից գատ, ոչ ոք չի լսել իր անպղծոյ ծիծաղը, հեռագեամ խաղաղուեց, բայց անհանգստութիւնը վերջնականապէս չանցաւ, շարունակեց սիրտը կատաղի պէս ճանկռել։ Նա ցաւ չէր զգում, եւ դա աւելի ցաւեցնող էր։

Նա մտքում կողք կողքի խնամքով շարում էր իր վարքարանութեան մեծ ու փոքր փաստերը՝ ինչպէս չախմատի քարերն են դասաւորում խաղատախտակին, համեմատութիւններ անցկացնում իր եւ շատերի ու բոլորի միջեւ՝ փորձելով գտնել պատճառական կապերն ու կապակցութիւնները, սակայն պատկերը, է՛ր ընդհանուր, է՛ր առանձին մառնաւոր գէպքերում որեւէ արամարանութեան չէր ենթարկուում։

Ահաւասիկ Օրմանեան Գարուստի եւ իր կենսագրութեան միջեւ արտաքին տարբերութիւններ գրեթէ չկան։ Երկուսս էլ Բէյրութից ենք, մեր ծնողները՝ կապոյտ հայրենիքի գաւակներ, Բուրջ Համուտ թաղամասում էինք ապրում, նա Ս. Գրիգոր Ճեմարանի սան էր, ես՝ Վիեննական Մխիթարեան երկրորդական վարժարանի։ Ցեղով հայերը իրեն ու քրոջն ուղարկեց Կիպրոս՝ սովորելու Մեկոնեան կրթական հաստատութիւնում, որը Մերձաւոր Արեւելքում մեծ հռչակ ունէր՝ իր նշանաւոր ուսուցիչների շնորհիւ։ Նրանք միասին նստեցին «Արմենիա» հիանալի շոգենաւը եւ եկան Երեւան, Գարուստը՝ ամբողջ ընտանիքով, ինքը՝ միայնակ։ Հիմա՝ առաջիկայ շաբաթ, Գարուստը ամուսնանում է, գեղեցիկ ծրագրեր ունի, արամադրութիւնն արտակարգ բարձր է, այնինչ ինքը չգիտի ինչպէս է բացուելու իր վաղուայ օրը։ Նա հարսանիքի հրաւէր արեց անկեղծ ու սրտանց։ Ինքն ընդունեց այդ հրաւէրը, բայց մտքում որոշեց չգնալ։

Որտե՞ղ է իմ մեկը,— մտածում էր նա՝ ինչպէս չախմատիստն է գլուխ կոտրում պարզելու հաւասար խաղի պայմաններում իրեն պարտութեան դրանք հասցրած ճակատագրական վրիպանքը։

Նա էլաւ բազկաթոռից, մթաթեան մէջ կանգնեց երկար, լեռոյ մօտեցաւ այն պատին, որի վրայ մօր, քրոջ եւ հօր լուսանկարներն էին՝ ապակուտակ, առանձին շրջանակների մէջ: Ներանք նայում էին իրեն: Ամէնից շատ նա սիրում էր մօրը: Արտակարգ գեղեցիկ էր, սեւ, խոշոր աչքերը ժպտում էին իրեն բարի ու քնքուշ: Բայց նրա սիրոյ լուն հիմքը այդ գեղեցկութիւնը չէր եւ ոչ էլ ժպիտը, այլ այն, որ մայրը գնաց աշխարհից այդքան անմեղ ու երիտասարդ: Սիրում է նրան եւ կարեկցում, տանջւում, նրա ողբերգական փախճանը ոչ մի օր հանգիստ չի տալիս իրեն: Մօր մէջքացով նա սիրեց բոլոր մեռելներին՝ ծեր թէ երիտասարդ, ծանօթ թէ օտար: Բոլորին՝ աշխարհի սկիզբից մինչեւ այժմ: Քոյրը շատ նման էր մօրը՝ ձայնը, աչքերը, սանրուածքը նոյնն էն, սակայն նրա թոփչանքը չունի: Գուցէ այն պատճառով, որ դեռեւս մայր չէ: Յանկարծ նա լսեց քրոջ ձայնը, որ իրեն կանչում էր անուանով եւ փչաքաղուեց: Դա պատրանք չէր, այլ իրականութիւն, քոյրը հեռուից կանչում էր՝ արի, արի···

Նա ոչ միայն ի միջակի չէր գնալու այնտեղ, այլեւ ձայն–ծպտուն հանելու, որովհետեւ շատ եւ հզօր մի ուժ նրա սաքերը գամել էր յատակին, լեզուին ծանր ու մահաշունչ կոպակը դրել, ձեռքերը մեխերով խաչել էր պատին եւ խեղդում, ճզմում էր մարմինը: Այդպէս ճզմուած–փշրուած մարմնով նա նայեց հօրը: Լուսանկարում, ինչպէս եւ կեանքում, հայրը գուսպ եւ լուակեաց մարդ էր, չունէր մօր կենսախնդութիւնը, որ ամէն պահ յորդում էր պրսի խորքերից: Դրա պատճառը նրա հակառակորդն էր. նա կոտրած էր տեսել եւ գաղթ, կորցրել իր բոլոր հարազատներին եւ աշխարհում մնացել մենակ, որբի փշապակով: Նա չէր սիրում խօսել Եղեռնի մասին՝ շմթագնելու երեխաների արամագրութիւնը եւ ամէն ան ու սարսափ տարիներով պահում էր իր հոգու փակ ու անտես խորշերում: Ինքը ցեղասպանութեան լուրն առաւ ուրիշ ականատեսներից, որոնք իրենց տան մշտական հիւրն էին, կարդաց գրքերում, երբ արդէն մեծ էր: Եւ պատահեց արտասովոր մի բան, որ, ամենայն հաւանականութեամբ, ոչ մի ժողովուրդ չի տեսել իր օրում. այդ պատմութիւնները նրան էլ գարձրին Եղեռնի գոհ ու նահատակ, ծանր լուութիւն իջաւ մարմնին, ամփոփուեց իր մէջ եւ նոյնիսկ գէմքով, վարուեցողութեամբ, ձայնով նմանուեց հօրը: Լուսանկարում կարծես ինքն էր: Ոչ թէ հայրը, այլ՝ ինքը: Հայրն էր նման իրեն եւ ոչ թէ ինքը՝ հօրը:

Թէեւ անենակում տաք էր, բայց նա յանկարծ մրսեց ու գոգաց մի թշնամի ու գաւազի մաքից· գուցէ իր մեղքը նրանք են՝ այդ երեք լուսանկարների հետ իր արիւնակցական կապը··· Ասում են, ինչո՞ւ հաւատալ, ինչպէ՞ս հաւատալ, Յովսէփ Շիշմանեանին տարան ու կորցրին այն բանի համար, որ Կահիրէում ապրող նրա հօրեղբօր որդին գարձարանատէր է, շահագործում է խեղճ ու բարի արաբ ժողովրդին: Իսկ իր պարապայում տարինչակցութիւնը ոչ թէ հօրեղբօր որդու հետ է, այլ՝ հարազատ, արիւնակից հօր··· Ճիշտ է, նա գործարան չունի, բայց տպքատ էլ չէ, վարում է բաւականին ապահով կեանք՝ ամէն բան տեղը տեղին, եւ տարին մէկ–երկու անգամ բարեգործական նուիրատուութիւն անում հայոց գպրոցին եւ լուսաւորչական եկեղեցուն: Բարեբախտութիւն է, որ հայրը ոչ մէկին չի շահագործում, իր կարի արհեստանոցում ամէն ինչ անում է իր ձեռքով՝ իր ձեռքով ձեւում կտորն ու կարում, իր ձեռքով հագուստ հագցնում յաճախորդին եւ սաղացնում, բայց, այդուամենայնիւ··· Նրա մաքի լեզուն քարկոծ ընկաւ· ուզում էր ասել՝ գժբախտութիւն է, որ նա իր հայրն է: Այդքանն էլ բաւական էր, որ նա ատէր իրեն, նոգկար իրենից, անիծէր իրեն հին ու նոր անէծքներով:

Նա վառեց լոյսը: Թող բոլորը տեսնեն, աշխարհը թող իմանայ իրենց հարազատութիւնը. սա մայրն է, սա՝ քոյրը, սա հայրն է, ինքը սիրում է նրանց որդիական անպարագիծ սիրով, ոչ աքսորը, ոչ խաւարը բանտն ու չարչարանաց

գնդանը, ոչ գնդակահարութեան արիւնոտ պատը չէն կարող ստիպել իրեն՝ ուրանալու նրանց: Ահա իմ մարմինը, ահա ես, ահա իմ մարմինը,— մորթած արէք: Ես նրանց հարազատ եմ: Ես նրանց մէջ եմ՝ ինչպէս նրանք են իմ ներսում: Աստուած տեսնում է, որ ոչ մի մեղք չկայ մեր հոգուն ու սրտին: Աստուած է մեզ միացրել իրար: Նա ձեր Աստուածն էլ է: Նա բոլորիս արդարութեան, համերաշխութեան ու հշմարտութեան է կոչում:

Նա ծանր շնչելով,— կարծես առաստաղից, յուսամփոփի փոխարէն, յուանի օդակ էր կախուած եւ ցաւեցնում էր պարանոցը,— եա–եա գնաց ու բնկաւ բազկաթոռի մէջ:

Հետուից շարաւնակեց նայել յուսանկարներին: Երկար նայեց՝ վախեցած ու սեւեռուն հայեացքը ոչ մի վայրկեան չկարելով նրանցից: Եւ թուաց՝ նրանք գրկել են իրեն ու հեռագիտ այնպէս ամուր են սեղմում, որ ուզում են խեղդել, ճիշտ է՝ սիրելուց, հարազատի անզուսպ դգացմունքով, կարօտից, բայց խեղդում են:

Ոչ, այդ նա չէր, այլ ուրիշներ էին, ուրիշներ ու սիրուր, ձեռքերը, որ արագ մօտեցան անջատիչին եւ հանգցրին լոյսը: Հիմա անապատի չափ ահռելի խաւարն էր բնկած նրանց միջեւ, եւ նրանք արդէն չէին տեսնում իրար: Այսպէս բոլորիս համար յաւ է,— իրենից հետու եւ թաքուն մտածեց նա, երբ դարձեալ դիմեց բազկաթոռում,— թող չլինի այն, ինչ լինելու է:

Համբարձումին դատից կանչեցին–տարան, եւ նա այլեւս համապատասխան չվերադարձաւ, արդէն երեք շաբաթ ոչ ոք չգիտի նրա տեղը: Ամէն ուտանող մարդում հարց է տալիս իրեն՝ ի՞նչ եղաւ տխրար Համբիկը, եւ ոչ ոք մէկ ուրիշին՝ մտերիմ բնկեր լինի. թէ սիրած աղջիկ կամ ազգ, չի հարցնում, յուսում է, կայր ձեւանում՝ կարծես Համբարձումը գոյութիւն չի ունեցել երբեւիցէ:

Նա գգաց, թէ ինչպէս է բարախում սրտի թմբուկը՝ գարկում էին երկաթէ կոշիկներով, շարք–շարք գալիս եւ գոփում էին ու գարկում, ձայնը սառն էր, հրամայական, մահուան վճռի պէս անողոք ու շտապոյժ:

Ինչքա՞ն ժամանակ տեւեց այդ թմբկահարութեան չքերթը: Զիմացաւ: Նա մէջքը յենել էր աթոռի կոնակին եւ ձեռքերով ամուր կառչել նրա բազուկներից: Նրանք իր միակ յենարանն էին ալեկոծ ծովում, որի երախը բացուել ու նայում էր հրէշաւոր դաժանութեամբ:

Երկաթէ թմբկահարութեանը հետեւեց ծովի մռնչիւնը: Ցեռոյ եղաւ քարը ու բութ յուսթիւն, որն աւելի ահաւոր էր:

Բազկաթոռը նրան պաշտպանում էր արհաւիրքից եւ յուսադրում, եւ որքան սիրտ ու յոյս էր տալիս՝ նա այնքան աւելի էր գրկում, ամրոզջ մարմնով փարում նրան:

Պատուական Ղարաքէշիշեանին վերցրին երկկ գիշեր:

Թորոսեան եղբայրներին քշեցին: Նրանց ինչո՞ւ քշեցին, եկել էին Ապարանից եւ բնակիր էին չուկայում, այդ ո՞ր օրուանից Ապարանն էլ դարձաւ աշքի փուշ, բարի ու անմեղ մարդիկ էին, արդիւնաւոր բե՞ռ տեղափոխեցին, սխալ խո՞սք խոսեցին, ի՞նչ եղաւ տեսնես:

Ահարոնին տարան:

Մարգար Սէթեանին տարել են:

Զօհրապին՝ նմանապէս:

Բոլորին հանում են տուն–տեղից կէսգիշերին, երբ քաղաքը խոր քնի մէջ է:

Նա սպասում էր փրկարար յուսարացին, իսկ անիծեալ ժամանակը սահում էր այնքան դանդաղ, կարծես կանգ էր առել եւ թուում էր՝ երբեք չի լուսանալու օրը, նոյնիսկ՝ ամիսը, տարին, դարը:

Վերջին ամիսներին բակերից ու փողոցներից հաւաքեցին եւ տարան

ակրով ու անհավատներին չնչերին, որոնք իրենց հաջողով իրանց արա մ էին բազարի գիշերային լուսինը և բնակիչների մէջ ահ ու երկրպագութիւն, վախ, ապշանք սերմանում մ: 1949 թուականի ամրանն արդէն քաղաքում ոչ մի շուն չկար, բոլորին գնդակահարել և թաղել էին բնդհանուր փոսերում:

Բիւրականին ասրան, արդէն մի շուն չկար, որ նրա յետևից հաջէր:

Սաթենիկ և Աւետիս քոյր-եղբայրներին անից հանեցին և ասրան անյայտանի տարրեր ուղարկեցին:

Գարեգինին ասրան:

Ակարագարցի Մեկրանին ասրան:

Արշակ Գևորգեանին՝ նոյնպէս:

Միքայէլին, եղէկ լուր ասում, արդէն վերցրել են:

Նա մտածեց, որ կարաղ են գալ և իր գրկից խլել բազկաթոռը, որ գրեթէ մարդ է, աքսորել, կորցնել անհետք ու անյիշատակ և շատ վախեցաւ: Նա ոչ մէկից պակաս չէ. ծննդեան թուականն ունի ու ծննդավայր, կեանք ու պատմութիւն, արդէն ուժասնեաթ տարեկան է, և ծերութիւնը նրան գորձրել է անսահման իմաստուն և բարեհոգի:

Բազկաթոռը ծնուել էր նրա հօրեղբայրական պապի ձեռքերից, որը Երզրնկայի յուսապն առաղձոյ արծն էր: Կոնակի եղրերն ու բոլոր կողերը գարդարուած էին նուրբ ու գեղեցիկ փորագիր նախշերով: Եղնիկի տարեր ունէր, թուում էր՝ հիմա չուռ կ՝առնեն ու կը քայլեն: Նստատեղը հարթ փայտ էր, վրան մեատրա ծոցերով փափուկ միլոդեր էր գրուում, որը, սովորաբար, գործում ու կարում էր բնտանիքի հարար: Կոնակի վերնամասում, ճիշտ մէջտեղը Անահիտ աստուածուհու բարձրաքանդակն էր, որով բոլորը հիանում էին: Հայրը յիշում էր, որ իրենց ամենապատկառելի հիւրերին նստեցնում էին բազկաթոռին՝ իրրև սիրոյ ու յարգանքի արտայայտութիւն: Բազկաթոռը Երզնկայից պապիկ էր Հայէպ՝ ճանապարհին ենթարկուելով անբուր շարչարանքների, այնուհետև էլ, մի օր, տեղափոխուել էր Բէյրութ: Իրենց տան շրջդ ու նորաձև կահկարասու մէջ նա ունէր բարձր գիրք ու անուն. բոլորը մէկդին, իսկ նա միշտ խնամքի ու ուշադրութեան առարկայ:

Երբ սկսեցին կազմել Հայաստան ներգաղթողների ցուցակը, նա հօրն ու քրոջը ասաց, որ ինքն էլ է ուզում գնալ, սովորել հայրենիքի համալսարանում և դառնալ նրա քաղաքացին: Քոյրը լաց եղաւ, չէ՞ որ երկուսով օրուչել են ամառը ծովով գնալ Ֆրանսիա, Մարսել քաղաքը, իրենց մօրեղբօր մօտ, որն ամէն ամիս նամակ է գրում և քաղցր ու սրատաուշ հրաւէր անում: Հայրն բնկաւ մտածմունքի մէջ: Ի վերջոյ, մէկ-երկու օրից ասուեց համաձայնութիւնը. ինքն արդէն հասուն ոգամարդ է և իրաւունք ունի անօրինելու իր կեանքն ու կացութիւնը իր ուզած եղանակով: Նա շատ ուրախացաւ և ոգեւորուած սկսեց ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Ինչ կ՝ուզես վերցրու,— ասացին հայրն ու քոյրը,— կ՝ուզես ամրողջ տունը հետդ տար: Հայրենիքում ամէն բան էլ կայ: Եւ ճամպրուկում տեղաւորեց առաջին անհրաժեշտութեան մի քանի իրեր, հագուստ և իր սիրելի ուսուցիչներ Լեւոն Շանթի ու Վահան Թէքէեանի գրքերը՝ նրանց մակդիրութեամբ: Մի բան կ՝ուզեմ միայն: Ի՞նչ: Բազկաթոռը: Խնդրեմ,— իսկոյն համաձայնեց հայրը,— նա արժանի է հայրենիքին:

Զորս տարի առաջ, այն տխուր ու հիանալի օրը Բէյրութի նուաստանպիսար լեփ-լեցուն էր հայերով: Բոլորի աչքերին վճիտ արցունք կար: Արտասուում էր նաև քոյրը, բայց արդէն ոչ թէ չարացումից, որ իր մեկնումով խափանում է իրենց ուղեւորութիւնը Մարսել, այլ բարի նախանձով և քրոջական հպարտութեամբ՝ իր եղբայրը գնում է հայրենիք, սովորելու է Երեւանի համալսարանում, պիտի դառնայ նշանաւոր մարդ:

Երբ հայրը տեսաւ ձիւնափայլ «Արմենիա» շոգենաւը, որ կարծես Ամերիկայ լեռան պատկերը լինէր, յուզուեց եւ, իրեն մի կողմ առնելով, ասաց. «Տղաս, Երեւանի մէջ հենց տնաւորուես, նամակ գրիր, որ ես ու քոյրդ էլ գանք եւ բոլորս մէկտեղ ապրենք»:

Բագկաթոնը գիրկն առած, աջ ու ձախ հրմշտելով, նա բարձրացաւ նաւ: Մարդիկ զարմանում էին ու գժգոհում, հայրենիքում բագկաթոն չկա՞յ: Շա՜տ եւ տեսակ-տեսակ, սակայն այս բագկաթոնի նմանը գոյութիւն չունի աշխարհիս վրայ, Երգնկայի մեծ հայրն է չինել: Այդ լեռով, ուղեւորները յարգանքով ու ակնածութեամբ ճանապարհ էին բացում, որ նա բագկաթոնը ողջ-առողջ տեղ հասցնի:

Կէսգիշերի խաւարում նա հոգիս գոգեց սարսափի հիշը. իրեն ձեռք չտան, իսկ բագկաթոնն աքսոր ուղարկեն, մարմինը մրսի սառոյցների մէջ, ջարդեն ոսկորները, նա մեռնի չարչարանքներից: Ինքը ի՞նչ պատասխան է տալու հօրը, պապի յուսաւոր յիշատակին, Երգնկային եւ վերապրող երգնկացիներին, իրեն ի՞նչ պատասխան պիտի տայ եւ ինչպէ՞ս է ապրելու այսուհետ, ի՞նչ խղճով ու արդարութեամբ: Նա մոռացաւ իրեն եւ ամբողջ ուշադրութիւնը, բոլոր զգայարանները լարեց՝ որպէսզի նրան փրկի: Անապմուկ սահեց ներքեւ, գրկեց բագկաթոնի ոտքերը, կրծքով փակեց կոնակը, իր մարմնով ծածկեց նրան: Եթէ բագկաթոնը աքսորէն, դու կը մնաս, դու գրեթէ փրկուած ես, մի անից երկու հոգի հոգուս ոգէպ են տանում,— չուզեց անցաւ արեան մէջով: — Նա ոչնչով չի տարբերւում մարդուց, միայն լեզու չունի. իսկ հիմա ո՞վ լեզու ունի, բոլորն էլ համր են: Եթէ կ'ուզես իմանայ,— չընդունում էր արիւնը,— նրա մեզքերը աւելի շատ են, քան քանը, որովհետեւ նա երկար, շատ երկար է ապրել այս աշխարհում: Նա պահեց չունչը, որպէսզի արիւնը չարաւնակի խօսել, այնքան մեղմ ու գուրեկան էր նրա ձայնը: Բագկաթոնը կը փրկի քեզ, յոյզ դիր նրա վրայ,— լեռոյ ասաց արիւնը նոյնպիսի չշուկով՝ կարծես ոչինչ էլ չասաց,— նա քեզ շատ է սիրում, քեզ համար նա պատրաստ է ամէն զոհողութեան: Նա յուզուեց եւ մարմնով դող անցաւ, որ բագկաթոնը իրեն այդքան շատ է սիրում: Ես էլ քեզ եմ սիրում,— որ բագկաթոնը յանկարծ չնեղանայ, երեւս չթեքի իրենից՝ չընդունց նա:— Բէյրութից ես կարող էի ոսկի չղթաներ բերել, ուրիշ հարստութիւն, բայց բերեցի քեզ, լիո՞ւմ ես, դու ինձ շատ շարչարեցիր··· Նա գիտակցեց, որ բառերը բաւարար չեն՝ ցուցադրելու իր ամբողջ սէրը, եւ սկսեց բագկաթոնի ոտքերը քնքշօրէն շոյել, լեռոյ փաղաքշեց կոնակը, բարուկները եւ զգուանքով փարուեց նրան: Նա ապացուցում էր իր սէրը՝ որպէսզի բագկաթոնի սէրն ու նուիրուածութիւնը իր նկատմամբ աւելի բարձրանայ, նրա առաջ փակի նահանջի բոլոր դռները, խափանի յանկարծ մէկ ուրիշին սիրելու, նրա համար զոհուելու հնարաւորութիւնը:

Սրան թմրուկը վազուց լսել էր, եւ նրա աչքերին յոգնած նինջ ու քուն իջաւ:

Կէս քուն ու արթուն նրա մարմնում շարժուեց սարսափելի երազը: Գալուստ Օրմանեանին հարսանիքի ուրախ սեղանից վերցրին եւ այժմ ձեռքերը ոլորած տանում են: Նահատակ շները գուրս են ելել փոսերից եւ հաչում են ու ագիոգրամ ասում: Ներահարար հերարձակ ու բոկոտն վազում է ամայի քաղաքով, յաց լինում, ճչում, ազաչում, խելագարւում: Ծագիկներով զարդարուած նրա քոյրն ընկել է ցեխի մէջ: Քամին քաշում-պատառոտում է նրա սպիտակ շրջազգեստը···

Նա զարթնեց մղձաւանջից· իր սենեակն էր եւ իր մթութիւնը:

Դանդաղ բարձրացաւ ծնկներին եւ ձեռք ու ոտքերին ուժ տալով նստեց բագկաթոնում, կարծես ոչ [illegible] նստեց, այլ մտաւ, թաքնուեց նրա մէջ:

Սկզբում նա յանձախանգ[illegible] նամակ գրում հարազատներին, լեռոյ սկսե[illegible]

ուշ—ուշ գրել։ Վերջին նամակն ուղարկել է չորս ամիս առաջ եւ վայրաց սառցել պատասխանը։ Բոլոր նամակներում յայտնում էր, որ ինքը լաւ է, շրջապատուած սիրով ու հոգածութեամբ, համոզուած դասերը բարեյաջող են, ինքը բռնել է հայագիտութեան ու բանասիրութեան ճիւղը եւ յոյս ունի մի օր նպաստ բերել հայրենիքին։ Նրանց ներկայացնելու խնդրանք ու հրաւէր չէր անում՝ այդ հարցում պահպանելով քար լռութիւն։ Ոչ մի անգամ հեռաւոր ակնարկ անգամ չարեց աքսորների վերաբերեալ։ Ոչ մի բառ չասաց նաեւ այն դասախօսի մասին, որից է՛ն ուսանողներն էին վախենում. է՛ն դասախօսները։ Նա առում էր ակնոցի հաստ ապակու եռանում նստած նրա սառն ու ջրալի աչքերը, նրա օսլայած օձիքն ու լայն փողկապը, նուրբ եղունգներով նրա մաքուր ու սպիտակ մատները, որով բռնում էր գրիչը եւ յօդուածներ գրում «ժողովրդի թշնամի» գրողների մասին, որից յետոյ նրանց տանում էին եւ արգելում գրքերը, խլում տունն ու ունեցուածքը, պղծում յիշատակը, իսկ երեխաներին, նրանց որբացած երեխաներին սովի մատնում եւ վախեցնում հարազատ ծնողաց անուններով ու գէմքով։

Նա գրաց, թէ որքան անօգնական է՝ որոշելու իր անմեղութեան ու մեղքի յարաբերութեան խնդիրը։

Ի հարկէ, ինքը մեղք ունի, մեղքն անրաժանելի է մարդուց, որպէս մարդ՝ այնպէս էլ մեղք, բայց սարսափելի տանջանք է, որ դու չգիտես, չես տեսնում քո մեղքը, նրանք գիտեն, շատերը գիտեն, բոլորը գիտեն, իսկ դու չգիտես, քո սեփական մեղքը քեզ անյայտ է եւ անիմանալի։

Ուզեցը բարախում էր, իսկ սրաի գարկերն ամենեւին չէին լսում։

Տխուր ես ու չփոթուած՝ մեր այսքան ուրախ կեանքի մէջ,— ասաց ինչոր մէկը։ Ոչ, դա իրեն առելի դասախօսի ձայնը չէր, պարզապէս նման էր նրա ձայնին։

Նա ուզեց մէջքը, բազկաթոռում նստեց մարդավայել՝ ձեռքերը բազուկներին, ոտքերը գետնի վրայ։ Ուզում էր ոտքը գնել ոտքին, որ աւելի յարմար էր, բայց չհամարձակուեց։ Աւելի մարդ կար եւ չկար։

Տխուր չեմ։

Տխուր ես,— լսուեց իրրեւ ծանր մեղադրանք։

Գուցէ իմ մէջ ապրող սիրան է տխուր։

Քո մէջ ապրող սիրաը դու ես։

Նա հասկացաւ, որ տխրութիւնը այնպիսի մեղք է, որի համար ոչ մէկին չեն ներում։

Կէսգիշերից յետոյ, սեւ բուի ժամին, գուռը ծանր ու խուլ թակեցին։ Կարծես թակեցին ոչ թէ դուռը, այլ՝ առաստաղը, պատերը, յատակը։

Երբ լուսացաւ՝ բազկաթոռը դատարկ էր։

ՆՈՐԱՑԻ ԱԴԱԼԵԱՆ

Աիմեղ Աիմեղով

*
* *

28 Փետրուար 1988ին, ազրբէջանական Սումգայիթ քաղաքին մէջ ջարդարարական բնագդներ գրգռուած շուրջ երեք հարիւր հոգի հաշուող արիւնարբու մթին ամբոխի մը մէջէն Մոսկուա տարուեցան ու պատի քաշուեցան յարմայնել ճիւաղներէն երեքը՝ Աշմեդ Աշմեդով, Իպրամ Խամպիկով եւ Եաֆար Զաֆարով: Քովի սենեակին մէջ բնթերցողը կոգք կոգքի կը տեսնէ առաջին երկուքը, իսկ աւելի գեղահաս անբարգարձին փոխարէն կ'երեւի մօրը ուրուականը: Ու մօրը միտքերնը.

«Այստեղ ոչ թէ իմ տղան, այլ պարտուեցուած անձնիմ պէտք է նստած լինէին. ամէն ինչ նրանց թոյլատրեցինք է եղել»:

Անբարբառ թէ բարբառող բոլոր միտքերը կը հաստատեն, որ սումգայիթեան ոգեղին եղեն իրապէս կայն «պարտուեցուած անձինք», բայց պիտի բնդունինք նոյն ատեն, որ պարտուեցուած այդ անձերը գժուար թէ յաջողին արիւնահեղութեան նման բնագդներ գրգռուել ապ, եթէ վատահ շրջապին, թէ գեղասի անբարգարձներ չարդարած Սումգայեանները արդանդը ուսհատակեանօրէն պէտք է չարդարած ըլլայ Աշմեդ ու Իպրամ ու Եաֆարներուն տեսի միտքերը:

Այսքանը ծանօթ է հայ մարդուն ու սումգայիթեան եղեռնը հոգիս թէ բան մը կ'ուզենք իր պատմական փարձառութեան վրայ: Նորութիւնը միւսն է, անհատականին, միայն հաստատում մը, բան որում՝ «Բանն այն է, որ զօրքը որոշ դիպուածում պարզապէս չի միջամտել հայ բնակչութեան ջարդերին. օգնութեան չի հասել մարդկանց թէեւ հենց դրա համար էր երկրի տարբեր վայրերից ուղերկուել Սումգայիթ»:

Այս կեցուածքն է, այս չէզոքութիւնը, պիտի բաւինք այս մեղադրութիւնն է, որ անհատականի մնաց թ Հայաստան թէ թ ռիւս աշխարհի եւ այս մէկն է, որ ասիթ պէտք է հանդիսանայ բնդարձակ խորհրդածութիւններու...

Եաֆար Զաֆարովի մայրը

Նաև ծանոթ անուն մը չէր եւ արտաքին անդրադարձան գնուած սարքերու թիւն մը պիտի բերէր Սամուէլ Շահմուրատեան, բանակագէտ հայրենիք Գրիգոր Գրիգորեանի «Հատուցման շեմին» խորագրեալ իր վերջին ստեղծագործութեան շուրջ։

Շահմուրատեան իրեն ակնառուն ու ակնկալուած տիպ բարդանք դարձաւոյց մանրամասնութիւնով մը զատորոշուած է ատոմայինեան գլխաւոր մարդասպաններէն Ա.Մեկ Ա.Մեկովի, Իրգամ Խանդիրովի եւ Եւգենը Չաֆարովի մասին պատմելու թիւնը, ընդգրկելով ցեղասպանութեան անոնց ազարքը՝ իր բոլոր երեսներով, անհաւասարէն ու հաւասար ընդհանրացու մներով։

Հոլովներ ժամանակակցութիւնը մրցանակով մը վարձատրեց Սամուէլ Շահմուրատեանի «Հատուցման շեմին» յօդուածաշարքը, որուն եղրափակիչ էջը կը ներկայանայ մեր թերթերուն ուշադրութեան։

ՀԱՏՈՒՑՄԱՆ ՇԵՄԻՆ

Երբ նախագահը յայտարարեց, որ ՍՍՀՄ Գերագոյն դատարանի կոլեգիան մեղաւոր է Հանաչել Ա.Մեկովին եւ կատարած յանցագործութիւնների համակցութեամբ դատապարտել է նրան մահապատիժ, գահիճները ոչ բազմաթիւ ծափահարութիւններ յուսեցին, բայց ներկաների մեծամասնութիւնը անշարժ էր, նոյնիսկ մի անգամ չշփոթուած։ Ցնցուելով ծափահարութիւններից, Ա.Մեկովը կարուկ շրջուեց է դահլիճի կողմը։ աչքերը արիւնում էին, ատամները՝ սեղմած, դէմքն ապտակել էր գաժան ու անդրդվելի կատարութիւնից։ Մատնեցի որ եւեւ թէ այդ պիսին է եղել այդ դէմքը նաեւ կատարածի ժամերին...

Այդպիսով, ատարաւեց Հիշա մէկ ամիս առաւած մոսկովեան դատավարութիւնը, եւ ատոմայինեան եղեռնագործներից Ա.Մեկովը ատացաւ իր արժանի հատուցումը։ Սակայն ո՞վ էր Ա.Մեկովը։ Նենգ, արնախում, բայց հնազանդ գազան հմուտ վարժեցնողի ձեռքին, դատարանական գործիք ու ժերի նիւթած թաւերում, մէկը բազմաթիւ այն խղճաթիկնիկներից, որոնց թելերը բռնողները ատարմ անուանների ու անդամով են մնացել։ Եւ մէկ ամիս դատավարութիւնը լարուած ուշադրութիւնը հեռուց մեր հատարակութիւնը, համոզուած եմ, երկրի գերագոյն ատեանից ակնկալում էր ոչ միայն Ա.Մեկովի կամ ա.Մեկովների, այլեւ, ամենից առաջ, Ատոմայինի դատապարտումը, սեւ իրողութիւնան քաղաքական ոգասիչ, աներկմիտ գնահատականը։ Ցաւօք, այդ գնահատականը չարուեց, ու թէեւ փաստաբաններ Ակաունին ու Շագաշնիկովան քիչ բան չարեցին ատոմայինեան ոճրագործութեան ամբողջական ու ստոյգ պատկերը բացայայտելու, նրան նպատակ դիտուս որ պայմաններն ու պատճառները պարզելու, կատարուած յանցագործութիւնները հիշա արդարացնելու համար, նրանց փաստաբերները գրեթէ միշտ դէմ առան նոխաօրոք կանխնեցուած անդրդուելի պարիսպներին։

Միեւնոյն, անշուշտ, հենց նման գնահատականը եւ ոչ թէ «խուլիգանական դրդումներ» բնորոշումն էր, որ պէտք է բարձր պահէր երկրի դատաւորը մեր եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքերում։ Նրա միջին ու անմնացորդ հրամայականն էր, որ պիտի արմատախիլ անէր Ատոմայինի գազանարարքի խոկ, կանխէր նոր ատոմայինների բռնկման վտանգը, հատատէր, որ անցեալը ցեղասպանութիւն է՝ ծանրագոյն յանցագործութիւն մարդկութեան դէմ, եւ ապրարարեր, որ այն չպէտք է կրկնուի։

... Հիմա, երբ ուշ գիշերին մոսկովեան հիւրանոցի սենեակում գրում եմ այս վերջին տողերը, եւ հեռախօսը շարունակ ուղղագոյն լուրեր է հաղորդում Բարուից, Կիրովաբադից, Նախիջեւանում պարձեալ տեղի ունեցող բռնութիւնների, խժդժութիւնների, հակասոցիալական, հակաուսական կոչերի ու գեկցումների խառնուածոյների մասին, նորից եմ համոզուում։ Ատոմայինը պէտք է դատապարտուի, բա՞ւ որում՝ երկրի բարձրագոյն իշխանութիւնների կողմից եւ ամենայն խստութիւնամբ, այլապէս կարող է կրկնուել էլ աւելի հրեշաւոր, էլ աւելի այլանդակ գրսեւորումներով ու չափերով։

(«Գրական թերթ», 1988, *թիւ* 48)։

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՄՈՒՐԱԳԵԱՆ

Տ. ԽԶՄԱԼԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հասարակութիւն՝ առանց հասարակական կարծիքի, ազգ՝ առանց ազգային իդէալների, մարդիկ՝ զուրկ մարդկային պարզ զգացումներից: Սա սոսկալի է:

Ինը ամսուայ մէջ... ծնուեց, աւելի հիշա՝ վերածնուեց ազգը: Ահա թէ ինչն էին փորձում սպանել Սումգայիթում, Խոջալուում, «Զուարթնոց» օդակայանում:

Մեկ մօտ ապիրոյով հարձակեցին Մոսկուայում Սումգայիթեան պատմութեան վկաների յուշամնեները: Դա սոսկալի էր: Բայց աւելի սոսկալին հրապարակայնութեան չբնանում հնմարատութիւնը բոլորիս խնամքով թաքցնելն է:

Տ. ԽԶՄԱԼԵԱՆ

(«Իզվեստիա» *թերթի ս. թ. Նոյեմբերի 19ի համարում տպագրուած* «Առայժմ դեմոկրատիայից աւելի լաւ բան դեռ չի մտածուել» *հարցազրոյցի առթիւ*)

Ցարգելի Գրիգորի Բակլանով: Դիմում եմ Ձեզ եւ, ի դէմս Ձեզ, բոլոր նրանց, ովքեր ստանձնել են այս տարիներին Ռուսաստանում մշակոյթի, խղճի ու մարդկայնութեան աւանդները պահպանելու պարտականութիւնը:

Երբ գալիք սերունդները քննելու լինեն մեր ապրած այս ժամանակը, նրանց կը սարսափեցնեն ոչ թէ տնտեսական ձախողումները, գիւղատնտեսութեան քայքայումը կամ տեխնոլոգիական վթարները: Նրանց կը սարսափեցնի մեր հասարակութեան անբարոյութիւնը, կը սարսափեցնեն նրանք, ովքեր ժողովրդից խլեցին մարդկայնութեան հազարամեայ աւանդները եւ փոխարէնը չտուին ոչինչ: Դրա հետեւանքով ստեղծուեց ապշեցուցիչ մի հանրութիւն այն մարդկանց, որոնց խորթութիւնից ու մեկուսացուածութիւնից զատ ուրիշ ոչինչ չի միաւորում: Հասարակութիւն՝ առանց հասարակական կարծիքի, ազգ՝ առանց ազգային իդէալների, մարդիկ՝ զուրկ մարդկային պարզ զգացումներից: Սա սոսկալի է: Այդպիսի մարդկանց միակ երջանկութիւնը չգիտակցումն է այն բանի, թէ որքա՜ն դժբախտ են իրենք: Եւ եթէ մարդկանց մի մասի, մէկ-երկու ազգի մէջ արթնանում է արժանապատուութեան զգացումը, ապա այն կա՛մ պէտք է համակի մնացած բոլորին, կամ թէ չէ՝ նրանք իրենց սեփական հանգստութեան համար պէտք է խեղդեն նման զգացումները:

Այսօր ծանր հիւանդութիւն է հայ լինելը: Մենք ազատութեամբ վարակուած ազգ ենք: Ինը ամսուայ մէջ,— մարդ ծնուելու համար անհրաժեշտ ժամանակամիջոց,— ծնուեց, աւելի ճիշտ՝ վերածնուեց ազգը: Ահա թէ ինչն էին փորձում սպանել Սումգայիթում, Խոջալուում, «Զուարթնոց» օդակայանում:

Սումգայիթը նոր վէրք չէ Հայաստանի համար, դա նոր հարուած է ժողովրդի յաւէտ չսպիացող վէրքին: Երեք հազար տարուայ մենութիւն···: Բայց հոգուն ցաւ պատճառողը այլ բան է: Ընդունուած է քառասուն օր չմտնել նոր ծնուած մարդու մօտ, որպէսզի վնաս չհասցուի նրա դեռեւս անպաշտպան

ու նուազ կեանքին: Դա, թւում է, այն ժամանակահատուածն է, որի ընթացքում հոգին պիտի բնաւորուի մարմնում: Երբ մարդ է մահանում՝ դարձեալ ընդունուած է քառասուն օր յարգել նրա յիշատակը, խրախճանքներով ու անտարբերութեամբ չվիրաւորել նրա հարազատներին ու մերձաւորներին: Հոգին մարմինը լքելու միջոցն է դա:

Մենք հիմա բոլորս վիրաւորուած ենք մեր վշտի օրերին ուրիշների անհոգութեան ու ցուցաբերած անտարբերութեան համար: Ահա թէ ի՛նչն է ամենից առաջ մեզ բաժանում ուրիշներից:

Յարգելի Գրիգորի Բակլանով: Դուք պատերազմում տեսել էք մահուան աչքերը, դուք չէք կարող չյիշել, թէ գրողներն ու բանաստեղծներն ինչպէս էին հարկադրաբար ատելութիւն սովորեցնում ժողովրդին, որն անհրաժեշտ էր թշնամու դէմ մղուող պատերազմում: Իսկ ո՞վ սովորեցրեց ատել հարեւաններին, ո՞վ իր աեփական զաւակներին սովորեցրեց տեսնել, թէ ինչպէս են սպանում ու բռնաբարում հայերին միայն այն բանի համար, որ նրանք հայ են: Ո՞վ ժողովրդին չփարատեց բուռ անտարբերութիւնից: Մեզ մօտ ռադիոյով հաղորդեցին Մոսկուայում սումգայիթեան դատավարութեան վկաների ցուցմունքները: Դա սոսկալի էր: Բայց աւելի սոսկալին հրապարակայնութեան շրջանում ճշմարտութիւնը բոլորից խնամքով թաքցնելն է: Իսկ էլ աւելի սոսկալին գիտէ՞ք, թէ ինչն է: Թղթակիցը, Գերագոյն դատարանի դահլիճից հասնելով Մոսկուայի կենտրոն, անցորդներին հարց է տուել, թէ ի՞նչ գիտեն նրանք Սումգայիթի մասին: Շատ աւելի լաւ կը լինէր ընդհանրապէս ոչինչ չիմանային, կամ իմացածը միայն կաբինետներում խնամքով խմբագրուած անհեթեթութիւնները լինէին, բայց ահա ոմանք անսքող անտարբերութեամբ ասացին, որ չեն էլ կամենում որեւէ բան իմանալ: Ո՞վ է պատասխան տալու սրա համար:

Դուք դեմոկրատիայի երանելիութեան մասին մտքեր էք յայտնում Ձեր հարցազրոյցում, որոնք աչքի են ընկնում ոչ այնքան ճշմարտացիութեամբ, որքան դա ապացուցելու անհրաժեշտութեան մղումով: Այնտեղ Դուք որպէս ազգային բախումների վերացական օրինակ, բերում էք հայ կնոջ ձեռքով ադրբեջանցի երեխաներին թունաւորելու հնարաւորութիւնը: Կամ՝ հակառակը: Զկարծէք, թէ Ձեզ գրում եմ՝ համոզելու համար, որ հայ կինը չի կարող երեխայի թունաւորել: Այո՛, չի կարող: Մենք չենք կարող անմեղ մարդու սպանել: Այս ինը ամսուայ ընթացքում Հայաստանում ապրող ադրբեջանցիների գլխից մի մազ անգամ չի պակասել «ի հատուցումն» Ադրբեջանում նրանց ցեղակիցների կատարած չարագործութիւնների: Բայց ես ուրիշ բան եմ ուզում ասել: Ես պարզապէս փորձում եմ հասկանալ, թէ այս ի՞նչ է կատարւում, երբ ժողովրդի ամենախղճմիտ ներկայացուցիչները այդքան կոյր ու խուլուհամր են դարձել ուրիշի ցաւի հանդէպ: Հարիւր տարի առաջ Դոստոեւսկին նման մի օրինակ է բերել, որպէսզի Ալեոշա Կարամազովը ցնցուի ու մահ պահանջի մարդասպանի համար: Իսկ Դուք լրագրային յօդուածում հպանցօրէն, յանուն սիրուն խօսքի, ինքներդ էլ չկամենալով, չէ՛ք խնայել մի ամբողջ ազգի առանց այն էլ վիրաւորուած զգացումները եւ նոյնիսկ չէք է՛լ նկատել դա: Մենք ալերգիա ունենք թերթերից, բայց, դժբախտաբար, չունենք իմունիտետ: Իսկ թերթերը ժողովրդի մէջ սերմանում են մարդկայնութեան ձեռք բերուած իմունոդեֆիցիտի սինդրոմը: Երկարաձգուող անբարոյութիւնը ծնում է այնպիսի իրավիճակներ, երբ հնարաւոր է միայն ընտրովի մարդասիրութիւն, կիսատ-պռատ գթութիւն, երբ մի զոյգ կէտերի փրկութիւնը աւելի է կարեւորւում, քան ցաւը մի ժողովրդի, որի զաւակները չարժանացան անգամ պաշտօնական ցաւակցութեան:

Մենք պահանջում ենք ո՛չ թէ խղճահարութիւն, այլ՝ մարդկայնութիւն: Մենք պահանջում ենք ո՛չ թէ հող, այլ՝ արդարութիւն: Մեզ այլեւս կարեկցանք պէտք չէ: Դա ձի՛զ է պէտք, հասկացէ՛ք, ձեր խղճին է պէտք: Լաւ պատուրուած լռութեան եւ չափաւորուած կիսաճշմարտութեան ամէն մի օրը մեզ աւելի է հեռացնում իրարից: Մեր գլխին բարոյներ են կարդում բաղմաթիւ ինչ-որ ճկատառումների վերաբերեալ: Մենք խօսում ենք խղճի մասին, իսկ մեզ բարոյում են բաղմաթիւ ինչ-որ: Մենք խօսում ենք պատմութեան մասին, իսկ մեր վարքը գնահատում են վաղ թուականով:

Ասուածաշնչում, որը հայերն առաջինը ընդունեցին, Բառարան գերարդասուեց Քրիստոսից: Մի՞թէ, յիրաւի, պատմութիւնը կրկնւում է:

Որքա՞ն կարելի է կեղծել: Ինչքա՞ն կարելի է լռել:

Պատերազմից յետոյ Բերտոլդ Բրեխտը գրեց՝ *«Ա՛խ, ինչ ժամանակ է, երբ ծառի մասին խօսելն անգամ յանցագործութիւն է թւում, քանզի նրա մէջ ամփոփուած է լռութիւնը սնրագործութիւնների վերաբերեալ»:*

Դա մեր ընդհանուր պատմութիւնն է (*«Գրական թերթ»*, 1988, թիւ 48):

ՏԻԳՐԱՆ ԹԶՄԱԼԵԱՆ

Երեւանի պետհամալսարանի դասախօս
լեզուի եւ գրականութեան
ֆակուլտետի տարեց դասախօս

ՍՈՒՄԳԱՅԻԹ

Արքնացումի ի՜նչ կսկիծներ ցաւի:
Ծանր գարպաւին բախուեցիւմ մթան:
Ինչպէս սեւ սմեմ գիշերահաւի՝
Դառը առաւել, քան բանտ ու գնդան:
Ձմեռուրեան հաց խնդրեցիւմ. աւա՜ղ.
Շներ բաց թողին–կերէ՛ք անարգել…
Եւ սուրգայիրեան ամէն մի ճիւաղ.
Կարոտացաւ մեզ լկել, անարգել…
Յետոյ բացեցին թոյնի տակառներ.
Գարշահոտ սուտ
Ցիածանուեց մէկից.
«Իրենք իրենց են նրանք կործանել» —
Քամու էջիջը ապտակի նման
Հարուածեց դէմքիս…

*
* *

Քաղաքականութեան ծախերից յոգնած՝
Կանգնել եմ նոքից հս երգի շեմին:
Քայլիս թեթեւ է. համբաս մաքրուած
Տիղմից ու փոշուց անցած օրերի:
Էլ չեմ հաւատում խոստումներին տաք
Իշխանաւորի՝ վերեւից ներքեւ…:
Օ՜. մեծ ազգերի բարեկամութեան
Ստայօղ կոչեր ու նոռում երգեր…
Դէ. մնաք բարով
Լուսաւոր ներկայ.
Գալիքի հերկեր.
Լոյս ու ճանճանչում
Կորած փուչ խօսքեր…
Բառարանների սրբեցի փոշին՝
Տակը մնացին
Լոկ հայհոյանքներ…

*
* *

Ոչ կեանք կայ.
Ոչ լոյս.
Ոչ գործ ու բարիք
Եւ ոչ աշխատանք, ոչ էլ արգասիք…
Առանց սիւն ու հիմք հայրենիքն ինչ է՝
Չկա՛յ հայրենիք…
Եթէ չեն ջոկում՝ ճի՞շտ է, թէ կեղծիք,
Արդարացի խօսք է, թէ ստահակի…
Աքի՛ւն կը ծորայ պատռուած կրծքից
Կրեմլի ճերմակ
Սայայատակին…

ՍԵԴԱ ՎԵՐՄԻՇԵԼԱ

Գ. ԷՄԻՆ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ——— ——— ՊԱՀԱՆՋՈՎ...

Ջարդ ու կոտորած, եւ այն էլ՝ խորհրդային երկրի եօթերորդ տասնամեակում, խորհրդային Ադրբէջանում, պրոլետարական Սումգայիթ քաղաքի «Բարեկամութեան» եւ «Խաղաղութեան» փողոցներում, Լենինի արձանի մօտ...

Սումգայիթի ջարդի եւ կոտորածները, եւ հրահրողները պիտի դատուեն եօթնապատիկ աւելի խիստ, որպէսզի այդ արիւնոտ ոճիրը (Աստուած մի արասցէ), անպատիժ մնալու հեռանկարով չկրկնուի...

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

Վերակառուցումը մեր երկրի հասարակական–քաղաքական կեանքի նախորդ տասնամեակների եւ յատկապէս «ստալինեան դարաշրջանում» կուտակուած ողբերգական սխալների ուղղումն է նաեւ:

Ինչպէս արդարացիօրէն նշեց ԽՄԿԿ կենտկոմի գլխաւոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը, դա վերաբերում է մանաւանդ ազգային քաղաքականութեան ոլորտում թոյլ տրուած սխալներին: Այդ ոլորտում եղած սխալներն աւելի շատ եւ աւելի վտանգաւոր են թէկուզ եւ այն պատճառով, որ այդ ասպարէզը սկզբից եւեթ (եւ մանաւանդ՝ Լենինի մահից յետոյ) գտնւում էր Ստալինի միահեծան իրաւասութեան ներքոյ: Բնաւ պատահական չէ, որ 1920 թուականի վերջերին Ղարաբաղի (ինչպէս նաեւ Նախիջեւանի) հարցը լենինեան, յեղափոխական ոգով արդէն յանգում էր իր արդարացի լուծմանը, եւ ամէն ինչ բարդացաւ ու խաթարուեց, երբ այդ գործը իր ձեռքը վերցրեց Ստալինը...

Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման համար մղուող պայքարը՝ վերակառուցման պայքարն է նրա հակառակորդների դէմ, լենինեանների պայքարը՝ ծպտուած ստալինականների դէմ...: Եթէ այդպէս չլինէր, այդ հարցն այսպէս չէ՛ր բարդանայ, որովհետեւ այլ բան է, երբ խօսում ես *վերակառուցման մասին, եւ բոլորովին այլ,* երբ սկսում ես գործել՝ *իսկոյն յարուցելով վերակառուցման մեծ ու փոքր հակառակորդների կատաղի դիմադրութիւնը:*

Լեռնային Ղարաբաղի հարցը լենինեան ոգով՝ համաձայն ազգերի ինքնորոշման սկզբունքի եւ ժամանակին կը լուծուէր, եթէ մեր մամուլի եւ փրոփականտայի որոշ օրգանների պէս ժամանակաւորապէս չընկնէր վերակառուցման հակառակորդների... մամուլի տակ...

Միայն վերջերս, «Պրաւդա» թերթի յայտնի խմբագրականից յետոյ հնարաւոր դարձաւ ճշմարիտ խօսք ասել ու լսել Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի ունեցած դէպքերի մասին, խօսք, որին այնքան ծարաւի էր խորհրդային ժողովուրդը:

Այդ իմաստով խիստ բնորոշ ու գնահատելի է նշանաւոր գրող, հրապարակախօս, խաղաղութեան պաշտպանութեան խորհրդային կոմիտէի նախագահ Հենրիխ Բորովիկի «Դիրքորոշում» հեռուստատեսային հաղորդումը:

Հ. Բորովիկը հեռուստադիտողին «գործի էութեան» մէջ է մտցնում հենց սկզբից, հաղորդման առաջին իսկ կադրերից, երբ Երեւանի տեսարանի ֆոնի վրայ գեղեցիկ, զուսպ ու չրջահայեաց մի հայուհի, դառնօրէն դանգատելով մամուլի ու հեռուստատեսութեան ոլորտում մինչ այդ եղած մանուածապատ, իսկ երբեմն էլ՝ պարզապէս ապակողմնորոշող ելոյթներից ու յօդուածներից, վրդովուած նկատում է, թէ այդ մասին ճշմարիտ մի խօսք ասելու համար երեւի տարիներ են հարկաւոր...: Ափսո՛ս, որ, ի տարբերութիւն հաղորդման միւս մասնակիցների, չեն նշւում նրա անուն-ազգանունն ու մասնագիտութիւնը: (Գուցէ նպատակը հենց դա է եղել՝ ելոյթը հնչեցնել իբրեւ բնաբան): Նրա այդ խօսքերից յետոյ հեռուստադիտողը կամայ-ակամայ աւելի խորն է հասկանում ու գնահատում «Դիրքորոշում» հաղորդման դերը, հաղորդում, որը հնարաւոր դարձրեց այդ ճշմարիտ խօսքն ասել այսօր, դէպքերի չխամրող տպաւորութեան տակ:

«Դիրքորոշում» հաղորդման մէջ ճշմարիտ ինֆորմացիա տրուեց Ստեփանակերտում, իսկ ապա նաեւ Երեւանում տեղի ունեցած քաղաքակիրթ էութեամբ սահմանադրական ցոյցերի ու միթինկների եւ որպէս դրանց պատասխան՝ Սումգայիթում տեղի ունեցած աւերածութիւնների ու ջարդի մասին, որոնց զոհ գնացին, կամ՝ որոնց ընթացքում ծանր վիրաւորուեցին բազմաթիւ անմեղ հայեր: Ի դէպ, աւելացնեմ, որ խիստ տեղին ու արդարացի են «Դիրքորոշում» հաղորդման հեղինակի զարմանքն ու ազնիւ մտահոգութիւնն առ այն, որ Սումգայիթի նահատակների հարազատներին ոչ մի պաշտօնական ցաւակցական յայտարարութիւն չի հրապարակուել:

«Դիրքորոշում» հաղորդումից մարդիկ տեսան ու իմացան, որ նախորդ տասնամեակների ազգային քաղաքականութեան ամէնից ծանր ու տագնապներով յղի սխալներից մէկն ուղղելու պահանջով հանդէս են եկել ոչ թէ «մի խումբ ծայրայեղականներ», այլ՝ Ղարաբաղի, իսկ այնուհետեւ նաեւ ամբողջ Հայաստանի հայութիւնը: Հանդէս են եկել եւ այն էլ ո՛չ թէ ջարդերի ու աւերածութիւնների բարբարոս միջոցներով, այլ՝ Լեռնային Ղարաբաղի ԽՑԲՆԱՎԱ՛Ր (եւ ոչ թէ «այլավա՛ր», ինչպէս մինչ այժմ ոմանք սովոր էին կարծել) մարզում անցկացուած ժողովրդական հանրաքուէի բարձր լիազօրութեամբ, ըստ Ղարաբաղի մարզխորհրդի նստաշրջանի ու մարզկոմի պլենումի որոշումմիջնորդութիւնների:

Հենրիխ Բորովիկի հաղորդման շնորհիւ միլիոնաւոր մարդիկ առաջին անգամ տեսան ու իմացան, որ նոյնիսկ այդ ջարդից ու կոտորածից յետոյ Երեւանում Սումգայիթի անմեղ զոհերի յիշատակին նուիրուած սգոյ բազմահազարանոց երթը զուսպ ու քաղաքակիրթ բնոյթ է կրել:

Արժէ այստեղ նշել Բորովիկ-հրապարակախօսի մի կարեւոր ու գնահատելի յատկութիւնը: Իմանալով հանդերձ, թէ ինչը ինչոց է, նա մանրակրկիտ ու բազմակողմանի հարցեր է տալիս «Դիրքորոշում» հաղորդման մասնակիցներին, աշխատելով ինչքան կարելի է լրիւ ներկայացնել այս կամ այն իրադարձութեան ընոյթն ու էութիւնը:

Օրինակ, բազմաթիւ փաստեր ուսումնասիրելուց եւ եղածը սեփական

աչքերով տեսնելուց յետոյ նա փորձում է Երեւանի ադրբեջանական դպրոցի ուսուցչուհուց իմանալ, թէ արդեօք Հայաստանում ուեւէ մէկին հայերը նեղութիւն տուե՞լ են, թէ ոչ...

Եւ բոլորը լսում են մի կցկտուր պատասխան առ այն, թէ, քանի մը հայեր Երեւանում միտինգ էին անում, մենք էլ, դրանից վախենալով, դռների յետեւում աթոռներ ու արկղներ դրինք... (խօսքի իմաստը այստեղ եւ այսուհետեւ բերում եմ համառօտակի՝ անհնար է հեռուստաէկրանից ճշդրիտ գրի առնել ամէն մի բառը)։ Այդ պատասխանին յաջորդում է ջարդից հրաշքով փրկուած նախկին սումգայիթցի հայուհու լացակումած ադերսը՝ չսոխպե՛լ իրենց վերադառնալ այդ դժոխքը...

Խելացի է վարուել Բորովիկը, երբ «Դիրքորոշում» հաղորդման մէջ ձայն է տուել նաեւ Երեւանի ադրբեջանական թատրոնի դիմաւոր ռեժիսորին՝ նրա մենախօսութեամբ կարծես վերստին յիշեցնելով այն պերճախօս փաստը, որ Հայաստանում ապրող 160 հազար ադրբեջանցիներն ազգային թատրոն ունեն, իսկ Ադրբեջանում բնակուող շուրջ կէս միլիոն հայերը մինչեւ այժմ էլ զո՛ւրկ են այդ հնարաւորութիւնից։

Տեղին է աւելացնել, որ Ղարաբաղի հարցի արդարացի, լենինեան լուծումը չի կարող հակասել եւ ուղղակի բխում է հայ եւ ադրբեջանական ժողովուրդների շահերից։

Միայն ազգային քաղաքականութեան ոլորտում եղած ճչացող սխալների ուղղումով է հնարաւոր ապահովել հայ եւ ադրբեջանական ժողովուրդների արդար իսկական բարեկամութիւնը։

Ասենք նաեւ, որ խորհրդային որոշ հանրապետութիւնների ու մարզերի՝ Ստալինի ձեռքով կամայականօրէն դծուած սահմանների «սրբազան անձեռնմխելիութեան» առասպելը նոյնպէս յօրինել ու պաշտպանում են վերակառուցման ծպտեալ հակառակորդները։

Նրանք առնուազն մեր հզօր երկիրն աւերող ահեղ երկրաշարժո՛վ կամ հրաբուխո՛վ են սպառնում նրանց, ովքեր կը փորձեն թէկուզ փոքր-ինչ շոշափել այդպիսի տարաձայնութիւնների առարկայ սահմանները։ Անձամբ ես, օրինակ, չե՛մ յիշում եւ չե՛մ զգացել որեւէ, քիչ թէ շատ զգալի, «սէյսմիկ» ցնցում, երբ մեր կեանքի նախորդ տասնամեակներում ո՛չ միայն ուղղուեցին մի շարք մարզերի ու հանրապետութիւնների սահմաններ, ո՛չ միայն մի մեծ երկրամաս «տեղափոխուեց» մի հանրապետութիւնից միւսը, ո՛չ միայն ռազմաստրատեգիական իմաստով կարեւոր քաղաք-նաւահանգիստներ «նուիրուեցին» հարեւան տէրութիւններին, այլեւ ԽՍՀՄի քարտէսից մի ամբողջ միութենական հանրապետութիւն ջնջուե՛ց-վերացա՛ւ՝ իր պետական դրօշի եւ գերբի հետ միասին...

Հաւատարիմ իր դիրքորոշմանը, Բորովիկը հաղորդման որեւէ մասնակցի չի՛ ընդմիջում նոյնիսկ ա՛յն դէպքերում, երբ նրանք յայտնում են այնպիսի անհեթե՛թ մտքեր, թէ «Ղարաբաղի վերամիաւորումը Հայաստանին նո՛յնն է, ինչ Վրաստանը... կցեն Բաքուին ա՛յն պատճառով, որ այնտեղ մի վրացուհի է ապրում...»։

Ի դէպ, արժէր, որ եթէ ո՛չ Հենրիխ Բորովիկը, ապա մենք գոնէ հարց տայինք «Դիրքորոշում» հաղորդմանը մասնակցող ադրբեջանցի մտաւորականներին. «Մի՞թէ այդքան դժուար էր միանշանակ, պարզ ու մեկին ասուած խօսքեր գտնել Սումգայիթի ջարդն ու կոտորածը դատապարտելու համար»։ Այո, գոնէ խօսքեր, ի տարբերութիւն այն պա՛րզ ու հասարակ մարդկանց գործերի, որոնք ոչ աւելի, ոչ պակաս, իրենց կեանքն էին հարցականի տակ դնում, պատսպարելով մոլեգնած ջարդարարների հայազգի զոհերին...

Ջարդ ու կոտորած, եւ այն էլ՝ խորհրդային երկրի եօթերորդ տասնամեակում, խորհրդային Ադրբեջանում, պրոլետարական Սումգայիթ քաղաքի «Բարեկամութեան» եւ «Խաղաղութեան» փողոցներում, Լենինի արձանի մօտ...

Սումգայիթի արիւնոտ ոճիրների դատապարտումը միայն բարոյական հարց չէ: Չէ՞ որ ԽՍՀՄ Գերագոյն խորհուրդը ցեղասպանութիւնը դատապարտող յատուկ հրամանագիր ունի (1965 թ. Մարտի 4ի), ԽՍՀՄ քրէական օրէնսգրքի 74րդ յօդուածի համաձայն ծանր պատիժ է հասնում ո՛չ միայն ցեղասպանութիւն գործողին, այլեւ՝ ա՛յն հրահրող-քարոզողին, եւ մինչեւ օրս էլ մեր պատժիչ օրգանները յայտնաբերում ու խստօրէն պատժում են Մեծ Հայրենականի տարիներին նման ոճիրներ գործած արդէն զառամեալ յանցաւորներին: Նրանցից ոչ մէկն իրաւունք չունի անպատիժ մնալ եւ նրանց համար, ըստ ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի հրամանագրի, «գոյութիւն չունի ո՛չ պատժի մեղմացում, ոչ էլ հայցի վաղեմութիւն...»:

Սումգայիթի կոտորածի յանցաւորները այդ ոճիրը կատարողները չեն միայն, այլեւ նրա՛նք, ում մասին «Դիրքորոշում» հաղորդման մասնակից ԽՍՀՄ գլխաւոր դատախազի տեղակալ Կատուսեւն ասում է. «Այժմ մենք բացայայտում ու որսում ենք այդ ոճրագործութեան կազմակերպիչներին ու ղեկավարներին, որոնք խիստ պատիժ կը ստանան»:

ԽՄԿԿ Կենկոմի «Կոմունիստ» հանդէսը, վերակառուցման հակառակորդների շարքը դասելով վերջին շրջանում մեր որոշ հանրապետութիւններում բացայայտուած «բիրդան ազգաներին», արդարացիօրէն հարց է տալիս. «Արդեօ՞ք նրանց ենթագ ձեռքը չէ, որ ուղղութիւն է տուել Սումգայիթի սանձարձակ խուլիգանների գործողութիւններին: Արդեօք նրա՞նք չեն, որ այս ձեւով փորձութեան են ենթարկում վերակառուցման, դեմոկրատացման ու հրապարակայնութեան, այդ նորահարուստների համար կործանարար ամբոխը»: Սումգայիթի ոճրագործութեան գլխաւոր մեղաւորների մէջ են նաեւ տեղի կուսակցական, խորհրդային եւ իրաւապահ մարմինների այն ղեկավարներն ու աշխատողները, որոնց երկերեսանի ղիրքն ու ուղղակի սխալները ազգամիջեան յարաբերութիւնների հարցերում խտացան այդ ոճրագործութեան երեք տարերգական օրերի մէջ...

Սումգայիթի ջարդի և՛ կատարողները, և՛ հրահրողները պիտի դատուեն եօթնապատիկ աւելի խիստ, որպէսզի այդ արիւնոտ ոճիրը (Աստուա՛ծ մի արասցէ), անպատիժ մնալու հետեւանքով չկրկնուի...

Հենրիխ Բորովիկի «Դիրքորոշում» կարեւոր ու գնահատելի հաղորդումը, բնականօրէն, չէ՞ր կարող բացայայտել զարաբաղեան դէպքերի ամբողջ ճշմարտութիւնը...

Սակայն սովորաբար մենք և՛ գրքերը, և՛ նման հաղորդումները գնահատում ենք ո՛չ թէ այն տեսանկիւնից, թէ «ինչ չկայ նրանց մէջ, այլ բան այն բանի, թէ ինչ կայ»:

Իսկ Բորովիկի հաղորդման մէջ այս տեսակէտից կարեւոր եւ շատերի համար նոր ու անցյայտ առա՛տ նիւթ կար, նիւթ, որին անհամբերութեամբ սպասում էին միլիոնաւոր մարդիկ:

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

Ի. ՄԱՄԵԱՆ

Բ. ՓԱՀԱՐԶԱԴԷԻՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ՝ (ՆՐԱ «ՀՈՂԻՑ ԲԱԺԻՆ ՉԵՆ ՏԱՅ» ԶԱԶՐԱԽՕՍՈՒԹԵԱՆԸ)

Ես խաղաղ ազգի բարեպաշտ զաւակ,
Ես մի բանաստեղծ Նարեկայ ցեղից,
Չեմ կրկնելու քո բառերը անարգ,
Քեզ չեմ դիմելու խօսքերով քո պիղծ,
Ես քեզ չեմ ատում: Ես խղճում եմ քեզ,
Որ թէեւ պոետ՝ «լոյսով ներշնչում»,
Բայց քո շուրթերից երգի փոխարէն
Դահճային արնոտ բառեր են հնչում:
Սպառնում ես ինձ՝ արիւն կը յորդի…
Հաւատում եմ քեզ ու պէտք չէ երդում.
Դա հին արհեստն է քո ժողովրդի,
Որ վերյիշեցիր դու Սումգայիթում:
Կարող ես, գիտեմ. իմ «հին բարեկամ»,
Պէտք չէ խոստումդ երդումով օծել,
Տաճար ես շինում, որ չհաւատամ,
Մատեան ես ծաղկում՝ ուժիդ կասկածեմ,
Ես քեզ խղճում եմ, որ ատում ես ինձ,
Այդպէս խղճում են մարդիկ խելացի
Հոգեհիւանդի մոայլ վանդակից
Իրենց հայհոյող խենթ արարածին:
Քնած քնակիչն իր նիրհուն դաշտերի
Դու ինչ լեռներ ես վկայաբերում
Ու իբր հայոց ջինջ գագաթներին
Ապաստանել են իրենց ստուերում:
Դու լեռներ չունես հողմահուն ու սէգ,
Քոնը շոգ հովիտն ու ծովն է ադի,
Քո ագռաւները չեն հասնի երբեք
Արծուալեռների հայոց Արցախի:

Քո ագռաւներդ կոխնչով անյազ
Թառելով իմ սուրբ խաչքար ու վանքին՝
Քո բշնամանքն են հաստատում ահա
Եւ նենգութիւնը մեծ ստահակի…
Ինչքան էլ, սակայն, թոյնդ շառաչի,
Ինչքան էլ ոռնայ, ոեխդ արնաբաշ,
Իմ Գանձասարը չի դառնայ մեչիդ,
Իմ սուրբ խաչքարը չի դառնայ խաչդաշ:
Ես քեզ չեմ ատում: Քեզ խղճում եմ լոկ,
Որ անգօր եւել ի դէմ պատմութեան,
Ու մեղքերի մէջ այսպէս թաղուելով,
Ուրիշի հոգին կոչում ես վաթան:
Ճշմարտութիւնից դէմքդ մի թեքիր,
Մի ամբաստանիր կրքերով անսանձ
Ո՛չ շիրիմն է պէտք քո հաքեկի,
Ո՛չ քո նամուսի լաթը ճմրթուած:
Ես իմ երկիրն եմ ուզում լեռնաշէջ,
Իմ հայրենիքը դարերում անքիւ·
Դու քո սեւ թաթը եւ պիտի քաշես
Նրա ալեկոծ բախտի ճակատից…
Ու թէ այնտեղ է անիւնը պապիդ,
Ապա դու նրան՝ նախորդին քո բանկ
Պիտի անուանես թալանի ճամբին
Ալլահի կամքով բնկած ասպատակ:

ԻԳՆԱՏ ՄԱՄԵԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՐՑԱԽԵԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Տատամսակներ չարտասան երեսանում կրթութիւն ստանալու փոխան իսկ Ադրբեջանի դեկտեմբեր թեան կրգմից դիտուած էր, մեկմ ասաց, որպէս օրինաչանցութիւն...

- Պետքն ա իրանցնութիւնը ապար ուրիշ չանարուս թիւնեանը էլ փոատեցին, որ Եբրեմն կիրքերն ու մթին բնազդները, եթէ սարդեանոր, ոչիտականորէն գրգռես, ժողովրդին ամբոխ կը դարձնես, մարդուն անկատարելի՝ հրէշ...

... Իրականութիւնը ոչ սրբոր չտա կամ բնորոշուած է։ Ադամեան դէպքերը, երբոր ժամանակ մի ուսումնասիրուս ոչ ադրբեջանցիներէ, ոչ հայերի կողմից։ Ինչ-որ չատ նաբր բան փշրանց մարդկանց հոգեներում։ Թերեւս, բնութեան մեջ՝ համակեցութեան կանոնը, անկը սիմբոլ ասրատիրն։ Ամբ, ամենասարսափելին այս պատմութեան մէջ մարդկանց տարատիպ է։

ԱՂԱԼԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Այո, առաջին անգամ էի գնում։ Եւ որքան դժուար է հիմա կապել գեղում ու հիացում՝ շնկարագրել հայիս ասվոր աչքի համար էլ նոյնիսկ անասվոր վսեմ բնապատկերը, օդն ու լեռները, անտառներն ու հոգը...

... Հնամենի, բերրի, խստաշունչ եւ... հարազատ։

Պատմութեամբ հարազատ, տատապանքով, մարդկանցով։

Դանձասարն ու Ամարասը ես չտեսայ, թէեւ ուխտաւորի ներքին զոդ կար հոգումս. ժամանակը չէր։

Բայց մարդկանց հանդիպեցի։

Զուսպ, ջղաձիգ լարումից դողում է Արցախը։ Ստեփանակերտում, արտաքուստ, թուում է, ամէն ինչ սովորական է։ Անասվորը միլիցիայի համազգեստով չէկիկ տղաների առատութիւնն է։ Խանութները բաց են, նոյնիսկ հաւ են վաճառում՝ առեւտուր անող չկայ, հերթեր չկան։ Դպրոցներում հրնչում է զանգը՝ երեխաների ազմուկն ու ծիծաղը չի լսուում։ Ադրբեջանական դպրոցում երեխաները ընդհանրապէս սակաւաթիւ են, ինչո՞ւ, ո՞ւր են տարել նրանց՝ սրտացաւ ծնողները։ Ձէ՞ որ մարդում եւ քաղաքում թշնամանքի ոչ մի քայլ, խօսք կամ արարք ադրբեջանցիների նկատմամբ, այն էլ երեխաների, չի գրանցուել՝ ոչ օրէնքի մատեաններում, ոչ հոգիների...

Ինչեւէ։

Դրամատիկ սպասումի այս օրերը, հաւանաբար, ազդել են նաեւ եղանակի վրայ։ Մշուշը սարերի փէշերից իջել, սողոսկել է քաղաք, անորոշութեան, հեղձուցիչ թանձր քուլաներով ճնշելով ծիծաղ ու լաց, սովորական մարդկային առօրեայ։

«Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունում անբնականի վրճռականությամբ մերժուեց ընկերոջս՝ Բակուր Կարապետեանի եւ իմ բարեվայելչությեան թոյլ դիմաղրությունը՝ մենք հիւրանոցում կը տեղաւորուենք, անյարմար է նեղությիւն տալը, եւայլն: Բազմաթիւ հրաւէրներից մէկը պիտի ընդունէինք:

Եւ, նոր բարեկամիս, գրող Մաքսիմ Յովհաննիսեանի հիւրընկալ շեմով, առաջին անգամ, մտայ դարաբաղցու տուն՝ Ղարաբագում:

Ոսկեաչուի տանտիրուհին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գլխաւոր գինեկոլոգ-մանկաբարձն է, երեսուն տարուայ փորձառու բժիշկ Զոյա Թորոսեանը: Զաւակները՝ Լիլիթն ու Գոհարը, շուտով կ'աւարտեն Երեւանի բժշկական ինստիտուտն ու կը վերադառնան Ղարաբաղ. ծննդավայրում լաւ բժիշկների կարիք շատ են զգում:

Տասնամեակներ շարունակ Երեւանում կրթություն ստանալու փաստն իսկ Ադրբեջանի զեկավարության կողմից դիտուում էր, մեղմ ասած, որպէս օրինազանցություն եւ լուռ հրաման՝ անվստահության ու կասկածի արդելապատնէշով շրջափակելու երիտասարդ մասնագէտների որեւէ առաջխաղացում, որեւէ ստեղծագործական նախաձեռնություն:

*
* *

Սումգայիթն ու Ազդամը ահեղ ճեղքուածք առաջացրին մարդկանց պատկերացումների մէջ՝ օրինականության, համակեցության մեծ կանոնների նկատմամբ:

Պարզուում է, օրինականությունը միշտ չէ, որ միլիցիայի համազգեստով է խորհրդանշուում, համակեցությունն էլ լողունգ չէ՝ ժողովուրդների բարեկամության եւ ինտերնացիոնալ պարտքի մասին: Տասնամեակներ շարունակ դպրոցներում, ժողովներում, թերթերում խօսել են դրանց մասին, գրել են, պնդել...

Ինչո՞ւ չէ, կեանքը դրանց իրական գոյության մասին շատ օրինակներ է տուել: Բայց նոյն կեանքն ու իրականությունն այսօր ուրիշ ճշմարտություններ էլ փաստեցին, որ երբեմն կրքերն ու մթին բնազդները, եթէ «վարպետօրէն», «գիտականօրէն» գրգռես, ժողովրդին ամբոխ կը դարձնեն, մարդուն՝ անկառավարելի հրէշ:

Լուրը Ստեփանակերտ հասաւ: Փետրուարի 22ն էր: Մօտակայ Ասկերանի (Խաչէն) շրջանի Խոջալու, Մալիբեկլու Բէօսալար ադրբեջանական գիւղերի բնակիչների որոշ խմբեր «խուճապահար» հասնում են Ադդամ՝ գուժելով, թէ հայերը յարձակուել են իրենց գիւղերի վրայ: Մինչ այդ, նախորդ մի քանի օրերում, զարմանալի, անհասկանալի հապճեպությամբ, Ստեփանակերտի հիւանդանոցներից հեռացան ադրբեջանցի հիւանդները՝ չբացատրելով իրենց վարմունքի պատճառները: Ստեփանակերտի N° 4 ադրբեջանական դպրոցում օրը օրին պակասում էր դպրոց յաճախող երեխաների թիւը: 900 աշակերտներից դպրոց էին գալիս մի քանի տասնեակը, ընդամէնը: Տնէ տուն հաղորդուել էր սարսափելի լուրը՝ ադրբեջանական մանկապարտէզներում, դպրոցում ագէտալի իրադարձություններ են կատարուելու, փորձանք է պատահելու: Եւ ահա Փետրուարի 22ը:

Ադդամցիների բազմահազարանոց բազմությունը շարժուում է Ասկերանի վրայ՝ ճանապարհին աւերելով շրջանի կոմունալ տնտեսության գրասենեակի շէնքն ու տեխնիկան, նաւթաբազայի գրասենեակը, խճուղում հանդիպող հայերի սեփական մեքենաներն ու հարեւան հայկական միւս՝ Մար-

տակերտի ու Մարտունու շրջանների աւտոբուսները, այրելով Խնաբաղի ալրաղացը, տրորելով դաշտերն ու որթատունկը, ճանապարհանշանները, բնակավայրերի անուանավահանակները եւ...

Տասնհինգ մարդ ծանր մարմնական վնասուածքներով տեղափոխուեցին հիւանդանոց: Երկու ադրբեջանցի տղաներ զոհուեցին: Իրաւապահ օրգանների ղեկավարներից մէկի, կենտրոնական հեռուստատեսութեամբ ի լուր ամէնքի տրուած տեղեկութեան մէջ երկու երիտասարդների զոհուելու մասին ոչ մի այլ բացատրութիւն չկար: Այնինչ տխուր իրողութիւնը հետեւեալն էր. կարգը պահպանող միլիցիայից բռնի զէնք փախցնելու փորձի ժամանակ էին զոհուել երկուսն էլ: Վրայ հասած ասկերանցի հայերի միջամտութեամբ կանխուեց գուցէ շատ աւելի մեծ աղէտ:

Ստեփանակերտում մեծ յարգանքով էին պատմում Խուրաման Աբբասովայի մասին, որը գլխաչորը նետել էր իր համագիւղացի տղամարդկանց առաջ:

Ջարդուտուած աւտոմեքենաներն ու տրակտորները, ճանապարհանշանները, տրորուած որթատունկը, չէնքերի կոտրատուած ապակիները, կահաւորանքը կը վերականգնուեն: Վստահ ենք: Կը բուժուեն մարդկանց մարմնական վէրքերն էլ: Կեանքն առաջ է ընթանում: Բայց իրաղարձութիւնը, որ հիմա չչուկով բնորոշւում է «Աղդամեան դէպքեր», երկար ժամանակ չի մոռացուելու ո՛չ ադրբեջանցիների, ո՛չ հայերի կողմից: Ինչ-որ շատ նուրբ բան փչրուեց մարդկանց հոգիներում, թերեւս, բնութեան մեծ՝ համակեցութեան կանոնը, տեղը զիջելով սարսափին: Այո՛, ամենասարսափելին այս պատմութեան մէջ մարդկանց սարսափն է: Դրա յիշողութիւնը շատ կենսունակ բան է ու վարակիչ, եւ դէմն առնելու համար ժամանակ ու մեծ ջանքեր են պէտք: (Թէեւ բարութեան յիշողութիւնն էլ է կենսունակ. սումգայիթեան դէպքերի ականատեսներն, ամենայն անաչառութեամբ, յիշում էին իրենց փրկող բարեկամ ադրբեջանցիներին):

*
* *

Որքան էլ մեծ է ցանկութիւնս, առանց այն էլ լարուած այս օրերին չափաւոր եւ զուսպ ներկայացնելու տեսածս ու զգացածս, իրողութիւնը, այրուածի վրայ իւղ չաւելացնելու մղումս, այնուամենայնիւ, չեմ կարող չբացատրել, թէ ինչո՞ւ են ստեփանակերտցիները (եւ ինչու՝ միայն նրանք) քաղաքի դրեթէ իւրաքանչիւր փողոցում, պարեկներ կարգել: Այդ էլ այն դէպքում, երբ քաղաքը, մարզը լի է ներքին գործերի մինիստրութեան զօրքերով: Չեմ կարող չբացատրել, որովհետեւ մեր հանրապետական մամուլը լռեց, իսկ միութենական մամուլի որոշ օրգաններ չափազանց «իւրովի» մեկնաբանեցին իսկութիւնը: Տեղին է յիշել Մարքսի խօսքերը. «Նոյնիսկ պաշարուած վիճակում թերթերը լոյս են տեսնում ոչ նրա համար, որ ասեն իրենց մտածածի հակառակը...»:

«Աղդամեան դէպքերի» ժամանակ այդ շրջանի միլիցիան իր պարտականութիւնը գրեթէ չկատարեց, նոյնիսկ հակառակը՝ աղէտեալ հայ վարորդների վկայութեամբ վայրագութիւնները հրահրողների մէջ օրէնքի պահապանների համազգեստով մարդիկ էլ կային:

Ի հարկէ, հետաքննութիւնը կը պարզի ամէն ինչ: Հաւատում ենք, որ ճշմարտութիւնը բացուող օրուայ պէս գնալով կ'ընդարձակի իր սահմանները: Իսկ առ այժմ ստեփանակերտցիները, մարտակերտցիները, մարտունեցիները, հադրութցիները, ասկերանցիները բարի թերահաւատութեամբ նայում

են իրենց պաշտպան ոսկեմազ, կապուտաչ նորաթուխ զինուորներին եւ նրանց հետ գիշերներն անքուն հսկում են սեփական զաւակների, կանանց, օջախի պատիւը:

— Էս երեխեքը, ախր, շատ են անփորձ, ինչ իմանան, փորձանքը որտեղի՞ց կարող է գալ:— Գորովանքով ցոյց են տալիս քիչ հեռու կանգնած խմբին: Ո՞վ գիտէ, նրանց նայելով, գուցէ յիշում են իրենց հեռուներուն ծառայող զինուոր-զաւակներին:

Քաղաքի պարեկակէտերից մէկում՝ Տիեզերագնացների անուան փողոցում էր, կանայք էին հսկում: Ամուսինները հսկելուց յետոյ քնել էին: Գիշերուայ ժամը երկուսն էր: Սառը, մանրիկ անձրեւ էր մաղում: Փողոցի լայնքով ձգուած արգելափակոցը լուսաւորւում էր փայտաշէն, հապշտապ հաւաքուած քողտիկից թափանցող լոյսով: Փոքրիկ սեղանին Տուլայի հնամենի ինքնաեռն էր՝ թէյ էին խմում ու բարձրաձայն ինչ-որ գիրք էին ընթերցում: Մօտեցանք, ընդհատեցին ընթերցանութիւնն ու առաջ եկան: Ծանօթացանք: Խաչատրեան Նորան էր, Աւակիմեան Ռայան, Բաբայեան Էլլադան եւ Աւաննէսեան Էմման: Հրաւիրեցին թէյելու: Ցուրտ էր ու տարօրինակ: Ամօթ է ասելը, նաեւ հետաքրքիր: Ամօթ է, որովհետեւ, Աստուած իմ, երկրորդ հազարամեակն է վերջանում, որովհետեւ նրանք Տի-ե-զե-րա-գը-նաց-նե-րի փողոցում են ապրում, խաղաղ, հզօր երկրում, իրենք էլ խաղաղ ու մաքուր մարդիկ են՝ ուրիշի ջրին ու հողին, ուրիշի ունեցուածքին աչք չունեն, սակաւապէտ են, հպարտ, դիմացկուն, համբերատար...

Ուրցի անուշաբոյրը պարուրեց մեզ: Արցախեան մոշի անուշով ուրցի թէյ, հիւրասիրողները գիշերային պարեկ-կանայք, մարտեան ցուրտ գիշեր, ճանապարհային արգելափակոց, քիչ հեռու՝ ռուս զինուորների խումբ (նրանց էլ մեզնից քիչ առաջ էին հիւրասիրել տաք թէյով, տղաները մրսել էին):

Նոյնիսկ այս անհեթեթ իրավիճակում էլ, կանայք փափկակենցաղութեան ինչ-որ տարր էին ներմուծել գիշերային փողոցի այս պահի մէջ. տիկնայք փափկասուն հայոց աշխարհի...

— Ի՞նչ էիք կարդում: Խանգարեցինք:

— Արցախի պատմութիւնն է, մի քանի էջ է մնացել, վերջացնում ենք:

Վերցրեցի գիրքը՝ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցի «Արցախ» երկն էր՝ տպագրուած Բաքուի «Արօր» տպարանում, 1895 *թուականին,* 93 *տարի առաջ:*

Գիրքը հետաքրքիր ընծայագիր ունի, որ թերեւս օտար ընթերցողին կը յուշի, թէ ինչո՞ւ էին յատկապէս այդ ցուրտ ու խոնաւ, տագնապալի գիշերը, հերթով, միմեանց համար կարդում այդ յոգնած, հոգսաշատ, աշխատաւոր կանայք:

Վեհափառ Հայրիկ

Իբրեւ հոգեւոր որդի Ձերդ վեհափառութեան՝ պարտաւոր զգացի արտայայտել իմ ամենախորին երախտագիտութիւնը մի վայելուչ ընծայով: Այս պատճառաւ երկար մտածեցի ընծայել իմ հոգեւոր ծնողին մի նուէր, որ թէ՛ արժանաւոր լինի եւ թէ մշտակայ:

Բայց, որովհետեւ սիրում է Ձերդ վեհափառութիւնը հայրենի հնութիւնները եւ աստուածակոխ Ս. երկիրը, ինչպէս ակներեւ է Ձերդ Հայրութեան արտաշարժ եւ հոգեշունչ բանահիւսութիւնից — «Հրաւիրակ երկրին Արարատայ» եւ «Հրաւիրակ երկրին Աւետեաց» վասն որոյ բարւոք համարեցի նուիրել Հոգեծին եւ բազմերախտ Հօրդ իմոյ՝ «*Արցախ*»ը, որ պատկերացնում է Մեծն Հայաստանի 15 նահանգներից մէկի հայկական աւերակների եւ հնու-

թեանց փոշիները եւ Յիսուս Քրիստոսի ձեռագիր Աւետարանների յիշատակարանների փշրանքները:

Յուսալով արժանանալ ընդունելութեան եւ Հայրական օրհնութեան մնամ նուաստ որդի Ձեր հոգեւոր

Մ. եպիսկոպոս Բարխուտարեանց:

Երբ երանելի Մակար Բարխուդարեանցը գրում էր այս գիրքը ու դեռ ընծայագիրն էլ՝ Ամենայն Հայոց Խրիմեան Հայրիկին, ի՞նչ իմանար, որտեղի՞ց պատկերացնէր, որ մի հարիւրամեակ էլ դեռ չլրացած, իր Մեծն Հայաստանի տասնհինգ նահանգներից մէկի հայկական աւերակների ու հնութեան անդորրը այնպէս կը ցնցխեն զիա-բունիաթովեան տիպի որոշ գիտնականներ, որ հազարամեակների փոշին երկինք կ'ելնի ու կը մթագնի հարիւր հազարաւոր «խոհեմ» եւ «անխոհեմ» մարդկանց միտքն ու հոգին, ազգային արժանապատուութիւնը, համբերութիւնը, դժուարին խնդիրների առաջ կանգնեցնելով, առանց այն էլ շատ դժուարին խնդիրներ լուծելու կոչուած սովետական ժողովրդին, պետութեանը, կառավարութեանը:

Արցախի հայկական դպրոցներում սերունդներ են փոխւում, աւարտում, այդպէս էլ ուսուցման ծրագրով չուսումնասիրելով, չիւրացնելով սեփական ժողովրդի, երկրի պատմութիւնը, չծանօթանալով ներկայումս ապրող, բարգաւաճող, իրենցից մի քայլ հեռաւորութեան վրայ գտնուող Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մշակոյթի ու գիտութեան գործիչների, նրանց ստեղծագործութեան հետ: Փոխարէնը ուսումնասիրում են Ադրբեջանի պատմութիւնը:

Մարդը գիտելիքներով է հզօր, բայց երբ չգիտես քոնը, սեփականը, իմացութեան այդ ո՞ր հողի վրայ պիտի ընձիւղուի ուրիշի, հարեւանի ունեցածը:

Սրանք, արդեօք, այն բազմաթիւ պատճառներից չե՞ն, որ ազգամիջեան հարցերի վերաբերեալ, տարիներ ի վեր թմբկահարուած «ամէն ինչի բարեյաջողութեան» սնամիջութիւնը ապացուցէին՝ բացելով սին խօսքերով քողարկուած ազգային շատ հարցերի վիհերն ու որոգայթները:

Արժէքներ եւ յիշողութիւններ կան ժողովրդի համար, որոնց չի կարելի անպատիժ դիպչել եւ այն էլ տասնամեակներ շարունակ՝ սառը եւ հեռուն գնացող հաշուարկներով ու ծրագրերով. մարդի ներկայ դէպքերը դրանց հետեւանքն են՝ ափէ ափ լցուած համաժողովրդական ցասման արտայայտութիւն՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում էլ, Սովետական Հայաստանում էլ:

... Այս օրերին մենք պարտաւոր ենք խոհեմ լինել, այդ է պահանջում իւրաքանչիւրիս քաղաքացիական գիտակցութիւնն ու խիղճը, բայց, երբ բոլոր ճակատներով՝ ադրբեջանական ռադիոյով, թերթերով եւ արդէն նաեւ վայրագ գործողութիւններով պնդւում ու շարունակւում է նոյն «քաղաքականութիւնը»՝ զրկելով բնիկ ժողովրդին կենսական ու հոգեւոր ոլորտից, սարսափի եւ անելանելիութեան խուճապ սերմանելով, ապա դժուար է շատ խոհեմ լինելը:

***

Զարմանալի լուռ դիշերներ են Ստեփանակերտում, թէեւ փողոցներում այդքան մարդ կայ՝ կամաւոր պարեկ ու միլիցիա: Մենք էլ աւելացանք:

Ցերեկներն էլ աղմկոտ չեն: Մարդիկ մի տեսակ ամփոփուել են իրենք իրենց մէջ: Եղեւնիների խիստ ու սլացիկ ուրուագիծը քաղաքի համայնապատկերի բնորոշ մասն է կազմում: (Մարտունիում արմաւենիներ կան):

Պարեկակէտից-պարեկակէտ գնալով հասանք խճուղու եզրին վեր խոյացած պատերազմի զոհերին նուիրուած յուշահամալիրին:

Լայնարձակ հրապարակում ծառացած կոթողի ետեւում, պատերազմի օրերին, Ստեփանակերտի զինուորական հիւանդանոցում մահացած զինուորների ճերմակաքար հանգստարանն է:

Այդ նոյն պաշտպանների կոթող յուշարձանի մի անկիւնում այսօր փոքրիկ մի դամբանաքար աւելացաւ՝ Սումգայիթի զոհերի յիշատակին:

Մարդկանց ապրելու երկիրը յագեցել է անտեղի թափուած արիւնից, ճգմուել է յուշադամբարանների ծանրութիւնից, իսկ նրանք աւելանում են...

Այս մէկը մի գիշերում կառուցուեց:

Հայուհիները իրենց տօնը՝ Մարտի 8ը ե՛ւ Ինքնավար Մարզում, ե՛ւ Հայաստանում, սգի օր յայտարարեցին, ծաղիկներ ստանալու փոխարէն ծաղիկներ տարան:

Հարիւր հազարաւոր հայուհիներ՝ հարիւր հազարաւոր սգոյ ծաղիկներ...

Իսկ ցաւակցական ո՛չ մի հեռագիր, կարեկցանքի ո՛չ մի խօսք նրանք չստացան, չլսեցին: Հայուհիների քոյր ազրբեջանուհիները, հանրապետութեան հեռուստատեսութեամբ տրուող տօնական հաղորդման ժամանակ, յիշեցին եւ ցաւակցեցին իրանական Ազրբեջանի իրենց քոյրերին, որոնց ամուսինները գտնւում են պատերազմի թոհ ու բոհի մէջ, իսկ հայ քոյրերին չցաւակցեցին: Յիշեցին արտասահմանում ապրող «էքստրեմիստ» հայերին, չյիշեցին, որ այդ հայերը արտասահմանում են յայտնուել 1915 թուականի դէպքերի պատճառով: Այնինչ, հաղորդման մասնակիցների մէջ պատմաբան տիկնայք էլ կային:

Հազարաւոր մարդիկ, հայի համար սովոր, մահապուրծ, փախէփախի կածաններով հասան Երեւան, Ստեփանակերտ՝ զրկուած տուն ու տեղից, աշխատանքից, ՀԱԻԱՏԻՑ:

Աւա՜ղ, շատ շուտ է նրանց անունից ապահով ու լուսաւոր վաղուայ օրուայ մասին բառ ու խօսք գտնելն ու գրելը: Ժողովուրդը, առայժմ, զբաղուած է նրանց հագցնելով ու սնելով, մխիթարելով, յուսադրելով:

Ժամանակը թերեւս բուժի նրանց հոգու վէրքերն էլ, որովհետեւ տուն, աշխատանք, ֆիզիկական ապահովութիւն նրանք կ'ունենան՝ երկիրը բարի է, հզօր:

Բայց յիշողութիւնը...

Ստեփանակերտի հանրակացարաններում տեղաւորուած սումգայիթցի ատաղձագործ Ալյոշա Լեւոնի Սարգսեանի ընտանիքի մասին չեն կարող գոնէ երկու խօսք չասել. հայրն էր՝ Ալյոշան, կինը, մեծ դստեր երեխան եւ նորաթեսայ որդին՝ նորահարսի հետ:

Հենց հարսանիքի օրը, հենց հարսանիքի սեղանից էին փախել՝ հիւրերը, տանտէրերը, երաժիշտները: Երաժիշտները գործիքները թողել էին հարսանքատանը՝ փողոցում՝ ժապաւէններով ու տիկնիկներով զարդարուած հարսանեկան աւտոմոբիլեան: Լուռ չունէին իրենց աւագ աղջկանից ու փեսայից, նրանց նորածին զաւակից՝ մեծ թոռանն առել էին ու փախել:

Ես նորապսակների աչքերը չեմ մոռանայ, սարսափից իրար փնտռող, սարսափահար հայեացքը չեմ մոռանայ:

Թող արդարադատութիւնը պարզի, թէ ովքեր էին ոգբերգութեան հեղինակներն ու կատարողները, իմ յիշողութիւնից ոչ մի պատժով չեմ կարող ջնջել նրանց հայեացքը: Չեմ մոռանայ:

***

Տանտիրուհիս՝ բժիշկ Զոյա Թորոսեանը, այս հարցերի մասին, ճիշտն ասած, այլ կարծիք ունի: Նրա յիշողութիւնը, թերեւս, իմից ուժեղ է, բայց, երեւի մասնագիտութիւնից է՝ վիրաւորանքի ցաւի գրգիռներին նա այլ կերպ է տրւում:

... Երբ քէօլազարցի 25ամեայ Ալեքպերովա Էլմիրա Նովրուզ կզուն հիւանդանոց բերեցին, կանչեցին բժիշկ Թորոսեանին: Փետրուարեան իրադարձութիւնների գերլարուածութիւնը տանջահար էր արել բոլորին, փոխել նախկին զգացողութիւններն ու չափանիշները: Երեւոյթները, որ մի քանի օր առաջ կարող էին անսովոր թուալ, հիմա ուշադրութեան էլ չէին արժանանում: Այդ օրն էլ սովորական ու աննշմար էր, ասենք, այն փաստը, որ երիտասարդ կնոջը, ամուսնուց բացի, ադրբեջանցի միլիցիոնէր էր ուղեկցում եւ շտապ օգնութեան բուժքոյրը: Ախտորոշումը պարզ էր՝ 7,5–8 ամսական յղիութեան ընդհատում, դրանից բխող ծանրագոյն հետեւանքներով:

Մահամերձ Ալեքպերովային հազիւ հասցրեցին վիրահատարան: Ամուսինը սարսափից ուշաթափուեց: Զննումից յետոյ, բժշկի հարցին, թէ ֆիզիկական ի՞նչ ծանր աշխատանք է կատարել, երիտասարդ կինը ասաց· «Մի քանի օր առաջ ամուսնուս կարգադրութեամբ, դոյլերով քարեր եմ հաւաքել»:

Վիրահատութիւնը ծանր էր ու երկար:

— Երբ տեղային ցաւազրկումից յետոյ ձեռքս առայ վիրահատական դանակը,— պատմում էր Զոյա Թորոսեանը,— ուղեղս չամփրեց սարսափելի միտքը: Ախր, Աղդամի դէպքերը մի քանի օր առաջ էին պատահել, մեքենաներն ու մարդկանց հիմնականում քարերով էին ջարդել:

— Քարերը հաւաքում էիր, որ ի՞նձ խփէիր,— հարցրեցի Էլմիրային:

— Դոխտուր, դոխտուր, փրկի,— մարող հայեացքը ինձ յառած, անարիւն շուրթերը հազիւ շարժելով շշնջում էր նա,— չորս մատղաշ երեխայ ունեմ:

— Ես քեզի կը փրկեմ, ոտքի կը կանգնեցնեմ, որ էլի քար հաւաքես...

... Փրկուեց: Տասը օրից դուրս գրեցինք: Գնալիս ծունկ չոքեց, սկսեց ձեռքերս համբուրել: Նա էլ էր լալիս, ես էլ:

***

Ես տեսայ Ասկերանի շրջանի քարերով ջարդոտուած շէնքերի ապակիները, տրորուած, այրուած ճանապարհանշանները, արմատախիլ արուած որթատունկը: Տեսայ հիւանդանոցում գտնուող քարածեծ եղած մարդկանց ու ... Զոյա Թորոսեանի արցունքները:

— Երեւի իմ օգնութեամբ ծնուածներ էլ կային Աղդամից հայերիս վրայ եկողների մէջ: Մէջներն այնքան պատանիներ կային:

Աղդամը Ստեփանակերտից 28 կիլոմետրով է հեռու, Սումգայիթը՝ 400: Բայց այդ ինչ սեւ կայծակ էր, որ իրար կապեց միմեանցից այդքան հեռու երկու ադրբեջանական քաղաքները՝ թշնամանքի նոյն մոխրացնող հրով՝ բժիշկ Զոյա Թորոսեանի դէմ:

Այդ սեւ կայծակի դէմը կարո՞ղ են առնել հայ բժշկի մաքուր արցունքները, որ յաճախ հեղուել են նաեւ ուրախութիւնից, երբ նոր մարդ է ծնուել, անկախ նրանից՝ ծնուողը ազդութեամբ հա՞յ է, թէ՞ ադրբեջանցի:

Այս հարցի պատասխանը ո՞նց եմ ուզում, հենց հիմա ստանալ:

19 — 20 Մարտի, 1988 թ·
Ստեփանակերտ — Երեւան

ԱՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ

Մեծ եղեռնի զոհերուն հետ եղբայրացած՝
դուք նոր եղեռն.
զեհենական սարսափներու նոր թիապարտ,
մահապարտի անագորոյն հոգեվիճակ,
անօթեւան տարագրություն.
դուք, խայտաբորբ երազանք,
խոշտանգուած՝ հորդաներէն ազերի.
դուք, խոդխոդուած մանկութիւն,
սրախոդխոդ երջանկութիւն պարմանութեան,
հոդմացրիւ ծուխ ծխանի,
Մայր Արաքսի արտասուքով կայլակուած՝
այրիացած մայրութիւն...

Այլ դուք կ՚ապրիք
Ղարաբաղի լեռներուն պէս յաւերժական,
նահատակներ Սումգայիթի,
եւ կը շնչէք իբրեւ ոգին գոյաւոր՝
բնաշխարհին Արցախի.
դարձած մորմոքը խորիմաց՝
հայրենական ազբիւրներու սիրերգին.
դարձած խանդը լիաշունչ՝
այգաբացի սազմոսերգակ ձայներուն.
եւ դարձած կանչն ոգեղէն՝
Գանձասարի Սուրբ Յովհաննու
երկնաղօղանջ զանգերուն...

Դուք, սրբացած մորմոքներու օրեւան,
ուր խորասոյզ լռութեամբ
կը տուայտի ձեր հոգին,
խնկագալար ձգտումներով ալեկոծ՝
իբրեւ ծիծղուն Ծիծեռնավանք
եւ վաղորդեան մառախուղով շողապատուած՝
իբրեւ մատուռ վիմափոր:

Մերթ, երկնախոհ նուիրումով՝
կը վերանայ ձեր հոգին,
մեր հինաւուրց տաճարներէն արձագանգող՝
իբրեւ օրհներգ եւ հեծութիւն,
իբրեւ սաղմոս եւ շարական,
ոգեբրթիռ զգայութեամբ շնչաւոր՝
գերք բազմաձայն մեղեդի…

Կը տագնապիք դուք մեր մէջ,
եղեռնայուշ նոյն ցաւերէն
եւ տանջակոծ նոյն խոհերէն հալածուած՝
ներաշխարհով միեւնոյն,
նզովելով սադրանքները մարդկութեան
եւ հեգնա՛նքը նակատագրին՝
նոյն դառնութեամբ հրախանձ,
նոյն ցասումով տենդաբորբ…

Դուք կը կառչիք
մեր օրերուն անխոնջ հեւքին,
Ղարաբաղի հովտահայեաց ծմակներուն
ծաղկածիծաղ հովուերգութեամբ.
եւ ժայռանիստ կոթողներուն՝
կենդանութեամբ խոյաթեւ…

Կը թեւածէք յիշողութեան մէջ դարերու՝
ժամանակի սրբայուշ յարակայութեամբ
եւ կեանքի յարանորոգ տեսլապատկերով:

Կը պարագրէք մեր հոգին՝
հայրենախոհ ապրումներով բաբախուն՝

Գողքան երգի կենսապարար իմայով·
կը բարբառիմ մեզի հետ,
Սումգայիթի գողգոթայէն նառագայթող՝
ոգեռեսիլ ձեր յայտնութեամբ·
կը տեսնամ լեռնաժայռէ լեռնաժայռ՝
փայլակնային պայծառութեամբ·
եւ կը նետուիմ գոյամարտէ գոյամարտ՝
Դաւիթ Բեկի դիւցազնայաղթ սխրանիմով…

Մարտիրոսի ջինջ արիւնով ձեր սրբացած՝
դուք մեր գաւն էք աբարչական,
որ իր շունչով ծաւալական
եւ զօրայաղթ իր տենդով,
կ՚ոգեղինէ հաւատքը մեր
եւ կը զինէ կամքն ու հոգին,
գոյատեւման նոր երգերով հաւատաքորք
եւ պայքարո՛վ նորահիաշ…

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Գ. ՋԱՆԻԿԵԱՆ

ԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ

Կ'անցնի քիչ, շատ քիչ ժամանակ, ինձ նման մէկը կը կանգնի նոյն տեղում, կը նայի արդիական տներին, իչչացող այգիներին ու զարմացած կը հարցնի ինքն իրեն. ո՞վ է առաջինը եկել, բնակուել այստեղ, լերկ քարքարուտներում ո՞վ է առաջինը մրգատու ծառ, խաղողի որթ տնկել:

Ես ուզում եմ օգնել հարցնողին: Այգիները, որ տարածուած են Թալինի ջրանցքից մինչեւ մեր պետական սահմանը, տեղացիների հետ հիմնում են սումգայիթցի հայերը: Նրանց համար կառուցուած չէնքում առաջինը եկել, բնակութիւն է հաստատել Գէորգի Պետրոսեանի, ինչպէս բնակիչներն են կոչում՝ Ժորիկի բնտանիքը:

Մենք ծանօթացել էինք «Շուշան» առողջարանում: Երբ տեսնում էի, թէ ինչպէս է Ժորիկի զուստրը պատուհանից անընդհատ դուրս հակուած, անսքող հետաքրքրութեամբ մեր լեռներին ու գիւղերին նայում, ուզում էի, շատ էի ուզում, որ Հայաստանը նրան ամենագեղեցիկ երկիրը թուայ: Մի անգամ չդիմացայ ու հարցրի.

— Գայանէ, Հայաստանը քեզ դուր գալի՞ս է:

Նրա հերմակ, ծոցկոթերթի նման նուրբ այտերը շառագունեցին:

— Առաջ ես չէի էլ պատկերացնի, որ Սումգայիթից բացի ուրիշ տեղ կարող եմ ապրել: Բայց դէպքերից յետոյ...

Մինչեւ հիմա էլ զարմանում եմ: Ի՞նչ հեշտ, հանգիստ էր պատմում նա այդ ամէնի մասին: Ես լսելիս փչաքաղում էի:

«Հակատակ էր, էլի: Ես Բաքուի տեխնոլոգիական տեխնիկումում էի սովորում, բայց հիւանդացել, վերադարձել էի տուն: Առաջին օրը, թրուում էր, առանձնապէս ոչինչ էլ չկայ: Հրապարակում ցոյց էին անում, գոռում-գոչում, յետոյ սկսեցին հայերի կրպակները, մեքենաները այրել: Ցաշորդ առաւօտ զարթնեցի հեռագիրով սաստկացող ազմուկից: Դրանք ուրիշ, ոչ մարդկային ձայներ էին: Նայեցի պատուհանից, տեսնեմ մօտ երկու հարիւր ջահել տղայ, լինգերով, երկաթէ ձողերով գալիս են ուղիղ մեր տան վրայ: Զհասկացայ, թէ ինչ կատարուեց ինձ հետ,

երեւի ուշաթափուել եմ: Երեկոյեան մայրիկը պատմեց, որ մեր հարեւանը՝ Հուսէին Մամեդովը, մարմնով փակել է չքամուտն ու գոռացել.

— Թողէք-գնացէք, էստեղ հայ չկայ:

Յամենայնդէպս, տանը մրնալը վտանգաւոր էր: Հենց որ մութն ընկաւ, մեր միւս աղրբրեջանցի հարեւանը մեզ տարաւ իրենց տուն: Քնել, պարզ է, չկարողացանք: Անընդհատ գանգ էին տալիս՝ ո՛չ տատիկի հեռախօսն էր պատասխանում, ո՛չ հօրեղբայրենցը, չգիտէինք նրանք ինչ վիճակում են: Միայն Լոլայի հետ պատահածն իմացանք:

— Լոլան ո՞վ է:

— Եղեռնի յուշարձանի մօտ յուսանկարը չէ՞ք տեսել, երեւի Սումգայիթի ամենագեղեցիկ կինն էր: Ամուսինը՝ Սաչան, հօրս դարմիկն է, բայց նման չէ նրան, ամենաքիչը հինգ տղամարդու ուժ ու համարձակութիւն ունի: Դէպքի օրը նա ծնողներին, քրոջը, կնոջը հաւաքում է մի սենեակում, պինդ փակում բոլոր սողնակները: Յանկարծ զգում է, որ դուռը կոտրում են: Շշնջում է:

— Պատրաստ եղէք, հենց որ ներս մտնեն, ատաքճաններով կը փախչէք: Ես կը զրաղեցնեմ նրանց ու կը հասնեմ ձեր յետեւից:

Դէ, Սաչայի ճարպկութեան վրայ ո՞վ կարող էր կասկածել: Բոլորը կրնկահան եղած դրոնից վազում են դուրս, բայց հենց առաջին սանդխահարթակի վրայ Լոլան շրջւում է, տեսնում, թէ ինչպէս են լինոզով խփում ամուսնու գլխին, ինչպէս է շռռում արիւնը: Սարսափից ճչում է, իրեն կորցրած նետւում օդնութեան: Նրա գեղեցկութիւնն ու խիզախութիւնը չշմեցնում է բոլորին: Սաչային թողնում, Լոլայի թեւերից բռնած քարշ են տալիս բակ: Բռնարարել էին, դանակներով այնպէս այլանդակել մարմինը, որ գիակաղնման ժամանակ հարազատները հազիւ ճանաչեցին...

Ցիշեցի «Մոսկովեան նորութիւններ» շաբաթաթերթի յաւուկ թղթակից Վիկտոր Լոշակի հաղորդագրութիւնը. սումգայիթեան ոճրագործութեան անդրանիկ դատաւորութեանը ներկայ լինելուց յետոյ գրել էր. «Գործուած ոճիրներն իրենց մանրամասնութիւններով սահմրոկեցրել են անգամ դատաքննական փորձագէտներին»:

«... Լոլայի դէպքը լսելուց յետոյ մաման երդուեց, որ ինչ ուզում է լինի, Սումգայիթում չմնայ: Յաջորդ օրը մեր չէնքի առաջ զրահամեքենայ կանգնեց, միջից մայոր ու զինուորներ եկան: Մայորը անցնում էր յարկից յարկ, խփում դռները, բղաւում.

— Մի վախացէք, իմ ազգանունը Մելքումեան է, եթէ թաքնուած հայ կայ, թող դուրս գայ:

Մաման այդ որ լսեց, բացեց դուռը, փաթաթուեց նրան ու ո՞նց էր լալիս, խնդրում.

— Ախպէր ջան, մեզ տէրութիւն արա, փրկի էստեղից:

Մելքումեանը զրահապատ մեքենայով մեզ փոխադրեց գործարանային ակումբը, այնտեղից՝ զինուորների մօտ: Հիմա չեմ էլ կարող յիշել, թէ քանի հայ ընտանիք է փրկել նա: Այդքանից յետոյ հենց որ ազատ ժամանակ էր ունենում, գալիս էր, ուտելիք բե-

բում, յորդորում, որ հանգարտություն, չվախենանք ոչ մի բանից: Բայց գինու որնները, որ ապաստանել էին մեզ, բառականաչափ գինք չունէին: Իսկ քաղաքում շարունակում էին սպանությունները...

Քանի որ գորամասում մնալը յուսալի չէր, մայոր Մելքումեանը իր ազատած հայերին աւտոբուս նստեցրեց, յուսուկ ուղեկիցներով հասցրեց Բաքու: Բայց մենք արդէն կորցրել էինք մեր հաւատը՝ ոչ մի տուն չէինք ուզում մտնել, ոչ մէկին չէինք վստահում: Քանի՜ օր քնեցինք լաստանաւի վրայ, բացօթեայ: Ի վերջոյ, պաշտօնեաները մօտեցան մեզ, ասացին, որ վտանգն արդէն անցել է, կարող ենք յետ դառնալ: Զուգեցինք: Բնակարան առաջարկեցին Բաքում: Զհամաձայնուեցինք: Քանի որ ոչ մէկիս մօտ անձագիր չկար, արգելեցին Երեւան թռչել: Լաւ է, մի հայ տոմսավաճառ առանց փաստաթղթի բոլորիս ինքնաթիռի տոմս տուեց: Ես կամաց-կամաց արդէն զգում էի իմ հայութիւնը: Ճիշտն ասած, Սումգայիթում այդ մասին գրեթէ չէի մտածել, ինձ նոյնիսկ թուացել էր, թէ ապրութիւնը ձեւական բան է: Թէ ինչ է նշանակում հայ, հայրենիք, ես հասկացայ աւելի ուշ՝ Հայաստանում»:

Գայանէի ձայնը փուխր դարձաւ:

— Եթէ դժուար է, մի պատմիր,— ուզում էի ասել ես, բայց հայեացքս բարձրացրի, տեսայ, որ իր վճիտ աչքերով ժպտում է արցունքների միջից:

«Այդպիսի ծիծաղելի տեսարան Երեւանի օդակայանում երեւի չի եղել» («Գրական թերթ», 1988, թիւ 32):

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ

(Հատուած)

Փ. ԱՆԹԱՊԵԱՆ

Ի՞ՆՉ ԷՔ ՈՒԶՈՒՄ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Քաջարի Ղարաբաղին եւ Սումգայիթի
հայ նահատակների յիշատակին

Դեռ ծնուած օրից
Դրուած մարդկութեան զոհասեղանին,
Արիւն է հեղել
Ժողովուրդն իմ հին...

Ո՞ր մեղքի համար...

Հազիւ դեռ մանուկ,
Ու դեռ մանկամայլ,
Ճամբայ էր ընկել յոյս հաւաքելու,
Աստղեր քաղելու
Երկնքից անհաս...
Իր եւ բոլորի կենաց ճամբէքին,
Յուշարձանելու տեսիլք ու երազ...
Բայց ինչքան փուքկոտ
Թրատատեցին
Ձեռքերն ու ոտքերն իր լուսակաթոտ:

Ո՞ր մեղքի համար...

Մէկընդմիշտ խաչուած իր զժուար բախտին,
Խաց ու վէրքերի ցաւերին ընտել,
Ախին ու չարին երբեք չի կառչել,
Թուր չի բարձրացրել յանուն վրէժի...
Օ, ոչ, ոչ կրկին,
Ժողովուրդն իմ հին
Եղել է բարի,
Աւա՜ղ, շատ բարի,
Նոյնիսկ այն ժամին, երբոր բոլորն են
Համարել նրան
Անէծքի արժան:
Ո՞ր մեղքի համար...
Ինչ վեհ յոյզերով,
Հաւատքով, յոյսով,
Նետուեց արարման անդուլ բովի մէջ,
Փշրեց սիգապանծ կուռք ու ատրուշան,
Գիր ու միտք ծնեց եղեգնեայ գրչով,
Գոյնի, մեղեդու հմայքով հարբեց,
Մատեաններ երկնեց բարբառով հայկեան...

Ոչ սոսկ իր համար,
Այլեւ՝ ուրիշի, այլեւ՝ բոլորի…
Ախր, այդ ինչո՞ւ, ախր, այդ ինչպէ՞ս,
Բոլորն էլ յանկարծ
Նրանից անդարձ
Թեքեցին երես…

Ո՞ր մեղքի համար…

Դարերին հերթով շնորհեց հանճար՝
Մաշտոց ու Դաւիթ,
Եւ դեռ Անանիա ու Նարեկացի,
Տրդատը վսեմ, բժիշկ Հերացին,
Սուրբն Կոմիտաս,
Եւ Սարեանն անհաս,
Բայց նաեւ Վիկտոր, նաեւ Սարոյեան,
Չինչ, ջինչ Մեծարենց,
Ապա եւ Զարենց,
Կամ՝ լուսապսակ
Պարոյրը Սեւակ,
Որ նրագն հայի անմար պլպլայ.
Ո՛չ խաւար լինի, ոչ էլ ոգու մահ
Բայց եւ մահ եղեւ, եւ եղեւ խաւար…

Ո՞ր մեղքի համար…

Քար ու քարափին
Կենաց ծառ ցանեց,
Ապառաժներին՝ ե՛ւ ծիլ, ե՛ւ ծաղիկ,
Երաշտից ճաքած անապատներին
Զուլալ ջուր բերեց,
Ցորեն ամբարեց հատիկ առ հատիկ,
Բուրեան իր հացին,
Դեռ թոնրի բերնին,
Թշնամուն անգամ դարձրած բաժնեկից·
— Քանի ինքը կայ,
Ինչո՞ւ սով լինի,
Ինչո՞ւ չլինեն ե՛ւ բերք, ե՛ւ բարիք,
Ամէն մի տան մէջ աշխարհի վրայ…
Մինչ նա այսպէս էր խորհում ու գործում,
Տմարդիները հեռից իր աշխարհում
Խնոյքի նստած,
Իր ձեռի դատած,
Նոյնիսկ իր բաժին հացն էին խժռում…

Ո՞ր մեղքի համար…

Քարը ատամով
Դարձրեց փխրուն հող,
Ափ-ափ կուտակեց,
Գուրգուրաց, սիրեց…

Գոհունակ սրտով
Նայեց Աստծուն
Եւ փառք տալու պէս
Տուեց բարի լուր.
Թէ՝ սա իմ Մուշն է, սա էլ՝ իմ Սասուն,
Սա իմ Զէյթունն է, իմ Վանն ալեհեր,
Սա իմ Արցախն է՝ քաջ ու անկուն,
Սա էլ՝ Մուսալեռ…
Եւ իրեն բուաց՝ հոգով անհատնում
Իրենից հարուստ չկայ աշխարհում…
Էլ ինչին էր պէտք հոգը ուրիշի·
— Հոգը ծուատել,
Հոգը թալանել
Լաւ մարդու գործ չի…
—, Ասաց ու յանկարծ
Տեսաւ, որ ձեռքին
Հող չի մնացել
Թաղելու համար իր մեռելներին…

Ո՞ր մեղքի համար…

Բայց շարունակեց հաւատալ մարդկանց,
— Օ, ինչ անհուն էր
Իմ ժողովրդի բարութիւնն անանց —
Բոյն հիւսեց կրկին
Ու կրակ վառեց հին օջախներում:
Մահն բռնեց ձեռքին,
Բանեց անդադրում,
Որ չէն մնան միշտ
Է՛ զիւղ, է՛ քաղաք,
Ամէն մի տան մէջ լինի ցնծութիւն,
Հարսեր բազմանան,
Խայտան մանուկներ…
—, Խայտան մանուկնե՞ր…
Պայքեց հոեռնր·
Արիւնոտ դնչով վեր ցցուեց բուրքը,
Աստծոյ բերնին չորացաւ բուքը,
(Այլ կերպ, նա ինչո՞ւ զսպեց իր բուքը…)
Բայց հայը բարի,
Բայց հայը չարին միշտ էլ անընտել,
Յուրտ հաքաղանին
Սուրբ գոհ էր դարձել՝
«Սուրբ ճշխար՝ շան բերանին»…

Ո՞ր մեղքի համար…

Թուաց վէրք բուժեց,
Յառնեց վերստին, առնականացաւ,
Ոչ սեւ սուգ քողեց
Եւ ոչ էլ հին ցաւ…
Լիերազ սրտով

Իր նորոգ հունցուած եղբայրների հետ
Հեռու-հեռաւոր հորիզոններին
Երկար յամեցող լոյսին ակնդէտ,
Յոյսերին դարձած ակամայ գերի,
Իր վաղուայ համար
Բռնել էր շուրջպար…
Թուում էր, ահա, մի քիչ այն կողմում,
Կիսուած իր սիրտն էր
Ի վերջոյ բուժուում…
Բայց, ի՞նչ բուժուող սիրտ՝
Հայահունց մաղձի
Մի նոր Աղանա եւ մահափիրք
Մի սեւ Սումգայիթ…

Ո՞ր մեղքի համար…

Բարութեան բեռից
Եւ ազնուութեան չարագերծ լոյսից
Կքած, շլացած,
Զարութեան աչքին
Զէր նայել այնպէս եւ ոչ մի անգամ,
Զէր եղել այսքան
Կուռ ու միակամ
Թէ՛ ինքն իր առաջ
Եւ թէ աշխարհի…
Զի տեսաւ կրկին՝
Հիմա էլ ահա,
Նոր դաւ կայ եւ կայ
Զարանենգ նոր վիհ…
Որ հենց իր բնում,
Ճիշտ ու ճիշտ այնպէս,
Ինչպէս անցեալում
Դրկիցներ դժխեմ
Իր գրկից պոկուած, որբացած մանկան
Սուրբ մայրականչն են
Բամբակով խեղդում…

Ո՞ր մեղքի համար…

Այսքան ցաւ, չարիք,
Այսքան կեղծիք է կուտակուել իր շուրջ…
Ամէն նոր զէնքի, զէնքից էլ վատթար
Ամէն նոր դաւի,
Ասես, չի եղել, ուրիշ փորձադաշտ,
Հենց միայն հայի
Սիրտն էր միշտ պատրաստ…

Ո՞ր մեղքի համար…

Ասացէք, մարդիկ,
Մի՞թէ յանցանք է, որ սիրել է Զեզ

Ժողովուրդն իմ հին,
Հաւատացել է ձեր խօսք-խոստումին...
Իր սուրբ սեղանին կանչել բոլորիդ,
Հաց կիսել ձեզ հետ,
Սիրել իր հողն ու փոքրիկ իր տունը,
Բայց եւ ձեր տունը փրկելու համար
Անխնայ հեղել իր թանկ արիւնը...
Ոչ, ես չեմ ուզում
Հաւատալ երբեմ, թէ նա իզուր է
Բախտը իր կապել
Հենց նրա բախտին, ում որ սիրել է
Բոլորից աւել...
Զուր է յուսացել արդար հատուցում
Իր կորցրածի,
Այնքան փայփայած իր իդէալների,
Ուրիշների պէս, եւ ոչ աւելի,
Ուրիշների հետ
Խաղաղ ապրելու իր զուլալ կամքի...

Ո՞ր մեղքի համար...

Իսկ թէ հիմա էլ
Յուսախաբ լինի...
Ուրեմն, ճիշտ որ,
Սկիզբ է պէտք նոր
Ինքնատիրամի, ինքնահաստատման,
Քանի չի եկել վերջը վերջնական...
Օ, զզոյշ մարդիկ,
Մի, մի պղտորէք նրա արիւնը,
Մի չարախնդամ բարութեան վրայ,
Մի փորձէք նիրհած համբերութիւնը...
Մի՞թէ կարծում էք,
Որ լեռն Արարատ,
Ծնուած սրբազան հրաբուխներից,
Յաւերժ կը մնայ համր ու պրկուած,
Չի ծնի յանկարծ
Վերահնորոգման մի նոր հրաբուխ...

* * *

Բայց դու գալու ես
Արդարութեան ժամ,
Մեր բազկով, կամքով
Բերելու ենք քեզ:
Թող դժուար լինի,
Լինի տարաժամ
Գալուստդ բարի,
Բայց դու գալու ես
Արդարութեան ժամ:

10·4·88 թ.

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

Սումգայիթի զոհերուն նուիրուած յուշարձան Ստեփանակերտի մէջ

Ապրիլի 20ին, առաւօտեան մեկնեցինք Ստեփանակերտ։ Մեր խմբում էր Մոսկուայի Գորկու անուան կինոստուդիայի դիրեկտոր Ռիբինը, դերասան եւ երգիչ Օլեգ Օնորիեւը, դերասանուհի Ելենա Անտոնովնան։ Մենք հանդիպեցինք կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Հենրիկ Պողոսեանի հետ։ Նրա զրոյցը, ստեփանակերտցիների հետ հանդիպումը խիստ յուզիչ էր։ Ծաղիկներ դրեցինք Հայրենական պատերազմում զոհուած ստեփանակերտցիների յուշարձանին եւ կողքին տեղադրուած Սումգայիթի զոհերի յուշաքարին։ Հեռուստատեսութիւնը նկարահանում էր, բայց մեր «Լրաբեր»ի Ապրիլի 21ի հաղորդման մէջ այդ կադրերը չկային, եւ իմ խօսքի կարեւոր մասը կրճատուեց, կարծես դիտաւորեալ սխալ պատկերացում ստեղծելու, եղածը կոծկելու համար եւ, որ, մարդիկ ինձ դաւաճան համարեն։ Հարկ եմ համարում մէջբերել Ստեփանակերտի հասարակութեան ուղղուած իմ խօսքերը։

— Սիրելի հայրենակիցներ, հարազատներ, դժուար չէ պատկերացնել այն ծայրայեղ յուզմունքը, հոգու ջերմութիւնն ու քնքշանքը, սրտի թրթիռը, որով մենք չտապում էինք ձեզ մօտ։ Այն դաժան օրերից սկսած մինչեւ այսօր, մենք՝ մեծից փոքր, ձեր մասին ենք մտածում եւ խօսում։ Ձեր ցաւը մեր ցաւն է, այն անցնում է մեր հոգու խորքով, մեր սրտի ամէն մի տրոփիւնով։ Ոչ մի ազնիւ մարդ չի կարող անտարբեր լինել, չվշտանալ Սումգայիթի անմեղ զոհերի համար։ Խնդրում ենք, պահպանէք ձեզ, եղէք զգօն ու համբերատար։ Մենք դեռ շատ գործեր ունենք անելու։ Ես իմ հերթին խոստանում եմ անել ամէն հնարաւոր բան։ Մեր դալու նպատակը ձեզ տեսնելն է ու լսելը, ձեզ հետ չփուելը («Գարուն», 1988, *թիւ* 8, *էջ* 61)։

ՎԻՈԼԵՏԱ ԳԷՈՐԳԵԱՆ

Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ

ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՍՏՈՒԵՐԸ

Փետրուարեան օրերին կենտրոնական թերթերից մէկում երեւաց Բաֆուից ստացուած մի թղթակցութիւն, որի հեղինակը հիանում էր գիւղական հասարակ կնոջ սխրանքով, որը կանգնեցրել էր ամբոխը, նրա ոտքերի տակ նետելով իր գլխաշորը: Արեւելեան գեղեցիկ լեգենդը ոգեշնչել է յայտնի բանաստեղծին, որը ոչ այս, ոչ այն՝ բանաստեղծութիւն է գրել, գրականութեան մէջ յաւերժացնելով կնոջ ազնիւ պոռթկումը: Ցանկալի կը լինէր դրան չհաւատալ: Բայց եթէ Ադրբեջանում այդքան հեշտ էր կանգնեցնել ֆանատիկոս մարդասպանների ամբոխը, ապա ինչո՞ւ ամբողջ Սումգայիթում չգտնուեց մի մարդ, որն օգտուէր ադրբեջանական հին սովորոյթից, որպէսզի կանխէր արիւնահեղութիւնը: Ո՛չ մի գլխաշորով կին, ո՛չ մի պատուով տղամարդ...

Եւ ինչպէս չվերյիշենք, որ լուրերը, սկզբում մէկը միւսից անհեթեթ, իսկ այնուհետեւ նաեւ Սումգայիթի: Դաժան ճշմարտութիւնը նոյնպէս հասաւ Երեւանի թատերական հրապարակ: Եւ ոչ մի հակաօրինական գործողութիւն՝ ընդդէմ տեղի Ադրբեջանական բնակչութեան: Հանրայայտ է որ Երեւանում միտինգների լարուածութիւնը թուլցաւ Ադրբեջանի եւ Հայաստանի աշխատաւորներին Մ.Ս. Գորբաչովի դիմումի հանգիստ պատգամեց անմիջապէս յետոյ, եւ մարդիկ ցրուեցին իրենց աշխատատեղերը, իսկ ահա հենց այդ ժամանակ Սումգայիթում ամբոխները ձեռքները կացին առան:

Թէ ինչպէս արձագանգեց Հայաստանը՝ յայտնի է, սգոյ հանդիսաւոր թափօր կազմած ամբողջ Երեւանը շարժուեց դէպի 1915 թուականի Եղեռնի զոհերի Ցուշարձանը, որպէսզի ծաղիկներ դնի ի յիշատակ Սումգայիթի նահատակների: Եւ ոչ ոք այդ բազմահազարանոց սգոյ թափօրում մտքով իսկ չանցկացրեց վրէժ լուծել, ինքնադատաստան տեսնել: Ժողովուրդը արժանի մնաց իր պատմական անցեալին, ինքն իրեն:

յատուկ թղթակիցներ
Լ. ԱԶՐՈՅԵԱՆ, Զ. ԲԱԼԱԳԵՈԶԵԱՆ

(*«Արմենփրես»*, 11 Նոյեմբեր 1988):

Վահագն Դավթյան

... Իսկ խորհուրդն այն է, որ հատորակ խուսափելիք թերթերից վերցուած փաստերի հիման վրայ բանաստեղծութիւններ գրելու, որ յանախ էր անում մ):

Եւգենի Ալեքսանդրովիչ, հաւատացած եմ, որ եթէ աւելի մօտիկից ծանօթ լինէիք հայ ժողովրդի պատմութեանը, բարոյական կեցուածքին, նաեւ այդ դէպքերի շարժառիթներին, չէիք գրի այդ բանաստեղծութիւնը:

Բանն այն է, որ Ակրիդանին անցած հոգերի մեծ մասում, որ նախկինում բուն հայկական հոգեր են եղել, պատմական յուշարձանները հանում են մի

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ .... ԵՒԳԵՆԻ ԵՒՏՈՒՇԵՆԿՈՅԻՆ

Պատճէնը՝ ՍՄԿԿ Կենտկոմի Կուլտուրայի Բաժնի Վարիչ.
Պատճէնը՝ **«Կոմսոմոլսկայա Պրաւդա»**յի գլխ. խմբ.
Պատճէնը՝ **«Օգոնեոկ»**ի գլխաւոր խմբագիր

Յարգելի Եւգենի Ալեքսանդրովիչ,

Հենց սկզբից անկեղծ լինեմ. ես Ձեր գրական տաղանդի անվերապահ երկրպագուներից չեմ: Ձեր ստեղծագործութեան մէջ շատ բան ինձ դուր է եկել, առանձին գործեր նոյնիսկ հիացրել են, բայց գուցէ նոյնքանի նկատմամբ էլ անտարբեր եմ եղել կամ պարզապէս մերժել: Ինձ յատկապէս դուր չի եկել Ձեր առանձին ստեղծագործութիւնների արտաքին էֆեկտների թաքնուած մակերեսայնութիւնը:

Բայց մի բանում անվերապահօրէն հաւատացել եմ Ձեզ, Ձեր քաղաքացիական խղճին ու ճշմարտութեանը: Մի փոքրիկ մանրամասն: Գրողների վերջին համագումարի ժամանակ, երբ կուսակցական խմբում այս կամ այն անձի վերաբերեալ քուէարկութիւններ էին լինում, ես, լաւ իրազեկ չլինելով մոսկովեան գրական կեանքին, գրական խմբաւորումներին, ներքին հոսանքնե-

բանի հոգալիս, որ ասպիսին չարաբնակ սխալմամբ սխիզբարար ոչնչացուկ էն ու հիմակ ոչնչացուած են։

Եթէ մի փոքր հեռաջրջրուէիք, ապա կ'իմանայիք, թէ Երևանի բազմահնձ մթնոլորտներն ու ցոյցերը բարձրագոյն ինչ ժաքուր մթնոլորտում անցան, գարնան ամպրոպի պէս ասես ժաքիկին օդը ժաքլցին։ Ժողովածին հոգիները։ Եւ այդպէս էլ, որ ամբողջ խորութեամբ հասկացայ, թէ հրապարակախօսութիւնն ու գեղարուեստը ինչ բարիք է մեր երկրի համար։

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԻԹՅԱՆ

Եղիշէ Եարուշեանը

րիին, առանձին անձնաւորութիւնների բարոյական կերպարին եւ անվերապահօրէն հաւատալով Ձեր նշմարաւորութեանը, հնարուից հետեւում էի Ձեզ, ում օգտին դուք քուէարկում էիք, նոյնն էլ ես էի անում, ում դէմ էիք լինում, դէմ էի քուէարկում նաեւ ես։

Հաւատում էի, որ Դուք նաեւ իմ ժողովրդի ազնիւ բարեկամներից էք, քանի որ առաջին անգամ գալով Հայաստան եւ հաւանաբար զարմանքով իմանալով, որ հայ ժողովրդի բազմադարեան ու սրբազան խորհրդանիշը՝ Արարատ լեռը, Հայաստանի հողում չէ, Դուք բանաստեղծութիւն էիք գրել եւ նրա մէջ յայտնել մի գերմարդկային ու անիրագործելի ցանկութիւն՝ շալակել Արարատ լեռն ու Արարատի այս կողմը բերել։

Բայց ահա եկան հայ ժողովրդի համար շատ ծանր, ճակատագրական ու ողբերգական օրեր, երբ նա ոչ թէ գերմարդկային ցանկութիւններ արտայայտող, այլ մարդկային արդար խօսքերի ու մարդկայնօրէն միշտ հասկացուելու կարիքն ունէր։ Բայց Դուք, որ ժամանակին հանդէս էիք եկել Ղրիմի թաթարների իրաւունքների պաշտպանութեամբ, Ձեզ ոչ յատուկ պասսիւութեամբ, լռեցիք։ Մտածում էի, որ իրադարձութիւններին լաւ իրազեկ չլինելով, գերադասում էք լռել, եւ արդարացնում էի Ձեր լռութիւնը։

Բայց ահա, վերջապէս, խօսեցիք Ապրիլի 1ին, «*Կոմսոմոլսկայա Պրաւդա*»յի էջերից։ Այդ նոյն թերթից բերուած մի փաստի հիման վրայ, որ, ինչպէս կը տեսնէք յետոյ, հաւաստի չէ, գրեցիք մի բանաստեղծութիւն, որը շատ շատերիս մէջ զարմանքից աւելի զայրոյթ առաջացրեց։

Թէեւ Դուք շատ խելացի մարդ էք, բայց Ձեզանից տարեց լինելով, կ'ուզէի նաեւ մի խորհուրդ տալ Ձեզ՝ ընդունելը կամ չընդունելը թողնելով Ձեր գրական ըմբռնումներին ու ճաշակին։ Իսկ խորհուրդս այս է, առ հասարակ

խուսափեցէք թերթերից վերցուած փաստերի հիման վրայ բանաստեղծութիւններ գրելուց (որ յանախ էք անում)։ Դրանով ամենեւին չեմ ուզում ասել, թերթերի բոլոր փաստերն անխտիր հաւաստի չեն։ Ոչ։ Ասելիքս բոլորովին այլ է, բանի որ թերթերից առնուած փաստը Ձեր կենսափորձի մասը չէ, չի անցել Ձեր հոգու բովով, չի վերապրուել արեամբ ու նեարդերով, որքան էլ տպաւորիչ, չի կարող իսկական բանաստեղծութիւն ծնել։ Ինձ դասական պոեզիայից այդպիսի բանաստեղծութեան օրինակ յայտնի չէ։ Համոզուած եմ, որ ստեղծագործական նման եղանակը ոչ մի առընչութիւն չունի բանաստեղծութեան հետ. երբ հիմք դարձած փաստը հնարուած է ու սուտ, սրբապղծութիւնը կրկնապատկւում է։

Այսպէս է կատարուել նաեւ այս դէպքում։

Եւ այսպէս, թերթից բերուած բաղուածքում ասուած է. «Երբ շարասիւնը ընդհուպ մօտեցաւ մեքենային»... Եւ չի ասուած, սակայն, թէ ինչ շարասիւն է դա, ովքեր են եղել այդ շարասիւնը կազմողները եւ ինչ շարասիւն, երբ դա կատաղած աչքերն արեամբ լցուած մի ամբոխ է եղել, որ յարձակուել է մի խումբ անպաշտպան հայերի վրայ, թէ ինչ է՝ Ղարաբաղի հայերը համարձակութիւն են ունեցել պահանջելու մարդկային մի տարրական իրաւունք, այն է՝ իրաւունք ապրելու իրենց մայր ժողովրդի հետ... Այնուհետեւ բաղուածքը, վկայակոչելով ականատեսներին, պատմում է, որ ամբոխի առջեւ յայտնուել է մի կին՝ սոցիալիստական աշխատանքի հերոսուհի Խուրաման Աբասովան, եւ, նրանց առաջ թաշկինակ նետելով, կանխել եղեռնագործութիւնը...

Ես էլ եմ այս նոյն դէպքի մասին լսել, ականատեսների պատմածները, հասկանալի է, հակառակ կողմի հայ ականատեսների, բայց ըստ նրանց այդ պատմութիւնը բոլորովին հակառակ բովանդակութիւն ունի։ Նրանք պատմել են, որ հենց այդ հերոսուհին է կատաղած ամբոխի գլուխն անցած, նրան առաջնորդել դէպի հայերի փոքրիկ խումբը, արիւնոտ հաշուեյարդար տեսնելու նրանց հետ։ Սակայն այն ժամանակ, երբ լուրեր են հասել, թէ ինքնաթիռներով պարաշիւտային ստորաբաժանում է գալիս այդտեղ, հերոսուհին նոր է միայն հանել իր այդ լեգենդական թաշկինակը...

Չեմ կարող պնդել, թէ իմ ասածը զուտ ճշմարտութիւն է, բանի որ լսել եմ ճիշտ այնպէս՝ ինչպէս այդ յօդուածի հեղինակներն էլ չեն կարող իրենցը պնդել, բանի որ ինձ նման նրանք էլ են լսել եւ ոչ թէ տեսել։

Ենթադրենք, սակայն, թէ այս փաստն իսկապէս ճշմարտութիւն է։

Բայց ինչու է միայն դա, այն էլ բանիցս, կրկնւում միութենական մամուլում, փոխարկւում լեգենդի, արժանանում նոյնիսկ չափածոյ խօսքով տարփողուելու բախտին։ Ինչու, ասենք, չի գրւում նաեւ մի այլ կնոջ, Սումգայիթի բաղկոմի 2րդ բարտուղար Բայրամովայի մասին, որը մի առաւել հոծ ու առաւել կատաղի ամբոխի գլուխ անցած, առաջնորդել է նրանց՝ կոչ անելով մորթել, սպանել, ոչնչացնել բոլոր հայերին... Եւ ինչու ամբողջ ճշմարտութիւնը չի ասւում Սումգայիթում նիւթուած, ամենայն մանրամասնութեամբ նախապատրաստուած չարագործութեան մասին. չէ որ, ինչպէս յանախ է կրկնւում միութենական մամուլում, կէս ճշմարտութիւնը ստից էլ վատ է։ Վերջապէս, չէ որ ինչպէս հարկն է չդատապարտուած եղեռնագործութիւնը միշտ էլ նորն է ծնում... Եւ այսպէս, ո՛չ յօդուածում, ոչ էլ Ձեր բանաստեղծութեան մէջ՝ ոչ մի դատապարտող խօսք մասսայական եղեռնագործութեան մասին եւ փառաբանութիւն մի անհատի գործած, թէ չգործած արարքի մասին, որ կ՚անէր խիղճ ունեցող իւրաքանչիւր մարդ։

Բայց եթէ, ինչպէս առաջներում, անհատի պաշտամունքի ու լճացման տարիներին, այնպէս էլ հիմա ցուցում կայ գրել միայն ինտերնացիոնալիզմը վկայող փաստերի մասին, ինչու, ասենք, բանաստեղծութիւն չգրեցիք այն մասին, որ այդ ծանր ու լարուած օրերին Հայաստանում ապրող մօտ 250 հազար ադրբեջանցիներից ոչ մէկի գլխից մազ իսկ չընկաւ, նոյնիսկ Սումգայիթից յետոյ: Հետեւաբար, աւելի քան 3 միլիոն հայերից իւրաքանչիւրը այդ խանումի նման արժանի էր բարոյական փառաբանութեան: Ինչու այդ 3 միլիոն հայութեան բարոյական վեհութիւնը չարժանացաւ Ձեր ուշադրութեանը, եւ այդ խանումի չստուգուած արարքը վերածեցիք լեգենդի···

Ինչպէս, օրինակ, չհետաքրքրուեցիք, որ այդ դժուար ու վտանգաւոր օրերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինը հայկական հեռուստատեսութեամբ իմաստուն ու յուզիչ, խղճի ու բարոյականութեան բարձրագոյն գաղափարներով շնչող այնպիսի մի ճառով դիմեց իր ժողովրդին, որ ասես փոքրկուած ծովի վրայ խաղաղութեան շունչ փչեց: Այդ վսեմ ու իմաստուն ծերունին էր արժանի դառնալու լեգենդ···

Եթէ մի փոքր հետաքրքրուէիք, ապա կ՚իմանայիք, թէ Երեւանի բազմահոծ միտինգներն ու ցոյցերը բարոյապէս ինչ մաքուր մթնոլորտում անցան, գարնան ամպրոպի պէս ասես մաքրեցին օդը, մաքրեցին մարդկային հոգիները· ես այդտեղ էր, որ ամբողջ խորութեամբ հասկացայ, թէ հրապարակայնութիւնն ու վերակառուցումը ինչ բարիք է մեր երկրի համար···

Ինչու այդ մասին ոչ մի տող չգրուեց: Ինչու հենց այդ մասին բանաստեղծութիւն չգրեցիք, չէ որ դա մի առաւել մեծ երեւոյթ էր, քան այդ խանումի արարքը, եթէ նոյնիսկ այն չի կեղծուած մեր հարեւանների ձեռքով···

Մինչդեռ ձեր բանաստեղծութեան մէջ զոհն ու դահիճը նոյն նժարին են դրուած: Աւելի՛ն· դահիճը ներկայացաւ բարոյական բարձր արժանիքներով: Բայց եթէ երբեւէ Դուք տեսնէիք Սումգայիթի ջարդերի տեսագրութիւնը եւ իմանայիք զոհերի նշգրիտ թիւը, հաւանաբար, մի նոր «*Բաբի Եար*» գրէիք: Այո, համազօր երեւոյթներ են դրանք···

Բայց ինչու է շարունակւում լռութիւնն այդ յանցագործութեան շուրջը··· Եւ Դուք էլ ահա, այդ ամէնն անտեսելով, եղեռնագործների ամբոխից առանձնացրել էք մէկին ու սկսել Ձեր փառաբանութիւնը···

Ինչու է այդպէս· ինչու է մեր օրերում անարդարութիւնը դրութեան տէրը: Այս հարցերի պատասխանը ես ունեմ···

Դուք էլ ունէք, գիտեմ: Բայց քանի որ հրապարակայնութիւնը եւ դեմոկրատիան, ինչպէս ցոյց տուեցին Ղարաբաղեան դէպքերը, եւ վերադասկոնեուկտուրան շարունակւում է՛ թերթերում, ե՛ւ, դժբախտաբար, Ձեր բանաստեղծութեան մէջ···

Եւգենի Ալեքսանդրովիչ, հաւատացած եմ, որ եթէ աւելի մօտիկից ծանօթ լինէիք հայ ժողովրդի պատմութեանը, բարոյական կերտուածքին, նաեւ այդ դէպքերի շարժառիթներին, չէիք գրի այս բանաստեղծութիւնը: Հաւատացած եմ նաեւ, որ կը գայ ժամանակը, երբ բարձրաձայն կը խօսուի շատ ահաւոր բաների մասին, կը խօսուի այն գնդակահարուած Բաղիրովի օրօք սկսուած, մեծագոյն կաշառակեր ու հրապարակային լկտիութեամբ կաշառք տուող Ալիեւի (որ, չգիտես ինչու, սովետական օրէնքներով չի տրւում դատի) եւ այսօրուայ Բաղիրովի ջանքերով Ադրբեջանում շարունակուող հայկական գենոցիդի մասին··· Այո, այո, գենոցիդ···

Միջազգային օրէնքներով գենոցիդ է համարւում ո՛չ միայն տուեալ ազգութեան մասսայական կոտորածը, այլեւ՝ նրա լեզուի, նրա մշակոյթի, նրա պատմական յուշարձանների ոչնչացումը:

Փաստեր էք ուզում...

Դրանք անթիւ են ու անհամար: Բաւում, ուր 300 հազար հայ է ապրում, փակուել են համարեա՛ բոլոր հայկական դպրոցները: Նոյնը՝ Կիրովաբադում, նոյնը՝ բոլոր հայաշատ վայրերում: Էլ չենք խօսում հայկական փակուած թատրոնների, կուլտուրական փակուած օճախների մասին: Իսկ պատմական յուշարձանների ոչնչացումը պարզապէս սոսկալի չափերի է հասնում: Բանն այն է, որ Ադրբեջանին անցած հողերի մեծ մասում, որ նախկինում բուն հայկական հողեր են եղել, պատմական յուշարձանները հասնում են մի քանի հազարի, որ տարիներ շարունակ սիստեմատիկաբար ոչնչացուել են ու հիմա էլ ոչնչացւում են...

Եթէ հաւատացած լինէի, թէ այդ ոչնչացուած յուշարձանների մանրամասն ու մասնագիտօրէն կազմուած ցուցակը կարող է հետաքրքրել Ձեզ, կը կցէի նամակիս:

Յուշարձանների ոչնչացման նպատակը պարզ է, դրանք այդ հողերի հայկական լինելու անհերքելի վկաներն են, ուրեմն, ստալինեան ու բերիական տրամաբանութեամբ, ամէնից առաջ հենց վկաները պիտի ոչնչացուեն... Իսկ պատմական փաստերը կեղծելը վաղուց ի վեր ադրբեջանցի գիտնականների բուն ու միակ մասնագիտութիւնն է դարձել, քանի որ չի դատապարտւում ո՛չ միութենական գիտական հաստատութիւնների, ոչ էլ գործին խորապէս տեղեակ ռուս նշանաւոր գիտնականների կողմից...

Ինչու... Պատասխանը դարձեալ պարզ է ե՛ւ ինձ, ե՛ւ Ձեզ, ուստի փակագծեր բացելու կարիք չկայ:

Եւգենի Ալեքսանդրովիչ, Դուք յանախ էք թէ՛ չափածոյ ու թէ արձակ խօսում ճշմարտութեան, արդարութեան, խղճի անունից: Բայց զարմանում եմ, թէ ինչպէս է, որ հիմա, առանց դէպքերի էութեան մէջ խորանալու, հաւանաբար առանց իմանալու, որ աշխատաւորների դեպուպատների Ղարաբաղի մարզային սովետը համարեա՛ միաձայն ընդունել է Հայաստանի հետ վերամիաւորուելու որոշում, իսկ կուսակցութեան մարզային կոմիտէի պլենումը համարեա՛ միաձայն հաւանութիւն է տուել այդ որոշմանը, որն այլ բան չէ, քան կուսակցութեան պահանջուած դեմոկրատիայի կիրառում, մի կողմ էք դրել Ձեր խիղճը, եւ փաստի էֆեկտից տարուած, ըստ էութեան գրել ընդդէմ ճշմարտութեան...

Ամօթ է, շատ ամօթ, Եւգենի Ալեքսանդրովիչ: Դա Ձեզ վայել չէ:

Եւ միայն մի մխիթարական բան կայ Ձեր այդ, այսպէս կոչուած, բանաստեղծութեան տպագրութեան փաստի մէջ: Դա այն է, որ այն տպագրուել է Ապրիլի 1ին: Նման բանաստեղծութեան տպագրութեանը համար խմբագրութիւնն աւելի յարմար օր չէր կարող ընտրել:

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

(Որա հերոսական ասանամեակի առթիւ)

Ողջո՛յն, ողջո՛յն ժողովրդին եղբայրական,
Նոյն արեւով սնուած մեզ հետ եւ նոյն հացով,
Մեզ հետ մէկ տեղ կրած կալանքը ցարական,
Մեզ հետ մէկ տեղ յառնած կեանքի արեւազօծ,—
Ցանուն հնում կրած անհուն տառապանքի,
Ցանուն այսօր կոփուող կեանքի լիահնչիւն,—
Ցանուն անմահ մեր դաշինքի եւ հաշտ կեանքի,—
Եղբայրական ժողովրդին ողջո՛յն, ողջո՛յն...

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

1935

ԱԴՐԲԵՋԱՆ

Սիրել եմ ես քո երգերի անուշ լեզուն,
Ժողովրդիդ իմաստուն խօսքն ասուած սրտով,
Կասպիական կապոյտ ջրերը երազուն,
Մով սարերիդ վեհ կատարները հոգեթով:
Եւ հեքիաթներդ կախարդիչ հմայքներով,
Մեղեդիներդ սրտայոյզ ու անվախճան,
Որոնք մանկուէ լցրել են իմ սիրտը սիրով,
Դու իմ հոգում, իմ սրտում ես, Ադրբեջան:

Սիրել եմ ես կռիւը քո ազատութեան,
Զաւակներիդ ընդվզումները քաջարի,
Եւ իմ սիրտը՝ լցուած սիրով եղբայրութեան՝
Մարտադաշտն է եղել կարծես քո պայքարի:
Եւ ամէն մի վէրքը խիզախ քո հերոսի,
Ես զգացել եմ իմ սրտում մտերմական,
Նրա արիւնն ասես թէ իմ կրծքից հոսի,
Դու իմ հոգում, իմ սրտումն ես, Ադրբեջան:

Հիմա սիրում եմ ես հպարտ անունը քո,
Նաւթաշխարհից յաղթանակները ամէն օր,
Կասպիականը աստղավառ երկնի ներքոյ,
Սումգայիթի կառուցումները փառաւոր·
Եւ քո Բաքուն է խանդավառ հոգիս գերում,
Շքեղահիւս իր լոյսերով վառ անվախճան,
Նրանց պայծառ ցոլքն եմ զգում իմ աչքերում,
Դու իմ հոգում, իմ սրտումն ես, Ադրբեջան:

ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆ

Ադրբէջանի մասին եւ ադրբէջանցիներու մասին շատ յոյժ ուժգնեալ գրած են Հայրենի մեր գրողները եւ գրականութեան անուանով ստորագրած բոլորովին ջրի գրացներ՝ Հիմանդներու, ու նաեւ՝ բարեկամութեան ու եղբայրութեան մասին. Հաշտութեան մասին, ողջոյններու եւ անդրադարձներու անհամար սեւագրութիւններ, որոնցմէ նմոյշներ են Եղիշէ Չարենցի ողջոյնը եւ Գեղամ Սարեանի նոյնանման գեղեցիկը...

Ոչ մեր բերանները չափ, բայց ազգրէջանցի գրող Արիֆպաշանեանն ու Հիւսէյն Օղլինեանն ալ նոյն թեմաներով չափածոյ կամ արձակ էջեր գրեցեր են, այլ կը պարզուի, որ այդ բոլորը գաղտագիտանոց յօրինուածքներ են, մեր կողմէ միամտութեամբ սիրած ու աւարուած, իրենց կողմէ խորամանկութեամբ տարուած: Ամբողջ Նախիջեւանը բռնաբէն կորցած եւ ապա Հայաթափած, ու Ղարաբաղի համար Հայաթափման նոյն նախապատրաստը պարապելու միտոյ ազգրէջանցիներուն համար գլուխին էր հաշտութիւն տարբեր ու եղբայրութիւն խոպոպ, բայց բռնատիրութեան եւ Հայաթափման միեւնոյն պատճառները պիտի տեսնէին, որ մեր ժողովուրդը որ մը բակ իր խոսքը, ու Ղարաբաղեան շարժումով բան՝ իր խոսքը, բռնադատուած եղբայրութեան. հեռաւոր եւ բռնադատուած դրդիչներու իրենց սեւ յուշ միայն իր ամբարներուն մէջ պահելով չարենցեան ողջոյնները եւ սարեանական սիրուն մեմները:

Կը նշանակէ, թէ Չարենց ժամանակորդ չուներցաւ իր ողջոյնները մէջ, իսկ «Սումգայիթի կառուցումներ փառաւոր» հաշտկոր եւ իրեն թէ փառաւորագոյն դիտող Գեղամ Սարեանի թոռները ու մոլայիթեան արիւնոտ յանցանքներէն զատ ոչինչ ունին դեռ երկու տարի առաջ երկու անգամ տարբ հարար հայութիւն հաշտ ող այդ սեւ քարարէն...

Մ. ԴՈՒԴԻՆ

*

Մերթ սեւ եղեռն, մերթ Սումգայիթ.
Մերթ կործանուող շէն ու ոստան.
Արի՜ւն, արի՜ւն... Ցաւը բախտիդ
Ո՞ւմ չի յուզում, Օ՜, Հայաստան:

Բայց դու նորի՛ց պիտի դնես
Հացն ու երգը նոյն նժարին.
Հայաստան, ես սիրել եմ քեզ
Հաւատամքիդ համար այս հին:

Իմ Ռուսիան էլ առապանքի,
Յարատեւման իր հին փորձով
Ապրում է քո դաժան կեանքի
Տխրութիւնը ալեկոծող...

Եղբայրութեան մէջ ազգերի
Բաբելանում են մոայլ պատեր.
Ու մենք պիտի այս օրերին
Լինենք միմեանց պաշտպան ու տէր.

Թարգմ. Ի. ՄԱՄԵԱՆ

ԿՐԿՆՈՒՈՂ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Մօրն սպանեց իր իսկ տան մէջ,
Խուժանը յար անպատիժ,
Սումգայիթցի աղջիկը խեղճ
Համակ ցաւ է, համակ վիշտ:

Վախից աչքերն է թաքցնում,
Ասես կեանքից է փախչում,
Ո՛չ Քրիստոսն է լաց լինում,
Ոչ Մուհամէդն է ամաչում:

Թարգմ. Ե. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Մ. Դուդին

Դեհ, տայ Աստուած, որպէսզի իրականան այն ցանկութիւնները, որոնք արտայայտել է Ղարաբաղի հայութիւնը: Ես ծանօթացայ կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Անտրէի Պօղոսեանի հետ, մի հետաքրքիր մարդու, որը բոլոր նրբերանգներով զգում է ժամանակի ընթացքը: Նա ամէն ինչ յստակօրէն ու գիտակցուած է ընկալում: Նա իսկական կոմունիստ է: Ինձ թւում է, որ այս ցանկութիւնները կարող են իրականանալ, եւ առանց դրանց անհնար կը լինի շարժումը, կեանքը:

ՄԻԽԱՅԷԼ ԴՈՒԴԻՆ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ********** ********** ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

...Բորորովին իր վրայ էր վերցրել մեծ Ռուսաստանի դեսպանի պարտականութիւնները՝ մեր անծայրածիր երկրի ազգերի եւ ժողովուրդների առջեւ ներկայացնելու սովետական ողբերգութեան իրական պատկերը, լուրջ եւ օբյեկտիւ վերաբերմունք դրսեւորելու եղածկատարուածին:

Պատմութիւնը՝ պատմութիւն, բայց սովետական ոճիրը դուրս է երեւակայութեան սահմաններից. չէ՞ որ կատարուում է մեր օրերում, մեր աչքի առջեւ, հզօր սովետական իշխանութեան գոյութեան պայմաններում...

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

Վերջին երեք ամիսներին Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում, ինչպես նաեւ Սումգայիթում կատարուած իրադարձութիւնները աշխարհին են յայտնի, եւ այնքան բուռն էին, այնքան «անակնկալ» իրենց ե՛ւ բնոյթով, ե՛ւ իրենց տեսակի մէջ, որ դրանց հանգամանալի վերլուծութիւնը, արդար գնահատականն ու արդար լուծումը տալու համար դեռ որոշ ժամանակ եւ արդարացի քննութիւն է հարկաւոր՝ պատմական, նիւթական ու բարոյական անխարդախ տեղեկութիւններով յագեցած: Նոյն այդ իրադարձութիւնները նաեւ առիթ ծառայեցին, որ կենտրոնական մամուլը լայնօրէն անդրադառնայ մեր երկրում գոյութիւն ունեցող ազգային չլուծուած խնդիրներին, եւ նշանաւոր մտաւորականների ու պետական գործիչների բերանով հարց բարձրացնի դրանք սահմանադրական կարգով լուծելու համար:

Ղարաբաղեան իրադարձութիւնների առաջին օրերին, ինչպէս «Սովետսկայա կուլտուրա» *թերթում նշեց Ալեքսանդր Գելմանը,* «Դրսեւորուեց դրամատիկական իրադարձութիւնները մարդկայնօրէն եւ ազնուաբար լուսաբանելու՝ ինֆորմացիայի մեր միջոցների անպատրաստուածութիւնը», *որն էլ բարութեան պատնէշին կանգնած մեր ժողովրդի մէջ անտեղի բացասական գրգիռներ առաջացրեց:*

Ահա թէ ինչու, աննախընթաց կարեւորութիւն է ձեռք բերում Խաղաղութեան պաշտպանութեան սովետական կոմիտէի նախագահ, կենտրոնական հեռուստատեսութեան քաղաքական մեկնաբան, «Դիրֆորոշում» *հաղորդաշարի հիմնադիր ու հեղինակ, գրող Հենրիխ Բորովիկի նոյն հաղորդաշարի Ապրիլի վերջին թողարկած ժամուկէս տեւող հաղորդումը՝ ամբողջովին նուիրուած Լեռնային Ղարաբաղի հետ կապուած իրադարձութիւններին: Այս անգամ Բորովիկն իր վրայ էր վերցրել մեծ Ռուսաստանի դեսպանի պարտականութիւնները՝ մեր անծայրածիր երկրի ազգերի ու ժողովուրդների առջեւ ներկայացնելու սումգայիթեան ողբերգութեան իրական պատկերը, լուրջ եւ*

օբյեկտիւ վերաբերմունք դրսեւորելու եղած-կատարուածին։ Հենրիխ Բորովիկն ապացուցեց, որ թէեւ դա բնաւ էլ հեշտ գործ չէ, բայց կարելի է անել, ընդ որում՝ ո՛չ միայն կարելի է, այլեւ անհրաժեշտ՝ եթէ մասսայական ինֆորմացիայի միջոցների նախնական կոչումը ճշմարտութիւնը յայտնաբերելուն եւ նրա յաղթանակին օգնելն է։ Այստեղ հեղինակի անաչառ վերաբերմունքը երեւաց առաջին իսկ կաղրերից, երբ սկսեցին խօսել ականատես վկաները, իսկ այնուհետեւ՝ նիւթին լաւատեղեակութիւնը հնարաւորութիւն էր տուել միանգամայն տեղին օգտագործել մշակութային ինֆորմացիան՝ ժողովուրդների դիմագիծը բնորոշելու իմաստով, մնալով անկողմնակալ, հաւաստի փաստեր ու տեղեկութիւններ հաղորդել ո՛չ միայն Սումգայիթում այսօր կատարուած ոճրագործութիւնների մասին, այլեւ՝ մեր ժողովուրդի ոչ վաղ անցեալի պատմութեան· 1915 թուականի թուրքական Եղեռնի, 1920 թուականի Շուշի քաղաքում մուսաւաթականների կազմակերպած հայկական կոտորածների մասին, որոնք ըստ էութեան առաջին անգամ էին լրջօրէն հնչում կենտրոնական հեռուստատեսութեամբ։ Պատմութիւնը՝ պատմութիւն, բայց սումգայիթեան ոճիրը դուրս է երեւակայութեան սահմաններից· չէ՞ որ դա կատարւում է մեր օրերում, մեր աչքի առջեւ, հզօր սովետական իշխանութեան գոյութեան պայմաններում, եւ Բորովիկի հաղորդումն ապահովւում էր հրապարակայնութեան՝ ոչինչ չթաքցնելու շատ կարեւոր պայմանը, թէեւ ամբողջ նիւթը հաղորդելն այս դէպքում անհնարին է եղել։ Հաղորդումը պատրաստուել է փաստօրէն դէպքերի հետքերի վրայ· մարդկանց ողբերգական դէմքեր ու պատմութիւններ, աւերուած տներ ու այրուած աւտոմեքենաներ, իրական վրդովմունք ու երբեմն՝ չինծու աւաղ-ափսոսանք···։ Ի դէպ, Բորովիկը պատճառների մասին խօսելիս փորձել է մինչեւ վերջ գնալ· յատկապէս տեղական ու հանրապետական իշխանութիւնների մասին խօսելիս, ուր կռահւում է նրանց երկդիմութիւնն ու երկիմաստութիւնը։ Մի կողմից՝ սովետական ղեկավարներ, որոնք օժտուած են անսահմանափակ իշխանութեամբ, ձեռքի տակ ունեն ամէն միջադէպ կանխելու ամեն տեսակ հնարաւորութիւն, միւս կողմից՝ ծայրայեղ ֆորմալիստական վերաբերմունք ժողովրդին ու այդ իշխանութեանը, կարծես թէ դա անցողիկ, այսինքն՝ «եոլա տանելու» մի ժամանակաշրջան ու վիճակ է։ Մի մասն ապրում է անյայտ ծրագրերով, միւս մասն էլ գերադասում է ապրել անծրագիր, միայն վայելելով։ Այս տպաւորութիւնը հաստատւում է հաղորդման մէջ ամէն փաստ քննելիս։

Նիւթը յագեցած էր նաեւ հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների բարեկամութեան դիտարժան փաստերով, սակայն, հակառակ ժողովրդի ներկայացուցիչների խօսքերի, որոնք հնչում էին յուզիչ, համոզիչ ու արդար, մտաւորականների խօսքը մի տեսակ բովանդակազուրկ ու խուսափուկ էր ստացուել, որի մեղքը ոեւէ մէկի վրայ բարդելու իրաւունքը չենք վերապահում մեզ···։ Միայն, ինչպէս ասում են, զարմացած ենք բոլորս մի մարդու պէս, թէ այդ ո՞ւմ, կամ ինչի՞ ահից է Երեւանում ապրող եւ աշխատող ադրբեջանցի ուսուցչուհին գիշերները քնելիս տան դրան յետեւում արկղներ շարել։ Այդ օրերին եւ կամ առհասարակ Հայաստանում որեւէ ադրբեջանցու (մեծի թէ փոքրի) մատը փուչ մտե՞լ է։ Ի հարկէ՝ ոչ։

Հենրիխ Բորովիկի «Դիրքորոշում» հաղորդումը՝ նուիրուած Լեռնային Ղարաբաղի հետ կապուած իրադարձութիւններին արուած մի առարկայական քայլ է, սկիզբը հրապարակայնութեան ու դեմոկրատիայի ընձեռած լուսաւոր հնարաւորութիւններն արդար նպատակներով կեանք մտցնելու ծրագրի, որին իրապէս կարօտ է մեր ժողովուրդը («Գրական թերթ», 1988, թիւ 20)։

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

ՌՈՒՍ ԳՐՈՂՆԵՐ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՄԱՍԻՆ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱՐԳԱՐԵԱՆ.— Ինչպէ՞ս ընդունեցիք Սումգայիթի լուրը:

ՎԵՆԻԱՄԻՆ ԿԱՒԵՐԻՆ.— Սարսափով: Թէեւ ողջ իրողութեանը ծանօթ չեմ: Ընդունելի՞ է, ինչպէս իւրաքանչիւր մտաւորական, իւրաքանչիւր հումանիստ, ով ընդունակ է իրեն տեսնելու մէկ այլ մարդու վիճակում: Ամբողջ սրտով կսկիծ եմ ապրում հեղուած արիւնն համար («Գրական թերթ», 1988, թիւ 41):

ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— Դուք, ի հարկէ, գիտէք Ղարաբաղը, նրա պրոբլեմը:

ՄԻԽԱՅԵԼ ԴՈՒԴԻՆ.— Այո, գիտեմ: Ես պարզապէս ինքս ինձ պատկերացնում էի, որ՝ դա կարող էր պատահել: Բայց երբ տեսնեցին սումգայիթեան իրադարձութիւնները, ես ինձ չէի կարող հանդիսատես պատկերացնել: Ես յիշեցի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան հառաւոյն օրը» հրաշալի գիրքը, որի ուսումնական հրատարակութեան համար նախաբան եմ գրել: Ու ես պատկերացրի սումգայիթեան գեղջուկներն իրենց ողջ նոպկալիութեամբ, իրենց ողջ վայրենութեամբ: Ես չէի կարող ոչնչանալ չգալ:

ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— Այժմ Սումգայիթից հայեր Ղարաբաղ են վերադառնում: Հենց Ստեփանակերտի օդակայանում ականատես եղանք 12 ընտանիքների գալուն: Նախորդ օրը 15 ընտանիք եկաւ: Չէ՞ որ նրանք գարաբաղցիներ են, որոնք 50-ական թուականներին, ադրբեջանցիների բարեկամական կոչին արձագանքելով, գնացել էին հիմնելու Սումգայիթ քաղաքը:

ՄԻԽԱՅԵԼ ԴՈՒԴԻՆ.— Այո, ուրեմն վերադառնում են...: Ես գրուցեցի Ստեփանակերտ վերադարձած սումգայիթցիների հետ: Նրանք շատ անյարմար բնակարաններում են տեղաւորուած, հինգ ընտանիք երեք սենեականոց բնակարանում: Ամբողջից առաջ, այո, թոչոնը իր երամի մօտ է թռչում...

ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— Եղա՞ք Շուշիում:

ՄԻԽԱՅԵԼ ԴՈՒԴԻՆ.— Այո, մինչ այդ էլ շատ բան էի կարդացել...

ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— 1920 թուականի Մարտի 23-ին Շուշիի, իսկ մինչ այդ՝ 1918 թուականին, Թամուի հայերի կոտորածը, որոնք իրականացրել էին մուսաւաթականներն ու թրքական ջոկատները, շատերը համեմատում են սումգայիթեան դէպքերի հետ:

ՄԻԽԱՅԵԼ ԴՈՒԴԻՆ.— Ամէն մի երեւոյթ, ինչպէս եւ անարդարութիւնը միանգամից, ինքն իրեն չի վերանում: Զար ուժերը դեռեւս ապրում են անմիտ գլուխների մէջ: Բայց միեւնոյնն է, ողջ այդ ատելութիւնը դատապարտուած է: Կեանքը պէտք է պարպանայ ոչ թէ կոպիտ ուժի թելադրանքով, այլ՝ բանական ճանապարհով: Եւ մարդը մեր մոլորակի վրայ պէտք է տիրապետեն փոխարէն մտերմութիւն փնտռի: Սա է մեր միակ ուղին:

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ...

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ

Քանի դեռ սումգայիթեան եղեռնը չի ստացել իր բուն որակումը, մենք չենք կարող մեր ժողովրդին հաւատացնել, որ վերակառուցումը, դեմոկրատիան եւ հրապարակայնութիւնը դատարկ բառեր չեն, այլ՝ կեանքի հրամայական պահանջ:

Չենք կարող, քանի դեռ Լիոնի մօտ վթարի ենթարկուած գնացքի 40 զոհերի առթիւ մեր կառավարութիւնը ցաւակցական հեռագիր է ուղարկում Ֆրանսիա, իսկ հենց իր երկրի սահմաններում կատարուած ցեղասպանութեան զոհերի համար յարմար չի գտնում ցաւակցական գէթ մի բառ ասել:

ՊԵՐՃ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ

*
* *

Ղարաբաղեան իրադարձութիւնների եւ սումգայիթեան ոճրագործութեան մասին կենտրոնական մամուլում ինչ անլուրջ բաներ ասես, որ չտպագրուեցին, իսկ մեր գրողական խօսքը շատ ուշացումով յայտնուեց հանրապետական մամուլում: ՍՍՀՄ գրողների վերջին պլենումում, որ քննում էր ազգային յարաբերութիւնների խնդիրը, ցաւօք սրտի, վերոյիշեալ ողբերգական անցքերի մասին չհնչեց (խորհուրդ էին տուել, չյիշատակել) հայ գրողի՝ ճշմարտութիւնը բացայայտողի խօսքը («Գրական թերթ», 1988, *թիւ* 44):

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼԻՏՈՆԵԱՆ

*
* *

Հայուհիները իրենց տօնը՝ Մարտի 8ը ե՛ւ ինքնավար մարզում, ե՛ւ Հայաստանում, ագի օր յայտարարեցին, ծաղիկներ ստանալու փոխարէն ծաղիկներ տարան:

Հարիւր հազարաւոր հայուհիներ՝ հարիւր հազարաւոր սգոյ ծաղիկներ:

Իսկ ցաւակցական ոչ մի հեռագիր, կարեկցանքի ոչ մի խօսք նրանք չստացան, չլսեցին («*Գարուն*», 1988, թիւ 5):

ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

*
* *

Երկարաձգուող անբարոյութիւնը ծնում է այնպիսի իրավիճակներ, երբ հնարաւոր է միայն ընտրուի մարդասիրութիւն, կիսատ-պռատ գրութիւն, երբ մի գոյգ կէտերի վրայ ութիւնը աւելի է կարեւորւում, քան ցաւը մի ժողովրդի, որի զաւակները չարժանացան անգամ պաշտօնական ցաւակցութեան («Գրական թերթ», *1988, թիւ 48*):

ՏԻԳՐԱՆ ԽԶՄԱԼԵԱՆ

*
* *

... Սումգայիթից յետոյ, ինչպէ՞ս պիտի յարաբերութիւններ վերատեղծուեն այդպիսի մի ժողովրդի հետ, եթէ այդ ժողովուրդը, նրա մտաւորականութիւնը, նրա գրողները — մենք սա բնդգծում ենք — երկու բառ չգտան ո՛չ միայն ցաւակցելու կամ կարեկցելու, այլեւ՝ նոյնիսկ զղջման համար («*Գրական թերթ*», 1989, թիւ 11):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հասատանդական թէ ամբոխական փաստերու չարքը հոս չի վերջանար, բայց պէտք է ապիւս վերջակէտ մը դնել անոնց, այն հասատատ համոզումով, որ ազատագրուածները գրեթէ ամբոխական գազափար մը կու տան բնդհանրապէս ներգաղթած հայերուն վրայ գգծագրուած ատելիներուն ապանդին եւ ատելիանալու թեամբ անուած Սումգայիթի ամբոխագործներուն արիւնոտ արարքներուն մասին, որոնք իՀնչ հեղնանք, խաւարեցան «Սովիատական ազատ աշխարհ Հայաստան»ի երկինքին տակ եւ հակատակ իրենց անատարկելի իրականութեան, անբմբռնելի պիտի մնան այսօրուան մարդուն թէ գոգիր բոլոր ազատ ոգիներուն...

Կարմիր գորգերը, թագուհիներու ոտքերուն տակ մեզ վիրաւորեցին միայն։

Ինչ է հիմարութիւնը ապուշ, եթէ անիկա ունենալու կերպը պիտի չգտնուի։

Մարդկութիւնը ճարտարութիւնով չափ երջանկացած է իր ներքին ապուշութիւնովը։

Փարիզ սիրայ մեզ պարզով — Անիկա մեզի տուն բարեացիութիւն է, որուն պէտք ունի աշխարհ։

Բոլոր գիրքերուն ինձի համար կը նկատեմ, եւ կ՚ցաւիս երբ գիտնաս՝ ինչպէս որ են։

ԺԱՆ ԺԻՐՈՒԱՆ

Հանգուցեալին երկու Մեծ պատերազմներուն միջեւ ինկած ժամանակուան ամէն մէջ, ան փորձաւոր էր հանդիսանալ Ֆրանսական Քառանկիւնիին ամէնէն ակնկալելի մէջը։ Արդէն առնչուելու մեզի բուն թանգագնահատելի գիրքերուն ենթադրելի է, Լեւ Փոլ մեզի մինչեւ ժան Ժիրաւ ու ասոյգերկրի նորագոյն ներկայացուցիչներու։ Պատ Ֆրանսայի գրականութիւնն, որ արիւնաբուխ մը եղ, փարիզեցիներ, ինչպէս մեզի ամենէն ու երկիրներու թեան փաշատակ մնացեր իրենց ենք, որ մնացած հայերով մը ոժտուած կը պատեն ժիրաւոյի գործերը, մանաւանդ անոր գրաքննադատները, որոնցմէ մեկը կը համարուի Հարպոյ էջերու թարգմանարար ներկայացումը «Տրոյական պատերազմ-ասելի պիտի չտեղեայ» բառերուն խորը։

Ժան Ժիրաւու ծնած է 1882ին, Պլաֆի մէջ։ Նախնական կրթութիւնը տեղացի վրայ ստանալէ ետք, ուսումը կը շարունակէ յաջողապէս Շանթարի եւ Լոքանսի լիսէներուն մէջ։ Իսկ 1909ին կը սկսի յանախել Էքոլ Նորմալ Սիւպիրիէր, ուր թ մինչ ապրող կը հանդիսանայ դասընկերներուն։

Հանգուցեալին Առաջին Մեծ պատերազմի նախաշեմին կը գրաւէր թ եւ իրրեւ յիսնապետ կը մասնակցի գիտնական գրաքննադատ Հանրիսոնանդրանի։ Կը տառապէր երկու վերք ստանալ մը անկողնոյ կը ծառայէ, իսկ պատերազմի ու ապրելն, գրաքննադատ ասոյգերեր՝ կը փորձի նաեւ գիրանդիսական գրաշնորհներուն։

Փամանակակից նիւթերու վերաբերեալ կատարուած իր հետազոտութիւնները բոլոր թ վերջ՝ ժիրաւու իր գործերուն մէկ կարեւոր մասերն ասոյգերս ասած է Ներսոյանին, ինչպէս նաեւ յանդուն ու գեղանական ասոյգերներուն, յաջողելով միշտ հանդարտիլ մեզ հետաքրքրող գրական ոճերը ինքնայատուկ ոճ աշխատանքներ թեւաղրելով, նաեւ իր Հաշակով ու մաքի մեկ նոր գիտնական վերանորոգած արտահայտութիւնի իր ճանապարհը։

Լաւագոյնս տարբերակուած գիրքերուն թատերական ասոյգերը մասաց գործած ժիրաւուի ոճը ասոյգնաւորապէս կը սկսի ազդեցիկ երանգներ առնալ, մանաւանդ 1933ին ետք, երբ Հիպիրեական Գերմանիան սկսաւ մանացու սպառնալիք մը դարձնել Եւրոպայի համար։ Այս կապակցութեամբ բարացուցիչ օրինակ մըն է «Տրոյական պատերազմը», որ միաժամանակ կ՚անդրադարձուի չյան ու մարդկային ապատութեան թ թեզիր չդիմադրելուն համար ժիրաւուի գիրքերուն։

Ժան Ժիրաւու կը մեռնի 1944ին, առանց ցաւելու տեսնելու Ֆրանսայի ազատագրութիւնը գերման գրաւումէն։

ԺԱՆ ԺԻՐՈՏՈՒ

ՏՐՈՎԱԴԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ԶՈՒՆԵՆԱՅ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԷՔԻԻՊ, ԱՆՏՐՈՄԱՔ, ՔԱՍԱՆՏՐ, ՀԵՔԹՈՐ, ՓԱՐԻՍ, ՏԷՄՈՔՈՍ, ՓՈՔՐԻԿՆ ՓՈԼԻՔՍԷՆ ԵՒ ԵՐԿՐԱՉԱՓԸ

ՓՐԻԱՄ.— Ի՞նչ կ'բսէիր:

ՀԵՔԹՈՐ.— Կ'բսէի, որ մենք ոչէր է անհարարենք փակել պատերազմի դարպասները, կդպել գանոնք այնպէս՝ որ նոյնիսկ ճանճ չկարենայ անցնիլ անոնց մէջէն:

ՓՐԻԱՄ.— Խորհեցայ, թէ բսածդ աւելի կարճ էր:

ՏԷՄՈՔՈՍ.— Կ'բսէր, թէ Հելլէնը զինք չի հետաքրքրեր:

ՓՐԻԱՄ.— Հոս նայէ: (Հեքթոր կը հնազանդի): Կը տեսնե՞ս զինք:

ՀԷՔԻԻՊ.— Այո, իսկապէս կը տեսնէ զինք: Ո՞վ, կ'բսեմ իրրովի, չի տեսներ կամ չէ տեսած զայն: Ան մեր շուրջը կը դառնայ:

ՏԷՄՈՔՈՍ.— Գեղեցկութեան շուրջպարն է ան:

ՓՐԻԱՄ.— Տեսա՞ր զինք:

ՀԵՔԹՈՐ.— Այո, տեսայ: Վե՞րջը:

ՏԷՄՈՔՈՍ.— Փրիամը կ'ուզէ գիտնալ, թէ ի՞նչ տեսար:

ՀԵՔԹՈՐ.— Տեսայ մանկամարդ կին մը, որ կօշիկները կը յարդարէր:

ՔԱՍԱՆՏՐ.— Ան բաւական շատ ժամանակ կը յատկացնէ կօշիկներուն:

ՓԱՐԻՍ.— Ես գինք մերկ բերի հոս. հագուստները Ցունասան ձգեց: Իր գործածած կօշիկները, Քասանտր, քու կօշիկներդ էն: Անոնք քիչ մը մեծ էն իր ոտքին:

ՔԱՍԱՆՏՐ.— Ամէն ինչ մեծ է գեղահաս կիներուն համար:

ՀԵՔԹՈՐ.— Երկու սիրուն յիսոյք կը տեսնեմ:

ՀԷՔԻԻՊ.— Հեքթորը կը տեսնէ ձեր բոլորին տեսածը:

ՓՐԻԱՄ.— Խե՜ղճ զաւակս:

ՀԵՔԹՈՐ.— Ի՞նչ:

ՏԷՄՈՔՈՍ.— Փրիամ քեզ կը կոչէ «խե՜ղճ զաւակս»:

ՓՐԻԱՄ.— Այո, չէի գիտեր, որ Տրովադայի երիտասարդութիւնը այս աստիճանին հասած է:

ՀԵՔԹՈՐ.— Այսինքն ո՞ր աստիճանին:

ՓՐԻԱՄ.— Գեղեցկութիւնը անգիտանալու աստիճանին:

ՏԷՄՈՔՈՍ.— Հետեւարար նաեւ սէրը անգիտանալու աստիճանին: Իրապաշտութեան, ուրիշ ի՛նչ: Մենք՝ բանաստեղծներս, ատիկա կը կոչենք իրապաշտութիւն:

ՀԵՔԹՈՐ.— Իսկ Տրոմադայի ծերերը գեղեցկութեան ու սիրոյ բարձունքնե-ր՞ն կը գտնուին:

ՀԷՔԻԻԳ.— Այդ է օրէնքը: Միայն սիրողներն ու գեղեցիկները չեն, որ կը հասկնան սիրոյ եւ գեղեցկութեան արժէքը:

ՀԵՔԹՈՐ.— Գեղեցկութիւնը շատ ընթացիկ յատկանիշ մըն է, հա՛յր: Ես Հելէնը նկատի չունիմ, երբ կ՚ըսեմ, որ գեղեցկութիւնը կը վխտայ փողոցներուն մէջ:

ՓՐԻԱՄ.— Հէքթոր, ինքզինքդ մի խաբեր: Զէ՞ պատահած, որ կնոջ կերպարանքով քեզի ներկայացած էակը միայն կին մը ըլլալու փոխարէն՝ ըլլայ գաղափարներու եւ յոյզերու հոսք մը՝ անոր միսերուն փայլքով:

ՏԷՄՈՔՈՍ.— Այնպէս՝ ինչպէս սուտակը կ՚անձնաւորէ արիւնը:

ՀԵՔԹՈՐ.— Ո՛չ անոնց համար, որ արիւն տեսած են: Ես նոր միայն հասկցայ ատիկա:

ՏԷՄՈՔՈՍ.— Մենք պարզապէս խորհրդանշան մը յիշեցինք: Իրրեւ զինուոր՝ դուն պէտք է լսած ըլլաս խորհրդանշաններու մասին: Դուն հանդիպած ըլլալու ես կիներու, որոնք ո՛րքան հեռուէն դիտես, ա՛յնքան աւելի կը թուին անձնաւորել բանականութիւնը, ներդաշնակութիւնը եւ հեզութիւնը: Այդպէս չէ՞:

ՀԵՔԹՈՐ.— Այո, հանդիպած եմ:

ՏԷՄՈՔՈՍ.— Ի՞նչ կ՚ընէիր նման պարագաներու:

ՀԵՔԹՈՐ.— Կը մօտենայի եւ վերջ...: Իսկ հոս մեր տեսածը ի՞նչ կ՚անձնաւորէ:

ՏԷՄՈՔՈՍ.— Արդէն ըսինք,— գեղեցկութիւնը:

ՀԷՔԻԻԳ.— Ուրեմն՝ չուտով վերադարձուցէք Հելէնը յոյներուն, եթէ կ՚ուզէք, որ ան երկար ժամանակ անձնաւորէ գեղեցկութիւնը: Ի վերջոյ խարտիշահեր կիներուն գեղեցկութիւնը մնայուն չէ:

ՏԷՄՈՔՈՍ.— Անկարելի է խօսիլ խարտիշահեր կիներու հետ:

ՀԷՔԻԻԳ.— Ուրեմն՝ կիներու մասին մի խօսիք: Ամէն պարագայի՝ դուք ո՛չ կնամեծար էք, ոչ ալ հայրենասէր: Միւս բոլոր ցեղերը իրրեւ խորհրդանշան կ՚ընտրեն իրենց հարազատ կիներէն մէկը, որ կրնայ գեղեցիկ ըլլալ կամ տգեղ: Միայն դուք էք, որ այդ խորհրդանշանը փնտռած էք ձեր երկրէն դուրս:

ՀԵՔԹՈՐ.— Հա՛յր, իմ ընկերներս եւ ես հայրամաչ վերադարձանք պատերազմէն: Մեր հոգամասը օժտեցինք մնայուն խաղաղութեամբ եւ կ՚ուզենք այսու հետեւ երջանիկ ապրիլ եւ կ՚ուզենք նաեւ, որ մեր կիները կարողանան մեզ սիրել առանց անձկութեան, միաժամանակ առանց անձկութեան ծնունդ տալ մեր զաւակներուն:

ՏԷՄՈՔՈՍ.— Իմաստուն սկզբունքներ, բայց պատերազմը երբեք արգելք չէ եղած կիներուն զաւակ ունենալու:

ՀԵՔԹՈՐ.— Ըսէ ինծի, թէ ինչու Հելէնի մը պատճառով կերպարանափոխուած է մեր քաղաքը: Ի՞նչ բերած է ան մեզի, որ արժէր գժտուիլ յոյներուն հետ:

ԵՐԿՐԱՉԱՓԸ.— Պատճառը ամէն ոք կրնայ ըսել քեզի, նոյնիսկ ես:

ՀԷՔԻԻԳ.— Մտիկ ըրէք երկրաչափը:

ԵՐԿՐԱՉԱՓԸ.— Այո, մտիկ ըրէք: Չկարծէք, որ երկրաչափները կապ չունին կիներուն հետ: Երկրաչափները կրնան ձեր կերպարանքները չափել: Չեմ կրնար ըսել, թէ անոնք որքան կը տառապին ձեր սրունքներուն աւելորդ հաստութենէն կամ ձեր վիզերուն թանձրութենէն...: Երկրաչափները մինչեւ այսօր գոհ չեն Տրոմադայի սահմաններէն: Դիւրաբեկ կը թուի իրենց դաշտագետիններուն ու բլուրներուն միացման կէտը, եւ ամուր՝ բլուրներուն ու լեռներուն սահմանագիծը

Հելլէնին ժամանումէն ի վեր դաշտանկարը ստացաւ իր իմաստն ու ամբողջութիւնը: Միջոցին ու տարածութեան մէջ հասարակաց միակ կէտը Հելլէնն է, որ մասնաւորապէս խոովիչ երեւոյթ է ճշմարիտ երկրաչափներուն համար: Այս երեւոյթը մահն է՝ տիեզերքը պզտիկցնելու համար մարդոց կողմէ հնարուած բոլոր գործիքներուն: Մեթր, կրամ եւ մզոն գոյութիւն չունին այլեւս: Կայ միայն Հելլէնին քայլածքը, արմուկը, հայեացքը, ձայնը: Եւ կայ իր անցքին եղանակը, որ հովերուն կշռոյթն է: Ան մեր ծանրաչափն է, հովը չափող գործիքը: Ահա թէ ի՞նչ կ'ըսեն ձեզի երկրաչափները:

ՀԷՔԻԻՊ.— Արդէն կու լայ:

ՓՐԻԱՄ.— Սիրելի գաւակս, պարզօրէն այդ ամբոխը դիտելով պիտի հասկնաս, թէ ինչ կը ներկայացնէ Հելլէնը: Կարծես բացարձակ նշանակութիւն մը ունի ան: Զինք ուշադիր դիտող ծերունիները, որոնց մէջ անպայման կան առեւանգիչներ, գողեր ու իրենց կեանքը դուր վատնած ուրիշներ, այդ կեցուածքով իսկ կը հաստատեն, որ իրենց հոգիին ունին գեղեցկութեան ծածուկ պահանջ մը: Եթէ գեղեցկութիւնը մօտ ըլլար անոնց, ինչպէս անիկա մօտ է այսօր Հելլէնին, իրենց ընկերները պիտի չկողոպտէին, պիտի չվաճառէին իրենց աղջիկները, ոչ ալ պիտի մսխէին իրենց ժառանգութիւնը: Հելլէնը իրենց արդարացումն է, վրէժխնդրութիւնն է ու ապագան:

ՀԵՔԹՈՐ.— Ծերունիներուն ապագան կիս չի հետաքրքրեր:

ՏԷՄՈՔՈՍ.— Հեքթո՛ր, ես բանաստեղծ եմ եւ երեւոյթներուն կը մօտենամ բանաստեղծական չափանիշներով: Ենթադրէ, որ մեր բառերը բանաստեղծութեամբ չեն թաթախուած: Ենթադրէ, որ «հմայք» բառը գոյութիւն չունի:

ՀԵՔԹՈՐ.— Ոչինչ, կրնայինք չգործածել զայն: Ես արդէն իսկ հրաժարած եմ այդ բառէն: Շատ ստիպողական պարագաներու միայն կը դիմեմ անոր:

ՏԷՄՈՔՈՍ.— Այո: Անկասկած պիտի հրաժարէիր նաեւ «հեշտանք» բառէն:

ՀԵՔԹՈՐ.— Եթէ կարելի ըլլար այդ հրաժարումով կանխել պատերազմը՝ անպայմա՛ն:

ՏԷՄՈՔՈՍ.— Ամէնէն գեղեցիկ բառերէն մէկը՝ «քաջութիւն»ը գտնուած է պատերազմին պատճառով:

ՀԵՔԹՈՐ.— Բայց ատիկա շատ սուղ արժեց մարդկութեան:

ՀԷՔԻԻՊ.— «Վատութիւն» բառը նոյնպէս գտնուած է պատերազմներու ընթացքին:

ՓՐԻԱՄ.— Տղա՛ս, ինչո՞ւ կը յամառիս մեզ չհասկնալ:

ՀԵՔԹՈՐ.— Շատ լաւ կը հասկնամ ձեզ: Անհասկացողութեան մը հիմամբ կը ձեւացնէք, որ մեզ պատերազմի կը դրդէք յանուն գեղեցկութեան, մինչդեռ մեզ այդ արիւնահեղութեան կը մղէք կնոջ մը սիրոյն:

ՓՐԻԱՄ.— Եւ դուն ուզէ՞ կնոջ համար յանձն չես առնել պատերազմիլ:

ՀԵՔԹՈՐ.— Անչո՛ւշտ ոչ:

ՀԷՔԻԻՊ.— Եւ շատ ալ իրաւունք կ'ունենար:

ՔԱՍԱՆՏՐ.— Եթէ միայն մէկ կին ըլլար, այն ատեն թերեւս պատերազմ մղէր անոր սիրոյն:

ՏԷՄՈՔՈՍ.— Նոյնիսկ Անտրոմա՞քը ազատելու համար պատերազմ պիտի չմղէիր:

ՀԵՔԹՈՐ.— Անտրոմաքն ու ես արդէն շատոնց համաձայնած ենք որեւէ բանէ ազատելու եւ դարձեալ միանալու գաղտնի միջոցներուն մասին:

ՏԷՄՈՔՈՍ.— Միանալո՞ւ համար: Եթէ նոյնիսկ ամէն յոյս կորսուա՞ծ է:

ՀԵՔԹՈՐ.— Նոյնիսկ ա՛յդ պարագային:

ՀԷՔԻԻԳ.— Դուն լաւ ըրիր, որ զանոնք դիմակազերծեցիր, Հեքթոր: Կնոջ մը համար կ՚ուզէին պատերազմ բնել անոնք: Ատիկա անկարող մարդոց սիրելու եղանակն է:

ՏԷՄՈՔՈՍ.— Իսկ այդ մէկը արդեօք աւելի արժէք չի՞ տար ձեզի:

ՀԷՔԻԻԳ.— Ա՜հ, այո՛, կրնանք այդպէս ըսել:

ՏԷՄՈՔՈՍ.— Կը ներես, որ քու տեսակէտդ չրաժնեմ: Ես պիտի չարունակեմ յարգել նոյնիսկ ամենայետին ներկայացուցիչը ա՛յն սեռին, որուն մայրս կը պատկանի:

ՀԷՔԻԻԳ.— Այդ մէկը ծանօթ իրողութիւն է: Դուն արդէն, ինչպէս գիտենք, անգամ մը մատուցած ես յարգանքդ անոր...

(Սպասուհիները, որոնք ներս մտած էին, ի լուր վիճաբանութեան, բարձրաձայն կը բրբջան):

ՓՐԻԱՄ.— Հէքի՜ւպ, աղջիկնե՜ր: Ի՞նչ կը նշանակէ կանանոցային այս ըմբոստութիւնը: Խորհուրդս կը մտածէ, թէ արդեօք կ՚արժէ՞ ձեզմէ մէկուն համար քաղաքը վտանգի տակ դնել: Եւ դուք ձեզ անարգուա՞ծ կը զգաք սաոր համար:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Մէկ նուաստութիւն կայ միայն կնոջ մը համար, այն ալ անարդարութիւնն է:

ՏԷՄՈՔՈՍ.— Իրապէս ցաւալի է հաստատել, որ կիները վերջիններն են, որ կրնան ճանչնալ, թէ ինչ է կինը:

ՄԱՆԿԱՄԱՐԴ ՍԳԱՍՈՒՀԻՆ (որ մօտէն կ՚անցնի).— Օ՛, լա՜, լա՜:

ՀԷՔԻԻԳ.— Կիները չատ լաւ կը ճանչնան կինը: Ես ձեզի կ՚ըսեմ, թէ ինչ է կինը:

ՏԷՄՈՔՈՍ.— Փրիամ, մի՛ ձգեր, որ խօսին: Կարելի չէ դուշակել, թէ ինչ կրնան ըսել անոնք:

ՀԷՔԻԻԳ.— Կրնան ճշմարտութիւնը ըսել:

ՓՐԻԱՄ.— Ձեզմէ միայն մէկուն մասին մտածելով, ես կրնամ հաւանել, թէ ինչ է կին մը:

ՏԷՄՈՔՈՍ.— Առաջին. ան մեր կորովին աղբիւրն է: Դուն ատիկա չատ լաւ գիտես, Հեքթոր: Այն գինուորները, որոնք իրենց պայուսակներուն մէջ չունին կնոջ մը պատկերը՝ ոչինչ կ՚արժեն:

ՔԱՍԱՆՏՐ.— Այո, զուրկ կ՚ըլլան ձեր ունեցած հպարտութենէն:

ՀԷՔԻԻԳ.— Ձեր մոլութիւններէն:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Այդ խառնուածքի տէր մարդը կոյտ մըն է անորոշութիւններու, վախի դէզ մը, որ կ՚ատէ ինչ որ դժուար է, եւ կը պաշտէ՝ ինչ որ գոեհիկ է եւ դիւրին:

ՀԵՔԹՈՐ.— Սիրելի Անտրոմաք:

ՀԷՔԻԻԳ.— Շատ պարզ է: Ահաւասիկ ես յիսուն տարեկան կին մըն եմ եւ դեռ լրիւ չեմ կրցած հասկնալ, թէ ինչ էի ցարդ:

ՏԷՄՈՔՈՍ.— Երկրորդ. ընդունիս թէ ոչ՝ ան միակ աղբիւրն է քաջութեան...: Եթէ կ՚ուզէք ըսուածը հաստատել, հարցուցէք ամենախոնարհ զինուորին: Մարդ մը սպաննել՝ կը նշանակէ արժանի ըլլալ կնոջ մը սիրոյն:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Կինը կը սիրէ վատը, ստահակը: Եթէ Հեքթոր վատ ու ստահակ ըլլար՝ նուազ պիտի չսիրէի զինք: Թերեւս ալ աւելի՛:

ՓՐԻԱՄ.— Շատ հեռուն մի երթար, Անտրոմա՛ք: Կրնաս ուզածիդ ճիշդ հակառակը ապացուցանել:

ՓՈՔՐԻԿՆ ՓՈԼԻՔՍԷՆ.— Ան չատակեր է: Կը սուէ:

ՏԷՄՈՔՈՍ.— Բայց մենք կը մոռնանք խօսիլ մարդկային կեանքի լաւ կողմե-

բուն մասին, օրինակ, հաւատարմութեան ու անարատութեան մասին։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Օ՛, յա՜, յա՜։

ՏԷՄՈՔՈՍ.— Ի՞նչ ասել կ՚ուզես։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Ըսի՝ օ՛, յա՜, յա՜։ Ըսի՝ ինչ որ կը մտածեմ։

ՓՈՔՐԻԿՆ ՓՈԼԻՔՍԷՆ.— Ան իր խաղալիքները կը կոտրէ։ Խաղալիքներուն գլուխները կը մխրճէ եռացող ջուրին մէջ։

ՀԷՔԻԻՊ.— Մենք՝ կիներս, ո՛րքան ծերանանք՝ ա՛յնքան յստակօրէն կը հասկրնանք, թէ որքան կեղծաւոր, ինքնահաւան եւ վայրագ անասուններ եղած են մարդերը։ Իսկ որքան մարդիկ իրե՛նք ծերանան, ա՛յնքան աւելի կը սկսին մեզ գարդարել բոլոր առաւելութիւններով։ Զկայ պատերու եւին պահուրտած սպասուհի մը, որ ձեր յիշողութեան մէջ վերածուած չըլլայ սիրոյ խորհրդանշանի մը։

ՓՐԻԱՄ.— Դուն ինծի բնաւ դաւաճանա՞ծ ես։

ՀԷՔԻԻՊ.— Դաւաճանած եմ միա՛յն քեզի հետ, քո՛ւ հաշուոյդ, բայց հարիւր անգամ։

ՏԷՄՈՔՈՍ.— Անտրոմաքը դաւաճանա՞ծ է Հեքթորին։

ՀԷՔԻԻՊ.— Հանդիսաւ ձգէ Անտրոմաքը։ Ան որեւէ կապ չունի կիներու պատմութիւններուն հետ։

ԱՆՏՐՈՄԱՔ.— Եթէ Հեքթոր իմ ամուսինս եղած չըլլար, ամուսինիս կը դաւաճանէի Հեքթորին համար։ Եթէ նոյնիսկ կաղ կամ սրունքը ծուռ ըլլար՝ կը հետեւէի իրեն մինչեւ իր հիւղակը։ Կ՚երկննայի խխունջներու խեցիներուն եւ մամուռներուն վրայ։ Իրմէ կ՚ունենայի ապօրինի դաւակ մը։

ՓՈՔՐԻԿՆ ՓՈԼԻՔՍԷՆ.— Աչքերը կը գոցէ, բայց չի քնանար, եւ այդ խաղով կը զուարճանայ ամբողջ գիշերը։

ՀԷՔԻԻՊ (Փոլիքսէնին).— Այո, դուն կրնաս այդ մասին խօսիլ։ Սարսափելի է։ Ես պէտք է նորէն հոն տանիմ քեզ։

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Երիկմարդէն աւելի վատ բան չկայ այս աշխարհին մէջ։ Բայց կի՛նը…

ՏԷՄՈՔՈՍ.— Որո՞ւն հոգը, որ կինը կը դաւաճանէ մեզի։ Որո՞ւն հոգը, եթէ նոյնիսկ ինք կ՚ատէ իր արժանաւորութիւնն ու արժէքը։ Քանի որ ան չի կրնար իր մէջ պահել զինք ամուր պահող եւ հոգիին կնճիռները ջնջող այն խաղալիքան կերպարը, մեզի կը մնայ ուր կանգնիլ իրեն …

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Ահ, դուն, պահապան հրեշտա՜կ։

ՓԱՐԻՍ.— Մէկ բան կը մոռնան ըսելու, որ նախանձոտ չեն։

ՓՐԻԱՄ.— Սիրելի աղջիկներս, ձեր ըմբոստութիւնն իսկ կը վկայէ, որ մենք իրաւունք ունինք։ Կայ աւելի մեծ վեհանձնութիւն մը, որ այս շրջանին ձեզ կը մղէ պայքարելու խաղաղութեան համար, խաղաղութիւնը, որ ձեզի պիտի տայ թոյլ, անզբաղ, խուսափուկ ամուսիններ, երբ պատերազմը դանոնք կրնայ մարդ դարձնել ձեզի համար…

ՏԷՄՈՔՈՍ.— Հերոսնե՛ր…

ՀԷՔԻԻՊ.— Այդ բառերը ծանօթ են մեզի։ Պատերազմի ժամանակ ամէն մարդ հերոս կը յորջորջուի։ Կրնայ ամենաքաջը չըլլալ, եւ խուճապահար խոյս տալ, բայց բոլոր պարագաներուն կը մնայ հերոս։

ԱՆՏՐՈՄԱՔ.— Կ՚ապաչե՛մ, հա՛յր։ Եթէ կիներուն հանդէպ համարում ունիք, իմ ձայնիս մէջէն մտիկ ըրէք աշխարհի բոլոր կիներուն խօսքը։ Զգեցէք, որ ձեր ամուսինները մնան այնպէս՝ ինչպէս որ են։ Որպէսզի անոնք պահեն իրենց ճկունութիւնն ու քաջութիւնը, ատամ ածները

ստեղծած են ողջ կամ մեռած բազմաթիւ ուժեր, խոշընդոտներ ու վտանգներ, գանոնք քաջ եւ ուժեղ պահելու համար, բացառելով, անշուշտ, հեղեղները, ամպրոպները, գազանները: Այնքան ատեն, որ գոյութիւն ունին գայլեր, փիղեր, ինձեր՝ մարդը աւելի լաւ պիտի եւ աւելի լաւ հակառակորդ պիտի ըլլայ իր նմանին: Մեր շուրջը թեւածող բոլոր այս մեծ թռչունները, այս նռգաստակները, որոնց փետուրներն ու մուշտակը մենք՝ կիներս, կը շփոթենք ցախերու հետ, մեր ամուսիններուն սուր տեսողութեան աւելի լաւ գրաւականներ են, քան միւս թիրախը, որ թշնամիին սիրտն է՝ բանտուած իր գրահին ետին: Ամէն անգամ, որ տեսած եմ արծիւի մը կամ եղջերուի մը հոգեվարքը, շնորհակալութիւն յայտնած եմ սպաննողին: Գիտեմ, որ անոնք կը սպաննուին Հեքթորին համար: Ինչո՞ւ կը պահանջէք ինձմէ, որ Հեքթորը համարեմ ուրիշ մարդոց մահուան պատճառը:

ՓՐԻԱՄ.— Այդ չէ իմ ուզածս, սիրելիս: Բայց դուք կիտէ՞ք, թէ ինչու հոս էք: Դուք ամէնքդ, որ այնքան կեղեցիկ էք ու արի: Գիտէ՞ք ինչու: Որովհետեւ ձեր ամուսինները, ձեր հայրերը, ձեր պապերը, բոլո՛ւրն ալ մարտիկ եղած են: Եթէ անոնք անտարբեր եղած ըլլային զէնքերու հանդէպ, եթէ չգիտնային, որ կեանք ըսուածը այն տպտկալի եւ յիմար գրաղումն է, որ յանկարծ ինքզինք կը զգացնէ եւ կը պայծառանայ աշխարհին հանդէպ ունեցած մարդոց ատելութեամբ, այն ատեն դուք վատեր պիտի ըլլայիք եւ դո՛ւք պիտի պահանջէիք պատերազմը: Այս կեանքին մէջ անմահանալու երկու ձեւ չկայ: Մէկ ձեւ կայ միայն,— մոռնալ, որ մահկանացու ես:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Օ՜, արդարեւ, հա՛յր: Դուք շատ լաւ գիտէք ատիկա: Քաջերն են, որ կը մեռնին պատերազմի դաշտին վրայ: Մեծ բախտ մը կամ նախզգուշութիւն մը անհրաժեշտ է չսպաննուելու համար: Պէտք է վտանգին առջեւ գլուխ ծռել կամ ծունկի գալ գոնէ՛ մէկ անգամ: Ցաղթանակի կամուրջներուն տակէն տոզանցող զինուորները անոնք են յաճախ, որ խոյս տուած են մահէն: Ինչպէ՞ս երկիր մը կրնայ պատուով եւ քաջութեամբ յաղթանակ տանիլ՝ կորսնցնելով այդ երկուքը:

ՓՐԻԱՄ.— Ազջիկս, ժողովուրդի մը վատութեան առաջին նշանը անոր անկման առաջին վայրկեանն է:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ի՞նչ է յոռեգոյն վատութիւնը: Ուրիշներու վատ երեւալ եւ ապահովել խաղաղութի՞ւնը, թէ ինքզինքին հանդէպ վատ ըլլալ եւ պատերազմ հրահրել:

ՏԷՄՈՔՈՍ.— Վատ է այն մարդը, որ միւս մահերէն գերադաս չի համարեր հայրենիքին համար մեռնելու պատիւը:

ՀԷՔԻԻՊ.— Կը սպասէի, որ այս մտածումով բանաստեղծութիւն մը հիւսես: Անիկա ունի այդ հնարաւորութիւնը:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Մարդ միշտ կը մեռնի իր երկրին համար: Երբ հոն ապրած ենք արժանաւորութեամբ, աշխատելն ու իմաստուն կերպով՝ պարտեալ կը մեռնինք անոր համար: Մեռելները հանդիստ չեն ըներ հողին տակ, Փրիա՛մ: Հողին տակ անոնք չեն ոչնչանար՝ յաւիտենական հանգիստ մը ապահովելու համար: Զեն վերածուիր հողակոյտերու եւ միսի: Հողին տակ մեր գտած մարդկային ամէն ոսկրակոյտի մօտ՝ անպայման կը տեսնենք սուր մը: Անիկա հողին ոսկորն է, ամուլ ոսկոր մը: Այսինքն՝ զինուորի մը ոսկորը:

ՀԷՔԻԻՊ.— Այն ատեն թող միայն ծերունիները զինուոր ըլլան: Երկիր մը երիտասարդութեան երկիրն է. եւ երբ անոր երիտասարդութիւնը մեռնի՝ ինք եւս կը մեռնի երիտասարդութեան հետ:

ՏԷՄՈՔՈՍ.— Երիտասարդութեան մասին այս բառածները իմաստ չունին: Երեսուն տարիէն երիտասարդութիւնը պիտի վերածուի այս ծերունիներուն, որոնց մասին կը խօսինք:

ՔԱՍԱՆՏՐ.— Կը սխալիս:

ՀԷՔԻԻՊ.— Կը սխալի՞ս: Երբ մարդը կը մօտենայ իր քառասունին, գայն արդէն ծեր կը համարենք, ուրիշ խօսքով՝ ան կը կորսնցնէ իր նախկին կերպը: Երկուքին միջեւ երեւութական կապ մը միայն կը մնայ: Մէկուն մէջ սկսուածը որեւէ ձեւով չի շարունակուիր միւսին մէջ:

ՏԷՄՈՔՈՍ.— Իրրեւ բանաստեղծ փառք մը նուաճելու մտահոգութիւնս դեռեւս կը շարունակուի մէջս, Հէքի՛պ:

ՀԷՔԻԻՊ.— Ճիշդ է: Ցօղացաւդ ալ…

(Դարձեալ սպասուհիներու բարձրաձայն քրքիջներ):

ՀԵՔԹՈՐ.— Եւ դուն, Փարիս, այս բոլորը յուսս մտիկ կ'ընես: Եւ բնաւ մտքդ չ'անցնի՞ր արկածախնդրութիւն մը գտնել՝ ազատելու համար մեզ տարիներու ապերջանկութենէն ու սպանդէն:

ՓԱՐԻՍ.— Ի՞նչ կ'ուզես, որ բսեմ քեզի: Իմ պարապս միջազգային հարց մը է:

ՀԵՔԹՈՐ.— Դուն իրապէս կը սիրե՞ս Հելէնը:

ՔԱՍԱՆՏՐ.— Երկուքը միասին կը ներկայացնեն սիրոյ խորհրդանշանը: Նոյնի՛սկ գիրար սիրելու պէտք չունին այլեւս:

ՓԱՐԻՍ.— Կը պաշտեմ Հելէնը:

ՔԱՍԱՆՏՐ (պատնէշին յենած).— Ահաւասիկ Հելէ՞նը:

ՀԵՔԹՈՐ.— Եթէ գինք համոզեմ, որ նաւով մեկնի՝ կ'ընդունի՞ս:

ՓԱՐԻՍ.— Այո, կ'ընդունիմ:

ՀԵՔԹՈՐ.— Հա՛յր, եթէ Հելէնը ընդունի վերադառնալ Ցունաստան, պիտի փորձէի՞ր բռնի ուժով հոս պահել զինք:

ՓՐԻԱՄ.— Ինչո՞ւ վիճիլ անկարելիին մասին:

ՀԷՔԻԻՊ.— Իսկ ինչո՞ւ անկարելի: Եթէ կիները ձեր ենթադրածին քառորդն են, Հելէնը իր ապատ կամքով կը մեկնի:

ՓԱՐԻՍ.— Հայր, կ'ապաչեմ, որ թոյլ տաք իրեն ուզածը ընել: Հասկցաք հարցը: Երբ խնդիրը Հելէնին վերաբերի, արքայական այս տոհմը անմիջապէս կը վերածուի բարձր քաղքենիներու, արժանի կեսուրի, կեսրայրի եւ տալերու խումբի մը: Բազմանդամ ընտանիքի մը մէջ ես չեմ հանդիպեր աւելի վարկաբեկիչ պաշտօն մը, քան հրապուրիչ գաւակի մը դերը: Ես յոգնած եմ իրենց ակնարկութիւններէն: Կ'ընդունիմ Հեքթորին մարտահրաւէրը:

ՏԷՄՈՔՈՍ.— Հելէնը միայն քեզի չի պատկաներ, Փարիս: Ան կը պատկանի ամբողջ քաղաքին: Մեր ամբողջ երկրին:

ԵՐԿՐԱՉԱՓԻՆ.— Ամբողջ դաշտանկարին:

ՀԷՔԻԻՊ (երկրաչափին).— Դուն յոգ՛:

ՔԱՍԱՆՏՐ.— Ահաւասիկ Հելէ՞նը…

ՀԵՔԹՈՐ.— Հայր, կը խնդրեմ, որ ինծի ձգէք այդ հարցին անօրինուիմ: Մտիկ ըրէք…: Պատերազմին դարպասները փակելու հանդիսութեան կը հրաւիրեն մեզ: Շուտով կը միանամ ձեզի:

ՓՐԻԱՄ.— Փարիս, իրապէ՞ս կ'ընդունիս:

ՓԱՐԻՍ.— Կ'երդնում:

ՓՐԻԱՄ.— Շատ լաւ, թող այդպէս ըլլայ: Եկէք, գաւակներս, երթանք կարգի դնենք պատերազմին դարպասները:

ՔԱՍԱՆՏՐ.— Այդ խե՜ղճ դարպասները: Փակելու համար աւելի իւղ կ'ուզեն, քան բանալու:

(Փրիամ եւ իր հետեւորդները դուրս կ'ելնեն: Տէմոֆոն կը մնայ):

ՀԵՔԹՈՐ.— Ինչի՞ կը սպասես հոս:

ՏԷՄՈՖՈՆ.— Մուսաներուս:

ՀԵՔԹՈՐ.— Ի՞նչ:

ՏԷՄՈՖՈՆ.— Ամէն անգամ, որ Հելէնը երեւի՝ մուսաներս կու գան: Կը ցնորիմ, կը փրփրիմ եւ կը ստեղծագործեմ: Աստուա՜ծ իմ, ահաւասիկ ի՛նքը:

Կ'արտասանէ՝

Գեղեցիկ Հելէն, սպարդացի Հելէն,
Նրբագեղ պարանոցով, վեհագոյն ոգի,
Երբ վերադառնաս դուն Մենելասիդ,
Թող ասուածները պահեն մեզ…

ՀԵՔԹՈՐ.— Տղէրդ վերջացուցիր՝ մեր գանկին մէջ միրճուող մուրճի հարուածներու պէս:

ՏԷՄՈՖՈՆ.— Ստեղծագործական այդ ձեւը իմ ոճս է: Այս ոճով ես կը ստանամ աւելի ապդեցիկ ու հրաշալի արդիւնքներ.

Առանց եկիւղի եկուր Հեքթորին,
Փառքն ու սարսափը Սքամանտրին.
Դուն արդար ես, ան՝ անարդար,
Չի ան բիրտ է, իսկ դուն՝ նրբին…

ՀԵՔԹՈՐ.— Կարտաս՝:

ՏԷՄՈՖՈՆ.— Ինչո՞ւ այդպէս կը նայիս ինծի: Այնպէս կը թուի, թէ դուն պատերազմին չափ կ'ատես բանաստեղծութիւնը:

ՀԵՔԹՈՐ.— Դէ՛հ, բանաստեղծութիւնն ու պատերազմը երկու քոյրեր են:

(Բանաստեղծը կը մեկնի):

ՔԱՍԱՆՏՐ (կը յայտարարէ).— Հելէ՜ն…

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ, ՓԱՐԻՍ, ՀԵՔԹՈՐ

ՓԱՐԻՍ.— Սիրելի Հելէն, ահաւասիկ Հեքթորը: Ան առաջարկներ ունի քեզի: Շատ պարզ առաջարկներ: Կ'ուզէ քեզ վերադարձնել յոյներուն եւ փաստել, որ դուն դիս չես սիրեր… Քեզ առանձին ձգելէս առաջ, ըսէ, որ կը սիրես դիս… Ըսէ քու սիրելիան բառերովդ:

ՀԵԼԷՆ.— Կը պաշտեմ քեզ, սիրելիս:

ՓԱՐԻՍ.— Ըսէ, որ գեղեցիկ էր Յունաստանն քեզ հոս բերող ալիքը:

ՀԵԼԷՆ.— Հոյակապ, հոյակապ՞ ալիք մը… Ի դիպ, ո՞ր ալիքը տեսար դուն, ծովը այնքան խաղաղ էր…

ՓԱՐԻՍ.— Ըսէ, որ կ'ատես Մենելասը…

ՀԵԼԷՆ.— Մենելա՞սը, կ'ատե՞մ զինք:

ՓԱՐԻՍ.— Դեռ չվերջացուցիր… «Եթե երբեք Յունաստան պիտի չվերադառնամ» կրկնէ:

ՀԵԼԷՆ.— Դուն երբեք Յունաստան պիտի չվերադառնաս:

ՓԱՐԻՍ.— Ո՜չ, դուն ի՞նքդ պիտի չվերադառնաս:

ՀԵԼԷՆ.— Անշո՛ւշտ, որքա՜ն ապուշ եմ… Եթե երբեք Յունաստան պիտի չվերադառնամ:

ՓԱՐԻՍ.— Ես չեմ իրեն այդպէս ըսել տուողը…: Կարգը քուկդ է հիմա:
(Փարիս կը մեկնի):

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ, ՀԵՔԹՈՐ

ՀԵՔԹՈՐ.— Գէղեցի՞կ է Ցունասատանը:
ՀԵԼԷՆ.— Փարիսը գեղեցիկ գտաւ զայն:
ՀԵՔԹՈՐ.— Ես կ'ուզեմ գիտնալ, որ Ցունասատանը գեղեցի՞կ է առանց Հելէնի:
ՀԵԼԷՆ.— Շնորհակալ եմ ինձի եղած այդ պատիւին համար:
ՀԵՔԹՈՐ.— Գարգապէս կ'ուզեմ գիտնալ, թէ իրապէս ինչպէ՞ս է Ցունասատանը:
ՀԵԼԷՆ.— Մարմարի վրայ ցրցքնուած թաղաւորներ եւ այծեր:
ՀԵՔԹՈՐ.— Եթէ թաղաւորները ծիրանագեստ են, ու այծերը՝ թաւամազ, անպայման անոնք աւելի գեղեցիկ կ'երեւին ծագող արեւին տակ:
ՀԵԼԷՆ.— Ես կանուխ չեմ արթննար:

ՀԵՔԹՈՐ.— Կ'ենթադրեմ, որ աստուածներ ալ կան, եւ մեծաթիւ, այնպէս չէ՞: Փարիս կ'ըսէ, որ երկինքը այնքան խճողուած է աստուածներով, որ կարելի է տեսնել աստուածուհիներու դուրս մնացած սրունքները:
ՀԵԼԷՆ.— Փարիս միշտ քիթը վեր կը քաշէ: Կրնայ տեսած ըլլալ զանոնք:
ՀԵՔԹՈՐ.— Իսկ դուն ո՞չ:
ՀԵԼԷՆ.— Ես այնքան օժտուած չեմ սուր տեսողութեամբ: Երբեք չեմ կրցած ծովուն մէջ ձուկ մը տեսնել: Երբ Ցունասատան վերադառնամ՝ աւելի լաւ կը դիտեմ:
ՀԵՔԹՈՐ.— Դուն հիմա Փարիսին ըսիր, որ երբեք պիտի չվերադառնաս Ցունասատան:
ՀԵԼԷՆ.— Ադաչեց, որ այդպէս ըսեմ: Կը սիրեմ հնազանդիլ Փարիսին:
ՀԵՔԹՈՐ.— Հասկնալի է: Նոյնն է պարագան Մենելասի համար: Չե՞ս ատեր Մենելասը:

ՀԵԼԷՆ.— Ինչո՞ւ պիտի ատեմ:
ՀԵՔԹՈՐ.— Այն միակ պատճառով, որ ատելութիւն կ'առաջացնէ: Դուն չատ տեսած ես զինք:
ՀԵԼԷՆ.— Մենելա՞սը, օ՜, ո՜չ: Երբեք այնքան լաւ տեսած չեմ զայն, որքան տեսնել բաւոր կը թելադրէ: Ընդհակառակն:
ՀԵՔԹՈՐ.— Քո՞ւ ամուսինդ այդքան լաւ չես տեսած:
ՀԵԼԷՆ.— Կարգ մը առարկաներ եւ կարգ մը մարդեր քոգածածուկ կը ներկայանան: Այդ պիսիները տեսանելի չեն ինձի: Կը հաւատամ անոնց: Երբեք չեմ կրցած լաւ տեսնել Մենելասը:
ՀԵՔԹՈՐ.— Հակառակ անոր, որ երբեմն պէտք է մօտեցած ըլլայ ան քեզի:
ՀԵԼԷՆ.— Կրցած եմ հպիլ Մենելասին: Չեմ կրնար ըսել սակայն, որ տեսած եմ զինք:
ՀԵՔԹՈՐ.— Կ'ըսեն, թէ Մենելաս երբեք չէ հեռացած քեզմէ:
ՀԵԼԷՆ.— Անշո՜ւշտ: Ես ինքս հեռացած եմ իրմէ քանի մը անգամ, եւ ասիկա՝ անգիտակցաբար:
ՀԵՔԹՈՐ.— Փարիսին հետ ունեցած կապերո՞ւդ ընթացքին:
ՀԵԼԷՆ.— Ճիշդ ու ճիշդ, երկինքին եւ արեւուն դիմաց դրուած յատակ շրջապիծի մը պէս:

ՀԵՔԹՈՐ.— Փարիս դեռ կը շարունակէ նոյն կայտառութեամբ մնալ այդ չբրջապիծին մէջ: Տե՛ս, հո՞ն է, պարիսպին կոթնած:

ՀԵԼԷՆ.— Վստա՞հ ես, որ ինքն է:

ՀԵՔԹՈՐ.— Այո, ինքն է եւ քեզի կը սպասէ:

ՀԵԼԷՆ.— Լաւ չի տեսնուիր:

ՀԵՔԹՈՐ.— Պարիսպը սակայն նոր ծեփուած է: Նորէն նայէ, դիմասուերը յստակօրէն կ'երեւի:

ՀԵԼԷՆ.— Հեռաբրբրական է, անոնք՝ որոնք քեզի կը սպասէն, նու ապ լաւ կ'երեւին, քան անոնք՝ որոնց դուն ինքդ կը սպասես:

ՀԵՔԹՈՐ.— Վստա՞հ ես, որ Փարիս կը սիրէ քեզ:

ՀԵԼԷՆ.— Զեմ սիրեր ուրիշներուն զգացումները դիտնալ: Ոչ մէկ բան դիս այդքան կը նեղէ: Խազին մէջ թշնամիին դիրքը գիտնալուն եւ պարտութիւնդ նախօրօք զգալուն կը նմանի:

ՀԵՔԹՈՐ.— Իսկ դուն կը սիրե՞ս զինք:

ՀԵԼԷՆ.— Եւ ոչ ալ կ'ուզեմ ամբողջովին ճանչնալ իմ սեփական զգացումներս:

ՀԵՔԹՈՐ.— Դե՛հ: Երբ կը սիրես Փարիսը եւ ան կը քնանայ բազուկներուդ մէջ, երբ դեռ զրկած է քեզ, լիացած ես անով, որեւէ մտածում չե՞ս ունենար այդ պահերուն:

ՀԵԼԷՆ.— Իմ պարտականութիւնս աւարտած է: Թող իմ տեղս մտածէ աշխարհը, որ աւելի լաւ կը կատարէ այդ դերը:

ՀԵՔԹՈՐ.— Բայց հաճոյքը պէտք է կապէ քեզ մէկու մը, ուրիշներու կամ նոյնինքն քեզի:

ՀԵԼԷՆ.— Ես կը ճանչնամ մա՛նաւանդ ուրիշներուն հաճոյքը…: Ատիկա կը հեռացնէ դիս միս երկուքէն:

ՀԵՔԹՈՐ.— Փարիսէն առաջ ուրիշ չատե՞ր հանդիպած են քեզի:

ՀԵԼԷՆ.— Քանի մը հատ:

ՀԵՔԹՈՐ.— Եւ Փարիսէն նոր անչուշտ ուրիշներ պիտի հանդիպին քեզի, այնպէս չէ՞: Միայն թէ տեսնուին անոնք հոբիգոնին վրայ, կամ պատին կոթնած, կամ անկողինին մէջ: Ենթադրածս ճիշդ դուրս եկաւ: Դուն Փարիսը չես սիրեր, Հելէն, դուն այր մարդերը կը սիրես:

ՀԵԼԷՆ.— Զեմ ատեր զանոնք: Հաճելի է զանոնք մարմինդ մօտեցնել մեծ օճառներու պէս: Այդ արարքէն նոր, մարդ ինքզինք մաքուր եւ թարմ կը զգայ…:

ՀԵՔԹՈՐ.— Քասա՜նար, Քասա՜նար…

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ, ՔԱՍԱՆՏՐ, ՀԵՔԹՈՐ

ՔԱՍԱՆՏՐ.— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզէք:

ՀԵՔԹՈՐ.— Ծիծաղելի կը թուիս: Միշտ վհուկներն են, որ հարցումներ կ'ուղղեն:

ՔԱՍԱՆՏՐ.— Ինչո՞ւ կանչեցիր զիս:

ՀԵՔԹՈՐ.— Քասանար, Հելէնը այս գիշեր պիտի մեկնի յոյն պատուիրակին հետ:

ՀԵԼԷՆ.— Ե՞ս: Ինչո՞ւ այդպէս կը կարծես:

ՀԵՔԹՈՐ.— Դուն չէ՞ր ինծի ըսողը, որ առանձին սէր մը չես տածեր Փարիսի հանդէպ։

ՀԵԼԷՆ.— Դուն այդպէս թարգմանեցիր բառածս։ Այսինքն՝ եթէ այդպէս կ՚ուզես։

ՀԵՔԹՈՐ.— Կը թուեմ իմ հեղինակներս։ Դուն՝ որ կը սիրես մարդերը մեծ օձառներու պէս մարմինիդ մօտեցնել…

ՀԵԼԷՆ.— Այո, թերեւս ալ ծակոտկէն քարը նախընտրելի է։ Յետոյ՝ ի՞նչ…

ՀԵՔԹՈՐ.— Յուսատան վերադառնալուդ, որ հաճելի չի թուիր քեզի, եւ պատերազմին չափ ցաւալի ազէտի մը միջեւ դեռ պիտի վարանէի՞ր ընտրութիւն մը կատարել։

ՀԵԼԷՆ.— Դուն բնաւ գիս չես հասկնար, Հեքթոր։ Ես չեմ վարանիր ընտրութիւն մը ընելու։ Շատ դիւրին պիտի ըլլար ըսել, որ այս մէկը կամ այն մէկը պիտի ընեմ, որպէսզի կիրարկուի այս մէկը կամ այն մէկը։ Դուն գիտցար, որ ես տկար եմ։ Ատոր համար շատ ուրախ ես։ Կնոջ մը տկարութիւնը ճանչցող մարդը կը նմանի կէսօրուան տապին ադրիւր մը գտած որսորդի մը։ Ատկէ կը յագեցնէ իր ծարաւը։ Բայց կիներուն ամենատկարը նուաճելով մի կարծեր, որ կրցած ես նուաճել նաեւ ապագան։ Փոքրիկներուն հետ մեր ուզածին պէս վարուելով չկարծես, որ կրնանք ճակատագիրը սահմանել։

ՀԵՔԹՈՐ.— Ցոյներուն խորամանկութիւններն ու սնապաշտութիւնները կը խուսափին ինձմէ։

ՀԵԼԷՆ.— Հարցը խորամանկութիւններուն ու սնապաշտութիւններուն չի վերաբերիր։ Ատիկա հրէշներու եւ բուրգերու առընչուած հարցերէն նուազ բարդ խնդիր մը չէ։

ՀԵՔԹՈՐ.— Պիտի ընտրե՞ս մեկնումը։ Այս կամ ոչ։

ՀԵԼԷՆ.— Մի սպառնար ինծի…։ Ես կ՚ընտրեմ պատահականութիւնները այնպէս՝ ինչպէս սովոր եմ ընտրել մարդերը կամ որեւէ այլ բան։ Ես կ՚ընտրեմ անոնք՝ որ սառուներներ չեն ինծի համար։ Ես կ՚ընտրեմ անոնք՝ որ կը տեսնեմ իմ աչքերովս։

ՀԵՔԹՈՐ.— Գիտեմ, արդէն ըսիր· անոնք՝ որոնք կը տեսնես ամենավառ գոյներով։ Եւ քանի մը օրէն ինքզինքդ վերադարձած չե՞ս տեսներ Մենելասի պալատը։

ՀԵԼԷՆ.— Ոչ։ Դժուար թէ։

ՀԵՔԹՈՐ.— Այս վերադարձին համար կրնանք քու ամուսինդ զարդարել փայլուն հագուստներով։

ՀԵԼԷՆ.— Թեփորներու ամբողջ ծիրանին չի կրնար կինք տեսանելի դարձնել ինծի։

ՀԵՔԹՈՐ.— Քաստանոր, ահաւասիկ քու մրցակիցդ։ Ան եւս կը կարդայ ապագան։

ՀԵԼԷՆ.— Ես ապագան չեմ կրնար կարդալ։ Բայց այդ ապագային մէջ ես կը տեսնեմ կարգ մը պայծառ տեսարաններ, իսկ ուրիշ տեսարաններ, որոնք մթին են։ Մինչեւ հոս պատահածները պայծառ տեսարաններն էին։

ՀԵՔԹՈՐ.— Քեզ յոյներուն պիտի վերադարձնենք հիշդ կէսօրին, կուրցնող աւազին վրայ, մանիշակագոյն ծովուն դեղնաւուն պարիսպներուն միջեւ։ Մենք պիտի կրենք ոսկեճամուկ զրահներ եւ կարմիր փէշեր, իմ սպիտակ ձիուս ու Փրիամին մատակ ձիուն միջեւ՝ քոյրերս զարդարուած պիտի ըլլան կանաչ նափորաներով։ Մենք քեզ մերկ պիտի վերադարձնենք յոյն դեսպանին, որուն արծաթագօծ սաղաւարտին վրայ պիտի ծփայ ծիրանեգոյն փետուրը։ Կարծեմ այս բոլորը դուք կը տեսնէք։

ՀԵԼԷՆ.— Ոչ, բնա՛ւ: Ամէն ինչ մութ է:

ՀԵՔԹՈՐ.— Վրաս կը խնդաս, չէ՞:

ՀԵԼԷՆ.— Խնդա՞լ: Ինչո՞ւ: Դե՛հ, եթէ կ՚ուզէք երթանք եւ զբաղինք յոյներուն յանձնուելու իմ հարցովս: Նայինք ինչպէս կը դասաւորուի խնդիրը:

ՀԵՔԹՈՐ.— Դուն անգիտակցաբա՞ր կ՚ընես այս բոլորը, թէ կամաւ կը նախատես մարդկութիւնը:

ՀԵԼԷՆ.— Զեմ հասկնար միտքդ:

ՀԵՔԹՈՐ.— Կը կասկածի՞ս, որ գոյներու այս ալպոմդ աշխարհը հեգնող բան մըն է: Մինչ մենք հոս բոլորս կը պայքարինք, կը գոհունք, որպէսզի մեզի յատուկ ժամանակ մը ստեղծենք, դուն հոդ կը թերթատես այն պատկերները, որոնց նշանակութիւնը ոչ ոք կրնայ փոխել յաւերժութեան մէջ: Ի՞նչ ունիս: Ո՞ր պատկերին վրայ սեւեռաբիր կանգ առած ես այս կոյր աչքերովդ: Հաւանաբար ա՛յն պատկերին, ուր կը դիտես վարը թաւալող ճակատամարտը՝ ճիշդ այս պարիսպին կոթնած: Դուն կը պատկերացնե՞ս ճակատամարտը:

ՀԵԼԷՆ.— Այո:

ՀԵՔԹՈՐ.— Եւ քեզի կը թուի, թէ քաղաքը փուլ կու գայ կամ կ՚այրի, այնպէս չէ՞:

ՀԵԼԷՆ.— Այո, վառ կարմիր է:

ՀԵՔԹՈՐ.— Իսկ Փարի՞սը: Կառքի մը ետեւէն քարշ եկող անոր դիակը կը տեսնե՞ս:

ՀԵԼԷՆ.— Ա՜հ, կը կարծեմ, որ ան Փարիսն է: Արդարեւ, փոշիին մէջ թաւալող արշալոյսէն մաս մը կը տեսնեմ: Եւ ձեռքին կը փայփլի ագամանդ մը...: Այո՜...: Դէմքերը յաճախ դժուար կը դուշակեմ, բայց գոհարեղէնները՝ անսխալ: Իր մատանին է, վստահ եմ:

ՀԵՔԹՈՐ.— Ճիշդ...: Զեմ համարձակիր Անտրոմաքին եւ իմ մասին հարցնել: Անտրոմաք–Հեքթոր զոյգին: Դուն զանոնք կը տեսնես: Մի ժխտեր: Ինչպէ՞ս կը տեսնես զանոնք: Երջանի՞կ, ծե՞ր, լուսաշո՞ղ:

ՀԵԼԷՆ.— Զեմ փորձած տեսնել զանոնք:

ՀԵՔԹՈՐ.— Իսկ ինչպէ՞ս կը տեսնես Անտրոմաքը, որ կու լայ Հեքթորի դիակին վրայ, պայծա՞ռ:

ՀԵԼԷՆ.— Գիտես, ես շատ յստակ կը տեսնեմ, արտակարգօրէն յստակ մասնաւորաբար ա՛յն՝ որ տեղի չ՚ունենար: Ոչ ոք անսխալական է:

ՀԵՔԹՈՐ.— Պէտք չունիս շարունակելու: Կը հասկնամ...: Ողբացող մօր մը եւ անշունչ երկարած հօր մը միջեւ զատակ մը կա՞յ:

ՀԵԼԷՆ.— Այո...: Կը խաղայ հօրը խառնշտկուած մազերուն հետ...: Սիրուն տղայ մըն է:

ՀԵՔԹՈՐ.— Իսկ այս տեսարանները լաւ դրոշմուա՞ծ են աչքերուդ խորքը: Հոն կրնա՞նք տեսնել զանոնք:

ՀԵԼԷՆ.— Զեմ գիտեր: Նայէ:

ՀԵՔԹՈՐ.— Ոչինչ: Ոչինչ՝ բացի հրդեհներուն մոխիրէն, գմբուխտէն եւ փոշիի վերածուած ոսկիէն: Որքա՜ն վճիտ է աշխարհի ոսպնեակը, ուր ապագան կը ապաստ: Այսուհանդերձ, պէտք չէ որ արցունքները ըլլան գայն մաքրողը...: Դուն պիտի լայի՞ր, եթէ վճռուած ըլլար մահդ:

ՀԵԼԷՆ.— Զեմ գիտեր: Բայց կը պոռայի: Եւ կը զգամ, որ պիտի պոռամ հիմա, եթէ այսպէս շարունակես՝ պիտի պոռամ:

ՀԵՔԹՈՐ.— Այս գիշեր դուն Յունաստան պիտի մեկնիս, այլապէս պիտի ըսպաննեմ քեզ:

ՀԵԼԷՆ.— Բայց ես կ՚ուզեմ մեկնիլ: Պատրաստ եմ մեկնելու: Պարզապէս կ՚ըսեմ, թէ չեմ կրնար ճչդել այն նաւը, որ զիս պիտի տանի: Զեմ տեսներ

փայփայում մը ո՛չ առաջիկայի առապատի երկաթներուն, ո՛չ ցուցկին եւ ոչ ալ նաւապին աչքերուն սպիտակուցը:

ՀԵՔԹՈՐ.— Դուն Ցունասատան պիտի վերադառնաս այեկոծ ծովով եւ խաւարած արեւի մը տակ: Մեկի խաղաղութիւն պէտք է:

ՀԵԼԷՆ.— Ես խաղաղութիւն չեմ տեսներ:

ՀԵՔԹՈՐ.— Քասանդրէն խնդրէ, որ քեզի ցոյց տայ դայն: Քասանդրը կախարդ է: Ան կրնայ ոգեկոչել ուրուականներն ու ոգիները:

ՊԱՏԳԱՄԱԲԵՐ ՄԸ (ներս մտնելով).— *Հեքթոր, Փրիամը քեզ կը փնտռէ: Քուրմերը կ'ընդդիմանան պատերազմի դարպասները փակելու դադափարին: Կ'ըսեն, որ աստուածները այդ արարքին մէջ վիրաւորանք կրնան տեսնել:*

ՀԵՔԹՈՐ.— Հետաքրքրական է, որ աստուածները չուզեն անձամբ խօսիլ նման դժուարին պարագաներու:

ՊԱՏԳԱՄԱԲԵՐԸ.— Անոնք անձամբ խօսեցան: Կայծակ ինկաւ մեհեանին վրայ եւ զոհերուն փորոտիքները միաձայնութեամբ դէմ են Հելէնը Ցունասատան ղրկելու գաղափարին:

ՀԵՔԹՈՐ.— Ես ալ քուրմերուն փորոտիքը պիտի քննեմ...: Ատիկա իրենց հրնարքն է: Բայց, կը հետեւիմ քեզի:

(Պատգամաբեր գինուորը դուրս կ'ելլէ):

ՀԵՔԹՈՐ.— Ուրեմն՝ համաձայն ես, այնպէս չէ՞, Հելէն:

ՀԵԼԷՆ.— Այո:

ՀԵՔԹՈՐ.— Ասկէ եւոք պիտի բսե՞ս, ինչ որ պիտի թելադրեմ քեզի ըսել: Պիտի ընե՞ս, ինչ որ պիտի պահանջեմ քեզմէ ընել:

ՀԵԼԷՆ.— Այո:

ՀԵՔԹՈՐ.— Երբ Ոդիսեւսի առջեւ գանք, ինծի պիտի չհակառաւեսես եւ իմ կարծիքս պիտի պաշտպանես, այնպէս չէ՞:

ՀԵԼԷՆ.— Այո:

ՀԵՔԹՈՐ.— Լսեցի՞ր, Քասանդր: Մտիկ ըրէ բացասականութիւնը անձնաւորող այս անձը, որ այս կ'ըսէ: Ամէնքը գիջեցան ինծի: Փարիսը գիջեցաւ: Փրիամը գիջեցաւ: Հելէնը կը գիջի: Եւ ընդհակառակն, Երուսիմական այս յաղթանակէն կը գդամ, թէ իրաքանչիւրին մէջ ես պարտուած եմ: Կը կարծենք, թէ կը պայքարինք հակառներու դէմ եւ պիտի յաղթենք անոնց, բայց կը պարզուի, որ կը պայքարինք անհրկելի բանի մը դէմ, որ կնոջ մը բիբին ցոլքն է: Դուն զուր այս կ'ըսես ինծի, Հելէն, դուն մարմնացուցիչն ես յամառութեան, որ կը խոցէ զիս:

ՀԵԼԷՆ.— Կրնայ ըլլալ: Բայց ուշինչ կրնամ ընել: Իմ կամքէս կախում չունի:

ՀԵՔԹՈՐ.— Այդ ի՞նչ զառանցանքով է, որ աշխարհը իր հայելին գրած է այս տեսակ տուփակ գլուխի մը մէջ:

ՀԵԼԷՆ.— Ցաւալի է անշուշտ: Բայց կա՞յ հայելիներուն յամառութիւնը յաղթահարելու միջոց մը:

ՀԵՔԹՈՐ.— Այո: Այս վայրկեանին այդ մասին կը մտածէի:

ՀԵԼԷՆ.— Եթէ հայելիները փշրէինք՝ նուազ բան մը պիտի չցոլացնէին անոնք թերեւս:

ՀԵՔԹՈՐ.— Ամբողջ խնդիրը հոգ է:

ՈՒՐԻԾ ՊԱՏԳԱՄԱԲԵՐ ՄԸ (ներս մտնելով).— *Ահապարէ՛, Հեքթոր: Ծովափը ապստամբութեան մէջ է: Ցոյներուն նաւերը կ'երեւին ծովուն բացերը: Իրենց դրօշը պարզած են ո՛չ թէ կայմերուն ծայրը, այլ՝ ցուցկիներուն վրայ: Խնդրոյ առարկայ է մեր նաւատորմին պատասխանը: Փրիամ՞ կը փախնայ, որ պատգամաբերը ապաննուած ըլլայ տեղ հասած պահուն:*

ՀԵՔԹՈՐ.— Հելէնը ձեզի կը յանձնեմ, Քասանտր: Ես կ'երթամ հրամաններս տալու:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՀԵԼԷՆ, ՔԱՍԱՆՏՐ

ՔԱՍԱՆՏՐ.— Ես ո՛չ փայլուն եւ ոչ ալ գորշ բան կը տեսնեմ: Բայց իւրաքանչիւր էակ վրաս կը ճնշէ մօտեցման իր եղանակով: Ջիղերուս վրայ ուղեցած իր անդրադարձով կը գուշակեմ անոր ճակատագիրը:

ՀԵԼԷՆ.— Իմ գունագեղ պատկերներուս մէջ ես երբեմն կը տեսնեմ միւսներէն աւելի փայփլուն մանրամասնութիւն մը: Հեքթորին չրսի, բայց գաւկին վիկը, վիկին այն մասը, ուր կը բաբախէ շնչերակը, լուսաւորուած է աւելի...

ՔԱՍԱՆՏՐ.— Ես կը նմանիմ կոյրի մը, որ խարխափելով կը յառաջանայ: Բայց աւելի կոյր եմ ճշմարտութեան ճանապարհին: Միւսները կը տեսնեն, եւ կը տեսնեն միայն սուտը: Ես գոնէ կը շօշափեմ ճշմարտութիւնը:

ՀԵԼԷՆ.— Մեր առաւելութիւնը կը կայանայ անո՛ր մէջ, որ մեր տեսիլքներն ու յիշատակները, անցեալն ու ապագան կը միաձուլուին իրարու: Կը դառնանք նուազ զգայուն...: Ո՞չ է, որ դուն կախարդ ես եւ կրնաս չունչ տալ խաղաղութեան:

ՔԱՍԱՆՏՐ.— Խաղաղութե՞ն: Շատ դիւրին է: Անիկա մուրացիկի մը պէս իւրաքանչիւր դրան առաջն մոռիկ կ'ընէ: Ահաւասի՛կ ան:

(Կ'երեւի խաղաղութիւնը):

ՀԵԼԷՆ.— Որքա՜ն գեղեցիկ է:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Օգնութի՛ւն, Հելէն, օգնէ՛ ինծի:

ՀԵԼԷՆ.— Բայց որքա՜ն ժժգոյն է:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Ես ժժգո՞յն եմ: Ինչպէ՞ս թէ ժժգոյն: Մագերուս ոսկին չե՞ս տեսներ:

ՀԵԼԷՆ.— Դէ՛հ, մոխրագոյն ոսկի՞: Նորութիւն է այս մէկը...

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Մոխրագոյն ոսկի՜: Մոխրագոյն է իմ ոսկիս:

(Խաղաղութիւնը կ'աներեւութանայ):

ՀԵԼԷՆ.— Մեկնեցա՞ւ:

ՔԱՍԱՆՏՐ.— Կարծեմ յարգարուելու գնաց:

(Խաղաղութիւնը դարձեալ կ'երեւի՝ չափազանց շպարուած):

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Իսկ այսպէ՞ս:

ՀԵԼԷՆ.— Հեռուհեռէ լաւ չեմ տեսներ կինք:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Իսկ այսպէ՞ս:

ՔԱՍԱՆՏՐ.— Հելէնը դարձեալ չի տեսներ քեզ:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Բայց դուն ինքդ կը տեսնես զիս, քանի որ հետս կը խօսիս:

ՔԱՍԱՆՏՐ.— Անտեսանելիին հետ խօսիլը իմ մասնագիտութիւնս է:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Ի՞նչ կայ դուրսը: Քաղաքին մէջ ու ծովափին վրայ եղողները ինչո՞ւ աղաղակներ կ'արձակեն:

ՔԱՍԱՆՏՐ.— Ըսա երեւոյթին, իրենց աստուածները նախատուած են եւ խնդրոյ առարկայ է իրենց պատիւը:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.— Իրենց աստուածնե՛րը, իրենց պատի՛ւը:

ՔԱՍԱՆՏՐ.— Այո...: Դուն հիւանդ ես:

ԱՐՁԱՆՆԵՐԸ

Քայլերգները միշտ կը հնչեն
Արձանների գերզգայուն ունկերուն...

Հրապարա՛կ,
Վիրաւոր է հայեացքն անոնց...

Յուզարկաւոր լռութեամբ
Եթէ յուշերդ պատմես,
Քարերն անխօս
Կ'աղաղակեն անոնց փխրուն աչքերէն:

Մեր քանդակի հեռանշոյլ խորքերէն
Ատեն-ատեն՝
Կը գրուցեն արեւներու բարբառով,
Իրենց ափերը պահած ափերուն մէջ
Անոնց՝ որոնք լուսնի ներքեւ
Իրենց համար կուռ ճակատներ կոփեցին:

Իբրեւ սիրոյ մուներկներ տարաբնոյթ
Կ'արձագանգեն ոստաններէն հեռախոյզ,
Կը կանչեն մեզ մայրամուտի շշուկներով արնագոյն:

Անխօս ու մունջ արձաններ,
Միլիոն ու կէս շուրթերով բո՛ց
Կը մերկացնեն բառը դողդոջ՝
Իր քարեղէն հանդերձանքէն.
Ու անհասցէ օրուան հետքով
Քարերը դեռ կը բաբախեն,
Կը մթագնի դէմք մ'անծանօթ...

Օ՜, արձաններ՝
Ձեր ցնցուած մատներով
Ժամանակը ցոյց կու տայ
Միջօրէի վերածուած ծիծաղը
Փլատակի մը մութին:

Երեխայ մը՝
Պոկուած երկու թեւերով՝
Թռչիլ կ'ուզէ վերստին...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Գ. ԱԲԻԼԵԱՆ

ԱՆՆԱ ՀԱՐՍԸ

Այդ ձմեռ գիւղը եւ գիւղերը խոսակցութեան առատ նիւթ ունեցան: Աննայի փախուստն ու հարսանիքը պատմուեցան ու պատմուեցան: Փախուստը սովորական բան էր շրջանին համար, բայց այս մէկը եզակի էր: Առոր համար ալ մինկնարանութիւնները ոստացան տարբեր երանգաւորումներ, տարբեր շուքեր: Հարսանիքն ալ աչքառու եղած էր: Հաննոյին առաջին զաւակն էր, որ կ'ամուսնանար: Հաննօ հակայ պարոյրի տակ մտած էր, առանց դիպուածոյ այդ տարմինոյութիւնին մէջ կնքուցած եւ խմցուցած էր առատաձեռն: Նոյնիսկ նկարիչը հոն բերած էր: Քեսապի մէջ յուսանկարուիլը բացառիկ բան էր: Գողինկեանը լուսանկարիչը շատ կարեւոր մարդ էր, որովհետեւ լուսանկարիչ էր: Քերոբի հարսանիքն ալ եղած էր առաջինը, ուր լուսանկարիչ բերուած էր:

Իսկ խոսակցութեան բուն առանցքը Աննայի գեղեցկութիւնն էր: Խոր ձորի դափնիի թուփերուն մէջէն այդքան գեղեցկութիւն ինչպէս արտաղբուած էր: Տղամարդիկ, մա՛նաւանդ երիտասարդներ, Քերոբին նրանի կը կարդային ու բնականաբար կը նախանձէին: Իրաւունք այ ունէին: Դուն քուն, բախտդ արթուն՝ առածին ճշմարտութիւնը ոչ մէկ առեն ոյշքան չէր կրնար ըսուիլ: Աննան Քերոբին արուէ՞ր. ո՞վ կրնար առանց բան երեւակայել: Բայց այդ էր իրականութիւնը:

Աղջիկները եւ կիները, նոյնիսկ պատանները, չէին կրնար ուրանալ Աննա Հարսին գեղեցկութիւնը: «Շան աղջիկը» ի՞նչ կերած էր, ինչպէ՞ս սնունդուած էր: Գարապի չէր բանի, որ Սանդիշէր եաքը օր առաջ վրայ աշխատած ըլլալու էր: Երանի՞ թէ իրենք, բամբասողները, Աննայի քաղաքի գեղեցկութիւնը ունեցած ըլլային: Գանձ կ'ըլլար այդ...

Օտան երջանիկ էր: Ուզածին դիմացած էր իր հարսին թէ՛ գեղեցկութիւնը եւ թէ քաջութիւնը: Ինքն ալ քաջ կին էր, բայց հարսին քաջութիւնը անբաղդատելի էր: Ինք հարիւր տարի ալ առանց մարդու մնար, չէր համարձակիր ջազաքի ձորէն անցնիլ, թէկուզ օր-ցերեկով: Տակաւին շատ շնորհալի կին էր իր Աննա հարսը: Առեղնատերոջ, հաշ եփիլ-թափիլ կամ կարելիք այնքան հարուստութեամբ կ'ընէր շան աղջիկը, որ հիացում կ'առաջացնէր բոլորին մօտ: Օտան սիրեց, արտանց սիրեց այս աղջիկը: Ո՞վ կը համարձակէր իր հարսին համար «աչքիդ վերեւ յօնք նայ» ըսել: Ուզողին կը ցցիւեր այդ պիսինները: Օտան եղաւ ոչ միայն բացառիկ կնասէր մը, այլեւ՝ մայր մը իր հարսին համար:

Աննան, իր կարգին, Օտանին մէջ գտաւ իր նկարագրին պատշաճող կին մը: Զիրար լաւ կրնային հասկնալ: Սկիզբը ինքզինք անհարմար զգաց այդ առաջ մէջ. «էլի աղջիկ էր»- նման: Ինքզինք շատ ամանի «ծախած» էր. ինք իր տոքսի եկած էր հոն: Հարս ու կեանքի պատմութիւններուն ծանօթ էր շատ հիացում իր կնասիրին վրայ, որ ոչ իսկ մէկ անգամ երեսին զգեստ փոխած ըլլալու հարցը: Շատ մեղմ ձեւով բան էր իրեն, թէ ինչպէս համարձակած էր

այդ պիսի արկածախնդրութեան դիմել: Հարս ու կեսուրին արիւնները նոյնը ըլլալու էին: Այդ համերաշխութիւնն ալ բնականաբար մատի փոքրիկ եղաւ երկար, շատ երկար ատեն: Մէկ խոշոր սենեակի մէջ ապրելով հանդերձ, հարս ու կեսուրի մէջը ոչ կարող ըլլալը տանելի բան չէր: Կարող մը համարձակներ երբ հեռուէն կամ մօտէն ակնարկութիւն ընել փորձէին Օսանին առջև, այնպիսի՛ խիթ նայուածքի մը կ'արժանանային, որ ա՛լ չէին համարձակեր ակնարկութիւնը կրկնել: Գոնուեցան նաև «սրտցաւ» մամիկներ կամ քոյրիկներ, որոնք փորձեցին Աննան լեցնել Օսանին դէմ: Այդ պիսիները իրենց դիմաց պտան վայրի արջ մը, որ չվարանեցաւ վոնտել զիրենք: Ահռելի շաղախով մը միացած էին հարս ու կեսուր. անթափանցելի էին:

Իսկ Անտոնենց տան մէջ այլ էր պատկերը: Անտոն լուռ, ինքն իր մէջ կը մխար ու կը տառապէր: Իր Աննան ինչո՞ւ այդ պիսի քայլի պիտի դիմէր: Այդ էր, որ չէր կրնար մարսել: Թող եւ ընէր նշանը. թող Քերոբէնք մարդավարի ձեւով գային եւ խնդրէին աղջկան ձեռքը: Ինք արդէն իսկ համակրանք չունէր իր Եկեկէ փեսացուին հանդէպ: Բայց պէտք չկար այդ արկածախնդրութեան: Հապա եթէ վայրենի գպան մը, գայլ մը կամ բորենի մը ելլէր իր շքնաղ Աննային դիմաց...: Մարմինը կը սարսռար, երբ այդ պիսի բան մը մտքէն անցրնէր: Սրտանց կը սիրէր աղջիկը: Թէեւ շատ վիրաւորուած էր Աննայի քայլէն, բայց չկրցաւ անէծք մը կամ նախատինք մը արտասանել անոնց հասցէին: Իսկ կի՞նը, Աստուած ցոյց չտայ: Անիծեց ու փրփրեցաւ, փրփրեցաւ ու անիծեց իր աղջիկը: Ժամանակը չէր կրնար մեղմացնել պատաւ Շաքէին զայրոյթը: Պէտք էր երկար սպասել:

Անտոն, ձեռքի տակէն, լուր ղրկած էր առաղձապործ Կարապետին, որ հարսանեկան սնտուկը Աննային տայ: Ինք իր մեծ մօր ցանած ընկուզենին, ցաւ ի սիրտ, կտրել տուած էր, որովհետեւ անոր արմատները ծխախոտի արտը փճացուցած էին: Անոր առաղձովը իր վեց աղջիկներուն հարսանեկան սնտուկները շինել տուած էր: Հապա՛ աղջիկ մը նշանէր, մթերանոցէն դուրս կը բերէր պէտք եղած տախտակը եւ կը ղրկէր Արշլենց Կարապետին: Այս վերջինը նշանաւոր առաղձապործ էր: Իր ճարտարութիւնը կը թափէր մա՛նաւանդ հարսանեկան սնտուկներու վրայ, որովհետեւ գիտէր, թէ ամէն հարսնութիւն կը նշանակէր նոր ձայներ, նոր ճիչեր ու կեանք:

Անտոն, երբ Աննայի տախտակները տարած էր Կարապետին, ապսպրրած էր, որ այս սնտուկը տարբեր ըլլար, որովհետեւ իր Աննայինն էր: Կարապետ, շատ մեծ խնամք տարած էր այդ սնտուկին վրայ: Աննայի փախուստէն մէկ օր առաջ լուր ղրկած էր, որ գան եւ սնտուկը տանին: Դամասկոսի նաշխերով զարդարուն սնտուկը բացառիկ եղած էր, իսկապէ՛ս: Նոյնիսկ Կարապետ տարբեր աչքով կը դիտէր իր ձեռակերտը:

Երբ իմացած էր Աննայի փախուստը, Կարապետ չուարած էր: Սնտուկը ապսպրողը եղած էր Անտոն. ան պիտի տար իր ձեռավարձը, սակայն սնտուկին իսկական տէրը Աննան էր: Փորձուած էր սնտուկը ինքնագլուխ կերպով անցընել Հաննոյենց տուներ, ձեռավարձը կորսնցնելու գնով: Ցնոյ, անհամութեանց տեղի չտալու համար, ետ կեցած էր այդ քայլէն: Երբ հասած էր Անտոնի լուրը, սրտանց ուրախացած էր Կարապետ հիւսնը: Սնտուկը տեղաւորած էր իր աշխատասենեակին վրայ, ձեռքովը փոշին առած էր, ձեռքովը շոյած էր զայն, ապա տարած բուն տիրոջ՝ Աննային:

Անտոնին պառաւը ուղղակի զայրացած էր: Ամբողջ երեք օր տուներ ղժոխքի վերածած էր Անտոնին համար: Մարդը լռութեամբ տարած էր այս նոր տառապանքը՝ Աննայի սիրոյն: Անտոնի կնոջ՝ Շաքէին զայրոյթը մեղմելու համար պէտք էր երկար սպասել: Մայրական սէրը տակաւ գտնուած էր վիրաւորարժանապատուութեան առջև...

Հապա՞ Եղեկէլ եւ անոր պարագաները. կրակ կլլած էին: Խօսք չէին ձգեր, որ չէին խօսեր: Նոր–նոր անէծքներ, չտեսնուած եւ չլսուած, կը թափէին նոր հարսին ու փեսային, մա՛նաւանդ հարսին գլխուն: «Ա՛յ պոռնիկ, չան կաթ ծծած, աննամուս, օր ու աբեւ չտեսնէ, ոսկի բռնէ՝ հոդ, ի՛նչ հոդ, ագր դառնայ, երկու նքի չնստի, հալի՝ ջուր դառնայ, գլխուն կայծակ իյնայ, բաժին դառնայ բորենիներու եւ չնագայլերու»:

Աննա կը լսէր այդ բոլորը. ինքնակոչ պատգամաբերներ, որոնք հաճոյք կը զգային այդ բոլորէն, կ'երթեւեկէին: Կը տառապէր Աննա, բայց իրեն յատուկ արութեամբ կը լսէր, կը հասկնար իր նախկին ինամիներուն տագնապը: Կը գգար, որ այդ բոլորը իր գեղեցկութեան եւ արժէքին դիտակցումն էին, շրջուած ձեւով: Ոչ մէկ վատ խօսք ելաւ իր բերնէն, հակառակ անոր, որ ինք բնաւ սիրած չէր Եղեկէլը:

Սարգիս աղան, որուն բուն դրամագլուխը շրջանին մէջ ստեղծուած վէճերն էին, մեծ հաճոյք զգաց ի տես ստեղծուած կացութեան: Ինք վէճ չեղած տեղը նման մեծ վէճեր կը ստեղծէր, որպէսզի յետոյ միջամտէր եւ վերջն ալ մեղրոտած մատները լիզէր: Քովը կանչեց Եղեկէլն ու հայրը: Խրատեց, թելադրութիւններ շռայլեց:

Աննիկի փեսացուն եւ պարագաները, որքան ալ դայրացած, բայց կը փորձէին մոռացութեան տալ հարցը: Թոնեռով աղջիկ կար, ուզածնին կրնային առնել: Բնաւ չէին մտածեր հետապնդումներ կատարել: Գացած էր, թո՛ղ զժոխքին ամենաբարկ տեղը նստէր: Սարգիս աղային կարծիքը տարբեր էր տակայն: Վաշխառուի իր հմտութեամբը կրցաւ համոզել Եղեկէլն ու հայրը, որ դատ բանային Անտիոքի, Թէկուզ Իսկէնտերունի մէջ: Ինք պատրաստ էր թէ՛ դրամ հայթայթելու եւ թէ փաստաբան գտնելու: Ինք նեղ օրերու մարդ էր:

Քարոզները կամաց–կամաց սկսան պտղաւորուիլ: Եղեկէլ համոզուեցաւ, որ պէտք է մնատուց հատուցում պահանջել, այլապէս օսմանեան անիշխանութեան օրերուն ամէն բան կարելի էր ընել, մա՛նաւանդ ջորեպանի մը, որ առանձինն կը ճամբորդէր յանախ: Սարգիսի ներշնչումով կատարուած սպառնալիքները երբ արդիւնք չտուին, անբախտ փեսացուն որոշեց դատարան դիմել: Սարգիս աղային ուզածն ալ այդ էր արդէն: Հինգ դեղին ոսկի համբեց Եղեկէլի ձեռքին մէջ եւ խոստացաւ միշտ օգտակար հանդիսանալ:

Դատը բացուեցաւ Անտիոքի մէջ: Երկու ախոյեանները սկսան դատի համար Անտիոք երթեւեկել: Եղեկէլ եւ Քերոբ գացին ու եկան: Իւրաքանչիւր նիստ ահագին դրամ կ'արժէր: Դատաւորին ու փաստաբաններուն բերանները պէտք էր «քաղցրացնել»: Այլեւս կողովներով հաւ կիթ, պանիր, մրգեղէն, շարոցներով ծխախոտ կը տարուէին ու կը տարուէին: Հակառակորդ փաստաբանները, որոնք իրենց յանախորդներուն առջեւ իրարու չէին խնայեր, ներքնապէս համաձայնած էին, որ այս անիմաստ դատը շատ հարուստ հանք մըն էր եւ պէտք չէր վերջ դնել անոր: Դատաւորն ալ համաձայն էր: Նոյնիսկ կարելի էր առաջին մէկ օրէն մերժել գայն, բայց այդ ապուշները երբ այսքան պատրաստակամութեամբ բարիքներ կը հոսեցնէին օսմանցի կաշառակեր դատաւորին եւ իր արբանեակ փաստաբաններուն գրպանները, ինչո՞ւ լաւագոյնս չօգտուիլ անոնցմէ:

Հանոնն ստիպուած կով մը ծախեց, ապա՝ ջորի մը, յետոյ՝ արտ մը: Եղեկէլն ալ, «բարի» Սարգիս աղային ապաւինած՝ կը հետապնդէր դատը եւ կը քաշէր դեղին ոսկիներ իր հովանաւորէն:

Արտին մէկ կարեւոր մասը յատկացուեցաւ մնասուց հատուցումին համար: Երբ Եղեկէլ գնաց իր պարտքը վճարելու Սարգիս աղային, դուրս եկաւ, որ իր գանձած հատուցումը հազիւ տոկոսները եւ մայր դրամին մէկ երրորդը կրնար վճարել: Սարգիս տղան շատ ուրախացաւ երբ դատին վճիռը լսեց, գո-

վեց Եկեկէլի արիութիւնը, երանի կարդաց անոր մօրը, որ այսպիսի ազան տղու մը ծնունդ տուած էր: Խրատեց, որ մնացեալ դրամին համար բնաւ հոգ չընէր, երբ որ կրնար՝ թող այն առէն տար: Աճապարելու պէտք չկար: Մեծապէս քաջալերուած վաշխառուին այս խօսքերէն՝ ապուշ Եկեկէլը դուրս ելաւ: Յետոյ երկար տարիներ պէտք պիտի ըլլար տքնիլ՝ պարտքը վճարելու համար...

Դատին վերջանալէն առաջ, Աննա ծնունդ տուաւ իր անդրանիկին: Մօրը նմանողութեամբ մանուկ մը էր: Գերդաստանին սովորութեանը համաձայն, կոչուեցաւ Գէորգ: Այս աւանդութիւնը ծագում առած էր այն օրէն ասդին, երբ 19րդ դարու վերջերը, գերդաստանի ղէմքերէն մին, Գէորգ ագան, որ մետաքսի եւ ծխախոտի նշանաւոր վաճառական էր, զոհ գացած էր իր հակառակորդներուն գնդակին, ջորիին վրայ, Սարգիս աղայի մեծ մօր կարգադրութեամբ: Ամբողջ գերդաստանը սգացած էր իր կարկառուն անդամին անժամանակ կորուստը: Նոյնիսկ իր ջորիին աչքերէն, ամիսներով, արցունքը հոսելէ չէր դադրած: Անկէ ետք, անգիր օրէնք դարձած էր, ամէն ընտանիքի մէջ, նախընտրաբար առաջին դաւակը կոչել Գէորգ:

Աննա շատ ուրախացաւ իր առջինեկով: Առաջին հերթին, իրեն շատ նմանելուն համար: Ապա՝ այս դաւակը իր մօրը մէջ յաղթել տուաւ մայրական եւ մեծ մօր սէրերը: Անտոնի կինը, որ կրակ ու բոց էր եւ ուխտած էր գերեզմանին մէջն իսկ չներել աղջկան, հեգնեալ կակուղցած էր: Իմացած էր, որ իր Աննային ծննդաբերութեան վերջին օրերն էին: Շատ կ'ուզէր երթալ անոր մօտ, բայց չէր կրնար յաղթահարել իր ապրած վիրաւորանքը:

Ամուսինին հետ կռիւ ըրած էր, երբ իմացած էր, որ Անտոն, ծածկաբար աղջկան այցելած էր: Եղածը մոռնալու Անտոնի բոլոր քարոզները ի դուր անցած էին: Բայց երբ իմացած էր աղջկան մայրանալուն լուրը, հիմնովին փոխուած էր: Կ'ուզէր վայրկեան առաջ երթալ եւ գրկել Թոռնիկը, համբուրել աղջիկը: Մօրէ մայր յարաբերութիւնը դժուար թէ սահման ճանչնայ:

Շատ տագնապեցաւ խեղճ կինը: Ինք իր ստեղծած չղթայով ինքզինք կապած էր եւ չէր գիտեր, թէ ինչպէս պիտի ազատուէր անկէ: Երբ իմացաւ Անտոնի նոր այցելութեան մասին, քաջուեցաւ անկիւն մը եւ դառնօրէն լացաւ: Անտոն, որ վախվխելով այցելութեան գացած էր թոռանը, նկատեց, որ կինը փոխուած էր: Հասկցաւ կողակիցին հոգեբանութիւնը: Քանի մը օր լուռ մնալ եւ հետեւիլ ետք կնոջ ապրումներուն, ջանաց համոզել զայն, որ վերջ տար այդ անիմաստ կեցուածքին: Ի դարմանս Անտոնի, կինը դարձեալ սկսաւ անիծել ու սպառնալ: Անտոն նախամեծար համարեց սպասել եւ լռել: Ժամանակը եւ հանգամանքները ամէն բան կը լուծէին: Ինք չարուն նակեց այցելել աղջիկան:

Անտոնի կինը քանի մը ամիս եւս կրցաւ ինքզինք պահել իր դիրքին մէջ, բայց կը լսէր թոռնիկին մասին: Անտոն բան չէր պատմեր իրեն, բայց լրաբերները շատ էին:

Օր մը ան ալ, երբ կեցած էր դրան առջեւ, նկատեց փեսան, որ ջորիովը ծովուն թաղը կ'երթար: Քերոբ ամիսներով չէր համարձակած աներջը թաղէն անցնիլ, վախնալով անարմօրը լեգուէն: Անտոնին այցելութիւններէն քաջալերուած՝ վերսկսած էր անցնիլ Աննայի ծնողքին թաղէն: Երբ առաջին անգամ անցած էր այդ ճամբէն, վախը սրտին մէջ, փնտռած էր նուրին կեղեր...: Շաբէին բերնին մէջ լեցուն դարձաւ, բայց չբխունքները չրացուցին: Անտոնով պիտի կանչէր փեսային, համբուրէր ճակատն եւ հարցնէր իր թոռնիկին մասին: Բայց չեղաւ, համարձակութիւնը պակսեցաւ իրեն: Քերոբ, որ երկրորդ անգամ ըլլալով կը տեսնէր իր աներմայրը, չկրցաւ գլուխը բարձրացնել: Տարբեր կ'ըլլար, եթէ հոն ըլլար Անտոն:

Վերադարձին, Քերոբ գարմացաւ, երբ նկատեց աներմայրը: Խեղճ կինը

կրցած էր յաղթահարել իր յամառութիւնը, փչրել զինք կաշկանդող օղակը... ոսկի ակռաները ցուցադրելով: Անտոնին պառաւը դիմաւորեց փեսան եւ ներս առաջնորդեց զայն: Քերոբ քիչ մը երկչոտութեամբ ներս մտաւ: Զէր հաւատար եղածին: Մեղր կտրած էր իր աներմայրը, այն կինը, որ ամիսներով անիծած էր թէ՛ զինք եւ թէ իր հարսը: Նուռով, խնձորով, որ չատ անսպասելի բան էր չրջանին մէջ, հիւրասիրեց փեսան: Հարցուց Աննային, մանչուկին եւ խնամիներուն մասին: Քանի մը վայրկեանը անգամ մը գարձեալ ու գարձեալ կը հարցնէր,— ի՞նչ կ'ընէր իր Աննան, ի՞նչ կ'ընէր իր սրտի հատոր Ճորճիկը: Քերոբ համբերութեամբ կը պատասխանէր:

— Հոգիս, հոգիս, ճիկէրի՛կս,— կը կրկնէր աներմայրը: — Երթամ տեսնեմ, կարօտս առնեմ:

— Հազար բարի, մայրիկ. հիմա տանիմ քեզ հետս: Ջորիին բեռը իջեցնեմ հոս եւ տանիմ քեզ հետս:

— Միւս ջորիներդ ո՞ւր են, զաւակս:

— Մախեցինք, մայրիկ:

— Ինչո՞ւ ծախեցիք, տղաս:

— Պէտք եղաւ ծախել, մայրիկ. գատական ծախսերուն համար գործածեցինք:

— Թող գետինը մտնեն...

— Ի՞նչ կ'ուզես իրենցմէ, մայրիկ:

— Ի՞նչ իրաւունք ունին քեզի դէմ գատ բանալու: Ազջիկս իր սրտին համբէն քալեր է, իրենց ի՛նչ:

Քերոբ չէր հաւատար աներմօր բերնէն ելածին: Ան որքա՜ն անիծած էր իր հարազատ աղջիկը: Կարելի՞ բան էր այդքան հոգեփոխութիւն:

Քիչ ետք, Անտոնին պառաւը, փեսային ջորիին վրայ նստած՝ կ'երթար աղջկան եւ թոռնիկին տեսութեան: Մխաիտոի բեռան վրայ նստած, փքուած՝ կ'երթար խնամիենց, իր Աննային: Ճամբան պիտի անցնէր նախկին խնամիենց տան առջեւէն: Քերոբ մտահոգ էր, բայց աներմօր հոգը չէր: Երբ անցան անոնց բակին առջեւէն, Իսկուհին, որ ցախաւելը ձեռքին բակին թրիքները կ'աւլէր, մէջքը չտկեց եւ երբ տեսաւ «անկատար» խնամին, իրենց մրցակիցին ջորիին վրայ, ձեռքերը մէջքին կապելով, տղամարդէ մը աւելի չնորհալի ձեւով հայհոյեց ու հայհոյեց.

— Հապա՜, աղջիկէդ եաք դնա՛ դուն ալ էրիկենց տղուն ծոցը պառկէ, պոռնիկի աղջիկ. չո՛ւն–չանորդի. ես քու ճինդ... քու պատիդ...

Եւ գօտիէն վար ինչ որ բան ու գարձուածք կար, թափեց խնամիին գլխուն...

Քերոբ կաս–կարմիր կտրած էր, մինչ իր աներմայրը բնաւ այնտեղացի իսկ չէր ըլլար: Միայն մէկ անգամ ըսաւ, որ «քացախը ինք իր ամանը կ'ուտէ»:

Երբ տեղ հասան, Աննա աչքերուն չհաւատաց: Դեռ ջորին բակ չմտած, Անտոնին պառաւը քիչ մնաց, որ վերէն վար ցատկէր: Հոն էր իր սրտի հատորը, իր Աննան՝ թոռնիկը գրկին մէջ: Քերոբ դժուարութիւն ունեցաւ աներմայրը ջորիէն վար առնելու: Ցածլիկ պատի մը մօտեցուց անասունը. Պառաւը կ'ահապարէր, տատը համար ալ դժուար եղաւ վար իջնել: Ոտքին մէկը առպանդակին մէջ մնաց: Քիչ մնաց, որ ջորին վախնալով իր ետեւէն քաշէր զինք: Հազիւ ոտքը գետին դրած՝ փութաց աղջկան վզին փաթթուիլ: Երկու մայրեր իրարու փաթթուած՝ կուլային: Մայրը ներողութիւն կը խնդրէր իր անէծքներուն համար: Կը խնդրէր մոռնալ անցեալը: Իսկ Աննան կուլար յուզմէն եւ ուրախութենէն, առանց կարենալ խօսելու: Անդադար մօրը ձեռքերը կը համբուրէր: Պառաւ Օսանն ալ երբ տեսաւ խնամիին եւ հարսին այս սրտակցութիւնը, չկրցաւ արցունքը զսպել: Թոնիրէն նոր գուրս ելած էր, եւ գոգնոցին ծայրովը

անդադար արցունքները կը չորցնէր: Գրկեց եւ անկեղծ սիրով մը համբուրեց խնամին:

Այս հաշտութիւնն ալ բամբասանքի առատ նիւթ հայթայթեց: Շարաթներով լեզուները դարձան ու դարձան: Ոմանք սրանց ուրախացան: Իսկ ուրիշներ, հակառակ իրենց ցուցաբերած խնդակցութեան, ներքնապէս կը ցաւէին այս բարեղէպ ելոյթին համար: Մարդիկ պէտք ունէին վէճերու եւ բամբասանքի առատութեան:

Այլեւս Անտոնի պատաւին ոտքը չէր կտրուեր այս աղջկան տունէն: Նոյն օրերուն մայրացած էր իր միւս աղջիկը, Գարապաճաղենց հարսը, անուշիկ աղջնակի մը ծնունդ տալով: Պառաւը անոր ալ կ'երթար այցի, բայց Աննային աւելի յաճախ կ'այցելէր: Նոյնիսկ Անտոն սկսաւ «գանգատիլ», որ կնոջ երեսը շատ չէր տեսներ:

Փախուստէն ի վեր, առաջին անգամ ըլլալով խաղաղութիւն իջեր էր Աննայի սրտին: Մօրը անէծքները հասած էին իրեն, շնորհիւ կարգ մը շարամիտ թոյլերաններու: Այդ խիգախ աղջիկը կը վախնար անէծքէն, մա՛նաւանդ մայրական անէծքէն: Հիմա մայրը ո՛չ միայն ներած էր իրեն, այլեւ ինքը ներողութիւն կը խնդրէր իրմէ:

Մանչուկը կը մեծնար եւ հետզհետէ աւելի ու աւելի կը նմանէր մօրը: Ուրախ էին բոլորը: Բայց ստուեր մը կը սաւառնէր տան վերեւ: Հաննոն կարասներով օղի խմցուցած էր իր տղուն հարսանիքին: Այդքան օղին բնականաբար սրած էր հարսնեւորներուն ախորժակները: Քանի մը ոչխարներ եւ մոգի մը կերուած էին: Ո՛չ Հաննոյի եւ ոչ ալ Օսանի համար հարց եղած էր...

— Հապա՜ր անուշ ըլլայ,— ըսած ու կրկնած էին:

Ճիշդ էր այդ, բայց անոր միացնելով նաեւ գատական ծախսերը, հաստուցումը եւ կարգ մը կահ-կարասիներու գնումը, ընտանիքը մատնուած էր նեղ կացութեան: Հաննոյի միջնեկ տղան մեկնած էր Ամերիկա: Եղբօր անդրանիկը շնորհաւորած էր տասը տոլարով: Նաեւ եղբօր գրած էր, որ եթէ ինք եւս Ամերիկա մեկնէր, միասնաբար աշխատելով կրնային կոկիկ խնայողութեամբ մը վերադառնալ եւ իշխանի պէս ապրիլ:

Քերոբ ուշադրութիւն իսկ չէր դարձուցած այդ հրաւէր-կոչին: Նոր փեսայ եւ նոր հայր՝ ինչ չէր մտածեր պանդխտանալու մասին: Բայց հետզհետէ նիւթական վիճակը կը վատթարանար: Անտոնի օժանդակութեան առաջարկը, որ կատարուած էր Աննիկի խողովակով, թէ՛ Քերոբի եւ թէ ալ Աննայի կողմէ մերժուած էր:

Հետզհետէ մեկնելու գաղափարը սկսաւ արմատաւորուիլ Քերոբի ուղեղին մէջ: Ի՞նչ կար որ. ուրիշներ ալ գացած էին եւ լաւ վիճակով վերադարձած: Տեսնելու բան էր, իր զարմիկներէն Միկոն, որ ընդամէնը վեց տարիներ Ամերիկա մնալով, կրցած էր գիւղին մէջ կրապատ մեծ տուն մը շինել, քանի մը հողաշերտ գնել, նոյնիսկ կրապատ ցանկապատ քաշած էր տան կից հսկայ պարտէզին շուրջ: Դեռ շարք մը խանութներ շինած եւ վարձու տուած էր: Մէկ խանութն ալ ինք կ'աշխատցնէր: Իսկական իշխանի մը պէս կ'ապրէր: Եթէ ինքն ալ երթար եղբօրը մօտ, քանի մը տարիէն կը վերադառնային, կրնային աղարակ մը շինել: Թանթանենց արտը իր դիրքով շատ յարմար էր այդ պիսի ծրագրի մը համար: Տակաւին կրապատ տուն մըն ալ կը շինէր եւ ինքն ալ փաշայի պէս կ'ապրէր:

Երբ գաղափարը Աննիկի փոխանցեց, այս վերջինը լռեց եւ բան չիսօսեցաւ: Աննիկի լռութիւնը լաւ նշան չէր. ըսել էր, որ համաձայն չէր գաղափարին: Հաննօ եւ Օսանն ալ համաձայն չէին: Դժուար պիտի ըլլար իրենց համար բաժանումը: Սակայն Սերոբ եղբօր նամակները իրարու կը յաջորդէին: Բոլորն ալ նոյն քարոզը կը բովանդակէին: Անոնցմէ մէկուն մէջ նոյնիսկ ներփակած

էր յուսանկար մը. ինք եւ իր մէկ բարեկամը անիւաւոր տնակի մը առջեւ նը-կարուած էին։ Կառքի կը նմանէր այդ տարօրինակ բանը, բայց ձի յծելու տեղ չունէր։ Սերոր գրած էր, որ այդ կառքը առանց ձիու կը քալէր, եւ թէ՝ օրուն-պիլ կը կոչուէր, եւ եթէ եղբայրը միանար իրեն, քանի մը տարի եւրոպացիներ հատ մը գնելով՝ միասին կը բերէին Քեսապ։

Նիւթական կացութեան նոր հարուած մը տրուեցաւ, երբ կարմիր կովն ալ սատկեցաւ ծննդաբերութեան ընթացքին։ Անոնք ալ սկսան համոզուիլ գաղթի հեռանկարով։ Վստահաբար ամուսինը եւս կը դառնար, ահագին կովեր եւ հաւեր կ'ունենային ագարակին մէջ, դոյլերով կաթ պիտի կթէր, կողովնե-րով հաւկիթ պիտի հաւաքէր ամէն օր։ Նաեւ այլ պատճառ մը ունէր համոզ-ուելու. գոնէ՝ կրնար ծնողքին օժանդակութեան առաջարկը ինքնավստահու-թեամբ մերժել։

Դեռ մանչուկը մէկ տարեկան չեղած, Քերոր վերջնականապէս որոշեց գաղթել Ամերիկա։ Զորս, չատ-չատ հինգ տարի պիտի մնար հոն եւ յետոյ պի-տի վերադառնար։ Քանի մը անգամ նոյնիսկ Թանթանենց տրտր գնաց։ Կղզեակի մը պէս արտին մէջտեղ գտնուող ժայռին վրայ բարձրացաւ եւ «դի-տեց» ագարակը։ Տեսաւ չուրջ երկու տասնեակ կովեր, ազուոր խոշոր եզ մը, հորթուկներ, դիրուկ հաւեր։ Կինը մեծ դոյլերու մէջ կաթ կը կթէր։ Փրփրոտ կաթը արծաթի պէս կը փայլէր արեւուն տակ։ Այս երազներով օրօրուն, որոշեց մէկ ամիսէն, Իսկէնտէրունի ճամբով, Ամերիկա մեկնիլ։

Ճամբայ չելած՝ երկրորդ դուռի մը ապսպրանքը փոխանցեց կնոջ, եւ կոտրած սրտով մեկնեցաւ։ Մեկնեցաւ՝ կնոջ, մօր, հօր, աներ-մօր, աներ-հօր եւ բազմաթիւ քենիներուն ու քենեկալներուն արցունքները ետին ձգած...

(Շար. 2) ԳԷՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ

Վ. ԲԱԲԱՅԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

***

Ասա՛, կը լինե՞ս ամպէղէն սանդուղք,
որ ոտքս հպեմ շղարշիդ բոցին
ու երկինք ելնեմ:
Կը լինե՞ս ուխտեալ,
երբ որ յուսնակի սադափ մակոյկով
միւս ափ տանես,
միտք չյդանաս··· ինձ այնտեղ թողնել:
Ասա՛, կը սիրե՞ս
յոգնած մօրս պէս,
ասա՛, կը սիրե՞ս···

***

Մէկը փորձում է կրկնել Շուբերտին,
յօրանջ-սուլոցով փեղկերն է փակում:
Երկու պատանի
առաջին սիրոյ դասերն են սերտում
ու յաւերժական սէր են շշնջում:
Մի սմքած պառաւ ծնկածալ ելել՝
եկել է հարբած կէսին տանելու:
Մէկը փորձում էր կրկնել Շուբերտին···

***

Ստուերը սարի
սողաց ոտքիս տակ···
Նահանջում եմ դանդաղ,
մինչ նա սահում է,
նա, որ կուլ տուեց Արեւին···

***

Ամէն օր արեւ,
ամէն օր լուսին,
ամէն օր երկնի
վրանը հին…
Յաւերժ սխալը հին աստուածների…

***

Արեւը մտաւ տանիքիս տակ,
մրափեց այնտեղ…
Գիշերուայ կէսին
ելաւ լուսնակի ծպտաշոր հագած…

***

Շներն այնքան են
լուսնի երեսին
հաւել, ոռնացել,
որ նրանց աչից
լուսինն էլ այսօր
ժանիք է դարձել…

***

Երկրին ու Մարսին
եւ միւսներին
տեսնես ինչո՞ւ են
կռչել մոլորակ,
տեսնես որտե՞ղ են
մոլորուել նրանք…

***

Ինձ թւում է նիմա
լուսամփոփս պիտի ահից ճչայ,
որ այսպէս մութ է աշխարհը ողջ…
Ինձ թւում է հիմա
կը բացուի փեղկն իմ պատուհանի
եւ Յիսուսի գունաւոր
ստուերը կը նետի խոնաւ պատին…

***

Դեղին է թախիծս,
երազս՝ կապույտ,
ճանճրույթս կարծես մոխրագույն է,
սեւ է սարսափս,
տարերքս՝ կարմիր,
կանաչ է աշխարհս,
խաբկանքս՝ ներմակ,
կեանքս՝ գորշագույն...
Տեսնես ո՞ր գոյնն է երջանկութիւնը...

***

Այս գիշեր յոգնած եմ,
այս գիշեր նման եմ
կողոպտուած դղեակի:
Մենակ եմ աշխարհում,
լքել է ինձ յաւէտ
իմ չքնաղ սիրուհին:
Այս գիշեր յոգնած եմ,
այս գիշեր նման եմ
հրդեհուող քաղաքի...

***

Արեւ իմ, սրբապսակ,
արեւ իմ, ոսկեթեւիկ,
լոյս բեր ինձ, լոյս...
Ամպիկ իմ, փափուկ ու գոլ,
ամպիկ իմ, շղարշածալ,
յոյզ բեր ինձ, յոյզ...
Երկինք իմ, երազածին,
երկինք իմ աստուածակերտ,
յոյս բեր ինձ, յոյս...

***

Այդպէս մի նայիր,
դաշտում ծնուեցի, մի ծաղկահովտում
ու երազների մարգերում հիւթեղ:
Ինձ մի նախատիր,
ես չեմ նախատել հին աստուածներին,
խղճացել եմ լոկ, յետոյ կարեկցել:

Հիմա լսիր ինձ,
երբ մթնշաղը սկսի հալչել,
մի բուռ երազ բեր աչքերս լցրու…

***

Երբ քեզնից ձանձրանաս,
զրուցիր Աստծոյ հետ,
խօսիր մոլուցքիդ հետ դեղին,
կամ քրքջայ ապագայիդ վրայ,
միայն մի տրտնջայ,
մի սնուիր կապոյտ հեքիաթով
եւ վերջալոյսին
խոստացիր ստուերներից չահաբեկուել,
խոստացիր չքամբասել լոյսին
եւ սուգուիր մթութեան մէջ
առանց ճիչի…

***

Լռել են…
Շատ խօսեցին՝
իրար հետ,
մարդկանց,
անգամ Աստուծոյ,
բայց նրանք լուռ էին,
իրենք էլ լռեցին,
ես էլ եմ լռում…

***

Հաւատր մեռաւ
եւ պատանեցին նրան յուշերով,
դրեցին խոհերի դեղին դագաղում:
Հաւատր մեռաւ:
Ողբում է նրա ջահել այրին՝
տիկին Անուրջը:
Թաղման թափորը զարդարում էին
Իմաստը, Սէրը, Կարօտն ու Յոյսը…

***

Ինչ ձանձրալի է…
Լուսնադանակը ամպ է կտրատում,

նոյն նստարանը,
նոյն շոյող ձեռքը,
նոյն պիրկ կրծքերի
բացուածքը ծանօթ,
նորից նոյն շունն է
միգում պատի տակ,
նոյնն է յօրանջը
պահակ ծերունու...
Ինչ ձանձրալի է...

***

Արքան ձաղկում է մարմինն ամբոխի,
պոետը փարատում է հոգին:
Արքան իշխում է մարմնին ամբոխի,
պոետը իշխում է հոգուն:
Օ՜, գաղտնիք երկնային, չէ՞ որ
հոգին իշխում է մարմնին:
Պոետն իշխում է ամբոխին,
արքան նախանձից այրում է:
Արքան պոետին կախում է,
ամբոխն էլ կախում է արքային...

***

Գիշերը ջանում է կարօտներս վառել,
հրդեհել հոգիս աստղալոյսով,
տարփուհի լուսինը վայելքներ է ցրում,
որ աստղեր են դառնում:
Գիշերը խեղդում է գունաթափ ստուերս,
անքաժան տեսիլքը հոգուս
գրկում է հոգսապատ ուսերս:
Գիշերը տրում է խոհերիս,
գիշերը՝ իմ միակ սիրուհիս...

***

Իսկ ինչո՞ւ չեկաւ
պահն այդ լուսեղէն,
չէ՞ որ յոգնեցի սպասելուց,
չէ՞ որ ձանձրացայ՝
տխնութեան ծովում
մաքառելով երկար:
Իսկ ինչո՞ւ չեկաւ

այդ հրաշք կոչուածը,
այդ երանելին,
սուտն այդ…

***

Սրանք, որ այսպէս սահում են դանդաղ,
սրանք, որ նայնիսկ շնչել էլ գիտեն,
սրանք, որ այսպէս արեւ են տեսնում,
որ լոյս են շոյում երազում անգամ,
մարդիկ են, մարդիկ,
Օ՜, քարմ մեռելներ…

***

Անշուշտ նա մարդ է,
դազաղուած ոգի,
հագին՝ ինչ-որ բան,
ուզում է ժպտալ,
օգնեցէք նրան,
լսո՞ւմ էք, մարդիկ,
ուզում է ժպտալ,
օգնեցէք նրան…

***

Անձրեւ: Փողոց:
Ծանօթ նրբանք:
Ծանօթ շուրթեր:
Անծանօթ շուն:
Դողացող կոնք
եւ յօրանջող մի ծերունի…

***

Ի՞նչ ես դու, ի՞նչ·
մի չնչին, չնչին աղջիկ:
. . . . . .
Բայց մխիթարուիր,
հիմա չնչին են դիցուհիք անգամ…

ՎԻԳԷՆ ԲԱԲԱՅԵԱՆ

Իմաստական Հարցում

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԱՅԳԵՍՏԱՆՆ ՀԱՅՈՒՆ

ՋՕՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

«Այս տարի տեղի պիտի ունենա՞յ ցուցահանդէսը»։

Քանի՜–քանի՜ անձեր՝ բարեկամներ, ծանօթներ, այս վերջին ամսուան ընթացքին այս հարցումը կ՝ուղղէին ինծի։

Բնական եւ արդարացի կը գտնէի հարցադրումը, Միբանանեան տագնապի ամէնէն խոովալից եւ անձկալից օրերուդառն փորձառութեան շրջադծին մէջ։ Ոմանք արդար եւ ակնկալոյց մօտեցումով կը դնէին հարցումը. տեսակ մը կարօտը եւ կարիքը կը գգային այս եւ նման ձեռնարկներու։ Ոմանք ալ սկեպտիկ նախատրամադրութեամբ կ՝ընէին հարցումը, կարծէք ըսուածին մէջէն ըսել ուզելով, թէ՝ կեանքի այս անբնականոն պայմաններուն տակ կարիքը կա՞յ նման ձեռնարկներու։

Ինչ ալ ըլլան դրդապատճառները տրուած հարցումին՝ անոր պատասխանը ահա այս օրուան սա պատկերն է, Հայ Գիրքին հետ տարեկան ժամադրութեամբ հաւաքական սա պահը, Անթիլիասի Մայրավանքին մէջ։

Ճիշդ է, որ որոշ չափով սովորական *դարձաւ ան, այսինքն՝ Կաթողիկոսարանիս առաքելութեան մշակութային ուղիին մէջ* աւանդական *գիծ մը չինեց, որ հաւանաբար, «սովորականութեան» հոգեբանութեան բնական բերումով՝ չունի այն սկզբնա–*

կան քաջողականութիւնը, որ առաջին տարիներուն կը յայտնաբերուէր։

Եւ սակայն ես ճիշդ այդ շարունակականութեանը, հետեւողականութեանը, աւանդութիւն դառնալու երեւոյթին մէջ կը տեսնեմ անոր հիմնական արժանիքներէն մէկը։ Սրտբացօրէն եւ պարզօրէն խօսելով՝ մեր մէջ առհասարակ ընդունելութիւն գտած կեանքի երեւոյթ մըն է՝ խանդավառութեամբ սկսիլը, որոշ ժամանակ մը աստիճանական թուլացումով շարունակելը եւ, ի վերջոյ, ճրագի լոյսին պէս իւղի պակասէն նուազիլը ու չիջանիլը եւ կամ արտաքին հովերէն մարիլը։ Իւղը, ինծի համար, մարդուն հաւատքն է հանդէպ գործին, արժէքին, գաղափարին, գաղափարականին։ Երբ այդ հաւատքը դադրի համոզումի ջերմութենէն եւ մարդու կեանքին մէջ իր իմաստաւորչաղախումէն՝ այն ատեն է, որ գործը կը տժգունի եւ կը հասնի այնպիսի վերջի մը, որ անոր նպատակային վախճանը չէ, այլ ցաւ պատճառող, մնաս բերող, յուսահատութիւն առաջացնող դժբախտ վերջակէտ մը, որուն մէջ ձախողութեան, պարտութեան, տեսակ մը մահուան հոտ կայ։ Նոյնիսկ արտաքին աշխարհէն եկած հովերուն եւ հարուածներուն դիմաց բոցը կրնայ որոշ չափով դիմանալ, եթէ իր ներքին ուժին՝ հաւատքի իւղին մատուակում մը չէ ցամքած եւ կրնայ վերստին բոց տալ լապտերին, փոթորիկի անցքէն ետք...։ Մէկ խօսքով՝ էականը իւղին, ներուժին անաղարտ եւ ինքնալից պահպանումն է։

Կը հաւատամ, որ այդ ներուժն է, հաւատքի շաղուածութիւնը մեր գոյութեան տարրերուն հետ, որ կեանքի կոչուած հայ գիրքերուն կեա՛նք կու տայ մեր կեանքերուն մէջ։ Այդ հաւատքին ներգործութեան մէկ դրուագն է ինքնին Հայ Գիրքի այս ցուցահանդէսը, որ 12 տարիներու կենսագրութիւն մը ունի արդէն եւ սակայն ինք կենդանի, շարունակուող, աճող պատմութիւն մը կ՚ապրի Կաթողիկոսարանիս պատմութեան յառաջնթացին եւ Հայ ժողովուրդի կեանքի անդաստանին մէջ։

Հետեւաբար, երկոտասաներորդ տարուան այս հանգրուանին, հոգեկան բաւարարութեան, լիութեան եւ գոհութեան զգացումներով կ՚ողջունեմ ձեզ՝ ներկաներդ եւ տակաւին վաղը, կիրակի, եւ յաջորդող շաբթուան օրերուն գալիք հայորդիներդ, շնորհաւորելով ձեր մէջ հաւատքին կենդանութիւնն ու ամրութիւնը եւ, միանգամայն, մաղթելով, որ անոնք, որոնք ցուցահանդէսէն բացակայ են, կամ պիտի ըլլան, եւ կամ սկսած են անտարբեր դառնալ անոր հանդէպ, գէթ հեռու պահեն իրենց սրտերը Հայ Գիրքի հանդէպ իրենց հաւատքի ընդարմացման վտանգալից փորձութենէն...

Մա՛նաւանդ այս տարի։

Եւ ինչո՞ւ։

Եթէ գիտախնդիր հետազօտող մը համակարգիչ մեքենայով մը (computer) կարենար հայկական ձայնասփիւռի, հեռատեսի-

յի, մամուլի եւ գիրքերուն վրայէն բռնել եւ հաւաքել ամէնէն շատ գործածուած բառը, նոյնիսկ եթէ դիմէր հայրենակցութեան օտարալեզու, ոչ–հայկական միջոցներուն (mass media communication), որոնք հայ կեանքին շուրջ արտայայտուեցան անցնող աւելի քան մէկուկէս տարուան ընթացքին, ապահովաբար վիճակագրական տուեալներու առարկայական փաստերով պիտի հաստատէր, որ ամէնէն շատ գործածուած բառը Ղարաբաղն էր, իր հայադրոշմ սկզբնատիպ Արցախ անուանով միասին:

Կը յիշէք — ինչպէ՞ս կրնաք մոռնալ —, որ 1988 Փետրուարի 20ին էր, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պետական խորհրդարանը պաշտօնապէս քուէարկեց պատմական որոշում մը Ղարաբաղի շրջանը միացնելու իր մայր կոճղին՝ այսօրուան Խորհրդային Հայաստանին: Եօթը տասնամեակներու ընթացքին ճնշուած, խլացնի տակ խեղդուած իգձ մրն էր, յարուած ձգտում մը, արդար պահանջք մը եւ բնական ձգտում մը, որ ահա յանկարծ կը փոթորկէր ողջ Հայութիւնը, Երեւանէն մինչեւ Սիսիւանի շրջակայքերը: Ո՞ր հայու ականջին մէջ կրնայ մահ գտնել միահամուռ եւ ուժգնաշնչա գոչում մը, Հայութեան էութեան պոռթկում մը Ղարաբա՛ղ, Ղարաբա՛ղ, Ղարաբա՛ղ հնչումներով հագարաւոր անգամներ Երեւանի փողոցներուն եւ հրապարակներուն վրայ արտասանուած եւ աշխարհի չորս ծագերուն արձագանգող:

Եւ ես յանախ հարց կու տայի—

Ի՞նչ էր պատճառը, կամ որո՞նք էին պատճառները այս անանախընթաց պոռթկումին, որ ո՛չ միայն Հայաստանի եւ Հայութեան համար չտեսնուած բան էր վերջին եօթանասնամեակին, այլեւ անսպասելի եւ ապշեցուցիչ երեւոյթ էր համայն Խորհրդային Միութեան մէջ, եւ հիանալի պատկեր՝ ամբողջ աշխարհին համար:

Բնականօրէն, պատմաբանները, քաղաքական դիտողներն ու վերլուծող դիւանագէտները կ՝որոնեն, կը գտնեն եւ կը հիմնաւորեն մէկէ աւելի պատճառներ: Այստեղ անոնցմէ եւ ոչ մէկուն անդրադառնալու նուազագոյն կարիքը կայ: Եւ ոչ այնուհիմ հարկ եղած հմտութիւնն ու կարողութիւնը այդ բաներուն մէջ քալելու: Ինծի համար, այսօր, մա՛նաւանդ այս Յուցահանդէսին, անկարելի է Ղարաբաղ հայացուոց բառին արձագանգը չլսել՝ անդրադառնալու համար պատճառներէն այն մէկուն, որ խորախաւ պատճառը կը նկատեմ բոլոր պատճառներուն եւ զոր սերտօրէն առընչուած կը դատեմ այս Յուցահանդէսի իմաստին եւ նպատակին:

Արցախի մէջ, որ մեր պատմութեան ամէնէն հայատրոփ շրջաններէն մէկն է եղած, 1920ական թուականներէն սկսեալ շեշտօրէն հայատիպ այդ նկարագիրը սկսած էր ուժգնիլ ա՛յնքան՝

որ այլեւս հայ գիրը, հայ լեզուն, հայ դպրութիւնը, նահանջի վերջին շարքերուն հասեր էին ձայնաւոր ոլորքներուն, հեռատեսիլի պատառաններուն վրայ, մամուլի էջերուն կամ գիրքերու ծալքերուն մէջ: Լեռնային Ղարաբաղը ո՛չ միայն քաղաքականապէս եւ պետականօրէն, վարչականապէս ու կազմակերպային տեսակէտով կրնայ անհայանալ, այլասերիլ, մա՛նաւանդ շարասերիլ, այլեւ՝ գիրի ու մշակոյթի հայակնիք իր դիմագիծին մէջ այլափոխուիլ, օտարանալ: Մեզմէ ո՞վ չի յիշեր, որ 1988ի Փետրուարեան յեղակարծ ընդվզումի, համազգային շարժումի շքեղ դրսեւորումներուն ընթացքին բացայայտ նախանձախնդրութեամբ շեշտուեցաւ հայ գիրին ու լեզուին արդար տիրականութեան պահանջը ձայնաւորի եւ հեռատեսիլի, մամուլի եւ գրականութեան, դպրոցի եւ մշակոյթի ծրագիրներուն եւ բովանդակութեանց մէջ:

Պատմաբանները մեզի յստակօրէն կ՚ըսեն, որ Արցախի շրջանը միջնադարէն սկսեալ «ապրում էր մշակութային եռուն կեանքով»: Բացի բազմահարիւր եկեղեցիներու, վանքերու եւ ճարտարապետական այլ կառոյցներու ամենաճոխ կերտումներէն, այնտեղ «ծաւալուել է հոգեւոր ու մշակութային կեանքը եւ ստեղծուել են բազմաթիւ գրչագրեր» (Հայկական Սովետական Հանրագիտարան», *Բ. հատ.* Արցախ, *էջ 151)*:

Պատմաբանները մեզի կ՚ըսեն, որ Հայաստանի հողին վրայ «էջմիածնից յետոյ հայկական բնաշխարհում երկրորդ տպարանը ստեղծուել է Արցախի Շուշի քաղաքում» (Թաֆայել Իշխանեան, «Հայ Գիրքը», *էջ 111, Երեւան 1981)*:

Պատմաբանները կը վկայեն, թէ 1828 թուականին այնտեղ հիմնուած տպարանին մէջ հինգ տարուան ընթացքին, մինչեւ 1833, «լոյս տեսան երկու տասնեակից աւելի գրքեր»:

Պատմաբանները կը հաստատեն, որ «1828ին Շուշիում ստեղծուած տպարանը զարկ է տալիս ո՛չ միայն գրահրատարակչութեանը, այլեւ՝ պարբերական մամուլի հրատարակմանը»:

Պատմաբանները կը յիշատակեն, որ Արցախի միայն Շուշի քաղաքին մէջ, ուր այսօր ազրպէյճանական ծուխին մէջ կը խեղդուին հայկական չունչը, «նախասովետական շրջանում հրատարակուել են 21 անուն թերթ եւ հանդէս, որից 19ը հայերէն, 2ը ռուսերէն»:

Եւ ի՜նչ թելադրական, ազգայնաշունչ ու մարդկայնօրէն ազնուացուցիչ անուններով թերթեր — «Հայկական աշխարհ», «Քնար Խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդէս» *հոչակաւոր պարբերականի, Ա. Գիրքը՝ 1896,* «Ղարաբաղ» *եւ օրեայ թերթ,* «Միածան», «Փայլակ», «Պայքար», «Սրինգ», «Աշակերտ», «Եռանդ», *եւայլն*:

Ինչպէ՞ս չընդվզիլ ի տես հայ գիրի անչքեղացումին, այս սքանչելի եւ հոգեսնունդ խամրումին, տպագրական մամուլի

խափանումին, հայ գրականութեան մաշումին: Ճիշդ է, որ առանց հողի չկայ հայրենիք, բայց նոյնքան եւ ճիշդ է, որ միայն հողով այլ չկայ հայութիւն:

Ղարաբաղեան շարժումը Արցախէն եւ Հայաստանէն դուրս աշխարհի բոլոր կողմերուն վրայ ունեցաւ իր յեղափոխիչ դերը հայ ժողովուրդի դիրքի ու լեզուի, գրականութեան եւ մշակոյթի մարզերէն ներս: Հոգեկան խորագոյն ցնծութեամբ հայ մամուլի մէջանցեալները կարդացի պերճախօս եւ սքանչելիօրէն թելադրական վկայութիւն մը, ըստ որուն՝ անցնող տարուան ընթացքին Մոսկուայի մէջ, ուր նախապէս հայերէն լեզուն ուսուցանող մէկ հատիկ դպրոց ու դասընթացք գոյութիւն չունէր, մէկ տարուան ընթացքին 17 կեդրոններ, միօրեայ դպրոցներ ու դասընթացքներ ստեղծուեցան հայերէն լեզուն, գիրն ու գիրքը կենդանի պահելու համար...:

Ղարաբաղեան շարժումին ճառագայթումը ի խնդիր հայ գիրի պայծառացարդման ու վերակենդանութեան...

Կը հասկնաք հիմա, յարգելի ունկնդիրներ, թէ ինչու այս տարուան Յուցահանդէսը, 12րդը, ուզեցի ձօնել Ղարաբաղի հայութեան: Ղարաբաղեան սքանչելատեսիլ եւ ճակատագրականօրէն խորախորհուրդ շարժումը դիւրին եւ աժան ձեւով երբեմն ճառախօսաբար շահարկողներու փորձութիւնէն շատ հեռու եւ շատ խոր՝ ահա ա՛յս իմաստով, արդար նախանձախնդրութեամբ ուզեցի յարգանք ընծայել այն հայութեան, որ հայ գիրն ու գիրքը, հայ լեզուն եւ հայ դպրոցը, հայ մամուլն ու հայ գրականութիւնը ուզեց վերստին կենդանացնել, հին արմատներուն նոր ծիլ պարգեւել, եւ մայրաստան հայրենիքին այդեստանին նորափթիթ ածուի վերածել պատմական հողը հայկական Ղարաբաղին եւ գայն մաքրել ու ազատել ագերիներու ցանած փուշերէն, որոմներէն, եւ սկզբէն, մոխիրէն, մուխերէն եւ ծուխերէն եւ անոնց խեղդողական եւ հեղձուցիչ, մահացուցիչ ու անէացնող ազդեցութենէն: Կարծէք Ներսէս Շնորհալիի բանաստեղծական բառերով ու ձայնային եղանակով հայութիւնը միահամուռ կ՚երդէր.

«Զար մշակոդին.
Զար սերմանց նորին.
Զորացո՛ զպտուղն»

Ղարաբաղ *բարդ բառը 16րդ դարու հայ հեղինակի մը (Յովհաննիսիկ Մարեցի) կողմէ թարգմանուած է* «Սեւ այգի»: *Կը հաւատամ, որ հայ գիրով, հայ գիրքով, հայ լեզուով եւ հայ դպրոցով, հայ եկեղեցիով եւ հայ գրականութեամբ ան պիտի դառնայ նոր ու ծաղկուն այգեստան հայութեան՝ տարիներով հաւաքուած սեւը թօթափելով: Եւ ահա ատոր համար այս տարուան իմ խօսքս կը մկրտեմ*

«Հայ Գիրքը՝ Այգեստանն Հայուն» *խորագրով:*

***

Ի՞նչ յուզիչ էր եւ միանգամայն որքա՜ն խորիմաստ այն պատմութիւնը, զոր անձամբ լսեցի հայ երիտասարդ բանաստեղծ, լեզուաբան ու մատենագէտ հայաստանցի բարեկամէ մը, որ ականատեսի անձնագրոյմ եւ թարմ վկայութեամբ կ՚ըսէր ինծի, թէ ինչպէ՛ս 1988ի Յուլիսին, երբ Հայաստանի մէջ Ղարաբաղեան ազատագրման շարժումը հասած էր արտայայտութեան բարձրագոյն աստիճանին, պետական վերին իշխանութեանց մտահոգիչ դառնալու չափ, եւ երբ Խորհրդային կարմիր բանակի հրասայլային միաւորներ սկսած էին Երեւան մուտք գործել, գտնուեցան հայ երիտասարդներ, որոնք իրենց մարմինները գետին փռեցին հրասայլերուն առջեւ, արգիլելու համար անոնց դնելիք արգելքը Ղարաբաղեան շարժումին կասեցման համար: Մտաւորական բարեկամս կ՚աւելցնէր, որ այդ երիտասարդները իրենց հետ եւ իրենց կողքին գետին փռեցին հայերէն գիրքեր, ըսելու համար՝ «ով որ Հայաստանի հողը կ՚ոտնակոխէ, ոչ թէ հողն է, որ ոտնակոխած կ՚ըլլայ, այլ նաեւ ու մա՛նաւանդ գիրքն ու մշակոյթը»: Որովհետեւ Հայաստանը միայն հող ու քար չէ, վանք ու եկեղեցի չէ, խաչքար ու յուշարձան չէ, բերդ ու պարիսպ չէ, կամուրջ ու աղբիւր չէ, այլեւ մագաղաթ ու գիրք է:

Հայաստանը հայ գիրքի այգեստանն է...

Հայոց հողը ոչ միայն մարտիրոսներու եւ հերոսներու արիւնով է ոռոգուած, այլեւ հայ գիրքերով է կանաչ մնացած:

Հայ Գիրքը հայ հողին կեանք կու տայ, հայ մարդուն՝ հաց, հայ մանկուոյն՝ սննդակաթ:

Հայ Գիրքը ապրող ուժ է, ապրեցնող ուժագործութիւն:

Տեսէք եւ լսեցէք, ու եթէ կրնաք, մի՛ յուզուիք.— ԺԵ. դարու աննշան հայ մարդ մը, Սիմէոն անունով, ԺԳ. դարուն Կիլիկեան մեր հայացեալ աշխարհին մէջ գրչագրուած եւ ծաղկազարդուած ձեռագրի մը յիշատակարաններէն մէկուն մէջ կը գրէ. «Դառն ժամանակներուն, այլազգիները մարդիկը նեղութեան կը մատնէին. վանականները փախուստ տուէր էին, ամէն մէկը մէկ տեղ: Գիրքերը գետեղեր էին Սուրբ Կարապետի վանքին դարաններուն մէջ: Եւ որովհետեւ ոչ ոք կար, որ անոնց խնամք տանէր, անոնք (գիրքերը) քայքայուեցան: Ժամանակ անցաւ, երբ բացին դարակները, տեսան, որ գիրքերը փտած էին: Մարդիկ քով քովի եկան եւ զանոնք ամփոփեցին հողին մէջ» (Տե՛ս Վիրէն Խեչումեան, «Գիրք գրոց», էջ 125–126): Գիրքերուն հետ կը վերաբերուէին իբրեւ ապրող էակներու, որոնց մէջ կեանք կար, կենսատու ուժ:

Նոյն ԺԳ. դարու մեր ամէնէն մեծ գրագէտներէն առակագիր Վարդան Այգեկցին կը կտակէ մեզի հետեւեալ ճշմարտու-

թիւնը. ճշմարտութիւն՝ որ ոչ երէկ ունի, ո՛չ այսօր եւ ոչ ալ վաղը, այլ յաւիտենականութեան յոյսէն կ՚առնէ իր մշտաճառագայթումը.

«Մեզմէ եւոք աշխարհի գալիք մարդիկ, վա՜յ ինձ, որովհետեւ կ՚ուզեմ ձեզ տեսնել, բայց չեմ կրնար, քանի հոգ դարձած պիտի ըլլամ գերեզմանին մէջ: Ուրեմն, այս գիրքերովս կը խօսիմ ձեզի հետ միշտ հինգ եւ եօթ սերունդ, եւ հոգիով ձեր մէջ կը մնամ»:

Իր մեծութեանը մէջ որքա՜ն համեստ էր այս հեղինակը: Ոչ թէ հինգ կամ եօթը սերունդ, այլ եօթն անգամ եօթանասուն սերունդ ինք եւ իր նմանները կը մնան մեր մէջ. փաստօրէն կան այսօր, եւ դեռ պիտի մնան «մինչեւ ի կատարած աշխարհի»...

Հայ Գիրքին ուժը անպարագրելի է:

Հայ Գիրքին կեանքը՝ անվախճան:

Եթէ դուրս պոկէք հայոց գիրքերը մեր կեանքէն՝ սպաննած կ՚ըլլաք կենսագրութիւնը հայ ժողովուրդին. անյիշողութիւն մը (amnésie) *յառաջ բերած կ՚ըլլաք եւ կեանքի մէջ կեանքը սպաննած կ՚ըլլաք:*

Ի՞նչ պիտի զգայ անհատ մարդը, եթէ յանկարծ արկածով մը կամ հիւանդութեամբ անյիշողութեան դատապարտուի...

Ի՞նչ պիտի ըլլանք մենք իբրեւ հայ ազգ, եթէ հայ գիրքը թողքենք, հայ կեանքի կենդանի կենսագրութիւնը մոռացութեան տանք:

Ո՞վ պիտի պատմէ մեզի, թէ որո՞նք էին, ինչպիսի՞ մարդիկ էին, ի՞նչ գործեր կատարեցին մեր նախնիք:

Հայ Գիրքը հայոց յաւերժութեան մշտարարբաս յուշարարն է, կարկաչուն ակնադրիւրը մեր «կենդանի ջուր»ին, հասկ կապելու կարող ցորենահատիկը մեր «կենդանի հաց»ին:

Եւ ասիկա ո՛չ միայն անցեալին համար, այլեւ՝ մեր ներկային մէջ: Անցնող ամսուան ընթացքին, Գիրքի միջազգային ցուցահանդէսի մը առիթով, արդի Հայաստանի մէջ պատրաստուած անգլերէն գրքոյկի մը մէջ՝ «Armenian Book» *խորտգիրին տակ, կարդացի.*

— Նախապէս *«Հայպետհրատ»* եւ այժմ *«Հայաստան»* անունով գործող հրատակչատունը իր գոյութեան 69 տարիներու ընթացքին 22·670 անուն գիրք հրատարակած է, 173·568·000 տպաքանակով, թէ՝ մինչեւ 1990ի վերջը այդ թիւերը պիտի բարձրանան 23·600ի եւ 180 միլիոնի:

— *Երեւանի Համալսարանի* հրատարակչատունը տարին 120 անուն գիրք կը հրատարակէ, 240·000 տպաքանակով եւ իր ամբողջ գոյութեան տարիներու ընթացքին՝ 2·100 անուն գիրք է հրատարակած, 5·200·000 տպաքանակով:

— *Գիտութեանց Ակադեմիայի* հրատարակչատունը՝

3·521 անուն գիրք, 7·305·000 տպաքանակով· տարին 120 անուն գիրք, 260·000 տպաքանակով:

— «*Լույս*» անունով ստեղծուած հրատարակչատունը իր 34 տարիներու գոյութեան ընթացքին՝ 5·756 անուն գիրք, 127·764·000 տպաքանակով, տարեկան արտադրութիւնը ըլլալով 220 անուն գիրք, 4·760·000 տպաքանակով:

— «*Խորհրդային գրող*» հրատարակչատունը՝ 2·571 անուն գիրք, 40 միլիոն տպաքանակով:

— «*Արևիկ*» անունով մկրտուած հրատարակչատունը՝ 3·826 անուն գիրք, 49·500·000 տպաքանակով:

Եւ դեռ՝ առանց հաշուելու տարեկան պարբերական, ամսական, շաբաթական, օրական հանդէսներն ու թերթերը…

Եկուր հիմա եւ մի՛ ըսեր·

«Գիրք պատմեն գիտուս Հայաստանի»:

* * *

Սփիւռքի մէջ, ուր մենք հայրենի հողին ամէնօրեայ սնունդէն՝ «հանապազորդ հաց»էն կտրուած ենք, որքա՜ն, ա՜հ, որքա՜ն կարիքն ունինք այդ գրքային հայրենիքին, որ հոգին համբ, հայութեան կենսոլորտը բերէ եւ խառնէ մեր օտարակեաց եւ բազմազոյն կացութիւններուն մէջ…: Աւելին ըսելը աւելորդ է: Ես մէկ կ՚ըսեմ, դուք հազար հասկցէք…

Ահա թէ ինչու ես անձնապէս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ընդհանրապէս այսքան մեծ կարեւորութիւն կ՚ընծայենք Հայ Գիրքի մշակումին, հրատարակումին եւ տարածումին: Պաշտամունքեան, գործնական թելադրանքի միջոցներու արդիական դիւրութիւններու պարագայական օգտագործումի հարց չէ սա, ոչ ալ նիւթական շահի մտահոգութեան արդիւնք: Մեզի համար՝ Հայ Գիրքի հրատարակութիւնը ազգային, կրօնական, մշակութային, քաղաքակրթական առաքելութեան հարց է: Գոյատեւման պայքարի հարց է: Լինելութեան խնդիր է:

Անցնող մէկ տարուան ընթացքին, անցեալ Հոկտեմբերի ցուցահանդէսէն մինչեւ այսօրուան ցուցահանդէսը, Անթիլիասի հրատարակչատունէն 24 անուն գիրք է լոյս տեսած, ոմանք լայնածաւալ տարողութեամբ եւ մեծաւ մասամբ հիմնադրամներու տարեկան եկամուտով, անհատական մեկենասութեամբ կամ Կաթողիկոսարանի սեփական — եւ այնքան նեղ — նիւթական միջոցներով: Լիբանանի մէջ ձեր բոլորին այնքան մօտէն եւ տառապագինօրէն ծանօթ անտանելի կացութեան մէջ, էլեկտրականութեան, վառելանիւթի հապաղիւտութեան, փոխադրական միջոցներու դժուարութեանց ծայր աստիճանին հասած պայմաններուն ներքեւ, ամիսներով տեւած ծանր եւ յաճախագարկ ռմբակոծումներու եւ սանկծուած անապահովութեան, վախի, անկոր-

ծութեան, անտրամադրութեան անձկալից հոգեկան վիճակներու տակ, չարունակել այս ծառայութիւնը՝ ուրիշ ձեւով չի կրնար բացատրուիլ, բայց միայն ճրագին լոյսն ապահովող իւղի հնագոյն ուժովը հաւատքին՝ հանգէպ Հայ Գիրքի անժամանցելի էականութեան, հայութեան գոյատեւման եւ զարգացման նուիրական պարտաւորութեան ճամբուն վրայ:

Լիբանանահայութիւնը, Սփիւռքի մէջ, կոչուած է այլ առաքելութեանց չարքին, Հայ Գիրքի սպասաւորութեան: Սփիւռքի յայնատարած ցրուածութեան մէջ հայ գիրքի ովասիս մը պէտք է մնայ ան: Հրատարակչական միւս տուները, Մայրաքաղաքէս համեմատաբար նուազ նպաստաւոր պայմաններու տակ գործեցին անցնող այս ամենաղժուարին տարուան ընթացքին: Այսու հանդերձ, իրենց գերագոյն կարելին ի գործ գրին իրենց տուրքն ընծայելու Ս. Մեսրոպի սրբազան գիրի հրիտակին:

Բայց, յրնդհանուրս, զգալի է նուազումը եւ նօսրացումը ստեղծագործական, ինքնատիպ արտաբերութեան *մտաւորական, գրական, հայագիտական ճիգին: Անթիլիասի Դպրեվանքին, Համազգայինի ճեմարանին, Մելքոնեան Կրթական Հաստատութեան, Հայագիտական ամպիոններու եւ այլ բարձրագոյն վարժարաններու ներկայ ուսանողութեանց շարքերուն մէջ հազիւ նշմարելի, Դիոգինէսեան լապտերով որոնելի է հայ գիրի* նոր մշակներու *ծնունդը:*

Հայ գիրքը սոսկ անցեալի ժառանգութիւն չէ:

Հայ գիրքը նորաստեղծութեան ուղիով պէտք է ընթանայ:

Հետեւաբար, Հայ Գիրքի 12րդ այս ցուցահանդէսը վայելք մը բլլալով հանդերձ, թող դառնայ խթանիչ մղում մը, որպէսզի նոր անուններ աւելնան հայոց գպիրներու շարքին, որպէսզի նոր անուններով կենդանանայ, թարմանայ եւ ճոխանայ չգթան հայոց կենդանաբար մատեաններուն:

***

Այս տարուան իմ խօսքս փակելու համար անոր կը միացնեմ իմ հոգեւոր եղբօր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի խօսքը, այնպէս՝ ինչպէս մեր սիրտերը իրարու են միացած, մեր ձեռքերուն հետ միասին:

1987ի Նոյեմբեր 6ին, Վեհափառը Լոս Անճելոսի մէջ, իր հովուապետական այցելութեան ընթացքին, հայ դպրոցական աշակերտութեան համահաւաք բազմութեան մը իր հայրական պատգամը ուղղած առեն հետեւեալ դրուագն է պատմած.

«Միջնադարեան մի աւանդութիւն եմ կարդացել մի գրքում: Հրեայ բաբբի մը օր մը մահուան կը դատապարտուի: Խարոյկի վրայ մարմինը պիտի այրուէր: Բաբբին իրեն հետ

կ'առնէ իր ազգի սուրբ գիրքը՝ *Թորան*, որ մագաղաթի վրայ գրուած էր ֆանի մը մեթր երկարութեամբ: *Թորայի* մագաղաթը կը փաթթէ իր մարմնին չորս կողմը այն յոյսով, որ ան զինք պիտի պաշտպանէ եւ փրկէ կրակի բոցերէն: Խարոյկը կը վառեն. մարմինը կ'այրուի. *Թորայի* մագաղաթը կը փաթթէ իր մարմինին չորս կողմը այն յոյսով, որ ան զինք պիտի պաշտպանէ եւ փրկէ կրակի բոցերէն: Խարոյկը կը վառեն. մարմինը կ'այրուի. *Թորայի* մագաղաթն ալ կ'այրուի: Բայց մագաղաթի վրայ գրուած տառերը թռչուններու կը վերածուին եւ դէպի երկինք կը թռչին...»:

Երկինք *բառը այստեղ մեր գլխուն վերեւ կապոյտ տեսնելու սա անջրպետային իրականութիւնը չէ: Երկինքը յաւերժութեան խորհրդանիշն է: Մեսրոպեան այբուբենը երկինքէն իջած, երկրի վրայ մեր հայութեան երկինքը ստեղծելու, մեր յաւերժութիւնը կերտելու համար:*

Որքա՜ն մագաղաթ ու թուղթ այրուեցան մեր աշխարհին մէջ:

Որքա՜ն քարեղէն արձանագրութիւն փոշիացաւ մեր երկրին մէջ:

Բայց անոնց մէջէն գիրը միշտ վեր թռաւ եւ երկնային անջնջելի ու անխափանելի ուղիներով քալեց եւ քալեցուց հայ ժողովուրդը:

Այսօր այստեղ, Անթիլիասի մէջ, այդ երկինքէն պատառը մըն է ինկեր երկրի վրայ, այս պատռուած Լիբանանեան մեր երկրին վրայ, իր անմահութեան երգը երգելու:

Վայելեցէ՛ք երգը, երկինքը երկրին խառնեցէք, դնայուն մնայունով պատռուատեցէք եւ, հաւատացէ՛ք, որ այն ատեն Ղարաբաղեան չունչով ձեր կեանքը կը դառնայ Հայ Գիրքի մշտադալար այգեստանը...

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

21 Հոկտեմբեր, 1989
Անթիլիաս.

ՌԻԱՏ ՖԱԽՈՒՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԿԱՄՈՒՐՋ Է ԱՐԱՐՔԻՆ ԵՒ ԱՆՈՐ ՀԱԿԱՋԴԵՑՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Լիբանանցի բանաստեղծ, բառերգիր, գրականագէտ եւ նրատարակագիր։ Բանաստեղծութեան անդամանէն ետեր մուտք կը գործէ նոր ոճական բուսական թեթեւ տարրերու եւ կը գտնուի կեդրոնական դիրքի մէջ՝ Ասոնցմէ հիմնադրած «Մաուաքիֆ» հանդէսին։

Թէեւ Ֆախուրի գրող հրատարակած է չորս հերթագիրներ։ Բնութագրական-տեսական հիմնական հատորներ եւ արձակ ու բառարանական այլ գործեր։

Հաւատալով կը կարծեմ, որ տեսիլք ունեցող բանաստեղծը, փոփոխութիւններու բանաստեղծը, նոր ընկերութեան մը մէջ նոր լեզուի մը հիմերը հաստատող բանաստեղծը յետամնացութեան վարկածին պատասխանատուներէն մէկն է՝ թէկուզ տարբեր համեմատութիւններով։ Որովհետեւ, խորքին մէջ, ան այս երկչոտ կացութեան արդիւնքն է, ծնունդը այն իրականութեան, որ վերանորոգելու, վերակառուցելու կամ վերաքննարկելու առումով ոչ մէկ յոյս կը ներշնչէ։ Այսինքն՝ յստակ վարկածէ մը մեկնելով կ'ուզեմ ըսել, որ բանաստեղծը, փոփոխութեանց սիրահար ան է բանաստեղծ պարտաւոր է ըլլալ լեզուափոխական մը, նոյնիսկ բնկերային, քաղաքական, տնտեսական եւ մշակութային տիրող տակնուվրայութեան տարրերականներուն մէջ, որովհետեւ լեզուափոխական բանաստեղծը առհասարակ կը ակսի յարձակումով՝ վերամբարձելու ուժով սրբագրելու համար նոյնիսկ կեանքին կողմէ անսրբագրելի կարծուած թերիները։

Արդարեւ, լեզուափոխութեան եւ վերակառուցման տարրը կարելի կը դառնայ միմիայն այն պարագային, երբ նոր բանաստեղծը կը յաջողի վեր բարձրանալ ստեղծագործ բանականութեան հետ ամէն կապ խզած ազդու կէն, յարձակողական եւ ստեղծագործ բանականութեամբ կը հարստացնէ իր միջամտութիւններն ու ընկերային – մշակութային արտայայտութիւնները, եւ տեսիկա՝ այնպիսի՛ զգացումներով եւ կեցուածքներով, որոնք վեհագոյն փորձառութիւնը կ'ամփոփեն բարեշրջման գործընթացին եւ ոչ թէ խօսքին մէջ, այլ՝ պատմական աշխատանքային յատկանիշներով բնորոշուած առարկայական փոփոխութիւններու կենսափորձին մէջ։

Եւ այս բանաստեղծը, որ կ'ապրի յետամնաց ընկերութեան մը մէջ եւ իր խուսնկը չի ծիւեր բանականութեան սուլթանին առջեւ, պարզապէս յետամնացութեան, տատամսումներու եւ նահանջի ծոմուն մէջ լողացող բանաստեղծ մըն է։

Բանականօրէն եւ ընկերաբանօրէն տարտղնուած միջավայրի մը մէջ ապրող լեզուափոխական բանաստեղծը կը բանայ իր ժողովուրդին չրթունները եւ ինք կ'ըլլայ արարքին եւ հակազդեցութեան միջեւ ջերմ ու հաղորդական առաջին կամուրջը հաստատողը։ Եւ այն բանաստեղծը, որ իր ժողովուրդին կ'ընծայարերէ բանաստեղծական կենդանի լեզու մը, ամենայն պարզու–

թեամբ ըսեմ՝ ան իմ քոդարկուած անձանձիս է, զոր կը փնտռեմ այս անող տակնուվրայութեան մէջ։

Իմ կարծիքովս՝ բանաստեղծութիւնը մեզ յեռամնացութենէն բաժնող ժամանակահատուածն է։ Եւ ստեղծագործ բանաստեղծը այս երկուքը իրարու միացնող գործնական կապն է՝ իրարու մօտեցնելու համար նոյնիսկ ոչ–բանական ընկերութեան մը ղիրքորոշումները, գաղափարները ու տենչերը։

Մեր նոր բանաստեղծութեան ներկայացուցիչը՝ ըլլալու վկան այս յեռամնացութեան· ան մնաց անոր մէջ եւ տատանումներ ապրեցաւ անոր հետ՝ սրտարէն մինչեւ վկայութիւն եւ ապտնդէն մինչեւ մահ։ Սակայն գալիք ժամանակին մէջ, պարտաւոր է ըլլալ հրդեհը վկայութեան եւ բանտերուն, ապտնդին եւ մահուան, եւ դեռ՝ իրականութիւնը փոխող եւ անոր ներկայացուցիչը հանդիսացող յեղաշրջական վտանգ մը։

ԱՒԱՆԴԱԿԱՆ ՏԱՂԱՁԱՓՈՒԹԵԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Արդիականութիւնը թերի ծրագիր մըն է։ Ընել կ'ուզեմ, որ արդէն միշտ ալ մասնակի եւ պակաստաւոր կ'ըլլայ, որովհետեւ կը հրաժարի անցեալէն՝ անոր բարձրութենէն, ներկայէն՝ անոր հրապոյրէն, եւ ապագայէն՝ իր խանդավառութեան իսկ բերումով։ Մինչդեռ, առանց անցեալին, ներկային եւ ապագային չկայ ո՛չ մէկ լրջութիւն, ո՛չ մէկ նորութիւն, նոյնիսկ ո՛չ մէկ սքանչացում ստեղծող արկածախնդրութիւն՝ արուեստներու, մարդկութեան եւ ընկերութեան մէջ։

Ուրեմն, արարական բանաստեղծութեան մէջ, «արդիականութիւնը» իր խորքին մէջ անամէջ եզր մը կամ բառային տակնուվրայութի՞ւն մըն է։

Կը կարծեմ, որ այս հարցադրումին դիմաց կանգ առնելը կամ պատասխանելը բանաստեղծներուն պարտաւորութիւնը չէ։ Որովհետեւ ան է մեծ բանաստեղծ, նոքարար ըլլայ թէ դասական, միաժամանակ կը բերէ անոր բովանդակութիւնն ու ձեւը։

Եւ բանաստեղծական տարբեր տեսակներուն մէջ կատարուած փոփոխութեանց իսկ բերումով, «արդիականութիւն»ը պարտաւոր է վերատեսութեան ենթարկել իր պատմական ձեւարարութիւնը, տարաբնոյաւոր բանաստեղծներուն եւ անոնց ներկայութեան հանդէպ արդար ըլլալու համար։ Եւ եթէ բանաստեղծութիւնը ինքզինքը շարունակաբար տեսնելի յատուցընթաց բանականութեան մը վճռակամութեամբ, այդ պարագային ինք պիտի դառնայ գոհը ա՛յն նպատակին, որուն համար աշխարհ եկաւ — բանաստեղծութեան յեղափոխականացման, նոր լեզուով մը գոյն այլափոխելու եւ, հետեւաբար՝ ապատագրելու անոր կշռոյթը աւանդական տաղաչափութեան միապաղաղ յանդարանութենէն, կատարելով գիտը տաղաչափականներ համակարգի մը, որ պիտի կատարէ երաժշտական բաժանումը արտաքինական կայուն բանաստեղծութեան կենսաշարժ աւանդներուն, միշտ առաջնորդուելով բանաստեղծական ժամանակակից տեսիլներով բանաստեղծութեան արուեստը արարելու եւ ոչ թէ յանդարանելու մեկնակէտէն։ Եւ այս գրութիւնը հաւանաբար իրականանայ աւանդական տաղաչափութիւնը վերջնականապէս սպաննելով եւ պաշտպանելով տեսութիւնները արձակ բանաստեղծութեան, լոյսի մշակոյթի բանաստեղծութեան, որ իր հաւանականութեանց, բովանդակութեանց եւ

ձևերուն մէջ կը պարփակէ այլափոխութեան, յեղափոխութեան եւ դիմադրութիւնի իրողութիւնէն աւելի խոր տրժէքներ։

Վերջապէս, պայման չէ, որ արձակ բանաստեղծութիւնը ըլլայ «արար նոր բանաստեղծը» ազատագրող վերջնական մէկ ձեւը՝ դուրս բերելու համար դինք յանգերու կազապարներուն մէջ տեղքայլ բնելու կացութիւնէն, այլ անիկա լիկուական այն հաւանականութիւնն ու միշտ պայթուցիկ բովանդակային թեւագրականութիւնն է, որ կը պարփակէ 2000 տարուան քաղաքակրթութեան բացուող պայքար մարդուն բոլոր հոգերն ու տագնապները։

Անիկա նաեւ բնական թոքն է որեւէ ստեղծագործութեան եւ իր թթխմորին մէջ կ՝ամփոփէ յաւիտենութեան տոկուն հաւանականութիւնը, զոր ընդդիմադիր բանաստեղծը կոչեց արդի, արդիական, նոր կամ այլափոխող բանաստեղծութիւն։

Ըսի՝ արդիականութիւնը թերի ծրագիր մըն է։ Եւ որեւէ խօսք՝ արուեստներուն, գրականութեան, կեանքին, մարդուն եւ բնկերութեան մասին, թերի է իր կարգին։ Ուրեմն՝ ինչպէ՞ս կարելի է դիտել արարական բանաստեղծութեան այս տակնուվրայութիւնը, որ շարունակաբար եւ ձեւականօրէն կ՝ապրի յանուն արդիականութեան՝ գտարիւն քերթողութեան հաչուոյն, բանաստեղծի մը հետ, որ խօսքը հապաւ զգեստի մը պէս, իր եսին քարշ տալով հիւանդագին մտածում մը եւ միեւնոյն ձեւը, որ իրմէ փոխ առնելով կը կրկնեն արար բոլոր նորարար բանաստեղծները։

Ուրեմն՝ չկայ արդիականութիւն բանաստեղծութեան մէջ։ Այլ կայ միայն բանաստեղծը, որ կ՝ապրի փոփոխութեան տագնապը, ամէն անգամ, որ կը գտայ, թէ ինք արարչութիւն եւ ծնունդ բառին առաջին տառն է։

Եւ բանաստեղծը, այսօր, նոյնինքն այս բառն է եւ, աւելի ճիշդ սահմանումով՝ Լոկոսը։

ՌԻԱՏ ՖԱԽՈՒՐԻ

ՈՒԱԼԻՏ ՄՈՒՆԻՐ

ՏԱԳՆԱՊԸ ՔՍԱՆ ՊԱՏՃԱՌ ՈՒՆԻ

Ուալիտ Մունիրի անունին առաջին անգամ հանդիպեցանք «Ան–նագիտ» ամսագրերին մէջ։ Իր մասին լուսակ տեղեկութիւններ ծաղելու համար դիմեցինք լիբանանցի մէկէ ասելի գրականագէտներու եւ խմբագիրներու. սակայն մեր ճիգերը մնացին ապարդիւն։

Կ'ենթադրուի, որ ան մաս կը կազմէ արաբ երիտասարդ բանաստեղծներու եւ գրականագէտներու նորագոյն սերունդին։

Իմ դնահատումովս՝ արաբական արդի բանաստեղծութիւնը խակապէս կ'ապրի յուրջ տագնապ մը. գրական կարգ մը երեւոյթներ — եւ ոչ ամբողջութիւնը երեւոյթներուն —, որոնք կը տիրապետեն մեր ստեղծագործական կեանքին վրայ, կ'արծարծեն զանազան առանցներ եւ առաջին հերթին կը պատանքուին այնպիսի՛ թիւրիմացութիւններով, որոնց նախապէս ծանօթ չէին արաբ ստեղծագործողը կամ քննադատը։ Այս գլխաւոր պատճառները, որոնք նպաստեցին այս թիւրիմացութեան ընդհանրացումին, եւ պիտի բուն արարիմ ամփոփելով հետեւեալ վեց կէտերուն մէջ.—

1.— Ազատներու կորուստը,

2.— Քաղաքակրթական ժառանգին ներկայացուցիչը չկարենալ դառնալու անկարողութիւնը,

3.— Հասկացողութեանց խառնաշփոթութիւնը եւ եզրերու թիւրիմբռնումը,

4.— Արդիականութեան միայն ձեւական մասով հրապուրուիլը,

5.— Նմանութեան շրջանակին մէջ սայթաքիլը եւ առանձնայատկութեան սքսորումը,

6.— Ընկերային ու քաղաքականը գեղագիտական պարունակին մէջ չկարենալ ձուլելու իրողութիւնը, որուն պատճառով ստեղծագործութիւնը չկրցաւ ներառնել իրականութիւնը՝ իր իսկ էութեամբ, եւ կամ՝ ձախողեցաւ հաստատել կապը եսին եւ առարկայական տուեալին միջեւ։

Ազատներու կորուստին առիթով, օրինակ, կրնամ մատնանշել երկու բացայայտ երեւոյթներ, որոնք կը պարզեն մէկ երեսը այս տագնապին, զոր կ'ապրի արաբական արդի բանաստեղծութեան հոլովոյթը.—

ա) Ժառանգութեան առիթով պարզուած տպիսութիւնը, կամ զայն չկարենալ հասկնալու եւ իրացնելու կարողութեան բացակայութիւնը,

բ) Կարգ մը նորարարներու այն յամառ կոչերը, որոնք կ'առաջադրէին ճանաչողական ամբողջական մերժում մի ենթարկել ազատները՝ նորարարութեան ուղին կրճատելու եւ իմացական ու ստեղծագործական նոր շարժումին հիմերը հաստատելու նպատակով։

Նոյնպէս, քաղաքակրթական ժառանգին ներկայացուցիչը չկարենալ դառնալու առումով՝ կրնամ մատնանշել երկու այլ պարագաներ.—

ա) Յատուկ ազատները մէկ պարունակի մէջ չկարենալ ձուլելու ապացոյցը կամ զայն իրը ամբողջութիւն դիտելու մօտեցումը՝ յատուկ ազատները վերջնականապէս ուրանալու նպատակով,

բ) Քաղաքակրթական աստանդներուն վրայ միայն լենելու արամադրութիւնը եւ «լեզուական դաստաձանութիւնը», այսինքն՝ թարգմանութիւնը անոր չափանիշներով կշռելու նեգմտութիւնը՝ մայր լեզուին բազմազան կարելիութեանց (կշռոյթ, պատկեր, շարահիւսութիւն) միջոցաւ արժեւորելու փոխարէն:

Ինչ կը վերաբերի երրորդ կէտին, պէտք է մատնացոյց ընել հետեւեալ երկու պարագաները.—

ա) Թարգմանութեանց մէջ նկատուած անբծախնդրութիւնը,

բ) Այս հասկացողութիւններուն կամ եզրերուն ծնունդ տուած բնական դրդապատճառները չկարենալ հասկնալու իրողութիւնը եւ հեռացումը անոր ոգին ամբողջականօրէն հասկնալու նախապայմանէն՝ բաւարարելով արտաքինին նկատմամբ ցուցաբերուած յանձնառութեամբ:

Տակաւին՝ կարելի է շարունակել թուումը պատճառներուն, բայց ես պիտի բաւարարեմ նշելով նաեւ երկու այլ կէտեր.—

ա) Ենթակայական եւ առարկայական պատճառներով իրականութեան հետ չկարենալ յարաբերելու թերութիւնը,

բ) Ինչ գիտակցութեան կորուստը, կամ՝ չգոյութիւնը այն արժէքին, զոր կը կոչենք աշխարհընկալում:

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԱԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ

Դժուար թէ ես կարենամ առաջարկել լուծումները այս տագնապին, առանց անդրադառնալու մեր ապրին ապրած ընկերային ու քաղաքական վատ մթնոլորտին վերջ տուող լուծումներուն: Ընկերային եւ քաղաքական տեսութիւններ բանաձեւելու կարողութիւնը ունեցող անձ մը չեմ, սակայն միաժամանակ ստիպուած եմ վճռակամօրէն ըսել, որ տարարական արդի բանաստեղծութեան տագնապի արտադրութեանց եւեին, զորս ես ամփոփեցի վերոնշեալ վեց կէտերուն մէջ, առնուազն կան ընկերային ու քաղաքական քսան պատճառներ: Հետեւաբար, լուծումներէն իրենց ընկերային ու քաղաքական դրդապատճառները քիչ մը կամ շատ հեռացնելով՝ ես այդ լուծումները պիտի գետեղեմ իրենց գեղարուեստական պարունակին մէջ եւ ըսեմ.—

1.— Ա. անդները վերակենդանացնելու հրամայականը՝ զանոնք իրենց արմատներէն եւ ոչ թէ դուրսէն յեղափոխականացնելու տեսլականէն առաջնորդուած:

2.— Քաղաքակրթական ժառանգութիւնը իր ներկայացուցչական շրջանակին մէջ գետեղելու եւ անոր ճշգրիտ գերակատարութիւնը ճշդելու պայմանը:

3.— Հասկացողութիւններն ու տարարները միաձուլելու անհրաժեշտութիւնը:

4.— Սեփական ինքնութեան մը լուրջ փնտռտուքը (զոր բանաստեղծը պարտաւոր է իրականացնել, ըլլալով իր եսին ձայնը) եւ փնտռտուքը հաւաքական ինքնութեան (զոր բանաստեղծը պարտաւոր է իրականացնել, ըլլալով ձայնը հաւաքականութեան մը, խումբի մը կամ դասակարգի մը):

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՌԱՆՑԱՆՔԸ ԿԱՄ ԱՆՀԵԹԵԹԸ ՉԷ

Խորքին մէջ, արդիականութիւնը արարական բանաստեղծութեան մէջ երբեք անամէջ եղած չեղաւ, այլ եղաւ մասամբ դանդիկացուած եղած մը։ Բնական է, որ արդիականութիւնը մեկի հրամցուած ամէն անհասկնալիին, ամէն անծանօթը կամ զառանցանքը եւ անիմաստը չէ։ Իմ համոզումովս՝ բանաստեղծական արդիականութիւնը իրողութիւնը այլափոխող գործընթացն մրն է, որ նաեւ նկատի կ՚առնէ պատմութիւնը, իսկ արդի բանաստեղծը անպայմանօրէն մարդաբէացող մը, մարդաբէ մը կամ բախտագուշակ մը չէ, այլ կորսուսեալ երկրամասը յայտնագործողն է եւ ոչ թէ ժամանակին ու փայրին մէջ գոյութիւն չունեցող երկրամասին գիւղ կատարող անձը։ Ան հորիզոններու պատասխանն է եւ ոչ թէ խենթութեան անձնատուր եղած տերվիշ մը։ Արդի բանաստեղծը երկրախոյզ մրն է, որ կը փնտռէ հանքերը, որպէսզի իր յայտնութիւնները մաքրագէտ հաղորդակցութեան հալոցքին մէջ։ Վերջապէս, ա՛յն յեղափոխականն է ան՝ որ կը ծառանայ աւանդներուն դէմ, գանոնք վերսին ստեղծագործելու եւ ոչ թէ բանաստեղծութեան յիշողութեան մէջ արտօրեալ համար։

Ուրեմն, յանգ ու կշռոյթ ունեցող բանաստեղծութիւնը բանաստեղծութիւն է (արդիական ըլլայ թէ ոչ արդիական), համաձայն իր ստանձնայատուկ էութեան եւ ոչ թէ իր պատկանած ուղղութեան։ Արձակ բանաստեղծութիւնը արդի բանաստեղծութիւն մրն է, որ կ՚ենթարկուի նոյն պայմաններուն։ Իմ համոզումովս՝ Նաֆֆարին, Հայլաժը եւ Ապոլ Թամմամը ուրիշ արդի են, քան մեր արդիապաշտ բանաստեղծներէն շատերը։

Հետեւաբար, արդիականութիւնը կայուն եւ յարափոփոխին արամախոհութիւնն է, ապա՝ անիկա յարաբերութիւն մի կրկնակ գործընթացն մրն է։ Երբեք կարելի չէ, որ արդիականութիւնը ըլլայ նուիրականացուած ամբողջական փոխարինութեան մը։ Այլ խօսքով՝ անիկա քիմիական տարրերուն վերարժանութիւնն ու հնչդումն է, կատարելու համար գիւղ այն հրաշալի մետաղին, որ իր էութեան մէջ կ՚ամփոփէ հիմնական բոլոր հատարրերը։

ՈՒԱԼԻՏ ՄՈՒՆԻՐ

(Շար. 2)

«ՄԻԱՑԵԱԼ, ԱՆԿԱԽ ԹՈՒՐԱՆԻԱ»

«ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» **2**

1987ին, Ապրիլի «Յեղափոխական գրադարան» մատենաշարի 2րդ թիւով վերհրատարակուեցաւ Չարեւանդի «Միացեալ, անկախ Թուրանիա» *աշխատասիրութիւնը, որ կը բացայայտէ Թուրքին կողմէ հայ ժողովուրդին ղէմ գործադրուած ցեղասպանութեան եւ Թշնամական կեցուածքներուն շարժառիթը, իր դանազան երեսներով:*

Առաջին անգամ 1926ին հրատարակուած այս ուսումնասիրութեան վերհրատարակութիւնը կը միտի մեր օրերու հայ երիտասարդութեան ծանօթացնել Թուրքերուն հետապնդած նպատակները.

Թէ՝ ի՛նչ են թուրքերու քաղաքական ծրագիրները, որոնք ծանօթ են փանթուրանիզմ անուանով:

Թէ՝ ի՛նչ դեր կատարեցին անոնք մեր անցեալ ազէտներուն մէջ:

Թէ՝ ինչո՞ւ անոնք արգելք են հայերուրք հաշտութեան:

Թէ՝ մանաւանդ, ի՛նչ վտանգ կը սպառնան անոնք Սեւանի եւ Արագածի շուրջ ծուարած մէկ միլիոն հայութեան կեանքին»:

175 էջերու վրայ ծաւալով այս գրքոյկը կը բացուի հեղինակին «Երկու խօսք»*ով, ուր կը կարդանք հետեւեալը.*

«Ակադեմական ուսումնասիրութիւն չէ՛ սա:

«Թշնամին՝ Մա՜հ հայ ժողովուրդին գրած իր դրօշին վրայ, կը մօտենայ մեր վերջին դիրքերուն: Գրո՛հ մը եւս եւ պիտի ակսի օրհասական կռիւը հայկական լեռնաշխարհի վերջին բարձրունքներուն վրայ:

ՈԳՈՐԻ՞Լ ԹԷ ՈՂՈՔԵԼ...

Հայ ժողովուրդը ի՛նք պիտի տայ վճիռը, եւ որպէսզի կարենայ գիտակցաբար արտայայտել իր կամքը, պէտք է յստակ եւ հանգամանօրէն գիտնայ թէ ինչո՞ւ կու գայ ոսոխը եւ ինչո՞ւ ԱՆՈՂՈՔԵԼԻ է ան»:

«Միացեալ, անկախ Թուրանիա» *հատորին մէջ, Չարեւանդ յաջորդական գլուխներով կը ներկայացնէ Թուրանի աշխարհագրական դիրքը, Թուրանեան ժողովուրդներու ցեղային յատկանիշները, փանթուրանիզմի ծագումն ու անոր ծաւալման հանգրուանները, մասնանշելով արեւելեան եւ արեւմտեան այն բոլոր իրաղարձութիւնները, որոնք ծնունդ տուին համաթուրանական ժողովուրդները քաղաքական մեծ ամբողջութեան մը մէջ միացնելու պահանջքին՝ մեկնելով անոնց ցեղաբանական, ընկերաբանա-*

կան, պատմական, հոգեբանական եւ քաղաքական տուեալներէն։

«Փանթուրանիզմը համաշխարհային պատերազմի բնթացքին (1914–1917)» *անուն հատուածը եռանկիւնի մէջ կ'առնէ հայ, թուրք եւ ռուս ժողովուրդները եւ կը փորձէ սահմանել անոնց քաղաքական յառաջխաղացքը։*

Հատորի վերջին գլուխը կը կոչուի «Փանթուրանիզմը՝ այսօր», *որուն առիթով Զարեւանդ հետեւեալը կ'ըսէ.*

«Փանթուրանիզմը՝ այսօր» *վերջին գլուխով մենք ուզեցինք ամէն կասկածէ վեր բարձրացնել այն գաղափարը, թէ* թուրքերը չեն լքած Մեծագեալ եւ անկախ Թուրանիայի իդէալը, *այլ անիկա կը շարունակէ ըլլալ իրենց ամէնէն գաղտնի եւ ամէնէն սիրելի նպատակը»։ եւ ելի սիրելի՛, քան գաղտնի, քանի որ բարձրաձայն խորհրդածութիւններու եւ հրապարակային վիճաբանութիւններու նիւթ է ան Թուսաստանի բարեկամ Թուրքիոյ մէջ»։*

«ԳՐԱԿԱՆ–ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԷՋԵՐ»

Հեղինակ՝ ԵԴՈՒԱՐԴ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

«Նայիրի», «Բագին» *եւ* «Հասկ» *ամսագիրներու էջերուն լոյս տեսած Եդուարդ Տասնապետեանի գրական–վերլուծական ուսումնասիրութիւններն ու պատմական–հասարակագիտական յօդուածները վերջերս ամփոփուեցան հատորի մը մէջ՝* «Գրական–պատմական վերլուծական էջեր» *ընդհանուր խորագիրին տակ։*

1989ի աշնան՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյս տեսած 294 էջ հաշուող այս հատորը կը բաղկանայ երկու մասէ։

Առաջին բաժինով, «Գրական–վերլուծական էջեր»*ով կը ներկայացուին Եդուարդ Տասնապետեանի գրականագիտական ուսումնասիրութիւնները, որոնք գլխաւորաբար կը վերլուծեն գործերը միջնադարեան հայ գրականութեան դասական դէմքերը հանդիսացած Սայեաթ–Նովայի եւ Նահապետ Քուչակի։*

Այս երկու դէմքերուն նուիրուած լայնածաւալ վերլուծումներուն կը յաջորդեն երկու այլ ուսումնասիրութիւններ, նուիրուած՝ բանաստեղծական արուեստի հիմնական յատկանիշներէն մէկուն,— երաժշտականութեան եւ յարակից յատկութիւններու։

«Սայեաթ–Նովա» *անուն առաջին ուսումնասիրութիւնը հատորին, յաջորդական հինգ բաժանումներով, նախ լուսաբաձակի տակ կ'առնէ «պայծառն լքուած եւ եարին անցած սրտէն յուսահատ» մեծ աշուղին կեանքի հիմնական տուեալները, անցնելու համար աշուղ–բանաստեղծին գործերուն ընդմէջէն ժողովրդական երգերը եւ աշուղական առակները վերլուծելու աշխատանքին։*

Մեծանուն աշուղին քերթողութեան յատկանիշները ստուգաբանական տուեալներով եւ գիտական մօտեցումով վեր առնելով՝ «Սայեաթ–Նովա համադրական տիպարն է աշուղին եւ արդիական բանաստեղծին» *եզրակացութեան յանգած Եդ. Տասնապետեան, ուսումնասիրու–*

թեան յաջորդ էջերում, կը վերլուծէ Սպենթի–Նոմոյի վաստակը՝ իբրեւ խորք, լեզու, երեւակայութիւն, երաժշտականութիւն, արուեստի գեղագիտութիւն, բարոյական եւ իմաստասիրական խորհրդածութիւն, բայց մանաւանդ՝ իբրեւ անփոխան կենսաստեղծով լիութեամբ ինքնիրացումի, ու շնորհը անընդհատ սերունդ բաշխուն ճամբանիրով բաւարար առեղծագործ ուժի պահեստ» իր մէջ խտացուցած մեծանուն բանաստեղծին նուաճումներուն՝ հատու «նոր բաղձանքի մը, որուն պատկառանքով կը նային բանաստեղծութեան միջազգային աշխարհին ճարտարագիտները»:

Սպենթի–Նոմոյի նուիրուած ուսումնասիրութիւնն կը յաջորդէ ինչքան էջեր գրուած «Դահնապետ Քուչակ» անուն վերլուծական ուսումնասիրութիւնը (էջ 61–136), որ մասնագիտական որոշ նկատողութիւններ եւ աշխատներ կատարելէ ետք, նոյն արամաբանութեամբ կը թուփանցէ Նահապետ Քուչակի վերագրուած «Քուչակեան ասդեր»ու աշխարհէն ներս՝ կատարելու համար «սեղմարարին ընթերցումը» Քուչակեան ասդին: Հոս եւս Եղ. Տասնապետեան կ'որդեգրէ գիտական միեւնոյն եղանակը, Նահապետ Քուչակի վաստակը իբրեւ բանաստեղծութիւն, լեզու եւ արուեստ արժեւորելու համար:

«Երաժշտականութիւնը բանաստեղծական արուեստին մէջ» անուն 20 էջերէ բաղկացած երրորդ ուսումնասիրութեամբ Եղ. Տասնապետեան բազմատարան վերլուծման կ'ենթարկէ երաժշտութեան հարցերը՝ Գր. Նարեկացիէն ու Սպենթի–Նոմայէն մինչեւ գաստական ու կշռաբանական երաժշտութիւն կիրարկած Վահան Տէրեան եւ Կոստան Զարեան, հատնելու համար այն հատատատումին, որ «Բանաստեղծութիւնը, ամէնէն առաջ, իմաստով արտայայտուող արուեստն է: Անոր հնարական սեռին վրայ երաժշտական սա պայմանը տպաւորական օժանդակ մրն է միայն: Բանաստեղծութեան միւս սեռերը, առանց այդ պայմանին, նուազ ընդունակ չեն կեանքի երեսները իրենց նուանումին տակ առնելու· աւելին՝ կեանքը սեւեռելու իր ծաւալուն ընթացքին վրայ»:

Եղ. Տասնապետեանի հատորին Ա. բաժինը կը փակուի «Գրաքննականներ» խորագրով ներկայացած գոյգ գրութիւններով, ուր հեղինակը վերլուծման կ'ենթարկէ Նորայր Եպս. Ծովականի «Լեռ» Յովհաննէս Թլկուրանցի» եւ Եղուարդ Տարօնեանի «Բաղէշի հանանցի խուրթիկ գիւղի բարբառ» անուն աշխատութիւններ:

«Պատմական եւ բնկերային գրութիւններ» խորագրով ներկայացող երկրորդ մասը հատորին կը բացուի Եղեռնի 50ամեակին առիթով գրուած «Մեռելներ» թերագրական գրութիւնով, որուն կը յաջորդէ 78 էջեր հաշուող «Հայ Գաղթ եւ Բուրք հեղեղազործութիւնը» անուն ծաւալուն ուսումնասիրութիւնը, որ թուրքական արշաւանքներու մեկնակէտն կը հանդիսանայ մինչեւ իթթիհատական շարժում եւ թուրքական գաղափարաբանութեան արձանագրած յաջողանքը՝ թուրքերու հոգեբանութեան մէջ:

«Հայ յեղափոխութեան պատմական անհրաժեշտութիւնը» եւ «Կարգապահութիւն» անուն գոյգ գրութիւններով նախ կը կատարէ պատմական փաստարկումն ու արժեւորումը Հայոց պատմութեան հարցերու ծնունդը հանդիսացող Հայ Յեղափոխական Շարժումին (Հ.Յ.Դաշնակցութեան 40ամեակին առթիւ), ապա՝ Գարեգին Աշեկերանեանն ու գրուած իր «Կարգապահութիւն» պատասխանութեամբ կը պարզէ հոգեկան եւ իմացական աշխարհի, կենսաբանական ստեղծագործութիւններու, պետական–ընկերային կառոյցի եւ քաղաքակիրթ մարդկութեան ընկերային բարբառներու ձեւաւորման եւ խորացման մէջ հիմնական նշանակութիւն ունեցող կարգապահութեան Լատարքերը՝ իբրեւ մտքի, բարոյական արժէքներու եւ արուեստի գեղագիտական յատկութիւն եւ, վերջապէս՝ իր բազաբացիական առաքինութիւն:

Եղ. Տասնապետեանի «Գրական–պատմական վերլուծական էջեր» հատորը կը փակուի հեղինակին մահուան առիթով գրուած «Բազին»ի խմբագրական նշմարով եւ Յ. Օշական 10ամեակ յուրելեանին առիթով իր արտասանած մեծարանքի խօսքով:



Մշակութային լուրեր

★★★★★★★★★★★★★★★★★★

ՈՒՇԱԳԻՐԱՒ ՀԱՅՈՐ ՄԸ՝ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ»

Օտարազգի անուանի հայ գրողներու բնաբոյս ստեղծագործութիւններն հայացուած նմոյշներ հայերէնի ընթերցասէր լայն զանգուածներուն ծանօթացնելու նպատակով, Երեւանի պետական Համալսարանի հրատարակչութիւնը, իր «Ուսանողի գրադարան» մատենաշարով, վերջերս լոյս ընծայեց գրականագէտ եւ քննադատ Ալիքսանդր Թոփչեանի խմբագրած «Ծառայ լեզուներով» խորագրեալ ծաւալուն հատորը, ուր ներկայացուած են չորս քառն անուն հայազգի նշանաւոր գրողներ՝ Ուիլիամ Սարոյեան, Հանրի Թրուայա, Աբրիլ Ադամով, Վահէ Քաչա, Մայրլ Ակրէն, Թուրէն Մելիք, Շարլ Ազնաւուր եւ ուրիշներ:

Աչխարհի տարբեր լեզուներով ստեղծագործող հայազգի նշանաւոր գրողներուն յատազոյնները մէկ հատորով ներկայացնող այս գործը, որ արժանացած է հայերէնի գրական շրջանակներուն ջերմ գնահատանքին, փաստօրէն, կը փարձէ կեդրոնանալ օտար լեզուներով ստեղծագործելու իրողութեան պատմական ենթատոյթին վրայ:

«Հայրենիքի ձայն»ի խմբագրութեան առաջարկին ընդառաջելով, Ալ. Թոփչեան այս եւ օտարազգի հայ գրողներու վաստակի ուսումնասիրման խնդիրներուն անդրադարձաւ յատուկ յօդուածով մը, որ լոյս տեսաւ վերանշեալ շարաթաթերթի 6 Նոյեմբեր 1988ի թիւին մէջ:

Ընդգծելի է եւ թէ «Քառասնորդ դարուն զանգուածային բնոյթ ստացած այս արտահոսքը, մտաւոր արիւնահոսութիւնը դէպի մշակութային ուրիշ «օրգանիզմներ» բարոյական այլ բնոյթ եւ պատճառ ունի»՝ *բազդատած անցեալէնով արտադրած լեհ ճոզէֆ Քոնրատի, ծագումով դուպացի, բայց Ֆրանսական գրականութեան պատկանող Ժոզէ Մարիա Էրեդիայի եւ ոչ-հայ օտարազգի այլ գրողներու փաստին, Ալ. Թոփչեան կը ծանրանայ Հայկական Ցեղասպանութեան եւ Թրքական հայահալած գաղափարախօսութեան ուղղակի հետեւանքը հանգիսացող այս երեւոյթին մանրամասնութիւններուն վրայ: Ապա, նշելէ ետք Ա. Ադամովի եւ Հ. Թրուայայի իւրայատուկ պարագաները, դիտել կու տայ, որ այս հեղինակներուն այդպէսութիւնը եթէ նոյնիսկ «ուղղակիօրէն չի կապուում օսմանեան Թուրքիայում սանձազերծուած եղեռնին, այնուամենայնիւ, եռանուագ է, վերջին չորս-հինգ հարիւր տարուայ ընթացքում Թուրքիայի եւ մահմեդական այլ տէրութիւնների հայատեաց քաղաքականութեան»:*

Պատմական անարդարութիւններու հետեւանով ծնունդ առած մշակութային նկատելի կորուստին եւ արտահոսքին մասին խօսելէ ետք, յօդուածին վերջին հատուածներով, Ալ. Թոփչեան կ'անդրադառնայ այն հարցին, որ «արտահոսքը եղել է նիւթական դէպի այն մշակոյթները, որոնց հետ աւանդականօրէն ունեցել են մի շարք բնութագրումներ եւ կապեր»:

ՎԱՆԵՍԱ ՈՒԻՏԿՐԷՅՎԸ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ

7 Դեկտեմբերի երկրաշարժին հետեւանքով հայ ժողովրդի ապրած տառապանքն ու վիշտը բաժնեցին բազմաթիւ արուեստագէտներ: 1987ի Նոյեմբերին յատուկ նպատակով Հայաստան այցելած եւ պայքարող ու տագնապահար ժողովուրդներու արդար իրաւունքներուն զօրաւոր կանգնած Վանեսա Ուիտկրէյվը չէր կրնար անտարբեր մնալ վիրաւոր Հայաստանին օժանդակելու համաշխարհային երեւոյթին: Եւ մինչդեռ ան անդրմանական շարժապատկերի եւ թատրոնի վաստակաւոր դէմքերէն մէկը հանդիսացած այս գերասանուհին եւ ուսուցիչը «Հոգու պարարդ», երբ Լոնտոնի Նշանաւոր թատերասրահներէն մէկուն մէջ բեմադրեց «Օրիէոսը գժոխք կ'իջնէ» թատերախաղը եւ ամիսներու վրայ երկարած ներկայացման հատոյթը ամբողջութեամբ փոխանցեց երկրաշարժէն տուժածներու օգնութեան Ֆոնտին:

Նոյեմբերը 1987ին, Վանեսա Ուիտկրէյվ Հայաստան այցելած էր հայ թատրոնը ներկայացնող բեմադրութիւններ ընտրելու նպատակով, որպէսզի անոնք բեմ բարձրանան նաեւ Անգլիոյ մէջ, միջազգային փառատոնի մը ընթացքին:

ՄՈՒԶԻԿԱՐՄԵՆԻԱ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ

1 Յուլիս 1988ին, Հայկ-Վարդան Մկրտչեանի ուշագրաւ համերգով վերջ գտած է աշխարհահռչակ հայ երաժիշտները հանրութեան ներկայացնելու նպատակով կազմակերպուած «Մուզիքարմենիա» երեկոներու շարքը, որուն բացումը կատարած էր աշխարհահռչակ երգեհոնահար Գերհարդ Ժամկոչեան, 11 Ապրիլին, Վենետիկի Ս. Մարկոս մայր եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան Վենետիկի սրբազան պատրիարքին՝ Կարտինալ Մարչելլո Զաի եւ բարձրաստիճան հիւրերու:

Գախի, Թրպէյի, Կոմիտասի, Բարաչանեանի, Մնացականեանի եւ Եարտիմեանի բնորոշ գործերը առանց խոցերու, այսինքն՝ ուրիշ յիշողութեամբ եւ նրբագգած մեկնաբանութեամբ հանրութեան հրամցուցած Գերհարդ Ժամկոչեանի ուշագրաւ երեկոյթն եւ, երկրորդ հանդիպումը տեղի ունեցած է Scuola Grande di S. Giovanni Evanglist *դահլիճին մէջ, երեքշաբթի, 19 Ապրիլին: 1954ին Երեւան ծնած դաշնակահար Յարութիւն Փափազեան, որ արժանացած է համաշխարհային բազմաթիւ մրցանակներու, մեծ յաջողութեամբ ներկայացուցած է Մոցարթի* Fantasia in Re Minore, K 397, *Պեթհովէնի* Appassionata, *Շոփէնի* Op. 28-24 preludi *անուն ստեղծումները եւ Յարութիւն Տէրտէրեանի Կոմիտասի նուիրուած գործը:*

«Մուրատ Ռափայէլեան» վարժարանի սրահին մէջ, նոյնքան մեծ հետաքրքրութիւն առեղծած է հանրածանօթ երգահան Լուդվիգ Բագիրի 1983ին հիմնած Musican Trio *եռեակը, որ նոյնինքն Լ. Բագիրի մշակած Ներսէս Շնորհալիի չարականները, Կոմիտասի 5 երգերը եւ Լ. Բագիրի յօրինումներէն փունջ մը մեկնաբանած է հայկական միջնադարեան երաժշտութեան հարազատ շեշտերով:*

Զիլինկիրեանի համաշխարհային համբաւ վայելող յարային քառեակը նոյնպէս, իր կարգին, 4 Մայիսին հիանալի մեկնաբանութեամբ նուագած է Մոցարթի Quartetto in Si Bemolle Maggiore — K 582 *եւ Շուպերթի* Quaretto in la minore, op 29 *անուն կտորները: Ասկա, յայտագիրի երկրորդ բաժինով՝ Լ. Բագիրի երգ յարային քառեակն ու Կոմիտաս-Ամամգեան պարերու կեղեցիկ մեղեդիները:*

Ս. Ստեփանոս եկեղեցւոյ խորհրդաւոր մթնոլորտին մէջ, 13 Մայիսին, 2 ժամ եւ 40 վայրկեան տեւող համերգով մը, որուն յայտագիրը ամբողջութեամբ կազմուած է հայկական կտորներէ, Փարիզի «Սիփան-Կոմիտաս» երգչախումբը ուներցած է բացառիկ երգեցիկ մը: Կարգիս Ափրիկեանի խմբավարութեամբ՝ «Սիփան-Կոմիտաս» երգչախումբը բացառիկ կատարողութեամբ մեկնաբանած է Կոմիտասի եկեղեցական եւ կրօնաշունչ գործերը, Ն. Ալեխսեանի «Կուսինկներ» եւ Լ. Յովհաննիսեանի «Ցորեն եմ ցանէ» եւ «Շորոր այ» անուն ստեղծումները, բայց մա՛նաւանդ՝ հայկական բազմաձայնութեան գլուխ-գործոցը հանդիսացող Կոմիտասի Պատարագը:

Այլ ուշագրաւ երեւոյթ մը հանդիսացած է աշխարհահռչակ ասմունքագէտ Սուզանա Միքաելեանի ներկայութիւնը այս համերգաշարին մէջ: Վենետիկի «Թիաթրո լա Վենիս»ի սրահին մէջ, Միքաելեան նրբագգաց ապրումով մեկնաբանած է եւրոպական պարոք երաժշտութեան բնորոշ նմոյշներէն մինչեւ Տեկուսի եւ Սայկեսս:

31 Մայիսին, իր կարգին եւ «Հայ Արուեստի Միջազգային Հրգ Միմպոզիում»ի առիթով, խտարբնակ ջութակահարուհի Սոնիկ Զաքրեան ասուած է փասար իր ասպանդին՝ հարուստ հնչեղութեամբ նուագելով Գրամսի Op. 108 sonata, *Գախի* BWV 103 sonata *եւ Լ. Բագիրի* Variazioni sul Tema di Tigranian *անուն ստեղծումներն ու Ա. Խաչատրեանի ջութակի եւ դաշնամուրի* սոնատը:

Յաջորդ երեկոյթին, շատ մեծ յաջողութիւն արձանագրած է Լիրանան ծնած եւ Վիեննա բնակող աշխարհահռչակ դաշնակահար Աւօ Գուլյումեան, որ ուժեղ եւ խոր մեկնաբանութեամբ նուագած է Մոցարթի Rondo KV 511, *Պեթհովէնի* Op. 31/3 sonata *եւ Շուպերթի* DV 935/1 *գործերը, ապա՝ Ադոս Բարաչանեանի* Preludio, Danza di Vagharshapat, Impromtu *եւ* Capriccio *անուն յօրինումները:*

21 Յունիսին, բաւական հետաքրքրական երեկոյթ մը ունեցաւ Նուարդ Անդրէասեանի հիմնած եւ գեկավարած «Ensemble Polycromie» նուագախումբը, որ ունկնդիր հասարակութեան հրամցուցած է Մեսիանի Quatuor pour la fin du Temps*ը, Էնկար Վարէզի* Octandre *գործը, խառարնակ երգահան Ա. Լեխա Նազարեանի* Paraphrasis *յօրինումը եւ 15 հոգինոց նուագախումբի համար Տիգրան Մանսուրեանի գրած «Թոպիմ»ը:*

Այս համերգներուն շարքը լուսագոյն ձեւով փակած է Գուլկարիա ծնած եւ Զուրիցերիա բնակող դաշնակահար եւ երգահան Հայկ-Վարդան Մկրտչեան, որ ամբողջական ապրումով մեկնաբանած է Գարթոթի Suite op. 14 *եւ* Sonata 1926 *անուն յօրինումները, Կոմիտասէն երկու պարեգանակ, իր մէկ յօրինումը՝* Sonata Fuer M *եւ Լիսթի ամէնէն դժուար կտորներէն մէկը համարուող* Sonata moll *անուն ստեղծումը:*

«ՅՈՒՍՈՅ ԱՍՏՂ» ԺԱՊԱՒԷՆԻ ՅՈՒՅԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ 10 ՏԱՐԻ ԵՏՔ

«Մոսֆիլմ» եւ «Հայֆիլմ» պատկերահանման արիւտիոններուն մէջ նկարահանուած «Յուսոյ աստղ» ժապաւէնը, որ ցուցադրուած է խորհրդային եւ արտասահմանեան դանագան պատասխանատու վրայ, իր նկարահանումէն միայն տասը տարի ետք ներկայացուեցաւ... Արցախի հայ հանդիսատեսին:

«Լարաբաղի աշխատանքներու հոգեւոր հարստացման գործին մէջ մեծ դեր կը խաղայ հայրենական շարժապատկերը.— *կ'ըսէ շարժապատկերի մարգային վարչութեան պետ Թորեւան Խաչատրեան եւ կ'աւելցնէ,*— հայերս, առաջին հերթին, կ'ուզենք ծանօթանալ մայր հանրապետութեան նկարահանած ֆիլմերուն: Օրինակ. Յոհփանակերտի «Թոսիա» սրահը 13 օր շարունակ ցուցադրեց Միհեւոյն ժապաւէնը՝ «Ցուսոյ առուոյ»ը: Մարգական կեդրոնին մէջ «Գիքոր» ժապաւէնը դիտեց քաղաքի բնակչութեան աւելի քան 80 տոկոսը: Ահա թէ ինչու մեր գլխաւոր մտահոգութիւնն է՝ զօրացնել կապերը Հայաստանի մեր պաշտօնակիցներուն հետ: Այդ ուղղութեամբ աշխատանքը արդէն իսկ սկսած է: Նոր համաձայնութիւններու հիմամբ՝ մեզի պիտի դրկուին գեղարուեստական, գիտահանրամատչելի, փաստավաւերագրական եւ այլ բնոյթի աւելի մեծ թիւով ժապաւէններ, քան անցեալին»:

Շարժապատկերի մարգին մէջ, Հայ աշխատողները եւ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի արուեստի հիմնարկի ուժերով՝ Արցախի մէջ պիտի ստեղծուի շարժապատկերի սիրողական սթիւտիօ: Հայաստանի մէջ նկարահանուած ժապաւէնները առաջին անգամ յանձնի պիտի ցուցադրուին Արցախի մէջ, ուր նաեւ պիտի այցելեն շարժապատկերի հայ վարպետները: Վերջերս, ստեփանակերտցիները դիտած են «Մենաւոր ընկուզենին» ժապաւէնը եւ ծանօթացած բեմադրիչին՝ Ֆրունզէ Դովլաթեանին: Այսուհետեւ, Ստեփանակերտի եւ այլ շրջաններու մէջ տեղի պիտի ունենայ Հայկական ժապաւէններու փառատօն:

Հայպետկինոն (Հայկական պետական շարժապատկեր) պիտի օգնէ՝ հարստացնելու Արցախի Հայկական ժապաւէններու ֆոնտը, բարելաւելու համար անոր արհեստագիտական վիճակը եւ պատրաստելու նոր ուժեր:

ՀՌՈՄԷԱԿԱՆ «ՄՈՆԱ ԼԻԶԱ»Ն ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԻ

«Հռոմէական» Պազեստինի «Մոնա Լիզա»ն, ենթարկուելով աննախընթաց գեղագիտական վերանորոգման, վերադարձած է 1700 տարիներ առաջ իր ունեցած հմայքը:

Անցեալ տարի Հռոմէական Գալիլիոյ Զիփորի քաղաքին մէջ յայտնաբերուած «Մոնա Լիզա»ն խճանկար մըն է, որ ունի գեղագիտական կարեւոր արժէք:

Պեղումներէն եւոք, այս խճանկարը գորգի մը նման «ոլորած» են, որպէսզի գայն տեղափոխեն Երուսաղէմի թանգարանը, ուր պիտի մաքրեն, վերստին «փռեն» եւ առաջին անգամ ըլլալով ցուցադրեն հանրութեան:

Խճանկարը հազուագիւտ գեղեցկութիւն ունի եւ, յոր եւ նման Լէոնարդօ տա Վինչիի կրնար գործածին՝ ունի հմայիչ եւ տարօրինակօրէն քաջուղական արտայայտութիւն մը, որուն պատճառով ալ անիկա կը կոչուի Պազեստինի «Մոնա Լիզա»ն:

Զեփորի քաղաքին պեղումները սկսած են չորս տարի առաջ: Հնագէտները տակաւին կը շարունակեն իրենց աշխատանքները, յայտնաբերելով հին բնակավայրեր, խեցեղէններ, դրամներ եւ յատկապէս արժէքաւոր խճանկարներ:

 ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ՀԱՅՀՈՅԵՄ

(Ապրումներ ու խոհեր)

- ԻՆՉՊԷՍ ՀԱՅՀՈՅԵՄ
- ԱՆՉԻՍ ՍԱՏԱՆԱՅԱՅՈՒՄԸ
- ԵՒ ԱՊԱ ԴԱՌՆԱՆՔ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ՓԱՌԱԲԱՆԵՆՔ ԱՒԱԶԱԿՆԵՐԸ
- ԾԱՂԻԿՆԵՐ
- ՑԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՊԱՀԱԿԸ
- ՎԵՐԱՆՈՐՈԳ ԱՆՁՆԱԳԻՐ
- ՁՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
- ԱՐԱՐԱՏԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՄԲ
- ԱՀԱԲԵԿՁԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
- ԱՏՐՃԱՆԱԿԸ
- ԵՒ ԱՁԿՈՒՆՔՆ ԷԻՆ ԱՐԵԳԱԿՈՒՆՔ
- ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՐ
- ԱՌԱՋԻՆ ՈՂՋՈՅՆԸ
- ՏՕՆ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ
- ԸՆԴՀԱՆՈՒՐԻՆ ԾԱՌԱՆ

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ	500 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին	2500 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ	40 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE
LITÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ